Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

5860

264
Д-21

1856

1 OCT 2009

264
Գ-21

# ԺԱՄԱԳԻՐՔ

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑՒՈՅ

ՇԱՐԱԴՐԵԱԼ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑՆ ՄԵՐՈՑ
ՍԱՀԱԿԱՅ ԵՒ ՄԵՍՐՈՎԲԱՅ

ԵՒ ԵՐԱՆԵԼԻ ՀԱՅՐԱՊ
ԳԻՒՏՈՅ ԵՒ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՅ
ԵՒ ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԻՍԻ Շ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. ՆԵՐՍԻՍԻ
ԱԶԳԱՍԷՐ ԵՒ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ... ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
Տ. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼԱՇՆՈՐՀ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ
Տ. ՅԱԿՈԲԱՅ Ս... ԵՒ ... ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ



Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԵՆՏԻՍ ԳԷՈՐԳԵԱՆ
1856 — ՌՅԵ

23/IV-7 գո.
6083
25 APR 2013
583.68
Гос. Библиотека
Арм.ССР
им. А. Мясникяна
(2039-2004)
3710-Я

## Հրաժարումն։

Հրաժարիմք ՚ի սատանայէ՝ և յամենայն խաբէութենէ նորա. ՚ի պատրանաց նորա. ՚ի խորհրդոց նորա. ՚ի գնացից նորա. ՚ի չար կամաց նորա. ՚ի չար հրեշտակաց նորա. ՚ի չար պաշտօնէից նորա. ՚ի չար կամարարաց նորա. և յամենայն չար զօրութենէ նորա. հրաժարելով հրաժարիմք։

Զայս երիցս կրկնէ՝ երես ի յարեւմուտս՝ և յետոյ ի կող- մանելով և ապա դէպ յարեւելս, և ասասցէ դա- ւանութեան ուղղափառ հաւատոյ, թագաւորեալ և յետ- նամաց կերպիւ, և ասէ։

Խոստովանիմք և հաւատամք ամենակատար սրտիւ զՀայրն Աստուած. անեղ. անծին. և անսկիզբն. այլև ծնօղ Որդւոյ և բղխող Հոգւոյն Սրբոյ։ Հաւատամք զԲանն Աստուած, անեղ ծնեալ և սկսեալ ՚ի Հօրէ նախ քան զյաւիտեանս. ոչ յետոյ և ոչ կրտսեր. այլ որչափ Հայրն Հայր՝ նոյնչափ և Որդին Որդի. Հաւատամք զՍուրբ Հոգին Աստուած. անեղ՝ անժամանակ. ոչ ծնեալ՝ այլ բղխեալ ՚ի Հօրէ. կցակից Հօր և փառակից Որդւոյ. Հաւատամք զԵրրորդութիւնն սուրբ, մի բնութիւն. մի աստուածութիւն. ոչ երեք

աստուածք, այլ՝ մի աստուած. մի կամք. մի
Թագաւորութիւն. մի իշխանութիւն. արա
րիչ երեւելեաց և աներեւութից։ Հաւա
տամք յեկեղեցի սուրբ՝ զԹողութիւն մեղաց
հաղորդութեամբ սրբոց։ Հաւատամք զմի
յերից անձանց զբանն աստուած՝ ծնեալ
հօրէ նախ քան զյաւիտեանս. 'ի ժամանակ
իջեալ յաստուածածին կոյսն Մարիամ. առեա
յարենէ նորա՝ միաւորեաց ընդ իւրում աստ
ուածութեանն. իննամսեայ ժուժկալեալ յա
գանդի անարատ կուսին. և եղեւ աստուա
կատարեալ՝ մարդ կատարեալ, հոգւով և մ
տօք և մարմնով. մի անձն, մի դէմ, և մի
աւորեալ մի բնութի։ Աստուածն մարդացեալ
առանց փոփոխման և առանց այլայլութեան
անսերմն յղութիւն և անապական ծնունդ
որպէս ոչ է սկիզբն աստուածութեան նորա
և ոչ վախճան մարդկութեան նորա։ (Զի
Յիսուս Քրիստոս երէկ և այսօր՝ նոյն և յա
ւիտեան)։ Հաւատամք զտէրն մեր Յիսուս
Քրիստոս շրջեալ 'ի վերայ երկրի. յետ եր
սուն ամաց եկեալ 'ի մկրտութիւն։ Հայր 'ի
վերուստ վկայեաց՝ դա է որդի իմ սիրելի. և
հոգին սուրբ աղաւնակերպ իջեալ 'ի վերայ
Նորա։ Փորձեալ 'ի սատանայէ և յաղթեալ
նմա։ Քարոզեալ մարդկան զփրկութիւն։ Աշ
խատեալ մարմնով, վաստակեալ՝ քաղցեալ՝ և
ծարաւեալ։ Յետոյ եկեալ կամաւ 'ի չարչարա
նս. խաչեալ և մեռեալ մարմնով. և կենդա
նի աստուածութեամբն։ Մարմինն եդեալ 'ի գերե

մանի միաւորեալ աստուածութեամբն, և հոգւովն իջեալ 'ի դժոխս՝ անբաժանելի աստուածութեամբն: Քարոզեալ հոգւոցն՝ աւերեալ զդժոխս՝ և ազատեալ զհոգիսն: Յետ երից աւուրց յարուցեալ 'ի մեռելոց և երեւեալ աշակերտացն: Հաւատամք զտէրն մեր Յիսուս Քրիստոս՝ նովին մարմնովն համբարձեալ յերկինս և նստեալ ընդ աջմէ հօր: Նաև գալոց է նովին մարմնովն և փառօք հօր՝ 'ի դատել զկենդանիս և զմեռեալս: Որ և յարութիւն ամենայն մարդկան: Հաւատամք և զհատուցումն գործոց. արդարոցն կեանք յաւիտենական, և մեղաւորացն տանջանք յաւիտենական:

Զղջումն:

Մեղայ ամենասուրբ երրորդութեանն՝ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ: Մեղուցեալ եմ աստուծոյ: Խոստովանիմ առաջի աստուծոյ՝ և սրբուհւոյ աստուածածնին՝ և առաջի քո հայր սուրբ՝ զամենայն մեղս զոր գործեալ եմ: Քանզի մեղայ խորհրդով բանիւ և գործով. կամայ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ, մեղայ աստուծոյ: Մեղայ հոգւովս և զօրութեամբ սորա. մտօքս և շարժմամբ սորա. մարմնովս և զգայութեամբ սորա: Մեղայ զօրութեամբ հոգւոյս. խորամանկութեամբ, անզգամութեամբ, յանդգնութեամբ և երկչոտութեամբ, շռայլութեամբ և ժլատութեամբ, զեղխութեամբ և անիրաւու-

թեամբ, չարահաւանութեամբ, յուսահա
տութեամբ, և թերամտութեամբ, մեղայ
աստուծոյ։ Մեղայ չար խորհրդով մտացս
նենգութեամբ, ատելութեամբ, խեթիւ
մախանօք, յաչաղանօք, թուլութեամբ, պոռ
նըկական խորհրդով, արուական, իգական
անասնական, գրաստական, գազանական,
գիշերի և ՚ի տունջեան. երազական գըձու
թեամբ, և անըջական գարշ աղտեղութեամբ
մեղայ աստուծոյ։ Մեղայ ցանկութիւ մար
նոյս. հեշտութեամբ, պղերգութեամբ, յ
րանջմամբ քնոյ, շարժութեամբ մարմնոյս,
զազրագործութեամբ ՚ի պէսպէս ախտս. հե
տալըութեամբ լսելեացս, արատութեամ
աչացս, ցանկութեամբ ոտոխ, իգութեամ
ռընգացս, պագշոտութեամբ բերանոյս. ան
ժուժկալութեամբ, շուայտութեամբ, և ար
բեցութեամբ, մեղայ աստուծոյ։ Մեղայ չա
րաբանութեամբ լեզուիս. ստախօսութեամբ
սուտ երդմամբ, երդմնազանցութեամբ, հա
կառակութեամբ, վիճաբանութեամբ, բան
սարկութեամբ, շոգմոգութեամբ, քսու, դա
տարկաբանութեամբ, և ծաղու, կրախօսու
թեամբ, հերձախօսութեամբ, և անիծաբա
նութեամբ. տրտնջելով, դժգոհելով, բա
բասելով, և հայհոյելով, մեղայ աստուծոյ
Մեղայ գողութեամբ ձեռացս. ագահելով
զրկելով, հարկանելով, սպանանելով, և ըն
դարձս ածելով, մեղայ աստուծոյ։ Մեղայ ս
մենայն յօդուածովք շինուածոյս և ամենայ

անդամօք մարմնոյս․ հնգեակ զգայարանօքս,
և վեցեկի շարժմամբս․ վերամբարձ ոտնահա-
րութեամբ, և վայրաքարշ մեղկութեամբ․
յաջ և յահեակ խոտորելով, զառաջնոյն մե-
ղանչելով, և վերջնոյն չար նշաւակ գոլով,
մեղայ Աստուծոյ։ Մեղայ եօթնիցս յան-
ցանօք՝ մահացու մեղօք․ հպարտութեամբ՝ և
մասամբք նորին․ նախանձու՝ և մասամբք նո-
րին․ բարկութեամբ՝ և մասամբք նորին․ ծու-
լութեամբ՝ և մասամբք նորին․ ագահութե՝
և մասամբք նորին․ որկրամոլութեամբ՝ և մա-
սամբք նորին․ բղջախոհութեամբ՝ և մասամբք
նորին, մեղայ Աստուծոյ։ Մեղայ ամե-
նայն պատուիրանացն Աստուծոյ․ յանձնառել-
եացն և հրաժարելեացն․ զի ոչ զյանձնառա-
կանսն կատարեցի, և ոչ ՚ի հրաժարելեացն
հեռացայ։ Զօրէնս առի՝ և յօրինացն հեղգա-
ցայ․ ՚ի կարգս քրիստոնէութեան հրաւիրե-
ցայ՝ և գործովս անարժան գտայ․ գիտելով
զչարն կամաւ կորացայ, և ՚ի բարեաց գոր-
ծոց ես ինձէն հեռացայ․ վա՜յ ինձ, վա՜յ ինձ,
վա՜յ ինձ։ Զո՞րն ասեմ, կամ զո՞րն խոստովա-
նիմ․ զի անթիւ են յանցանք իմ․ անասելի են
անօրէնութիւնք իմ․ աններելի են ցաւք իմ,
և անբժշկելի են վէրք իմ, մեղայ Աստուծոյ։
Հայր սուրբ՝ զքեզ ունիմ միջնորդ հաշտու-
թեան և բարեխօս առ միածին որդին Աստու-
ծոյ․ զի իշխանութեամբդ որ տուեալ է քեզ,
արձակեսցես զիս ՚ի կապից մեղաց իմոց, ա-
ղաչեմ զքեզ։

## Արձակումն ։

Ողորմեսցի քեզ մարդասէրն աստուած, և թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց. խոստովանացելոցն և մոռացելոցն ։ Եւ ես կարգաւս քահանայական իշխանութե̃, և հրամանաւն աստուածային՝ թէ (զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս) ։ Նովին բանիւն արձակեմ զքեզ յամենայն մասնակցութենէ մեղաց քոց. ՚ի խորհրդոց՝ ՚ի բանից՝ և ՚ի գործոց, յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ ։ Եւ դարձեալ՝ տամ զքեզ ՚ի խորհուրդս սուրբ եկեղեցւոյ. զի զոր ինչ գործիցես բարիս, եղիցի քեզ ՚ի բարեգործութի̃ և ՚ի փառս հանդերձեալ կենացն, ամէն ։

Օրհնեալ տէր մեր յիսուս քրիստոս ամէն ։
Հայր մեր որ յերկինս ։

Խորագիր ժամագրեղէնաց ըստ արեւելեան սահմանաց անցուցածոց և առաւօտեանց աղօթից։ Զոր խնդրեաց սուրբ Լուսարարեան Յակոբ Ղրիմեցի՝ ի մեծ րաբունոյն Գրիգորէ Խլաթեցւոյն։ Եւ կարգեաց այսպէս։ Որ դասն որ առաւօտ յայնն լինի՝ այս է։

Տէր եթէ շրթունս։ Զքեզ գոհանամքն։ Օրհնեալ տէր մեր յիսուս քրիստոսն։ Կանոնագլուխն։ Կանոնի աղօթքն։ Զկնի ալէլուիայից և թագաւորացն Սաղմոսիք և օրհնութեամբքն, և այլն որ լինի։ Մեծացուսցէ աղօթքն. այլև Աշխարհի փառքն։ Սուրբ աստուածի աղօթքն։ Արձակման աղօթքն, թէ պահոց և թէ ուտեաց։ Արեւագալի Սուրբ ես տէրն, և արձակմանն։ Ճաշու Առաջնորդեայն։ Հայր գթութեանցն։ Անկեալն։ Ճաշու սկսուածքն։ Լուր ձայնիցն։ Համբարձին։ Ցայս կենացն։ Խաղաղականին՝ Շնորհատու բարեացն։

Իսկ կոչման դասուն այս է։ Սկսուածք օրհնութեան և հարցին և իւր աղօթիցն։ Տէր յերկնիցն և իւր փառացն։ Սուրբ ես տէրն զկնի մանկանցն։ Արեւագալի աղօթքն։ Զառաւօտու զաղօթս։ Ճաշու խաղաղութեամբ։ Փարատեա։ Քրիստոս որդի աստուծոյն։ Իսկ

Քամամուտ և շարական՝ ձայնին է։
Կիւրակէից Ճաշու եսային և աւետարանն ձայնին է։ Առաքեալն՝ կողմանն է։ Իսկ լուր աւուր գիրք՝ կողմանն է։ Աւետարանն՝ ձայնին է։

Երեկոյի խոնարհեցոն՝ ձայնին է։ Արեգոն, Հայր գթածն, Տէր բարերարն, Քրիստոս որդին՝ կողմանն է։ Հայր մերն՝ ձայնին է։ Հաւատով խոստովանիմ աղօթքն՝ իւր տուն է՝ ըստ իւր ժամուցն։ Իսկ Տէր մեր և փրկիչ, Տէր աստուած մերն՝ ՚ի կարգէ դուրս է, ժամարարին է և հարկեւոր հիւրին։ Այս է արեւելեան տան սահմանի ժամակարգութեան ՚ի փառս աստուծոյ։ Յորժամ թուականն հայոց կոճատ լինի՝ [illegible] Բյ. Գյ. Դյ. յաջակողման դասուն լինին, [illegible] սուրբ աւագանն է. և յորժամ զոյգ լինի՝ ձախոյն լինին։

~~[illegible]~~

~~1888 [illegible] 14 [illegible]~~

[illegible]

1875 [illegible] 15 [illegible]

[illegible]

1880 [illegible] 7 [illegible]

+ [illegible]

1885 [illegible] 13 [illegible]

+ [illegible]

1883 [illegible] 7 [illegible]

+ [illegible]

1896 [illegible]

[illegible]

[illegible]

[illegible] 1893 [illegible]

[illegible]

[illegible]

1903 [illegible]

[illegible]

[illegible] 1910 [illegible]

[illegible]



Կարգաւորութիւն հասարակաց աղօթից Հայաստանեայց Եկե-
ղեցւոյ։ Որ կատարի 'ի մէջ գիշերի 'ի դէմս հօր աստուծոյ։

# Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիս-
# տոս ամէն։

Հայր մեր որ յերկինս ես. սուրբ
եղիցի անուն քո։ Եկեսցէ ար-
քայութիւն քո. եղիցին կամք քո
որպէս յերկինս և յերկրի։ Զհաց
մեր հանապազորդ տուր մեզ այ-
սօր։ Եւ թող մեզ զպարտիս մեր.
որպէս և մեք թողումք մերոց պար-
տապանաց։ Եւ մի՛ տանիր զմեզ 'ի
փորձութիւն. այլ փրկեա զմեզ 'ի
չարէ։ Զի քո է արքայութիւն և
զօրութիւն և փառք յաւիտեանս.
ամէն։

Տէր եթէ զշրթունս իմ բանաս բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Տէր եթէ զշրթունս իմ բանաս բերան իմ երգեսցէ զօրհնու̃ս քո։ Օրհնեալ համագոյ և միանական անբաժանելի սուրբ երրորդութիւն՝ հայր և որդի և հոգի սուրբ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

Տէր զի՞ բազում եղեն նեղիչք իմ, և բազումք յարեան ՚ի վ̃ր իմ։ Բազումք ասէին զանձնէ իմմէ, թէ չիք փրկութիւն սորա առ ա̃ծ իւր։ Այլ դու տէր՝ օգնական իմ ես, փառք իմ և բարձրացուցիչ գլխոյ իմոյ։

Ձայնիւ իմով ես առ տէր կարդա-
ցի, և լուաւ ինձ 'ի լեռնէ սրբոյ
իւրմէ:

Ես ննջեցի և 'ի քուն եղէ, զար-
թեայ և տէր ընդունելի իմ է:

Ոչ երկեայց ես 'ի բիւրաւոր զօրաց
նոցա. որք շուրջանակի պատեալ
պաշարեալ պահէին զիս:

Արի տէր՝ և փրկեա զիս աստուած
իմ. զի դու հարեր զամենեսեան,
որք էին ընդիս թշնամութեամբ 'ի
տարապարտուց. և զատամունս մե-
ղաւորաց փշրեսցես:

Տեառն է փրկութիւն. 'ի վր̃ ժողո-
վրդեան քո օրհնութիւն քո:

Տէր ած̃ փրկութե̃ իմոյ, 'ի տուէ
կարդացի և գիշերի առաջի քո:

Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր,
խոնարհեսցի ունկն քո 'ի խնդրու-
ածս իմ:

Զի լցաւ չարչարանօք անձն իմ, և
կեանք իմ 'ի դժոխս մերձեցան, և

համարեցայ ես ընդ այնոսիկ որք ի-
ջանեն 'ի գուբ:
Եղէ ես որպէս մարդ առանց օգ-
նականի, և 'ի մեռեալս ազատ:
Որպէս զվիրաւորս, որք ննջեն 'ի
գերեզմանս:
Զորս դու ոչ յիշեցեր, նոքա 'ի ձե-
ռանէ քումմէ մերժեցան:
Եդին զիս 'ի գբի ներքնումն, 'ի
խաւարի և 'ի ստուերս մահու:
Յիս հաստատեցաւ սրտմտու̃թի քո,
զա̃մ զբօսանս քո ածեր 'ի վ̃ր իմ:
Հեռի արարեր յինէն զծանօթս իմ,
և եդին զիս նշաւակ իւրեանց:
Մատնեցայ և ոչ ելանէի, աչք իմ
տկարացան յաղքատութենէ:
Աղաղակեցի առ տ̃ր զօրհանապազ,
և համբարձի առ քեզ զձեռս իմ:
Միթէ մեռելոց առնիցես զսքանչե-
լիս քո, կամ բժիշկք յարուցեալ
խոստովան առնիցին առ քեզ:
Միթէ պատմեսցէ ոք երբէք 'ի գե-

րեզմանի զողորմութիւնս քո, կամ
զճշմարտութիւնս քո 'ի կորստեան ։
Միթէ ճանաչիցին 'ի խաւարի սք-
քանչելիք քո, կամ արդարութիւն
քո յերկիր մոռացեալ ։

Ես առ քեզ տէր աղաղակեցի, ա-
ռաւօտու աղօթք իմ ժամանեսցեն
առ քեզ ։

Ընդէ՞ր տէր մերժես զանձն իմ, կամ
դարձուցանես զերեսս քո յինէն ։
Տնանկ և վաստակաւոր եմ ես 'ի
մանկութենէ իմմէ. 'ի բարձրու-
թենէ խոնարհեցայ և ափշեցայ ։
Յիս հաստատեցաւ բարկութ̃ի քո,
Արհաւիրք քո խռովեցուցին զիս ։
Շրջեցան զինև ոպ̃ ջուր, զօր ամ̃
պաշարեցին զիս 'ի միասին ։
Հեռի արարեր յինէն զբարեկամս իմ
և զծանօթս իմ, վասն թշուառու-
թեան իմոյ

Օրհնեա անձն իմ զտէր, և ամ̃
ոսկերք իմ զանուն սուրբ նորա ։

Օրհնեա անձն իմ զտէր, և մի մո-
ռանար զամենայն տուրս նորա։
Որ քաւէ զմեղս քո. բժշկէ զամե-
նայն հիւանդութիւնս քո։
Որ փրկէ յապականութէ զկեանս քո,
պսակէ զքեզ ողորմութբ և գթութբ։
Որ լնու ՚ի բարութենէ զցանկու-
թիւն քո, նորոգեսցի որպէս արծ-
ուոյ մանկութիւն քո։
Առնէ ողորմութիւնս տէր, և իրա-
ւունս ամենայն զրկելոց։
Ցոյց ետ զճանապարհս իւր մովսէ-
սի, և որդւոցն իսէլի զկամս իւր։
Գթած ողորմած է տէր, երկայ-
նամիտ և բազումողորմ։
Ոչ իսպառ բարկանայ մեզ տէր, և
ոչ յաւիտեան պահէ ոխս։
Ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ
տէր, և ոչ ըստ անօրէնութեան
մերում հատոյց մեզ։
Ըստ որչափ բարձր են երկինք յերկրէ,
այնպէս զօրացոյց տէր զողորմութի

իւր 'ի վերայ երկիւղածաց իւրոց։
Որչափ հեռի են արեւելք յարեւ-
մտից, այնչափ հեռի արար 'ի մէնջ
զանօրէնութիւնս մեր։
Որպէս գթայ հայր 'ի վերայ որդ-
ւոց իւրոց, այնպէս գթասցի տէր
յերկիւղածս իւր։
Զի նա գիտաց զստեղծուածս մեր,
եւ յիշեաց թէ հող եմք։
Մարդոյ ոպ̃ խոտոյ են աւուրք իւր․
ոպ̃ ծաղիկ վայրի՝ այնպէս ծաղկի։
Շնչէ 'ի նմա հողմ, եւ ոչ է, եւ ոչ
եւս երեւի տեղի նորա։
Բայց ողորմութիւն տեառն մնայ
յաւիտեանս յաւիտենից 'ի վերայ
երկիւղածաց իւրոց․ եւ արդարու-
թիւն նր̃ յորդւոց մինչեւ յորդիս։
Որք պահեն զուխտս նր̃, յիշեն ըզ-
պատուիրանս նր̃՝ եւ առնեն զնա։
Տէր յերկինս պատրաստեաց զա-
թոռ իւր․ արքայութիւն նորա ա-
մենեցուն տիրէ։

Օրհնեցէք զտ՟ր ա՟մ հրեշտակք ն՟ր
հզօրք զօրութ՟բ. ո՟յք առնէք զբան
նորա 'ի լսել ձայնի պատգամաց ն՟ր
Օրհնեցէք զտէր ամենայն զօրու
թիւնք նորա, պաշտօնեայք և ար
րողք կամաց նորա:

Օրհնեցէք զտէր ա՟մ գործք ն՟ր. զ
ընդ ա՟մ տեղիս է տէրութիւն ն
օրհնեա անձն իմ զտէր:

Տէր լուր աղօթից իմոց. ունկնդ
խնդրուածոց իմոց ճշմարտութ՟բ քո
Լուր ինձ արդարութ՟բ քով, և մ
մտաներ 'ի դատաստան ընդ ծառա
յի քում. զի ոչ արդարանայ առա
ջի քո ամենայն կենդանի:

Հալածեաց թշնամին զանձն իմ.
խոնարհ արար յերկիր զկեանս իմ.
և նստոյց զիս 'ի խաւարի որպէս
մեռեալ յաւիտենից:

Ձանձրացաւ յիս հոգի իմ. և սիրտ
իմ խռովեցաւ յիս:

Յիշեցի զաւուրս զառաջինս. խոր-

հեցայ յամ գործս քո. յարարածս
ձեռաց քոց խորհեցայ և համբար-
ձի առ քեզ զձեռս իմ։

Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ
քեզ. վաղվաղակի լուր ինձ տր, զի
նուաղեցաւ յինէն հոգի իմ։

Մի դարձուցաներ զերեսս քո յի-
նէն. նմանիցիմ այնոցիկ, ոք իջա-
նեն 'ի գուբ։

Լսելի արա ինձ առաւօտու զողոր-
մութիւնս քո. զի ես 'ի քեզ տէր
յուսացայ։

Յոյց ինձ ճանապարհ յոր և գնացից.
զի առ քեզ տր համբարձի զանձն իմ։

Փրկեա զիս 'ի թշնամեաց իմոց տր.
զի զքեզ ապաւէն ինձ արարի։

Ուսո ինձ առնել զկամս քո. զի
դու ես աստուած իմ։

Հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ
ինձ 'ի յերկիր ուղիղ։

Վասն անուան քո տէր՝ կեցուս-
ցես զիս. արդարութբ քով հան-



(2039-2004)

ցես 'ի նեղութենէ զանձն իմ։
Ողորմութեամբ քով սատակեա զթշնամիս իմ. և կորո զամենայն նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ։
Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

Երգ տեառն Ներսեսի Հայոց կաթուղիկոսի ասացեալ 'ի պաշտման գիշերոյ։

Յիշեսցուք 'ի գիշերի զանուն քո Տէր։
Բղխեսցեն սիրտք մեր զբանս բարիս. և լեզուք մեր պատմեսցեն զգործս երկնաւոր Թագաւորին։
Ի մէջ գիշերի յարուցեալ խոստովանեսցուք զքեզ Տէր։
Զաղօթս մեր տացուք քեզ Տէր. 'ի գաւիթս քո 'ի մէջ նոր Եդեմ։
Ի գիշերի համբարձցուք զձեռս մեր սրբութեան քեզ Տէր։
Ի ձայն գոհութեան ամենայն հոգիք օրհնեսցեն զՏէր։

Զարթի՛ք փառք իմ, զարթի՛ք. և ես
զարթեայց առաւօտուց. ալէլուիա։
Զարթի՛ք ընդ զուարթունս, ման-
կունք վերինն Սիոնի. ալէ։
Զարթի՛ք որդիք լուսոյ. ի յօրհնու-
թիւն հօրն լուսոյ. ալէ։
Զարթի՛ք փրկեալք արեամբ. և
տուք ընդ փառս փրկողին. ա։
Զարթի՛ք նոր ժողովուրդք, նոր եր-
գս առեալ նորոգողին. ա։
Զարթի՛ք հարսունք հոգւով, սպա-
սեալք գալոյ սուրբ փեսային. ա։
Զարթի՛ք վառեալք լուսով ընդ ի-
մաստուն սուրբ կուսանացն. ա։
Զարթի՛ք պատրաստեցէք իւղ լապ-
տերաց զջերմ արտասուս. ա։
Զարթի՛ք և մի ննջէք, նման յի-
մար կուսից նիրհէք. ա։
Զարթի՛ք երկրպագցուք և արտա-
սուօք զայս ասասցուք. ա։
Զարթի՛ր ընդէ՛ր ննջես. տէ՛ր մի
մերժեր ընդ մեզ իսպառ։

Որ տէր օգնեան մեզ. տացուք ան-
ուանդ քում ընդ փառս:
Այժմ և յաւէտ. հօր և որդւոյ,
և սուրբ հոգւոյն. ամէն:

փ Զարթուցեալքս ի զարթմանէ
գիշերային հանգստենէ:
Շնորհեսցէ մեզ մարդասէր տէր մեր
մխիթարութիւն և ի սփոփանս ե-
կեղեցւոյ:
Ահիւ և դողութեամբ կայցուք ի
յաղօթս:
Եւ կեանս խոստովանեսցուք ընդ յան-
ցանս:
Եւ գտցուք ի քրիստոսէ զքաւու-
թիւն և ընդ մեծ ողորմութիւն:

կթ Անքննածանելի և ըն համագոյ երր-
որդութեանդ. համաձայնեալք
ընդ ը զօրս երկնից. փառս մա-
տուցանեմք:
Փառք քեզ: Որ յանարուեստ յա-
թոռ բարձրացեալ հանգչիս. տէր
ամենահզօր և սքանչելագործ:

Փառք քեզ։ Որ յանէից գոյացու-
ցեր զամ արարածս. սուրբ արծ
անճառ հօր անեղ որդի։
Փառք քեզ։ Որ տեսչութբ խնամ-
մս զամ արարածս. սուրբ արծ
բղխումն անսպառ աղբեր։
Տէր։ Ժողովրդապետք եկեղեց-
ւոյ ՚ի քէն հայցեն ասելով. հովիւ
բարի. ողորմեա բանաւոր հօտի։
Ամէն. ալէլուիա. ալէլուիա. ալէ։
Ամէն. ալէլուիա. ալէլուիա. ալէ։

Քարոզ։

Օ արթուցեալքս ամքն ՚ի հանգստե-
նէ քնոյ, զոր շնորհեաց մեզ մար-
դասէրն ած ՚ի մխիթարութի և ՚ի
սփոփանս տկարութե մերում։ Եւ
եկեալքս միաբան հոգևոր երգով
՚ի փառաբանութի և ՚ի պատիւ ամե-
նասբ անուան ոն մերոյ և փրկչին
մրն քրիստոսի։ Ահիւ և դողութբ
կացցուք յաղօթս առաջի նր։ Եւ
գոհացարուք զնմանէ ՚ի գիշերային

ժամուս յայսմիկ, վասն խրատանց և
արդարութեան նորա։ Որ ընտրեաց
զմեզ ողորմութեամբն իւրով. և շնոր-
հեաց մեզ բերել զնմանութիւն երկնա-
յին հրեշտակացն ՚ի փառաբանիչս
ա՟ն ա՟յ ա՟մցն և մեզ լինել։ Եւ մեք
այսուհետև սրբելով զանձինս մեր
՚ի խղճէ և ՚ի չար գործոց։ Համբարձ-
ցուք զձեռս մեր ՚ի սրբութիւն առանց
բարկութեան և երկմտութեան։ Հաւա-
տով խնդրեսցուք ՚ի նմանէ զքա-
ւութիւն և զթողութիւն յանցանաց
մերոց։ Խոստովան լինելով զգաղտ-
նիս սրտից մերոց ծածկագիտին Ա-
տուծոյ։ Որպէս զի ընդունելով ըզ-
պաղատանս մեր աղօթիւք և բա-
րեխօսութբ՟ ա՟մ ս՟բց։ Շնորհես-
ցէ մեզ մարդասէրն ա՟ծ կեալ ա-
ւաքինութբ՟՝ և անարատ վարուք ըստ
կամաց նորա յայսմ աշխարհի։ Եւ
արժանաւոր լինելով յաւիտենա-
կան և երկնային խորանացն։ Զոր

խոստացա՛ւ սիրելեա՛ց իւրո՛ց՝ ճըշ-
մարիտն ա՛ծ՝ յս՛ քս՛. տէ՛ր մեր կեցո՛
և ողո՛րմեա՛։ Կեցո՛ տէ՛ր։

Զմնացուա՛ծ գիշերիս խաղաղութ՟
անցուցանե՛լ՝ հաւատո՛վ ՝ի տեա՛ռնէ՛
խնդրե՛սցո՛ւք։ Շնո՛րհեա՛ տէ՛ր։

Զհրեշտա՛կ խաղաղութե՟ պահապան
անձանց մերո՛ց. ՝ի տեա՛ռնէ՛ խընդ։

Զքաւութի՛ւն և զթողութի՟ յան-
ցանաց մերո՛ց. ՝ի տեա՛ռնէ խընդ։

Զսբ՟յ խաչին մե՛ծ և կարո՛ղ զօրութին
յօգնութի՟ անձանց մերո՛ց. ՝ի տ՟՛նէ՛։

Եւ նա՛ միաբա՛ն վս՟ ճշմարիտ և ուղ՟
հաւատոյս մերոյ՝ զտ՟՛ր աղաչե՛սցո՛ւք։

Տէ՛ր ողո՛րմեա՛։

Զանձինս մե՛ր և զմիմեանըս տ՟՛ն
այ՟ ամենակալին յա՛նձն արա՛սցո՛ւք։

Քե՛զ տեառնդ յա՛նձն եղի՛ցո՛ւք։

Ողորմեա՛ց մեզ տ՟ր ա՟ծ մեր՝ ըստ մեծի
ողորմութեան քում. ասասցուք ա-
մենեքեա՛ն միաբանութեա՛մբ։

Տ՟ր ողորմեա՟. տ՟ր ողո՟։

Նոյն ձայն տէր ողորմեա ըստ պատշաճի աւուրն ։ Ի նշաւակէս և 'ի փոխս տէրունականս՝ երեք տէր ողորմեա. իսկ 'ի փոխս սրբոց՝ յիսուն տէր ողորմեա. և յաւուրս պահոց հարիւր տէր ողորմեա ։

Տեառն Ներսէսի Հայոց կաթուղիկոսի. ողբերգութիւն անձին զղջացելոյ, և բողոք իւրաքանչիւրոյ դիմի խոստովանաբար ։

Աշխարհ ա՛մ. առ իս նայեցեալ ախտակից լերուք։ Բանամ ըզ շրթունս. բարբառիմ լեզուաւս. բողոքեմ զանձնէս. տէր ողորմեա՛ տէր ողորմեա՛. տէ՛ր ողորմեա՛։

Գող եղէ մեղաց. գրաւող կորըստեան. զուր ինձ փորեցի։ Դաւեցի զանձն իմ. դաւաճանեցի. դարան գործեցի. տէր ողորմեա։

Երբեմն էի լոյս. և այժմ եմ խաւար. և ստուեր մահու։ Զիա՞րդ պատմեցից. զթիւ մեղաց իմոց. զի բազում են յոյժ. տէր ողորմեա

Երկինք և երկիր. եկայք ողբացէք. եղկելի զանձն իմ։ Ընտրեցի ըզ չարն. ընկալայ կամաւ. ըզ հոյլս մեղաց. տէր ողորմեա։

Թալթաւիմ տրտմով. թաւալիմ 'ի
մեղս. թօթափիլ չկարեմ: Զանտ
ախտիւ լցեալ, ժահահոտ եղէ.
ժամանակս բազումս. տէր ողոր:
Ի բաց մեկնեցայ. 'ի ճը խորհրդոց.
Ի բարեաց գործոց: Լաւ վարկաւ
անձն իմ. լուսոյն հեռանալ. լինիլ
ընդ խաւար. տէր ողոր:
Խորհուրդք չարին. խաբեն ըզհո-
գիս. խորասոյզ առնեն: Օձկեն
սնդընդօք. ծիծաղին գլորմամբս.
ծանակ զիս առնեն. տէր ողոր:
Կամաւ կորացայ. կարկամեալս ան-
ձամբս. կանգնիլ ոչ կարեմ: Հուր
մեղաց կիզող. հրդեհեաց որ յիս.
հոգևոր բարիս. տէր ողոր:
Չարկեցայ մեղօք. ձաղեցին տե-
ոգք. ձանձրացաւ հոգիս: Պեղի
դառնութեան. զօղեալ 'ի սիրտ իմ.
զամպար իմ չիջաւ. տէր ողոր:
Ճաշակմամբ մեղաց. ճաշեցի զմահ.
Ճոխս աղքատացայ: Մեռեալ եմ
հոգւովս. մոլորեալ մտօքս. միայն
կամ մարմնովս. տէր ողոր:

Յորդայթ մահու. յորսողին ան-
կայ. յաղթեցայ յախտից: Նետից
թըշնամւոյն. Նըշաւակ եղէ. նոր
միշտ խոցոտիմ. տէր ողոր:
Շուրջ պատեալ զինեւ. շունք բա-
զումք եղեն. շաղախին արեամբս:
Ոչ եղէ չարին. ուռկանաւ մեղաց.
որսացաւ զանձն իմ. տէր ողոր:
Զարաչար վըշտօք. չարչարի անձն
իմ. չունիմ դադարումն: Պարտա-
պան գըտայ. պարտուց յանցանաց.
պարտեալս ՚ի մեղաց. տէր ողոր:
Ջանամ զըղջանալ. ջեռանիմ դար-
ձեալ. ջեռնում հրով մեղաց: Ռաբ-
բի կոչեցայ. ռակայ անուանիմ.
ռամկական վարուքս. տէր ողոր:
Սիրով ցանկութեան. սաստիկբար-
կութե. սիրտ իմ խոցեալ է: Վիրօք
յանցանաց. վըշտանայ հոգիս. վա-
րանեալ շըրջիմ. տէր ողոր:
Տիրեցին ինձ չարք. տարագիր հա-
նին. տիրական դըրկացն: Բարու-
ւոյն բարւոյ. բախձական ձայնին.
բոտինս ոչ լուայ. տէր ողոր:

Ցանկութի՛ չարեաց. յանկալի դի-
մօք. ցաւեցոյց զաչս իմ։ Իւրա-
քանչիւրոց. ուսմամբ խուռն ախ-
տից. ուիւծեալ է հոգիս. ո՛վ ողոր։
Փութացիր անձն իմ. փախչել 'ի
չարեաց. փափագել բարեաց։ Քեզ
միշտ մերձ ծանիր. քուն մահու ե-
կեալ. քննող դատաւոր. ո՛վ ողոր։
Աստուածածնին բարեխօսութե՛ք,
Քրիշեա տէր և ողորմեա։

---

Նորին տեառն Ներսէսի Հայոց կաթուղիկոսի երգ աղօթա-
կան 'ի դէմս որբոյ Երրորդութեան, նաև իւրաքանչիւրոյ դիմի
Երրորդութեանն առանձնակի։

Առաւօտ լուսոյ. արեգակն ար-
դար. առ իս լոյս ծագեա։ Բըղ-
խումն 'ի հօրէ. բըղխեա 'ի հոգ-
ւոյս. բան քեզ 'ի հաճոյս։
Գանձդ ողորմութեան. գանձիդ
ծածկելոյ. գըտող զիս արա։ Դու-
ռըն ողորմութեան. դաւանողիս
բաց. դասեցո վերնոցն։
Երրեակ միութի՛. եղելոց խնամող.
և ինձ ողորմեա։ Զարթիր ո՛վ յոգ-

նել. զարթո ըզ թմրեալս. զօւարթ-
նոց նըմանիլ:

Լոյս հայր անըսկիզբն. էակից որդի.
է միշտ ոք հոգի: Ընկալ զիս գթած.
ընկալ ողորմած. ընկալ մարդասէր:

Թագաւոր փառաց. թողութեան տը-
ւող. թող ինձ ըզ յանցանս: Ժողո-
վող բարեաց. ժողովեա և զիս. ժո-
ղովս անդրանկաց:

Ի քէն տէր հայցեմ. 'ի մարդասի-
րէդ. ինձ բըժըշկութի՛: Տէր կեանք
մեռելոյս. լոյս խաւարելոյս. լու-
ծանող ցաւոյս:

Խորհրդոց գիտող. խաւարիս շնոր-
հեա. խորհուրդ լուսաւոր: Ծը-
նունդ հօր ծոցոյ. ծածկելոյս ըստ-
ուերաւ. ծագեա լոյս փառաց:

Կենարար փրկիչ. կեցո զմեռեալս.
կանգնեա զգլորեալս: Հաստեա հա-
ւատով. հաստատեա յուսով. հիմ-
նեա սիրով:

Ձայնիւս աղաչեմ. ձեռօքս պաղա-
տիմ. ձիր բարեաց շնորհեա: Ղամ-
բարանք լուսոյ. ղեկավար ճարտար.

ղօղեալս ամրացո ։
Ճառագայթ փառաց ․ ճանապարհ
ինձ ցոյց ․ ճեպել 'ի յերկինս ։ Միա-
ծինըդ Հօր ․ մոյծ զիս յառագաստ ․
մաքուր հարսանեացդ ։
Յորժամ գաս փառօք , յահագին ա-
ւուրն ․ յիշեա զիս Քրիստոս ։ Նորո-
գող հնութեանց ․ նորոգեա և զիս ․
նորոգ զարդարեա ։
Շնորհատու բարեաց ․ շնորհեա ըզ-
քաւութի̄ ․ շնորհեա զթողութի̄ ։
Ուրախացո տէր ․ ոգւոյս փրկութե̄ ․
որ վասն եմ 'ի սուգ ։
Չար մշակողին ․ չար սերմանց նո-
րին ․ չորացո զպըտուղն ։ Պարգևիչ
բարեաց ․ պարգևեա իմոց ․ պար-
տեացս թողութիւն ։
Ջուր շնորհեա աչացս ․ ջերմ հե-
ղուլ զարտօսր ․ ջընջել ըզյանցանս ։
Ռետինըդ քաղցու ․ ռամ հոգւոյս
արբո ․ ռահ ցոյց ինձ լուսոյ ։
Սէր անուն յս̃ ․ սիրով քով ձուլեա ․
սիրտ իմ քարեղէն ։ Վ̃ գըթութե̄ ․
վ̃ ողորմութե̄ ․ վերըստին կեցո ։

Տենչալւոյդ տեսլեամբ. տուր ինձ
յագենալ. տէր յս քս։ Րաբունի
երկնաւոր. բոտեա զաշակերտս. բա-
մից երկնայնոց։

Ցօղ արեան քո տէր. ցօղեա 'ի հո-
գիս. ցնծասցէ անձն իմ։ Լուծեա
լըս մեղօք. ուծեալ աղաչեմ. ու-
սել ինձ բարիս։

Փրկիչ բոլորից. փութա զիս փր-
կել. փորձութենց մեղաց։ Բաւի-
յանցանաց. քաւեա զօրհնաբանս
քեզ երգել ըզ փառս։

Աստուածածնին բարեխօսութբն
յիշեա տէր և ողորմեա։

Զկնի ասէ աղօթքս։

Զքէն գոհանամք տր ած մեր, որ
շնորհեցեր մեզ հանգիստ քնոյ խա-
ղաղութբ։ Եւ զարթուցեալ ժամա-
նեցուցեր զմեզ կանխել յերկրպա-
գութի ահաւոր և փառաւորեալ
անուանդ քում սբյ։ Տուր մեզ տր
աղաչեմք զքեզ, զմնացուած գիշե-
րիս խաղաղութբ անցուցանել. և

զա՛մ ժամանակս կենաց պանդխտու-
թեան մերոյ, երկիւղիւդ քո ամ-
րացո և պահեա: Ա՛պ զի զգուշութ՝
և անարատ վարուք կրօնաւորեալք
յայսմ աշխարհիս, ժամանեսցուք
յանքոյթ և 'ի խաղաղ նաւահան-
գիստ յաւիտենական 'ի կեանսդ:
Շնորհօք և մարդասիրութբ ա՛ն մե-
րոյ և փրկչին յի քի: Ընդ որում քեզ
հօր և հոգւոյդ սբյ վայելէ փառք
իշխանութի և պատիւ. այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն:
Աստուծոյ երկիրպագեսցուք:

Նայեաց տէր բարերար ողորմութբ
քով յերկրպագուս և 'ի փառաբա-
նիչս անուանդ քում սրբոյ: Տր զօ-
[illegible] թեց խաղաղացո զանձինս մեր
[illegible] աւորական խռովութեց և
[illegible] սանաց: Օհրեշ-
տակ խաղաղութե քո առաքեա առ
մեզ. որ եկեալ պահեսցէ զմեզ ան-
խռով 'ի տուէ և 'ի գիշերի, յարթ-
նութե և 'ի հանգստեան մերում:

Ո՛վ զի բարեպաշտութ՟ և արժանա-
ւորապէս քեզ տն՟դ ծառայելով 'ի
կեանս յայսմիկ, ժամանեսցուք յա-
ւիտենական երկնից արքայութե՟ քոյ.
զոր պատրաստեցեր 'ի սկզբանէ աշ-
խարհի սրբոց քոց։ Եւ ընդ նոսին
գոհանալով փառաւորեսցուք զհայր
և զորդի և զսուրբ հոգին. այժմ և
միշտ և յաւիտեանս յաւիտենից։
Օրհնեալ տէր մեր յն՟ քն՟. ամէն։
Ալէլուիա. ալէլուիա։

Ապա ասէ սաղմոս ըստ ձայնին. և զկնի սաղմոսին ասէ ըստ ձայնին կանոնագլուխ։

Կանոնագլուխք կարգաւ ըստ ութ ձայնից։

ա՛ձ Դա՛տեա՛ տէր զա՛յնոսիկ. ո՛յք դա՛-
տե՛ն զիս. ալէ՜լո՛ւիա՛. մարտիր
ընդ այնոսիկ որք մա՛րտը՛նչին
ը..

Առ զզէն և զա… և արի
յօգնել ինձ. հան զսուր քո ընդ-
դէմ հալածչաց իմոց, արգել զնո-
սա. և ասա դու ցանձն իմ, թէ

փրկութիւն քո ես եմ։
Ամաչեսցեն և յամօթ լիցին՝ որք
խնդրէին զանձն իմ. դարձցին յե-
տըս և ամաչեսցեն, որք խորհէին
ինձ չար։
Եղիցին նք՟ ոպ՟ փոշի առաջի հողմոյ.
և հրեշտակ տն՟ նեղեսցէ զնոսա։
Եղիցին ճանապարհք նոցա ՚ի խա-
ւար և ՚ի գայթակղութիւն, և հը-
րեշտակ տյ՟ հալածեսցէ զնոսա։
Ի նանիր թագուցին ինձ որոգայթ
յապականութե՟ իւրեանց, և ՚ի նա-
նիր նախատեցին զանձն իմ։
Տէր՝ յերկինս է ողորմութի՟ քո. փ
ճշմարտութիւն քո մինչև յամպս.
ալէլուիա. ալէլուիա։
Արդարութիւն քո որպէս լերինք
ած՟. իրաւունք քո ոպ՟ խորք բա-
զում. զմարդիկ և զանասուն կե-
ցուցանես դու տէր։
Ոպ՟ զի բազում արարեր զողորմու՟
քո ած՟. այլ որդիք մարդկան ՚ի հո-
վանի թևոց քոց յուսասցին։
Արբեսցին նք՟ ՚ի պարարտութե՟ տան

քո. և զուղխս փափկութեան քո
տացես ըմպել նոցա։
Ի քէն է որ աղբիւր կենաց. և լու-
սով երեսաց քոց տեսանեմք զլոյս։

Որք ուղիղ են սրտիւք։
Մի եկեսցեն ՚ի վերայ մեր ոտք ամ-
բարտաւանից, և ձեռք մեղաւո-
րաց մի դողացուսցեն զմեզ։
Անդ անկցին ամենեքեան՝ որք գործեն
զանօրէնութի. մերժեսցին և այլ մի
կարասցեն հաստատել։
Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն
Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից. ամէն.
Ալէլուիա. Ալէլուիա։

---

ոկ Ասաց անզգամն ՚ի սրտի իւրում
թէ ոչ գոյ Աստուած. Ալէլու-
իա. ապականեցան և պղծեցան
յանօրէնութիւնս իւրեանց. և ոչ ոք է որ
առնէ զքաղցրութի. Ալէլուիա։

Ա̃ծ յերկնից նայեցաւ յա՛մ որդիս մարդկան, տեսանել թէ իցէ՞ ոք ի մաստուն՝ որ խնդրիցէ զաստուած։

Ամենեքեան խոտորեցան 'ի միասին, և անպիտանացան։

Ո՛չ ո՛ք է որ առնէ զբարի, և չէ ոք մինչև 'ի մի։

Որպէս ոչ ծանիցեն ամենեքեան, ո՛յք գործեն զանօրէնութիւն։

Ոյք ուտէին զժողովուրդ իմ որպէս կերակուր հացի. և առ աստուած ոչ կարդացին։

Օ՛ն ո՛չ գոյր նոցա փոխանա՛կ. և փ
ոչ երկեան յաստուծոյ. ա՛լէլու իա. ա՛լէլուիա։

Ձգեաց զձեռն իւր 'ի հատուցանել նմ̃. և նոքա պղծեցին զօրէնս նր̃։

Բաժանեցան 'ի սրտմտութէ̃ երեսաց նորա. և եհաս 'ի սիրտս նոցա։

Փափուկ էին բանք նոցա քան ըզ ձէթ, և նոքեանք որպէս սլաք։

Ընկեա 'ի տէր զհոգս քո՝ և նա կերակրէ զքեզ. և ոչ տայ յաւիտեան սասանութիւն արդարոյ։

Դու աստուած իջուցես զնոսա 'ի
գուբ ապականութեան. արք արիւ-
նահեղք և նենգաւորք մի՛ հասա-
րակեսցեն զաւուրս իւրեանց. այլ
ես 'ի քեզ տէր յուսացայ:
Փա՛ռք հօր և. այժմ և միշտ և.
ա՛լէլուիա. ա՛լէլուիա:

բձ Ի քե՛զ տէր յուսացայ, մի՛ ամաչե-
ցից յաւիտեա՛ն. ա՛լէլուիա.
յարդարութեան քում փրկեա և
ա՛պրեցո՛ զիս. ա՛լէլուիա:
խոնարհեցո առ իս զունկն քո, և
կեցո զիս:
Լեր իմ ա՛ծ ապաւէն, և տեղի ա-
մուր կեցուցանել զիս. զի հաստա-
տութի իմ և ապաւէն իմ դու ես:
Ա՛ծ իմ, փրկեա զիս 'ի ձռ՟ց մեղաւո-
րի, 'ի ձեռաց անօրինի և անիրաւի:
Դու ես համբերութիւն իմ տէր,
տէր յոյս իմ 'ի մանկութենէ իմմէ:
Ի քեզ հաստատեցայ ես յարգա-
նդէ, յորովայնէ մօր իմոյ դու ես ա-

պաւէն իմ. և առ 'ի քէն է օգնու-
Թիւն իմ յամենայն ժամ:
Երկիրպագցեն նմա ամ Թագա- Փ
ւորք երկրի. և ամ ազգք ծառա-
յեսցեն նմա. ալէլուիա. ալէ:
Զի փրկեաց զաղքատն 'ի ձեռաց
հզօրի. զաղքատն և զտնանկն, որոյ
ոչ է ուր օգնական:
Խնայեսցէ նա յաղքատն և 'ի տը-
նանկն. և զանձինս տնանկաց կե-
ցուսցէ. 'ի վաշխից չարաց փրկես-
ցէ զանձինս նոցա:
Պատուական է անուն նորա առաջի
նոցա. կեցցէ, և տացի նմա յոսկ-
ւոյն արաբացւոց:
Յաղօթս կացցեն առ նա յամ ժամ.
և զօրհանապազ օրհնեսցեն զնա:
Եղիցի հաստատութի ընդ ամ երկիր.
և 'ի վերայ գլխոց լերանց:
Բարձրասցի քան զլիբանան պտուղ
նորա. և ծաղկեսցի 'ի քաղաքի ամ
որպէս խոտ երկրի:
Եղիցի անուն տեառն օրհնեալ յա-
ւիտեան. զի յառաջ քան զարեւ է

անուն նորա ։
Ի նա օրհնեսցին ամ ազգք երկրի ,
և ամենայն ազինք երանիցեն նմա ։
Օրհնեալ տէր ած իէլի որ առնէ
սքանչելիս միայն . և օրհնեալ է ա-
նուն փառաց նորա յաւիտեան . լցցի
փառօք նորա ամ երկիր . եղիցի եղիցի ։
Փառք հօր և որդւ . այժմ և միշտ .
ալէլուիա . ալէլուիա .

---

բկ Օղորմութիւնս քո տէր յաւի-
տեան օրհնեցից . ալէլուիա .
ազգէ յազգ պատմեցից զճշմարտու-
թիւնս քո բերանով իմով . ալէ-
լուիա ։
Ասացեր՝ թէ աշխարհս ողորմութբ
շինեսցի , յերկինս պատրաստ եղի-
ցի ճշմարտութիւն քո ։
Եդի ուխտ ընտրելոց իմոց . երդ-
ուայ դաւթի ծառայի իմոյ ։
Յաւիտեան հաստատեցից զզաւակ
քո . և շինեցից ազգէ յազգ զա-
թոռ քո ։

խոստովան եղիցին երկինք սքանչե-
լեաց քոց տէր, և ճշմարտութիւն
քո յեկեղեցիս սրբոց։
Ո՞վ է յամպս որ հաւասարի քեզ.
կամ ո՞վ նմանիցի տ̃ն յորդիս ա̃յ։
Դա՛րձուցե՛ր զօգնութի՛ւն ’ի սրոյ նր՛. փ
և ոչ ընկալար զնա ’ի պատերազմի՛.
ա՛լէ՞լո՛ւի՜ա. ա՜լէ՞ ... լո՞ւիա՛։
Անարգեցեր զսրբութիւն նորա, և
զաթոռ նորա յերկիր կործանեցեր։
Նուազ արարեր զաւուրս ժամանա-
կաց նր. և հեղեր զնովաւ զամօթ։
Մինչև յե՞րբ դարձուցանես զերե-
սըս քո իսպառ. բորբոքեսցի որպէս
հուր բարկութիւն քո։
Իսկ արդ յիշեա և տես՝ թէ ո՞վ է
իմ հանգիստ. միթէ ’ի զո՞ւր ինչ
ստեղծեր զա̃մ որդիս մարդկան։
Ո՞վ է մարդ որ կեցցէ՛ և ոչ տեսցէ
զմահ, կամ փրկեսցէ զանձն իւր ’ի
ձեռաց դժոխոց։
Ո՞ւր են ողորմութիւնք քո տէր ա-
ռաջինք, զոր երդուար դաւթի
ճշմարտութեամբ քով։

Յիշեա զնախատինս ծառայի քոյ, զոր
ընկալայ 'ի ծոց իմ յազգաց բազմաց։
Զոր նախատեցին թշնամիք քո տր.
նախատեցին փոխանակ օծելոյ քոյ։
Օրհնեալ տէր յաւիտեանս յաւ-
իտենից. եղիցի եղիցի։
փառք հօր և որդ. այժմ և միշտ.
ամէն. ալէլուիա. ալէլուիա։

---

գձ Խոստովան եղերուք տեառն զի
քաղցր է. ալէլուիա. զի յաւ-
իտեան է ողորմութիւն նր. ալէլուիա։
Ո՞ խօսեսցի զզօրութիւնս տն. լսե-
լի արասցէ զամ օրհնութիւնս նորա։
Երանի՛ որք պահեն զիրաւունս, և
առնեն զարդարութիւն յամ ժամ։
Յիշեա զմեզ տէր ընդ հաճոյս ժո-
ղովրդեան քոյ. և այց արա մեզ 'ի
փրկութեան քում։
Տեսցուք մեք զքաղցրութի ընտրե-
լոց քոց. ուրախ եղիցուք մեք յու-
րախութիւն ազգի քոյ. և գովե-
ցուք մեք 'ի ժառանգութե քում։

Մեղաք մեք ընդ հարսն մեր, անօ-
րինեցաք և յանցեաք։
Մատնեաց զնս ՚ի ձեռս հեթանո- փ
սաց. տիրեցին նց ատելիք իւրեանց,
և թշնամիք իւրեանց նեղեցին զնս.
և խոնարհ եղեն ՚ի ներքոյ ձեռաց
նոցա. ալէլուիա. ալէլուիա։
Բազում անգամ փրկեաց զնոսա, և
նոքա դառնացուցին զնա ՚ի խոր-
հուրդս իւրեանց. և կորացան յա-
նօրէնութեան իւրեանց։
Հայեցաւ տէր ՚ի նեղութիւնս նո-
ցա, ՚ի լսել ձայնի աղօթից նոցա։
Յիշեաց զուխտ իւր, և զղջացաւ
ըստ բազում ողորմութեան իւ-
րում. և ետ զնոսա ՚ի գթութիւնս
առաջի ամենայն գերչաց նոցա։
Փրկեա զմեզ տէր ած մեր. և ժո-
ղովեա զմեզ ՚ի հեթանոսաց։
Խոստովան եղիցուք անուան քում
սբյ. և պարծեսցուք յօրհնութիւնս քո։
Օրհնեալ տէր աստուած իսրայէ-
լի. յաւիտեանս յաւիտենից։
Եւ ասասցէ ամենայն ժողովուրդն.

Եղիցի եղիցի։

Փառք Հօր. այժմ. ամէն. ամէն։

գկ Արարի իրաւունս և արդարութիւն.
ալէլուիա. մի մատներ զիս 'ի ձե-
ռս նեղչաց իմոց. ալէլուիա։
Ընկալ զծառայս քո 'ի բարի. զի մի
ամբարտաւանք զրկեսցեն զիս։
Սպասեցին աչք իմ փրկութեան քում
Տէր, և բանից արդարութեան քո։
Արա ընդ ծառայի քում Տէր ըստ
ողորմութեան քում. զարդարու-
թիւնս քո ուսո ինձ։
Ծառայ քո եմ ես, իմաստուն արա
զիս, և ծանեայց զվկայութիւնս քո։
Ժամ է պաշտել զՏէր. խափանե-
ցին զօրէնս քո։

փ Մերձեսցին խնդրուածք իմ առաջի
քո Տէր. ըստ բանի քում իմաստուն
արա զիս. ալէլուիա. ալէլուիա։
Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր.
և բանիւ քո փրկեա զիս։
Բղխեսցեն շրթունք իմ զօրհնու-

թիւնս քո, յորժամ ուսուսցես ինձ
զարդարութիւնս քո։
Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ա̃մ
պատուիրանք քո արդարութ̃ք են։
Եղիցի ձեռն քո ՚ի կեցուցանել զիս.
զի զպատուիրանս քո ընտրեցի։
Յանկացայ փրկութեան քում տէր,
և օրէնք քո խօսք իմ էին։
Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ.
և իրաւունք քո օգնեսցեն ինձ։
Մոլորեցայ ես որ̃պ զոչխար կորու-
եալ. խնդրեա զծառայս քո, զի զպ
պատուիրանս քո ես ոչ մոռացայ։
Փա՛ռք հօր. այժմ. ա՛լէ՛. ա՛լէ՛։

Օ՛րհնեա՛ անձն իմ զտէ՛ր. օրհ- դձ
նեցի՛ց զտէ՛ր ՚ի կեա՛նս իմ. ա-
լէ՛լո՛ւիա. սաղմոս ասացից ա̃յ իմոյ՝
մինչև եմ ես. ա՛լէ՛լո՛ւիա՛։
Մի յուսայք յիշխանս՝ յորդիս մարդ-
կան. զի ոչ գոյ փրկութի ՚ի նոսա։
Ելցէ հոգի ՚ի նոցանէ՝ և դարձցին
անդրէն ՚ի հող. և յայնմ աւուր կո-

րիցեն ա՟մ խորհուրդք նոցա։
Երանի ազգի՝ որոյ տէր աստուած
յակոբայ օգնական է նմա. և յոյս
նորա ՚ի տէր աստուած է։
Ո՛ արար զերկինս և զերկիր, զծով՝
և զամենայն որ ՚ի նոսա։
Ո՛ պահէ զճշմարտութիւն յաւի-
տեան. և առնէ իրաւունս զրկելոց։
փ Գովեա՛ երուսաղէմ զտէր. ա-
լէ[illegible]լուիա։
Եւ օրհնեա զաստուած քո սիօն։
Զի զօրացոյց զնիգս դրանց քոց, և
օրհնեաց զորդիս քո ՚ի քեզ։
Ո՛ ետ զսահմանս քո ՚ի խաղաղութի.
պարարտութ ցորենոյ լցոյց զքեզ։
Առաքէ զբան իւր յերկիր. վաղվաղ
ընթանան պատգամք նորա։
Տնէ զձիւն որպէս զասր, և զմէգ
որպէս փոշի ցանեաց։
Արկանէ զսառն որպէս պատառս.
առաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կեալ։
Առաքէ զբան իւր՝ և հալէ զնոսա.
շնչեսցեն հողմք՝ և գնասցեն ջուրք։
Պատմէ զբան իւր յակոբայ, զարդա-

րութիւն և զիրաւունս իսրայէլի:
Ոչ այսպէս արար ամ ազգաց որ. և
զդատաստանս իւր ոչ յայտնեաց նց:
փառք հօր. պժմ. ալէլուիա:

Սիրեցից ըզքեզ տէր զօրութիւն իմ. դկ
ալէլուիա. տէր հաստատիչ
իմ, ապաւէն իմ և փրկիչ իմ. ալէ-
լուիա:
Սծ օգնական իմ, և ես յուսամ՝ ի
նա. ապաւէն իմ, եղջիւր փրկութե
իմոյ՝ ընդունելի իմ է:
Օրհնելով կարդացից առ տէր, և
՚ի թշնամեաց իմոց ապրեցայց:
Շուրջ եղեն զինեւ երկունք մա-
հու. և ուղխք անօրէնութեան
խռովեցուցին զիս:
Վիշտք դժոխոց պաշարեցին զիս. և
ժամանեցին ինձ որոգայթք մահու:
Ի նեղութե իմում ես առ տէր կար-
դացի, և առ այ իմ աղաղակեցի:
Օգնեցուցեր ինձ զօրութի ՚ի պա- փ
տերազմի. և զյարուցեալսն ՚ի վե-

րայ իմ ներքոյ իմ մրարեր. ալէ֊
լուիա՝. ալէ լու իա։
Զթշնամիս իմ հալածական արա֊
րեր. և զատելիս իմ սատակեցեր։
Աղաղակեցին, և ոչ ոք էր որ փր֊
կէր զնոսա. կարդացին առ Տէր,
և ոչ լուաւ նոցա։
Մանրեցից զնոսա որպէս փոշի ա֊
ռաջի հողմոյ. և որպէս կաւ զուե֊
հաց կոխեցից զնոսա։
Փրկեսցես զիս Տէր ՚ի հակառակու֊
թենէ ժողովրդոց. և կացուսցես
զիս գլուխ հեթանոսաց։
Ժողովուրդ՝ զոր ոչ գիտէի, ծա֊
ռայեաց ինձ. և ՚ի լուր ականջաց
լուաւ ինձ։
Որդիք օտարաց ստեցին ինձ. որ֊
դիք օտարաց մաշեցան, և կաղա֊
ցան ՚ի շաւղաց իւրեանց։
Կենդանի է տ̃ր՝ և օրհնեալ է ա̃ծ.
և բարձր եղիցի ա̃ծ փրկու̃ե իմոյ։
Աստուած է որ խնդրէ զվրէժ իմ.
և հնազանդ առնէ զժողովուրդս
ընդ ինեւ։

փրկիչ իմ 'ի թշնամեաց իմոց բարկա-
ցողաց. յայնցանէ որք յարուցեալ
են 'ի վր իմ՝ բարձր արարեր զիս. և
յառնէ անիրաւէ փրկեցեր զիս:
Վասն այսորիկ՝ խոստովան եղէց
քեզ 'ի հեթանոսս. և անուան
քում սաղմոս ասացից:
Մեծ արարեր զփրկութի թագաւո-
րի նր. առնել ողորմութի ընդ օծելոյ
նր դաւթի, և ընդ զաւակի նորա
ազգէ մինչև յազգ:
փառք հօր. այժմ. ա՛լէ՛. ա՛լէ՛:

Կանոնագլուխ Բուն բարեկենդանին, և Նոր կիւրակէին:

Օրհնեա՛ անձն իմ զտէր. օրհ- ճզ
նեցից զտէր 'ի կեանս իմ. սաղ-
մոս ասացից աստուծոյ իմոյ՝ մին-
չև եմ ես:
Մի յուսայք յիշխանս յորդիս մարդ-
կան. զի ոչ գոյ փրկութի 'ի նոսա:
Ելցէ հոգի 'ի նոցանէ՝ և դարձցին
անդրէն 'ի հող. և յայնմ աւուր կո-
րիցեն ամենայն խորհուրդք նոցա:

Երանի ազգի՝ որոյ տէր աստուած
յակոբայ օգնական է նմա. և յոյս
նորա 'ի տէր աստուած է։

Որ արար զերկինս և զերկիր, զծով՝
և զամենայն որ է 'ի նոսա։

Ո պահէ զճշմարտութիւն յաւի-
տեան. և առնէ իրաւունս զրկելոց։

Տայ հաց քաղցելոց. և արձակէ ըզ
կապեալս տէր։

Տէր բանայ զաչս կուրաց. և կանգ-
նէ զգլորեալս տէր։

Տէր սիրէ զարդարս. տէր պահէ
զպանդուխտս. զորբս՝ և զայրի
ընդունի տէր. և զճանապարհ
ամբարշտաց կորուսանէ։

Թագաւորեսցէ տէր յաւիտեան.
ա՛ծ քո սիոն՝ ազգէ մինչև յազգ

փ Օրհնեցի՛ց ըզ քե՛զ գոհութ
կեանս իմ. սաղմոս ասացից քե՛զ
քրիստոս թագաւոր յաղթական
նո՛ր երգով օրհնութեամբ։

ող Օրհնեցէք զտէր՝ զի բարի է սաղ-
մոս. աստուծոյ մերում քաղցր է
լիցի օրհնութիւն։

Շինէ զերուսաղէմ տէր. և զցրու-
ուեալսն իսրայէլի ժողովէ:
Բժշկէ զբեկեալ սիրտս, և պատէ
զամենայն վէրս նոցա:
Ո թուէ զբազմութի̃ աստեղաց. և
զամենեսեան զնս յանուանէ կոչէ:
Մեծ է տէր, և մեծ է զօրութի̃
նր̃. իմաստուե̃ նորա ոչ գոյ բաւ:
Ընդունի զհեզս տր̃. և խոնարհ առ-
նէ զամբարտաւանս մինչև յերկիր:
Օրհնեցէք զա̃ծ խոստովանութբ̃.
սաղմոս ասացէք նմա օրհնութբ̃:
Ո զգեցոյց զերկինս ամպովք. և պատ-
րաստ արար զանձրեւ իւր յերկիր:
Բուսոյց զխոտ 'ի լերինս, և զդալա-
րի՝ 'ի ծառայութիւն մարդկան:
Ո տայ անասնոց կերակուր. ձագուց
ագռաւուց՝ որք կարդան առ նա:
Ոչ թէ ընդ զօրութիւնս ձիոյ կա-
մեցաւ տէր. և ոչ ընդ իրանս առն
հսկայի հաճեցաւ:
Այլ հաճեցաւ տէր ընդ երկիւղա-
ծըս իւր. և ընդ այնոսիկ՝ որք յու-
սան յողորմութիւն նորա:

փ Բաղցրացի՞ն քեզ քո՝ գոհութիւնք
երկիւղածաց անուան քո. զոր յու-
սացուցեր ողորմութք քով ՚ի խորհուրդ
դըս կենսաբեր գալըստեան որդ. քոյ։
սղ Գովեա երուսաղէմ ըզ տէր։
Եւ օրհնեա զաստուած քո սիօն։
Զի զօրացոյց զնիգս դրանց քոց, և
օրհնեաց զորդիս քո ՚ի քեզ։
Որ եդ զսահմանս քո ՚ի խաղաղութի.
պարարտութեամբ ցորենոյ լցոյց զքեզ։
Առաքէ զբան իւր յերկիր. վաղվաղ
ընթանան պատգամք նորա։
Գնէ զձիւն որպէս զասր, և զմէգ
որպէս մոխիր ցանեաց։
Արկանէ զսառն որպէս պատառս.
առաջի ցրտոյ նորա ո կարէ կեալ։
Առաքէ զբան իւր՝ և հալէ զնոսա.
շնչեսցեն հողմք՝ և գնասցեն ջուրք։
Պատմէ զբան իւր յակոբայ, զարդա-
րութիւն և զիրաւունս իսրայէլի։
Ոչ այսպէս արար ամ ազգաց տր. և
զդատաստանս իւր ոչ յայտնեաց նց։
փ Օ քեզ քո գովէ եկեղեցի փըր-
կեալ քո ծբ. ցընծալով տեսանէ

ըղ քեզ ըղ փրկողդ Եկեալ հայրա-
կան իշխանութեամբ 'ի պանկէլ
ըղ սուրբըս քո:

Կանոնագլուխ մեծի Ուրբաթու:

Իշխանք հալածեցին զիս 'ի նանիր. սղ
ալէլուիա. և 'ի բանից քոց եր-
կեաւ սիրտ իմ. ալէլուիա:
Ցնծացայ ես 'ի բանս քո, որպէս
այն՝ որ գտանէ աւար բազում:
Զմեղս ատեցի և անարգեցի, և զօ-
րէնս քո սիրեցի:
Եօթն անգամ յաւուր օրհնեցից
զքեզ, վս իրաւանց և արդարութե քո:
Խաղաղութիւն բազում է այնոցիկ,
ոյք սիրեն զօրէնս քո, և ոչ գոյ 'ի
նոսա գայթակղութիւն:
Սպասեցի փրկութեան քում տէր,
և զպատուիրանս քո սիրեցի:
Պահեաց անձն իմ զվկայութիւնս
քո, և սիրեաց զնոսա յոյժ:
Պահեցից զպատուիրանս՝ և զվկա-
յութիւնս քո. զի ամենայն ճանա-
պարհք իմ առաջի քո են:

Փ Մերձեսցին խնդրուածք իմ առաջի
քո տէր. ըստ բանի քում իմաս-
տուն արա զիս:
Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր.
և բանիւ քո փրկեա զիս:
Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւ
քո, յորժամ ուսուսցես ինձ զար-
դարութիւնս քո:
Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ամ
պատուիրանք քո արդարութիւն են:
Եղիցի ձեռն քո 'ի կեցուցանել զիս.
զի զպատուիրանս քո ընտրեցի:
Ցանկացայ փրկութեան քում տէր.
և օրէնք քո խօսք իմ էին:
Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ.
և իրաւունք քո օգնեսցեն ինձ:
Մոլորեցայ ես որպ զոչխար կորու-
սեալ. խնդրեա զծառայս քո, զի
զպատուիրանս քո ես ոչ մոռացայ:
Փառք Հօր. այժմ և: Ալէ. ալէ:

---

Ապա դնեն զգրակալն, և զաւուրն աւետարանն 'ի վերայ,
և զսաղմոսարանն. և ասեն երկու ձայնաւորք զսաղմոսն,
Գ, Գ, փոխ: Ընդէր խռովեցան հեթանոսք:
Տէր զի բազում եղեն: Ի կարդալ իմում լռ-

ւար ։ Եւ այլն եղանակին ձայնիւ կոչէ, Իշխանք ժողովեցան ։ Երիցս անգամ ասա. և շրջփինն բարձր ։

Կանոնագլուխ մեծի Շաբաթուն ։

Պատուեա տէր զայնոսիկ որք ։ Տես ՚ի թիւն 32 ։

Բայց թէ կանոնագլուխն ընդ սաղմոսին ասի՝ յետին գոր-
ծայն որ է այլոց մարգարէից՝ նա ասի ։ Իսկ եթէ ող ա-
ւի ընդ սաղմոսին որպէս է առաւօտութեան ոմանց, զկնի կա-
նոնագլխոյն ասի, Եւ ես խաղաղութեան ։ Օրհ-
նութիւն և փառք ։ Եւ ապա պաշտօն առնի ըստ
ձայնին, և զկնի հանգստեան աւետարան ընթերցեալ լի-
նի ։ Իսկ եթէ հանդիսի օր լինի, կամ խաչի տօն լինի,
Այսօր անճառ ասի. և խաչելութեան աւետարան
ընթերցեալ լինի ։ Զկնի աւետարանին՝ Նորոգող տիե-
զերաց. ապա՝ Հոգւոց հանգուցելոց ։
Իսկ ոմանք ընդ օրհնութեանն կոչեն զպաշտօնն, և զկնի
օրհնութեանն զաւետարան ընթեռնուն. և զկնի Հոգ-
ւոց հանգուցելոց. և Քրիստոս որդի այ ։

Երգ տեառն Ներսէսի Հայոց Կաթուղիկոսի ասացեալ յաղագս մեծի Ուրբաթու գիշերին Աւետարանացն ։

Իշխանք ժողովեցան ՚ի միասին. վա-
սըն տեառն և վասն օծելոյ նորա ։

Այսօր անճառ լուսոյն ծագումն
՚ի փրկութեան մեր կատարու-
մըն. խոնարհի ՚ի վերնատունն ՚ի

ստուերական տօնից լրումն. նախ
քան զընթրիսն խորհրդոյ սփռա-
ծաւ զընծայն արկօղն լուսոյ. և ջուր
առեալ ծառայաբար զոտըս լուա-
նայր զաշակերտացն։

Ո՛անին հօր փառաց լուսոյ պետ-
րոս մերժիլ յոտս ոչ ներէր. այնըմ
ձեռաց որոյ են գործք երկնից եր-
կինք և երկրաւորք. որով կուրաց
աչըք բացան խուլք և համերք ար-
ձակեցան. որ վերածեաց զինքն ՚ի
ծովին սաստեաց ալեացն և լռեցին։
Գըլխոյն ընտրեալ հօտին փոքու-
սաստէր զխորհուրդն ոչ գիտելոյ.
որով դառնայր և հնազանդէր զոտս
և զգլուխս մաքրել մաղթէր. գըլ-
խոյս ասէ՞ չէ ինչ պիտոյ լուացու-
մըն ջրոյ զի լուացեալ է. ոտիցըդ
պէտք են մաքրութեան յօդիլ ՚ի
գլուխըս սրբութեամբ։

Գոտուց իւրոց աշակերտաց զոր
նախ բանիւ վարդապետեաց. այ-

սոր գործով ընդ ծայրագոյնն եցոյց
յինքեան զխոնարհութիւն. սպասա-
ւորեալ հողեղինաց այն որ անտե-
սըն է հրեղինաց. տարեալ պաշ-
տօն իւր ծառայից այն որ պաշ-
տին 'ի սրովբէից:

Եթէ տէրս ամենայն էից և վարդա-
պետս բոլորից. զաշակերտացդ և
զծառայից զոտս լուացի 'ի հնոյ
աղտից. մեղաց և դուք համա-
բնութ ցուցէք ընդ նմին խոնարհու-
թի. բարձրացելոյն 'ի կործանումն
նմանկելոյ բնութեան կանգնումն:
Օ՛ր մաքրեցեր յաւազանին մա-
քուր ձեռօք զոտս նոցին. և ու-
սուցեր խոնարհութբ յաղթող լի-
նել չար հրպարտին. Եւ զիս լուա
զտիղմն մեղաց աղաչանօք սրբոյ
գընդին. և ընդ գնացս ուղղեա զը-
տին խոնարհութ ելիւք յերկինս:

Օրհ: Առաքելական: Ձայն: Մզ. 16: Ամէն ա-
մէն: Պերճ. և աշակերտքն իւր:

ԵՐԿՐՈՐԴ սղմս՝ խա։ Երանի որ խորհի. Որպէս փափաքի։ Դատ արա։

Բան անօրէնութեան եդին 'ի վե-
րայ իմ. տէր տէր մի թողուր զիս։

Ելից զօրէնսըն Մովսէսի զոր խօ-
սեցաւ 'ի սինայի. եկեր ըզգառն
օրինակին եւ ըզբաղարջն ընդ եղե-
գին. ըզհինն 'ի նորըս փոխելով զըս-
տուերն 'ի լոյս ճշմարտելով. փոխան
գառինն ինքըն գոլով գառն աս-
տուծոյ նուիրելով։

Ընդ բաղարջին հաց անխմոր ետ
ըզմարմինն իւր զերկնաւոր. ըզկու-
սածինն անսերմնաւոր զանապակա-
նըն եւ զհոգեւոր. ընդ ոչխարին
արեանն ուխտին ետ մեզ զարիւնն
իւր ուխտ կրկին. եւ եղեգան դառ-
նամգունին փոխան ըզ վայրս աստ-
ուածային։

Թագաւորն արարածոց զհացըն կե-
նաց ետ քաղցելոց. եւ ըզբաժակն
ուրախարար որք յանձկամայ տըր-

մեցելոց. այս նոր ուխտ է խմոյ ա-
րեան փոխան հընոյ ուխտին ա-
րեանց. զոր յիշատակ իմ առնիցէք
մինչև եկից ես միւսանգամ։

Ժողովեալքս 'ի քէն հայցեմք ընդ
ժողովեալ մեսասանին. որ զկենա-
րարըրդ քո մարմին բաշխեալ եւ տուր
ընդ բաժանկին. շնորհեա և մեզ
տէր ընդ նոսին հաղորդ լինել քում
սեղանին. կենաց հացիդ յոր փափա-
գիմք և ըմպելւոյդ ում ծարաւիմք։

Ի՞ յընտրելոց աշակերտացն յուդաս
մեկնեալ 'ի մեր դաւանցն. զմարձող
մեղաց զդանուն ո՞յ՝ մատնէր 'ի մահ
ընդ արծաթոյ. 'Ի՝ յընթրիսն հոգե-
ւոր մերձի ժըպիրհն և նենգաւորն.
ուտելով ընդ վարդապետին յաձա-
խէ զխաբէութիւն։

Ի՞յսըն խօսէր աղերսալի խաւարե-
լոյն վասն դարձի. մի՛ ումե 'ի ձէնջ
անէ եղբարքք զիս մատնելոց է առ
'ի մահ. պետրոս լուեալ զայն զար-

հո՛ւրբե՛ր և ա՛կնարկե՛ր առ յովհան-
նէս. հարցանել թէ ո՛վ իցէ դաւա-
ճանող վա՛րդա՛պետի՛ն:

Օրհն: Աւետարան ղուկ: մԿ: իբ. 1: Մերձե-
ցաւ տօն բաղ: Վերջ. հայհոյութեամբ:

═════

Երրորդ սաղմոս՝ ծը: Փրկեա զիս ՚ի. Աստուած
մերժեցեր: Լուր աստուած աղօթից:

Փրկեա՛ զի՛ս ՚ի թշնամեաց իմո՛ց ա՛ստո՛ւ-
ա՛ծ. և ՚ի հալածչաց իմո՛ց ա՛պրե-
ցո՛ զիս:

Խնամով սիրոյն քու սիրե՛լեա՛ցն
ըզտրտմութիւն փարատեա՛ց.
թացեալ պատառ տա՛յ յուդայի նը-
շա՛ւա՛կեա՛լ զգողըն մատնիչ. զո՛ր ա-
ւեա՛լ և մերկա՛ցա՛ւ յա՛ծայի՛ն հոգ-
ւոյն շնորհա՛ց. մատնեցաւ նա՛խա-
չարին ընդ մա՛տնութեան վա՛րդա՛-
պետի՛ն:

Ծայրագոյն լուսոյն զե՛րկեա՛լ խա-
ւարա՛սէ՛րն արտաքս ելեա՛լ. տէրըն
յայտնէր լոյս ե՛ղելո՛ցն ըզ գա՛յթակ-

զինն 'ի գիշերի · պետրոս խօսէր խը-
րախուսելի և կըշտամբելի. հաւա
խօսի · զիւրն յաշխարհէ զփոխին
աւէր և ընդ գալուստ հոգւոյն պատ-
մէր ։

Կեդրոնեան յայնկոյս ձորոյ 'ի վեր-
նատանն եւ խորհրդոյ · եմուտ
պարտէզ ընդ պարտիզի եմոյծ զա-
դամ յադին դրախտին · մուծցես և
զմեզ տէր ընդ նորին ուստի հա-
ներ նախ զառաջինն · զի ժառան-
գել ընդ հայրենին արժանացուք
մեք վերստին ։

Հոգայր ընդ կրեցըն տրտմաբար եր-
կուքն եղեալ առանձնաբար · փրկել
զաշխարհս հոգիս յօժար բայց է
բնութիւն մարմնոյս տկար · ոչ ումն
ուժեղ և զօրաւոր և ումն անզօր
վտանգաւոր · այլ մի և նոյն գոլ
միաւոր կրէր ընդ կիրսն կամաւոր ։
Զայնիւ մաղթէր աղօթականն վս
իմ առ հայր իւր էական · ծնունդ

դնէր խոնարհական սրտիւմ կրկնի
ծունր իմ. եթէ փրկիլ մարդկան
հնար է առանց մահու իմ որ գրել
է. բաժակ մահուս յինէն անցցէ
ոչ իմ կամաւ այլ քոյդ տեսցէ:
Գօղեալ յերկիւղ քրտանց հոս-
մամն ողողեալ կայլակ վիժման. ՚ի
զօրանալ հրեշտակի մերձեալ զօրէ-
նական գիրըն լցեալ. զի կատա-
րեալ էառ զընծիւ ածըն բան ըղ
մարդկութեն. պարտ էր զերկիւղ և
զտկարութին յիւրումն կրել անօ-
րէնութին:

Օրհն. Աւետարան Մարկոսի՝ ձկը: ձղ. 27: Եւ ա-
սէ ցնա Յիսուս: Վերջ. և սկսաւ լալ:

====

Զորորդ աղձոր՝ հը: Աստուած մոյն հե: Որ
հոլովեսք: Ցնծացէք առ Աստուած:

Նորա ՚ի ձեռանէ քումմէ մերժե-
ցան. մեք ժողովուրդք և խաշն
արօտի քո:

Ո՛ առագայթ փառաց էին որ ըստ
բնութեան մարդկային տագնա-

պեցա՛ր 'ի գիշերին աղօ՛թեցե՛ր ա՛ռ Հայր յերկինս. ծա՛գեա 'ի մե՞զ զլոյսդ ե՛րկնային և փարատեա՛ զերկիւղ չարին. մասունք հոգւոց մե՛ր և՛ մարմին յե՛րկի՛ւղ քո սուրբ բե՛ւե՛-
ռեսցի՛ն :

Ա՛երձեալ յուդա՛ս որ մատնե՛լոց հանդերձ դա՛սո՛ւն փարիսեցւոց. ան-կա՛ն նրմա՛ն սատրա՛նկե՛լոցն որք յա-ւիտեա՛ն չե՛ն կանգնելոց. յո՛ւդաս նենգաւ համբո՛ւրե՛լով ախթ մա՛-հո՛ւ նշան տալով. փոխան սիրոյ ընդ նա՛ մա՛տնելով չա՛ր ը՛նդ բարւոյ վ-
ճա՛րելո՛վ :

Յա՛յնժամ առ գո՛ւթ սիրոյն պե՛տ-րոս ընդ ծառայի՛ն անուն մաղքոս, եհատ սուսերբ զա՛կա՛նջն աջոյ որ ո՛չ լուաւ տեառըն իւրոյ. ի՛սկ տէ-րըն մե՞ր արա՛գա՛պէս, յունկըն մեր-ձեա՛լ բըժըշկապէս, առողջացոյց աստուա՛ծապէս զոր ո՛չ տեսին կու-
րա՛ցն հանդէ՛ս :

Նոր հօտին փոքու ցրուեալ. բան-
զի զհովիւըն քաջ հարեալ. պետ-
րոս միայն ընդհետ երթեալ ՚ի յաղջ-
կանէ վիմին շարժեալ. նըշանակեալ
հաւըն խօսէր առ ՚ի պետրոս զոր
ակնարկէր. զբանըն յիշէր, դառն
արտասուէր ՚ի գլորմանէն դարձեալ
կանգնէր։

Շնորհեալ վիմին եկեղեցւոյ զոր
պահեցեր ՚ի հոսելոյ, և կանգնեցեր
՚ի գլորելոյ վասըն սըրտին արտասու-
ելոյ. կանգնեա և զիս տէր ընդ
նըմին ՚ի գլորմանէ սայթաքողին.
տալով աչաց յորդ արտասուս և
ջուր նըման ծովու գըլխոյս։

Ով կամաւ զանկապելին կապեալ
ըզձեռս արձակողին, ՚ի յապարան-
սըն տանէին կայիափայ և աննա-
յին. ծառայն զերեսն այն ապ-
տակէր յորմէ սոսկէին թեւաւոր-
ղէր. թուք արձակեալ պիղծ բե-
րանովն յայն որ կուրին լոյս ծա-

գեսաց Թքոմն ։

Օրհնի՛ ։ Աւետարան Մատթէոսի ։ մձր ։ իզ․ 31 ։ Յայնժամ ասէ ցնոսա ։ Վերջ․ և փոխեան ։

---

Հինգերորդ սաղմոս՝ ձը ։ Ամ օրհնութեան ։ Ասաց տէր ցտէր իմ ։ Խոստովան եղերուք ։

Խօսեցա՛ն զինէն լեզուաւ նենգա՛ւորա՛ւ․ և բանիւ ատելութեա՛ն զիս պաշարեցի՛ն ։

Զո՛ր կապանաց մարդկան լուծիչ որ կապեցար ընդ կապելոյն, զիս արձակեա յինքնակամ կապէս մեղաց կապից դժոխայնոյն․ որ ընդ մեղօք պարտաւորին կացեր անմեղդ 'ի յատենի․ յորժամ փառօք գաս հայրենի մի դատեսցես զիս ընդ նոսին ։

Պատկառանօք հինն ադամայ որ ձաղեցար վասն նորա, ջնջեա զամօթ մեղաց լրբին որով զերեսս իմ ծածկեցին․ որ ներեցեր չար ծառային ածել ձեռօք քեզ ապտակին․ հար

ուժգնակի զդէմս չարին որպէս և
զիս եհար ուժգին։

Գահըն լուսոյ յառաւօտին 'ի յուր-
բաթուն հընոյ զատկին, կայր առա-
ջի դատաւորին ծառայն նըստէր 'ի
յատենին. 'ի հարցանել պիղատոսի
տ̃րն ոչ առնէր պատասխանի. զի
կանխասաց գիրըն լըցցի եղէ ես
մարդ որ ոչ խօսի։

Ռամկական դասք զինուորացն ար-
կին հանդերձ նախատանաց, այնմ
որոյ զգեստն է լոյս փ̃աց իբրև զօ-
թոց զինքեամբ արկած. 'ի ծունր ի-
ջեալ կատակէին զգլուխն եղեգամբ
հարկանէին. պըսակ 'ի փշոց բոլորէ-
ին ընդփուշ մեղացըն բարձողին։

Սոսկալին քերովբէից բառնայրին-
քեամբ ընդփայտ խաչին. մինչ 'ի տե-
ղի գողգոթային յորում եդեալ
մարդն առաջին. Ետուն ըմպել գի-
նի զմըռսեալ և կերակուր լեղեա-
խառնեալ. որով զպըտղոյն դառըն

Ճաշակ փոխեաց մեզ քաղցր և ա-
խորժակ։

Վերնականքըն զարհուրեալ տե-
սին ըզտէրըն մերկացեալ. և զհան-
դերձսըն բաժանեալ պատմուճա-
նին վիճակ արկեալ. ըզձեռսն և
զոտսն ծակեցին ըստ յայտնապէս
դաւթեան ձայնին. ընդ փայտ խա-
չին բեւեռեցին զմատունսն որ
գրեաց 'ի տախտակին։

Օրհն։ Աւետարան մատթէոսի՝ յզ։ իզ. 57։ Իսկ
նոցա կալեալ։ Վերջ. ելաց դառնապէս։

---

Վեցերորդ սաղմոս՝ ճժէ։ Խոստովան եղերուք
տեառն, զի բա. մինչև ցայն տունն որ ասէ՝ Բա-
ցէք ինձ զդրունս արդա. նորր

Խոստովան եղերուք տեառըն զի
բարի է, զի յաւիտեան է ողոր-
մութիւն նորա։

Տարածեալ ձեռք ընդ ձեռաց
ոտք ընդ ոտից ընթանալեաց.
փայտ ընդ փայտի դառըն պտղոյն

կեանք ընդ մահու փոխարկելով·
'ի մէջ երկուց անօրինաց կայր մեր-
կացեալ տուողն օրինաց· զոր ոչ
տեսին ազգըն կուրաց բաց 'ի մի-
ոյն յաւազակաց։

Րոպէից արեգականն զուխն արար
գիշերանման· զըստուերըն քող ար-
մերկութե՝ զի մի տեսցէ ակն անար-
ժան· 'ի մէջօրեայն նըսեմացաւ յոր-
ժամ ադամ մեղօք մեռաւ· 'ի յինն-
երրորդն 'ի լոյս դարձաւ յորժամ
մահուամբ մահըն լուծաւ։

Յօղէր արտօսըր ցաւագին մայր Տն
որ կայր մերձ առ խաչին· յորժամ
լըսէր ըզձայրաւին բարբառելոյ իւր
միածնին· ետուն քացախ խառնեալ
լեղի այնմ որ բըղխեաց գետ յանդե-
նի· և 'ի վիմէն վըտակ բարի ար-
բոյց տոհմին դաւանայողի։

Իրուծեալ յերրորդ ժամու օձին
զմիտըս նախնւոյ մօրն եւայի, 'ի
վեցն անկեալ մարդն առաջին հա-

ւանական բանիւ նորին. ՚ի սոյն ժամու՝ տէրն ՚ի խաչին զի քաւես-ցէ զմեղս նոցին. և յորժամ ել ոդամբն հին եդ զանապականն ՚ի մէջ

դրախտին:

Փառեղի բարբառս ընդ իմ էլի էլի առ հայր գոչէր. զհոգին կամաւ հօր աւանդէր զհոգիս մարդկան նոյն ընծայէր. երկիր հիմամբք սա-սանեցաւ և վարագոյրն ընդ մէջ հերձաւ. վէմք ՚ի յինքեանց պատա-ռեցան և գերեզմանք մահու բա-

ցան:

Բարոզէ ՚ի սքանչելեացս քո մարմ-նով վասն իմ խաչեալ. մերով բնու-թեամբս մեռանի քո անմահ խա-տոլանի. կենդանաւորակ կողին աղ-բերք եկեղեցի խոր հաստատի. ջրովն մաքրի զորդիսն ընկէ զոր-

դի ընդ հօր փառաւորէ:

Օրհ: Աւետարան յօհաննու՝ ձծէ: ժը. Զ. Գի-տէր և յուդա: Վերջ. հաւ խօսեցաւ:

Նորին երգ մեծի Ուրբաթու ցերեկին։

բկ / գկ

Նորոգող տիեզերաց որ զգեցու-
ցեր մեզ լոյս փառաց. արկար
ըզքեւ ՚ի զինուորաց քղամիդ կար-
միր նախատանաց. մերկեա յինէն
ըզքուրձ մեղաց ըզտրտմագինն ա-
րեամբ ներկած. և զգեցո զուրա-
խալին ըզպատմուճանն իմ զառաջին։
Երկնաւոր Թագաւորիդ ՚ի ծունր
իջեալ խաղ առնէին. ծածկեալ ըզ
գլուխըդ կնքէին և եղեգամբ
հարկանէին. և զիմ անկեալ մինչ
՚ի գետին ՚ի հնազանդել կամաց չա-
րին. մի թողուցուս խաղալ ատելին
այլ կանգնեսցես զիս վերստին։
Յօժարեալ բոլորըդ քո մարմին յետ
վըճըռոյ դատաւորին. սաստիկ է-
առ զհարուած գանին փայտին գա-
նից նախաստեղծին. զիս որ յոտից
մինչեւ ցգլուխ ցաւօք նեղիմ անհը-
նարին. առողջացո դարձեալ կրկին

որպէս շնորհօք յաւազանին ։

Աղբաբխեա՜լ պըղծնեա՛լ զարդուն զոր զգեցուցեր ահարօնի . փոխան պըսակ ՚ի փշոց եդին մըշանկք այգւոյն իսրայէլի . ընդ փուշ մեղաց հանցեաս յինէն զոր յիս եհար խմ թըշնամին . և ողջացո զխայթուած մերին զի սպիք մեղացըն ջընջեսցին ։

Օրհն ։ Աւետարան Մատթէոսի՝ յժէ ։ իէ ։ 1 ։ Երրե այգ եղև ։ Վերջ . և մայր որդւոցն զեբեթեայ ։

---

| | |
|---|---|
| Ն°տուն ըմպեմք քեզ ընկեղէն և ընդ քացախն ՚ի ծարաւին . արբեր կամաւ զի քաղցրասցին ճաշակք պըտղոյն դառնացունին . ընդդառնութիւն թունաւորին զոր ՚ի մասունս հոգւոյս արկին . հեղքեալ ՚ի բաց հանդերձ սալին և քաղցրասցի սէր քո ՚ի սմին ։ | բձ<br>դձ |

Մտեղնեալ ծառոյ մահաբերին այնմ որ բուսաւ ՚ի մէջ դրախտին . փոխան բարձեր ըմփայտս խաչին ՚ի գող-

գութս հաներ տեղին. զիմ առ 'ի
մեղս անկեալ զոգի և ծանրագոյն
բարձող բեռին, բարձ 'ի յուսոյդ
ըստ ոչխարին հան 'ի յերկինս յուի-
տեալ տեղին։

Ի յուրբաթու ժամ երրորդին բե-
ւեռեցար տէր 'ի խաչին. լուծեր
զկապանս նախաստեղծին և կապե-
ցեր ըզթշնամին. զիս ամրացո ընդ
հովանեաւ կենդանարար քո նշա-
նին. և 'ի ծագելն յարեւելից լու-
սաւորեա լուսով նորին։

Իրանեալ աւանդմանն բացեր ըզ
դուռն ադին դրախտին. ըստ հա-
ւատոյ սրտի նորին կատարեցեր
ըզ խնդրելին. տուր և ինձ տէր
ընդ նմին լսել ըզձայն պատասխա-
նին, այսօր ընդ իս իցես յադին 'ի
հայրենիս քո արքային։

Օրհն։ Աւետարան մարկոսի՝ ճիը։ ժե. 1։ Եւ
փաղփաղակի։ Պերճ. եկեալ էին յերուսաղէմ.

Բարբառելո՛վ զէ՛լի է՛լին հիմունք ակ
երկրի՛ տատանէին. և վարագոյր գկ
հին ծիրանին վե՛րուստ 'ի վայր պա-
տառէին. արդ ընդ վիմացն որ շարժէին
շարժեա՛ զանշարժ սիրտս 'ի
բարին. ընդ պատառել վարագու-
րին զիմ պատառեա ըզգի՛ր պարտի՛ն։
Արեգակա՛ն լոյս քո՛ղ արկեա՛լ խա-
ւարանայր միջօրէին. և գերեզմա-
նք բանային մարմի՛նք սրբոցն
յառնէին. ընդ խաւարե՛լ լուսա-
ւորացն մաքրեա յինէ՛ն զգործ խա-
ւարին. ընդ մեռելոցն որք յառնէին
կանգնեա՛ զմեղօք մեռեա՛լ հոգիս։
Նո՛ր սիրոյ պատուիրանին գործով
լցո՛ղ եղեր բանին. աղօթելով առ
հայր յերկինս թողուլ ըզմեղս որ 'ի
խաչին. մինչ որ հոգւով հաւատա-
ցեալ երկրպագեմ քեզ միածին.
թող ըզլուծումն հրամանին մե՛
յիշեային մեղքն առաջին։
Սարսեցին սանդարամետք 'ի յա-

ւանդե՛մ առ հայր զհոգիդ. որ 'ի դժոխս իջե՛ր ներքին 'ի բա՛նդ մահու և խաւարին. կա՛պեալ զիշխա՞նըն մա՛հածին հաներ զհոգիսն որ 'ի բա՛նտին. և զիս հանցես ո՜ր ը՛նդ նոսին բա՜նտէ՛ մեղաց ա՛ղջամըղջի՛ն:

Օրհն: Առեփարան շոշխատու՝ մղէ. իբ. 66: Եւ երբեւ այդ եղեւ: Վերջ. տեսանէին զայն:

---

ած
գծ
Ըզգեցան անապա՛կան որ յե՛ս մա՛հուն անմահարար. բըղխեալ 'ի քէն վըտա՛կ կըրկին 'ի նորոգումըն կողածնին. բա՛ց ըզգեցա՞ն իմ յարբուցումըն քո արեա՛ն կենարարին. ըւա դարձեալ յա՛ւազանին թէ ո՛չ շնորհօք այլ արտասուօք:

Յա՛նմահի՛դ մեռանե՛լոյ զմեռեալ հոգիս կենդանացո. թաղմամբ 'ի նոր գերե՛զմանի զթաղեալս 'ի՛ մեղըս վերածեա. 'ի՛ գբի ներքնումն իջա՛նե՛լով 'ի գբոյն մեղա՛ց վերաբերեա. 'ի սատուէր մահու քո՛ բնակե-

ւով լուսաւորեա՛ և զիս հոգւո՛վ։
Սի՛րտ իմ առ .քե՛զ աղա՛ղակէ բանդ-
որ ընդ հօ՛ր 'ի սկզբանէ. որ կամա-
ւոր փա՛ռըն մարդկան կրե՛ցեր մարմ-
նով զա՛յս ամե՛նայն. ի՛նձ լըսել ա-
րա՛ ը՛զձայն յարքայութեա՛նըդ .քո
կոչման. ընդ ժողովոցն ա՛նդ ա՛նդ-
րանկա՛ցն օրհնե՛լ ըզ.քեզ միշտ յա՛-
ւիտեա՛ն։

Օրհն. Աւետարան [illegible] ։ Եւ [illegible]
[illegible]. ժթ. 17 ։ Վերջ. [illegible] ։

---

Օ [illegible] Այսօր անճառելին՝ [illegible] ։ [illegible]
[illegible] ։ Փոխ. Ի կարդալ [illegible] ։ Եւ [illegible]
[illegible] Աւետարան [illegible] ,
[illegible] ։ [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] Աւետարան [illegible] ։
[illegible] Ած-
[illegible] Ած-
[illegible] Հոգւոյն [illegible] ։ Եւ [illegible]
[illegible] Արարիչ և [illegible]
[illegible]
[illegible] Հոգւոյ [illegible] ։ [illegible]
[illegible] ։ Եւ [illegible] մեր որ յերկինս ։
[illegible] ։ Եւ [illegible]

---

Սաղմոսս ըստ ոմն յայնկէն նախ ժամ շարականն ։ Ի գերոնէ տասոր էնէ ած է, տաս զայս սաղմոսս ։

Տէր ո՞վ կացցէ 'ի խորանի քում, կամ ո՞վ բնակեսցէ 'ի լեառն սուրբ քո ։

Որ գնայ անբիծ գործէ զարդարութի՞ւն, խօսի զճշմարտութի՞ւն 'ի սրտի իւրում ։

Որ ոչ նենգաւորեաց լեզուաւ իւրով, և չար ընկերի իւրում ոչ արար ։

Նախատինս 'ի մերձաւորաց նա ոչ առնու․ արհամարհեալ է առաջի նորա չարագործն ։

Զերկիւղածս Տեառն փառաւոր առնէ, որ երդնու ընդ ընկերի իւրում և ոչ ստէ ։

Զարծաթ իւր 'ի վաշխու ոչ տայ, և կաշառս 'ի վերայ իրաւանց ոչ առնու․ որ' զայս արասցէ՝ նա մի՛ սասանեսցի յաւիտեան ։

---

ած Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի՛ բարկութբ քով խրատեր զիս ։

Ողորմեա ինձ տէր զի հիւանդ եմ
ես. բժշկեա զանձն իմ, զի խռո-
վեցան ոսկերք իմ:

Անձն իմ յոյժ խռովեցաւ, և դու
տէր մինչև յե՞րբ:

Դարձ տէր և փրկեա զանձն իմ. կե-
ցո զիս տէր ըստ ողորմութե̄ քում:

Զի ոչ ոք է որ 'ի մահու յիշէ ըզ-
քեզ, կամ 'ի դժոխս խոստովան
առնիցի առ քեզ:

Վաստակեցայ ես 'ի հեծութեան
իմում, լուացի զամենայն գիշեր
զմահիճս իմ. և արտասուօք իմովք
զանկողինս իմ թացի:

Խռովեցաւ 'ի սրտմտութենէ ակն
իմ. և մաշեցայ ես 'ի վերայ ամե-
նայն թշնամեաց իմոց:

Ի բաց կացէք յինէն ամենեքեան,
որք գործէք զանօրէնութիւն:

Լուաւ տէր ձայնի լալոյ իմոյ, լու-
աւ տէր աղօթից իմոց. և տէր
զխնդրուածս իմ ընկալաւ:

Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ա-
մենայն թշնամիք իմ. դարձցին յե-

տըս և ամաչեսցեն յոյժ վաղվաղա-
կի և խռովեսցին:

ակ Բարձր առնեմ զքեզ տէր՝ զի ըն-
կալար զիս. և ոչ ուրախ արարեր
զթշնամին իմ յիս:
Տէր ա̃ծ իմ՝ կարդացի առ քեզ և
բժշկեցեր զիս. տէր հաներ 'ի դժո-
խոց զանձն իմ, և փրկեցեր զիս
յայնցանէ՝ որք իջանեն 'ի գուբ:
Սաղմոս ասացէք տեառն սուրբք
նորա. և խոստովան եղերուք յի-
շատակի սրբութեան նորա:
Սրտմտութիւն է 'ի բարկութեան
նր̃, և կեանք են 'ի կամաց նորա:
Ընդ երեկոյս հանգիցեն լալիք, ա-
ռաւօտու եղիցի ուրախութիւն:
Ես ասացի 'ի բարեկենդանութ̃ե ի-
մում, թէ ոչ սասանեցայց յաւիտեան:
Տէր 'ի կամս քո ետուր գեղոյ իմոյ
զօրութ̃ի, դարձուցեր զերեսս քո
յինէն՝ և ես եղէ խռովեալ:
Առ քեզ տէր կարդացի, և առ ա̃ծ
իմ աղաղակեցի. զի՞նչ օգուտ է

քեզ յարենէ իմմէ, թէ իջանեմ
ես յապականութիւն։
Մի թէ հո՞ղ խոստովան առնիցի
առ քեզ. կամ պատմեսցէ զճշմար-
տութիւնս քո։
Լուաւ ինձ տէր, և ողորմեցաւ,
և տէր եղև ինձ օգնական։
Դարձոյց զսուգ իմ յուրախութի՜,
էզերծ յինէն զքուրձ, և ինձ զգե-
ցոյց զուրախութիւն։
Ո՜պ սաղմոս ասասցեն քեզ փառք իմ,
և այլ մի՛ ևս զղջացայց. տ՜ր ա՜ծ իմ
յաւիտեան խոստովան եղէց քեզ։

---

Ա՜ծ յանուան քում կեցո զիս, և 'ի բծ
զօրութեան քում իրաւ արա ինձ։
Աստուած լուր աղօթից իմոց, ուն-
կըն դիր բանից բերանոյ իմոյ։
Օտարք յարեան 'ի վ՜ր իմ, և հզօրք
խնդրեցին զանձն իմ, և ոչ համա-
րեցան զքեզ ա՜ծ առաջի իւրեանց։
Ահա աստուած օգնական իմ, և տ՜ր
ընդունող հոգւոյ իմոյ։
Ի դարձուցանել զչարն 'ի թշնամիս

իմ, ճշմարտութեամբ քով սատակեա զնոսա։

Կամօք իմովք պատարագս մատուցից քեզ. և խոստովան եղէց անուան քում տէր զի բարի է։

Յա̃մ նեղու̃է իմմէ փրկեցեր զիս, և 'ի թշնամիս իմ ետես ակն իմ։

---

բկ Աստուած ողորմեա մեզ և օրհնեա զմեզ, երևեսցի զերեսս քո 'ի մեզ և ողորմեա մեզ։

Ճանաչել յերկրի զճանապարհս քո, յազինս ամենայն զփրկութի̃ս քո։

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ա̃ծ, խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ամենայն։

Ուրախ եղիցին և ցնծասցեն ազինք. զի դու դատես զժողովուրդս ուղղութեամբ, և ազգաց երկրի դու առաջնորդես։

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք աստուած, գոհասցին ըզքէն ժողովուրդք ամենայն։

Երկիր ետ զպտուղ իւր, և օրհ-

նեաց զմեզ աստուած ա̃ծ մեր։
Ա̃ծ մեր օրհնեսցէ զմեզ, եւ 'ի նմա-
նէ երկիցեն ա̃մ ծագք երկրի։

---

Հաճեցար տէր ընդ երկիր քո, եւ գկ
դարձուցեր զգերութի̃ յակոբայ։
Թողեր զանիրաւութի̃ ժողովրդեան
քոյ. եւ ծածկեցեր զա̃մ մեղս ն̃ց։
Լռեցուցեր զամենայն սրտմտու-
թիւնս քո, եւ դարձար 'ի բարկու-
թենէ սրտմտութեան քո։
Դարձ առ մեզ ա̃ծ փրկիչ մեր, եւ
դարձո զսրտմտութիւնս քո 'ի մէնջ։
Մի՛ յաւիտեան բարկանար մեզ տր̃,
եւ մի՛ ձգեր զբարկութիւն քո ազ-
գէ մինչեւ յազգ։
Աստուած՝ դու դարձեալ կեցուս-
ցես զմեզ, եւ ժողովուրդ քո ու-
րախ եղիցի 'ի քեզ։
Ցոյց մեզ տէր զողորմութիւնս քո,
եւ զփրկութիւնս քո տուր մեզ։
Լուաք զի՞նչ խօսի տ̃ր ա̃ծ մեր, խօ-
սեսցի զխաղաղութի̃ ժողովրդեան
իւրոյ առ ս̃րբս իւր՝ եւ առ այնոսիկ

ուք դարձեալ են առ նա սրտիւք։
Սակայն մերձ է առ երկիւղածս
իւր փրկութիւն նորա, բնակել
փառաց նորա յերկրի մերում։
Ողորմութիւն և ճշմարտութիւն
պատահեցին. արդարութիւն և
խաղաղութիւն համբուրեցին։
Ճշմարտութ̃ի յերկրէ բուսաւ, ար-
դարութիւն յերկնից երևեցաւ։
Տէր տացէ զքաղցրութիւն և եր-
կիր մեր տացէ զպտուղ իւր. ար-
դարութ̃ի առաջի նր̃ գնասցէ, դի-
ցէ 'ի ճանապարհի զգնացս իւր։

դկ Տէր լուր աղօթից իմոց՝ աղաղակ
իմ առ քեզ եկեսցէ, և մի դար-
ձուցաներ զերեսս քո յինէն։
Յաւուր նեղութեան իմոյ խոնար-
հեցո առ իս զունկն քո. յորում ա-
ւուր կարդամ առ քեզ՝ վաղվաղա-
կի լուր ինձ։
Սպառեցան որպ̃ ծուխ աւուրք իմ,
և ոսկերք իմ որպ̃ խուիւ չորացան։
Հարայ ես որպ̃ խոտ և ցամաքեցաւ

սիրտ իմ. մոռացայ ուտել զհաց
իմ՚ի ձայնէ հեծութեան իմոյ։
Կցեցաւ ոսկր իմ՚ի մարմին իմ. նմա-
նեցայ ես հաւալուսան անապատի։
Եղէ ես որպէս բու յաւերակի,
տքնեցայ և եղէ ես որպէս ճընճ-
ղուկ միայն՚ի տանիս։
Նախատեցին զիս թշնամիք իմ զօր-
հանապազ, և գովիչք իմ ինև երդ-
նուին։
Զմոխիր ոճ̃ զհաց կերի, և զըմպե-
լին իմ արտասուօք խառնեցի։
Յերեսաց բարկութեան սրտմտու-
թեան քո, զի դու բարձրացուցեր
և խոնարհեցուցեր զիս։
Աւուրք իմ որպէս հովանի անցին,
և ես որպէս խոտ ցամաքեցայ։
Դու տէր յաւիտեան կաս, և յի-
շատակ քո յազգէ մինչև յազգ։
Դու յարուցեալ գթասցիս՚ի վե-
րայ սիոնի. ժամանակ գթալոյ նո-
րայ հասեալ է ժամ։

Մերձեսցին խնդրուածք իմ առա- դձ

ջի քո տէր. ըստ բանի քում իմաստուն արա զիս։

Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր. և բանիւ քո փրկեա զիս։

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո. յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո։

Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ա̃մ պատուիրանք քո արդարութ̃ են։

Եղիցի ձեռն քո 'ի կեցուցանել զիս. զի զպատուիրանս քո ընտրեցի։

Ցանկացայ փրկութե̃ քում տ̃ր, և օրէնք քո խօսք իմ էին։

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ։

Մոլորեցայ ես որպ̃ զոչխար կորուսեալ. խնդրեա զծառայս քո, զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ։

Ի տէրունի աւուրս եթէ յայնմ դէպ լինի՝ ասա զսաղմոսս զայս։

Ի խորոց կարդացի առ քեզ տէր՝ տէր, լուր ձայնի իմում։

Եղիցին ականջք քո 'ի լսել զձայն ա-

ղօթից իմոց։

Թէ զանօրէնութիւնս իմ քննես տէր՝ տէր, իսկ ո՞ կարէ կալ առաջի քո. զի 'ի քէն է քաւութիւն։

Վասն անուան քո համբերի տէր. համբեր անձն իմ բանի քում. յուսացաւ անձն իմ 'ի տէր։

Ի պահէ առաւօտու՝ մինչեւ յերեկոյ, 'ի պահէ առաւօտու՝ յուսացաւ Իսրայէլ 'ի տէր։

Ի տ̃նէ է ողորմու̃ի բազում. 'ի նմանէ է փրկութիւն. եւ նա փրկեաց զԻսրայէլ յա̃մ նեղութեանց նորա։

---

Տէր լուր աղօթից իմոց. ունկն դիր խնդրուածաց իմոց ճշմարտութեամբ քով։ դկ

Լուր ինձ արդարութեամբ քով, եւ մի մտաներ 'ի դատաստան ընդ ծառայի քում. զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի։

Հալածեաց թշնամին զանձն իմ. խոնարհ արար յերկիր զկեանս իմ. եւ նստոյց զիս 'ի խաւարի որպէս

մեռեալ յաւիտենից։

Զանձրացաւ յիս հոգի իմ. և սիրտ իմ խռովեցաւ յիս։

Յիշեցի զաւուրսն զառաջինս. խոր-հեցայ յամենայն գործս քո. յարարած-ս ձեռաց քոց խորհեցայ, և համբար-ձի առ քեզ զձեռս իմ։

Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ. փագփագակի լուր ինձ տէր, զի նուաղեցաւ յինէն հոգի իմ։

Մի դարձուցաներ զերեսս քո յի-նէն. նմանիցիմ այնոցիկ, որք իջա-նեն 'ի գուբ։

Լսելի արա ինձ առաւօտու զողոր-մութիւնս քո. զի ես 'ի քեզ տէր յուսացայ։

Ցոյց ինձ ճանապարհ՝ յոր և գնացից. զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ։

Փրկեա զիս 'ի թշնամեաց իմոց տէր. զի զքեզ ապաւէն ինձ արարի։

Ուսո ինձ առնել զկամս քո. զի դու ես աստուած իմ։

Հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ։

Վասն անուան քո տէր՝ կեցուսցես
զիս, արդարութեամբ քով հան-
ցես 'ի նեղութենէ զանձն իմ։
Ողորմութեամբ քով սատակեա ըզ-
թշնամիս իմ. և կորո զա՛մ նեղիչս
անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ։

---

Զկնի սաղմոսացս՝ ընթերցեալ լինի աւետարան
ըստ յայնմն։

Աւետարան ըստ Մատթէոսի. ժգ. 36։

Յայնժամ թողեալ յիսուսի զժո- բկ
ղովուրդսն՝ եկն 'ի տուն. մա- դկ
տեան առ նա աշակերտքն նորա՝
և ասեն. մեկնեա մեզ զառակ որո-
մանցն ագարակի։ Նա պատասխա-
նի ետ՝ և ասէ ցնոսա, որ սերմանէ
զսերմն բարի՝ է որդի մարդոյ։ Եւ
ագարակն աշխարհս է։ սերմն բա-
րի նոքա են՝ որ որդիքն արքայու-
թեան են. իսկ որոմն որդիք չարին
են։ Եւ թշնամին որ վարեաց զայն՝
սատանայ է. և հունձքն կատա-
րած աշխարհիս է. և հնձօղքն հրե-
շտակք են։ Որպէս ժողովի որոմնն՝

և 'ի հուր այրի, այնպէս եղիցի 'ի կատարածի աշխարհիս։ Առաքեսցէ որդի մարդոյ զհրեշտակս իւր, և ժողովեսցեն յարքայութ՟է նր՟ զա՟մ գայթակղութ՟իս, և զայնոսիկ ոյք գործեն զանօրէնութիւն։ Եւ արկցեն զնոսա 'ի հնոց հրոյ. անդ եղիցի լալ՝ և կրճել ատամանց։ Յայն ժամ արդարքն ծագեսցեն իբրև զարեգակն յարքայութեան երկնից։ որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ։ Դարձեալ՝ նման է արքայու՟ի երկնից գանձի ծածկելոյ յագարակի, զոր գտեալ մարդոյ՝ թաքոյց. և 'ի խնդութենէ անտի երթայ վաճառէ զա՟մ ինչ զոր ունի, և գնէ զագարակն զայն։ Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից առն վաճառականի՝ որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս։ Եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝ երթեալ վաճառեաց զա՟մ զոր ինչ ունէր՝ և գնեաց զայն մարգարիտ։ Դարձեալ՝ նման է արքայու՟ի երկնից ուռկա-

նի արկելոյ 'ի ծով՝ և յամենայն ազ-գաց ժողովելոյ։ Զոր՝ իբրև լցաւ, հանեալ 'ի ցամաք՝ և նստեալ ժողովեցին զբարի բարին յամանս, և զզխոտանն 'ի բաց ընկեցին։ Այնպէս եղիցի 'ի կատարածի աշխարհիս. ելցեն հրեշտակք՝ և մեկնեսցեն զչարս 'ի միջոյ արդարոց, և արկցեն զնոսա 'ի հնոց հրոյն. անդ եղիցի լալ և կրճել ատամանց։ Ասէ ցն՟ս յս՟. իմացարո՞ւք զայս ա՟մ։ ասեն ցնա. այո՛ տէր։ Եւ նա ասէ ցն՟ս. վ՟ս այսորիկ ա՟մ դպիր աշակերտեալ արքայութե՟ երկնից՝ նման է առն տանուտեառն, որ հանէ 'ի գանձէ իւրմէ զնոր և զհին։

Աւետարան ըստ Մարկոսի. Դ. 26։

Եւ ասէր. այսպէս է արքայութի՟ ա՟յ. որպ՟ զի այր մի արկանիցէ սերմանիս յերկիր, և ննջիցէ և յառնիցէ զցայգ և զցերեկ. և սերմանիքն բուսանիցին և աճիցեն. և բճ
դճ

նա ոչ գիտէ՝ թէ երկիրն ինքնին բերէ զպտուղ. նախ զխոտն՝ և ապա զհասկն, ապա զցորեանն ատոք ՚ի հասկին։ Եւ յորժամ տայցէ ըզպտուղն, վաղվաղակի առաքի մանգաղ. զի հասեալ են հունձք։ Եւ ասէր. Ո՞ւմ նմանեցուսցուք զարքայութիւնն ա՟յ, կամ որո՞վ առակաւ առակեսցուք զնա։ Որ՟ հատն մանանխոյ՝ որ յորժամ սերմանիցի յերկրի, փոքրագոյն է քան զա՟մ սերմանիս՝ որ են յերկրի. և յորժամ սերմանիցի, բուսանի և լինի մեծ քան զա՟մ բանջար, և արձակէ ոստս մեծամեծս, մինչև բաւական լինել ընդ հովանեաւ նր՟ թռչնոց երկնից բնակել։ Եւ այնպիսի առակօք խօսէր ընդ նոսա զբանն, որ՟ կարող լինէին լսել. և առանց առակի ոչինչ խօսէր ընդ նոսա, բայց առանձինն աշակերտացն իւրոց մեկնէր զամենայն։

Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ. զի հա- ակ
ճեցաւ Հայր ձեր տալ ձեզ դկ
զարքայութի՛ւն։ Վաճառեցէ՛ք զինչս
ձեր, եւ տուք ողորմութիւն. եւ ա-
րարէ՛ք ձեզ քսակս առանց հնանա-
լոյ, գանձ անպակաս յերկինս. ուր
ոչ գող մերձենայ, եւ ոչ ցեց ապա-
կանէ։ Զի ուր գանձն ձեր է, անդ
եւ սիրտք ձեր եղիցին։ Եղիցին գօ-
տիք ձեր պնդեալ ընդ մէջ՝ եւ ճը-
րագունք լուցեալք։ Եւ դուք նը-
մանո՛ղք մարդկան՝ որ ակն ունիցին
տն իւրեանց՝ թէ երբ դառնայցէ
՚ի հարսանեաց. զի յորժամ գայցէ
եւ բաղխիցէ, վաղվաղակի բանայցեն
նմա։ Երանի իցէ ծառայից այնո-
ցիկ՝ զորս եկեալ տէրն գտցէ ար-
թուն. ամէն ասեմ ձեզ՝ զի գօ-
տի ընդ մէջ ածցէ՝ եւ բազմեցուս-
ցէ զնս, եւ անցեալ պաշտիցէ զնս։
Եւ եթէ յերկրորդ՝ կամ յերրորդ
պահու եկեսցէ՝ եւ գտցէ այնպէս,
երանելի են ծառայքն այնոքիկ։

Բայց զայն գիտասջիք, եթէ գիտէր
տանուտէրն յորում ժամու գող
գայ՝ հսկէր, և չտայր թողուլ ական
հատանել 'ի տան իւրում։ Եւ դուք
եղերուք պատրաստք՝ զի յորում
ժամու ոչ կարծիցէք, գայ որդի
մարդոյ։ Ասէ Պետրոս. տէր՝ առ
մե՞զ ասացեր զառակդ զայդ՝ եթէ
առ ամենեսեան։ Եւ ասէ տէր. ո՞վ
իցէ հաւատարիմ տնտես և իմաս-
տուն, զոր կացոյց տէր իւր 'ի վ̃ր
գերդաստանի իւրոյ տալ 'ի ժամու
զկ՚րակուրս։ Երանի իցէ ծառային
այնմիկ՝ զոր եկեալ տէր իւր գտա-
նիցէ արարեալ այնպէս։ Արդարեւ
ասեմ ձեզ՝ զի 'ի վ̃ր ամ̃ ընչից իւ-
րոց կացուսցէ զնա։ Ապա եթէ ա-
սիցէ ծառայն այն 'ի սրտի իւրում.
յամէ տէր իմ 'ի գալ. և սկսանիցի
հարկանել զծառայսն և զաղախ-
նայս, ուտել և ըմպել և արբե-
նալ։ Եկեսցէ տէր ծառային այնո-
րիկ՝ յաւուր յորում ակն ոչ ունիցի,
և 'ի ժամու յորում ոչ գիտիցէ.

ընդ մէջ կտրեսցէ զնա. և զմասն նորա ընդ անհաւատս դիցէ: Եւ ծառայ՝ որ գիտիցէ զկամս տեառն իւրոյ՝ և ոչ պատրաստեսցէ ըստ կամաց նորա, արբցէ գան բազում: Եւ որ ոչն գիտիցէ՝ և արժանի գանի ինչ գործիցէ, արբցէ գան սակաւ: Ամենայնի՝ որում շատ տըւաւ, շատ խնդրեսցի 'ի նմանէ. և որում բազում աւանդեցաւ, առաւել եւս պահանջեսցեն 'ի նմանէ:

---

Աւետարան ըստ յովհաննու. Ե. 19:

Պատասխանի ետ յիսուս և ասէ ցնոսա. ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ կարէ որդի մարդոյ առնել յանձնէ և ոչինչ, եթէ ոչ տեսանիցէ զհայրն զի առնէ. զի զոր նայն առնէ, զնոյն և որդին նմին նման գործէ: Զի հայր սիրէ զորդի, և զամենայն ինչ ցուցանէ նմա՝ զոր ինքըն առնէ. և մեծամեծս ևս քան զսոյնս ցուցանէ նմա զգործս, ընդ

ա՟ծ
գ՟ծ

որ դուքդ զարմանայք։ Զի որպէս Հայր յարուցանէ զմեռեալս և կենդանի առնէ, նոյնպ՟ և որդի՝ զորս կամի կենդանի առնէ։ Եւ ոչ եթէ Հայր դատի զոք՝ այլ զա՟մ դատաստան ետ որդւոյ իւրոյ. զի ա՟մքն պատուեսցեն զորդի՝ որ՟պ պատուեն զՀայր։ Որ ոչ պատուէ զորդին, ոչ պատուէ զՀայր զառ՟քիչն նր՟։ Ամէն ամէն ասեմ ձեզ. զի որ զբանն իմ լսէ, և հաւատայ այնմ որ առ՟քեաց զիս, ընդունի զկեանսն յաւիտենականս. և 'ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ 'ի մահուանէ 'ի կեանս։ Ամէն ամէն ասեմ ձեզ. զի գայ ժամանակ՝ և արդէն իսկ է, յորժամ մեռեալք լսիցեն ձայնի որդւոյն այ՟, և որք լսիցենն՝ կեցցեն։ Զի որ՟պ Հայր ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս ետ և որդւոյ ունել կեանըս յանձին իւրում. և իշխանութիւն ետ նմա դատաստան առնել. և զի որդի մարդոյ է՝ ընդ այն զի՞ զարմանայք. զի եկեսցէ ժամանակ՝

յորում ամենեքին որ 'ի գերեզմա-
նըս կայցեն՝ լուիցեն ձայնի նորա,
և ելեսցեն արտաքս. որոց բարիս
գործեալ իցէ՝ 'ի յարութիւն կե-
նաց: և որոց չար արարեալ՝ 'ի յա-
րութիւն դատաստանաց: Ոչ կա-
րեմ ես յանձնէ առնել և ոչինչ.
այլ որպէս լսեմ՝ դատեմ, և դա-
տաստանն իմ արդար է. զի ոչ
խնդրեմ զկամս իմ, այլ զկամս այ-
նորիկ՝ որ առաքեաց զիս:

---

Երգ տեառն Ներսէսի ասացեալ վասն առ 'ի Քրիստոս ննջեցելոց:

Ո՞վ անե՜ղ անժամանա՛կ հայր ա՛- բկ
նըսկիզըն և անքանա՛կ. որդւոյ դկ
պատճա՛ռ ծննդեա՛մբ անճա՛ռ հոգ- մատ
ւոյն բղխմամբ անքըննաբա՛ր. ա՛-
ղաչե՜մք ըզքեզ գըթած երկայնա-
միտ և ողորմա՛ծ. ողորմեա քո՛ ըզ-
տե՛ղծուածոյս յուսո՛վ 'ի քեզ նըն-
ջեցելոյս:

Բա՛նդ որ 'ի ծո՛ց հօր միա՛ծին և
կե՛րպարան սկըզբնա՛տըպին. որով
Ե՛րկինք գծա՛ցան աշխարհ լըրի-
հա՛ստատեցան. հա՛յցեմք 'ի քէ՞ն տ՟ր
Ե՛ փրկի՛չ ամէնո՛ղորմ և կե՛ցուցիչ. ո՛։
Գե՛րագո՛յն շնորհա՛ց բա՛շխող երկ-
նաւո՛րաց և երկրայնո՛ց. կեանք և
կենա՛ց տըւո՛ղ հոգի, հօր և ո՛րդւոյ
ա՛րարչա՛կից. խը՛նդրեմք 'ի քէ՞ն աղ-
բիւր բա՛րեա՛ց արբո՛ւցա՛նողըդ ծա-
րաւեա՛ց. ո՛ղոր։
Դա՛ւանի՛մք ը՛նդ սրո՛վբէ՛ից զկեն-
դա՛նարարըդ համայնից. երեքսըր-
բեան մի տէ՛րութի՛ւն զհայր և զո՛րդի
և սուրբ զհոգիդ. յո՛ր հանգու-
ցեա՛լըս մըկըրտեա՛լ և հաւա՛տով
խոստովանեա՛լ. ո՛ղոր։
Ե՛րրակի՞ թիւ կա՛տարեա՛լ յե՛րկս
անձինըս բաժանեա՛լ. երրորդութ՟ե
միաւո՛րեա՛լ մի՛ով բնութ՟ե՛ հա՛ւա-
սարեա՛լ. յո՛րմէ կապեա՞լք և ա՛րձա՛-
կի՛մք և վե՛րը՛ստին ա՛նլոյծ կապի՛մք. ո՛։

Օ՛ էակիցըդ հօր զՈրդի փառաւորեմք անլռելի. որ իջեր յարգանդ կուսին զանդամայինն առեր մարմին. աղաչանօք Ածածնին անապական քում ծնողին. ողոր:

Երեւեցար մարմնով յերկրի որ 'ի Հօրէ անմեկնելի. ընդ հողեղէնս բնակեցար 'ի հրեղինաց երկրպագեալդ. պաղատանօք երկնաւորաց փառաբանչաց քոց հրեշտակաց. ո:

Ըստ օրինացն մովսէսի ընծայեցար 'ի տաճարին. զի ըզ բնութիւնըս մարդկային ընծայեսցես Հօր 'ի յերկինս. խընդրուածովք սուրբ ծերունւոյն քեւ 'ի կամաց արձակելոյն. ողոր:

Թագաւորըդ հրեղինաց որ ընդ մարդկան հողեղինաց. շրջեցար տընօրինաբար կրեցեր ըզկիրըս մարդկաբար. որ վասըն մեր զայս ամն 'ի յանձն առեր խոնարհութք. ողորմեա քո ըստեղծուածոյս:

բձ
դձ
մար

Ժողովեալքս ՚ի հրաժարումն
ծառայի քո յաշխարհէ․ հայ-
ցեմք ՚ի քէն արտասուելով և պա-
ղատիմք զայս ասելով․ Ճանապարհ
ընդ քեզ եղից ննջեցելոյս լեր ու-
ղեկից․ ՚ի յօթևանս հօր քո լու-
սոյ ընդ ննջեցեալս մեր հանգո։
Ի փրկութեան մերոյ սկզբան
մկրտեցար ՚ի յորդանան․ զոր շ-
նորհեցեր նոր աւազան ՚ի մաքրու-
թիւն մեղաց մարդկան․ հայցմամբ
կրկին կարապետին մեծին ՚ի ծը-
նունդս մկրտչին․ ՚ի յօ։
Լուսաւո՛ր ձայնիւ յերկնից զքեզ
դաւանեաց հայր էակից․ աղա-
ւնակերպ հոգին իջեալ առ համա-
գոյ իւր հանգուցեալ․ ընդմկր-
տեամբս նորին հոգւով յորդեգրու-
թիւն հօր հաւատով․ ՚ի յօ։
Խաւար մեղաց հալածեցաւ լոյս
գիտութեան քեւ ծագեցաւ․ խայթ-
ուած օձին բժշկեցաւ հիւան-

դութիւն մեր ողջացաւ. կենդա-
նարարըդ մեռելոց և լուսատուդ
խաւարելոց. 'ի յօ:

Ծագումն անճառն առ 'ի Հօրէ որ
ընտրեցեր 'ի յաշխարհէ, լուսաւո-
րիչ տիեզերաց ըզդասս ընտրեալ
աշակերտացն. աղաչանօք առաքե-
լոցն փող յարութեան մեր եղե-
լոց. 'ի յօ:

Կեանք 'ի կենաց լոյս 'ի լուսոյ որ
ըստեղծեր զմեզ 'ի հողոյ. նորոգե-
ցեր դարձեալ կրկին ծննդեամբ
սրբոյ աւազանին. զոր կեցուցեր
շնորհիւ քոյին 'ի մահուանէն այն
առաջին. 'ի յօ:

Հոգւով լցեր զմարդն առաջին
զոր կորուսեալ խաբմամբ չարին.
ըզնոյն հոգի բանիւ քոյին հեղեր
յոգիս մեր վերըստին. նովին հոգ-
ւով սուրբ և բարի առաջնորդեա
հոգւոց սորին. 'ի յօ:

Զայնեցեր առ գոգաւորս որով և

տուր մեռելոց յոյս. կենդանութե՛
չորեքօրեայն կենդանացան որք յա՛
գամայն. կեցո ձայնիւ վերջին փո՛
ղոյ կոչեա՛ ընդ սա յայսմ հողոյ. 'ի:
Պօղեալ սարսեաց պահակ մահու
'ի կենարար ձայնին լերոյ. արագա՛
պէս զոյգ ընդ բանին ետ ըզմեռ՛
եալն ըստ հրամանին. ճշխանք օ՛
դոյս այս սարսեցեն զհոգի սորա՛
մի արգելցեն. 'ի յօ:

ակ Ճանապարհ մոլորելոց և ճառա՛
գկ գայթ խաւարելոց, հրաւիրե՛
զու ցեր զորդիս լուսոյ 'ի յերկնային
հարսանիս քո. ընդ զուարճալից
անդ ժողովոց արժանացո ընդ սա
դասուց. և լապտերօք մոյծ յառա՛
գաստ ընդ իմաստուն սուրբ կու՛
սանացն:

Մերով բնութեամբ զոր ըզգեցար
'ի փայտ խաչին բեւեռեցար. լու՛
ծանելով զմեզ 'ի մեղաց 'ի նախա՛

հօրըն կապանաց. լո՛յծ և ըղձա՛ 'ի
յանցանաց վա՛սըն քո՛ սուրբ չար-
չարանաց. Եւ լապ:

Յե՛տ կամաւո՛ր մահու խաչի եդար
'ի նո՛ր գերեզմանի. երեքօրեայ
թաղմամբ յերկրի նոր ընտե՛ղծեր
զմե՛զ կենդանի. զի՛ջեալս ընդ քե՛զ
'ի հող մահու վերանկոչեա ձայնիւ
փողո՛յ. Եւ լապ:

Նըստեալ կանանցն իւղաբերից
և ողբայի՛ն արտասուալից. իբր ըզ
մեռեալ անյուսալից ըզ կենդանիդ
յաւիտենից. վա՛սըն նոցի՛ն սուրբ
արտասուաց մաքրեա՛ ըզմա՛ 'ի յան-
ցանաց. Եւ լապ:

Շարժեալ հիմանցըն դըժոխոց 'ի
տեսանե՛լ ըզքեզ ներքնոց. հաներ
զհոգիսն որ 'ի բանտին կապեալ
զիշխանըն մահածին. ընդ հանգու-
ցեա՛լ հոգիս սրբո՛ց հանգո զհո՛-
գիս նըննջեցելո՛յս. Եւ լապ:

Ուրախութեամբ զօրք երկնային

յերկնից յերկիր իջանէիր. յորժամ
յարեա՛ր 'ի մեռելոց լոյս ծագեցար
արարածոց. սո՛ւրբ յարութեամբ
քո կենարա՛ր յարո զադա՛մ 'ի կեանս
անմահ. լե լապ:

Զօրհանդուրժեա՛լ պահապա՛նացն
'ի յերկիւղէ՛ երկնաւորացն. որք ա-
ւետիս տայի՛ն կանանց թէ մա՛հ
լուծաւ մահկա՛նացուաց. սա՛ որ
մահու քո տընկակից լեցի կե՛նացդ
հաղորդակից. լե լապ:

Պօրակցեա՛լ անմարմնակա՛նքն առ
կենատո՛ւ սուրբ գերեզմանն. տան
աւետիս ազգի՛ մարդկան փառա՛ց
կե՛նացն յաւ՛էժական. դասաւորեա՛
պարուց նմ՛ցին ընդընջեցեա՛լս յօրըն
վերջին. լե լապ:

Ձահաւորեա՛լ նըշան խաչի՛ն յարե-
ւելից փայլեալ ծագին. հաւատա-
ցեալքն 'ի քեզ բերկրին և ուրա՛-
ցողքըն կոծեսցին. զե՛րկրպագո՛ւս
սրբոյ խաչի՛ն պայծառացո լուսով
նորին. լե լապ:

Ոահ գործեալ երկնաւորաց զա֊
ռաջի քո նախընթացս. զընտ֊
րեալս քո ժողովելով քեզ ընդ ա֊
ռաջ բերեն ամպով. ընդ աղա֊
նեաց օդապարհից խառնեա զմեզ
սուրբ երամից. դասաւորեա զմեզ
վերնոցն երգել ըզ փառս ընդ զու֊
արթնոցն:

Սարսափին տարերք երկրի յոր֊
ժամ փառօք գաս հայրենի. արե֊
գական լոյս խաւարի լուսինն աս֊
տեղքն նուաղին. ընդ յաւուրն
աներեկի լուսաւորեա լուսով քո֊
յին. դասս:

Վերնականն զօրացն պետ փողէ
բարբառ աւետաբեր, արիք մե֊
ռեալք որք յադամայ քանզի ահա
եկն փեսայ. ընդ հարսնացեալ
մաքուր հոգւոց կարգեա զմեզ 'ի
թիւ սրբոց. դասս:

Տիրական յաթոռ նստիս յարա֊
րածոց երկրպագիս. արդարութե

ած
գձ
յոհ

զաշխարհ դատես վարձս ըստ գոր-
ծոց հատուցանես. յայնժամ շնոր-
հեա՛ ողորմութիւն ննջեցելոյս մեր
թողութիւն. դասս։

Բամեալ մարդկա՛ն ազգ ժողովին
որք յադամայ ծնեալք լինին. և
հրեղինաց դասք երկնային համան-
գամայն վայրաբերին. ՚ի յայնմ ա-
հեղ հրապարակին յիշեա ընդսա յօրն
ահագին. դասս։

Ցուցանին գաղտնիք մարդկան իւ-
րաքանչիւր որ գործեցան. բարեաց
գործողքն պսակին չարեացն ՚ի
հուրն անշէջ մատնին. յայնժամ
յիշեա՛ զորս բարին գործըք մե-
ղացն ջնջեսցին. դասս։

Լուսին պսակք զանազանեալք և
պատմուճանք լուսափայլեալք. որք
վերայիցն ՚ի գլուխ եդեալ և արդա-
րոցն զարդարեալ. հաղորդս արա՛
հայցմամբ նոցին ընդսա լուսոյ փա-
ռաց նոցին. դասս։

Փառաց 'ի փառս բարձրանան ա-
ջակողմեանքըն վերանան. յորժամ
լըսեն զերանական ձայն օրհնու-
թեան 'ի քէն կոչման. Նորընծեցելոյս
մեր լըսեցո զաստուածային բար-
բառըդ քո. դասս:

Բանահայք և ժողովուրդք հայ-
ցեմք 'ի քէն տէր բարեգութ. ընդ
նորընծեցեալըն հաւատով ընկալ ըզ
մեզ նովին յուսով, յերուսաղէմ
քաղաք վերին յորում արդարքըն
ժողովին, փառս վերբերել միշտ
ընդ նոսին երրորդութեանդ եր-
րեակ անձին:

Սրբարիչ և մարդասէր ան- գձ
խակալ և բարեգութ. որ դը-
վըսդ 'ի սրբելեաց տէր դատա-
ւոր արդարութե. ընդ սրբոց
առաքելոց տէր պըսակեա զմեր
նորընծեցեալսն. ողորմած տէր ո-
ղորմեա հոգւոցըն մեր նորընծե-
ցելոց:

Յորժամ գրեալքըն կատարին
որ զայնմ աւուր մեզ պատմեցին.
մարգարէից բանքըն յորդին
առաքելոցըն վարձարին. Որոր։

Ի վերինն Երուսաղէմ 'ի բնա-
կարանս հրեշտակաց. ուր ե-
նովք և եղիաս կան ծերա-
ցեալ աղաւնակերպ 'ի դրախտին
եդեմական պայծառացեալ ան-
ժանապէս. Որոր։

Թագաւոր փառաց Քրիստոս,
որ ժամանեալ գաս 'ի յերկնից 'ի
վերայ թևոց հողմոց քո հայ-
րենի կերպարանօք. և առնես
հրաւիրձութեամբ ըղքըննու-
թիւն որդւոց մարդկան. Որոր։

Ի դնել բեմքն բազմի փեսայն,
և առագաստըն զարդարի. գաբ-
րիէլեանն փողըն գոչէ, սուրբք
ամենայն անդ հաւաքին. արդա-
րոց դասքըն բերկրին. իսկ
մեղսամէրքըն թախանձին. Որոր։

Յորժամ հընչէւն փողոյն լինի և զինտականն գիրըն յայտնի. Ճաւագայթ սըրբոյ խաչին յարեւելից փայլեալ ծագի. հրեշտակաց գունդք ծաւալին հրեշտակապետք պարունակին. ողոր:

Ահեղ խորհուրդ քահանային բազկատարած կայ ՚ի բեմին, առաջի ահ սեղանոյն. հուր չիջանի խաւար մերժի, տըրտմեալ հոգիքն ուրախանան, զի թողութիւն մեղաց լինի. ողոր:

Մովսէս աստուածախօս և ահարոն զեւտացին. մարգարէքն իսրայէլի և քահանայք հին օրինին, յառաջագոյն մեզ ծանուցին ըզ գալուստ քո միածնիդ. ՚ի փրկութիւն մեզ յայտնեցին. յանապատի կերակրեցին. ո:

Տըրտմահաղորդ չարչարանօք. ՚ի յանձն առեր ըզ մահ խաչին. և փայտին բարձող նզեր վ

ադամայ նախաստեղծին. ողոր-
մեա տէր ողոր:

Օ արհուրեցան զօրք երկնային, յորժամ տեսին զտէրդ ի խաչին. արեգական լոյս քող արկեալ, և լոյս լուսնին նուաղեցաւ. յահեղ փառաց թագաւորդ խաւար եղև ընդ տիեզերս. ողոր:

Ուրախացան ազգք մարդկան, յորժամ լուան զքո յարութիւնդ. նորափետուր զարդարեցան ի յարութեան քո միածնիդ. ողոր:

Աղաչանօք սրբոյ խաչին. և անբարբան բարեխօսին. և սրբոյ աստուածածնին և յովհաննու կարապետին. և սրբոյն ստեփաննոսի և առաջին մարտիրոսին. և սրբոյ լուսաւորչին հայաստանեայց հայրապետին. և սրբոց առաքելոց, և համօրէն մարտիրոսաց. ողորմեա:

Ես ասացի ՚ի վերանալ յինէն
աւուրց իմոց, յորժամ երթայ-
ցեմ և ես անյօր. յառաջին օթե-
վանին զոր ոչ գիտէի. օգնեա
և ինձ քո անյօր, յառաջին ճանա-
պարհին. և ՚ի միւսանգամ գալըս-
տեանն քո օգնեա ինձ:
Այն եհաս օր վախճանի իմոյ.
լալումն ողբումն և աշխարումն.
սիրտ իմ խռովեցաւ յիս. և ոս-
կերք իմ ցամաքեցաւ. օգ:
Ի մահիճս իմ զարթուցին զիս,
պահանջողք հոգւոյ իմոյ. տա-
նէին զիս ճանապարհ հեռա-
ւոր, զոր ոչ գիտէի. օգ:
Նայեցայ և ոչ ոք էր որ օգնէր
ինձ. ապաւինեցայ յԱծ փրկու-
թեան իմոյ. ցընծասցէ հոգի
իմ յարքայութեան քում. օգ:
Գրեցայ ես ՚ի գիր կենդանու-
թեան. և մեկնեցայ երթալ առ
արարիչն երկնի և երկրի. օգ:

Յանըստուեր և յանեղ լուսոյն հեռացայ խաբմամբ խաւարային. ճաշակեցի ըզ մահաբեր պտուղն. հողանայ պատկեր բարերար ստեղծողիդ. ող:

Յանջատման հոգւոյս ՚ի մարմնոյս, ՚ի քակտիլ գեղեցիկ շինուածոյս. զարհուրիմ ՚ի սպառնալեաց թագաւորին. թէ պահանջել յինէն զտաղանդ պատուիրանին. ող:

Կուսածին մարդացեալ ած իմ յիսուս. յայնժամ աւուր ահեղ ատենին, զգինս արեան քո մի դատապարտեր. ող:

Սոսկալի է օր վախճանին, և ահեղ օր դատաստանին. յայնժամ աւուր ահեղ ատենին ըզ գինս արեան քո մի անտես առներ. զի պատկեր եմ բարերար ստեղծողիդ. ող:

Զահաւոր դատաստանն դատա

ւորդ տեսի, և զարհուրեցայ.
զի անպատրաստ եգիտ զիս ՚ի հրա-
մանաց քոյ թագաւոր յաւիտե-
նից. օգ։

Ծածկին արարած մայր տն և
կենս որ. բարեխօսեաւ առ որդին
քո միածին, զի փրկեսցէ զմեզ
՚ի սպառնալեաց գեհենոյն, և
պարգևեսցէ մեզ զերկնից զար-
քայութիւն, և հանգուսցէ զհո-
գիս մեր ննջեցելոցն. օգ։

Մաղթանք։

Հոգւոցն հանգուցելոց քրիստոս աստուած՝ արա հանգիստ և ողորմութիւն. և մեզ մեղաւորացս՝ շնորհեա զթողութիւն յանցանաց։ Եւ եւս խաղաղութեան զտէր ա։

Վասն հանգուցեալ հոգւոցն աղաչեսցուք զփրկիչն մեր քրիստոս՝ զի զնոսա ընդ արդարսն դասեսցէ. և զմեզ կեցուսցէ շնորհիւ ողորմուե իւրոյ։ Ամենակալ տէր աստուած քրզ

մեր. կեցո և ողորմեա։

Տէր ողորմեա. տ՟ր ողորմեա. տ՟ր ո։

մաղ

Քրիստոս որդի աստուծոյ անոխակալ և բարեգութ՝ գթա քո արարչական սիրովդ ՚ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց։ Յիշեա յաւուր մեծի գալստեան արքայուե՟ քոյ։ Արա արժանի ողորմութեան քաւութեան և թողութեան մեղաց։ Դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո յաջակողման դասուն։ Զի դու ես տէր և արարիչ ամենեցուն. դատաւոր կենդանեաց և մեռելոց։ Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւի։

Եւ ապա ասէ օրհնութիւն ըստ պատշաճի աւուրն, նաև ՚ի յայնէն. և զկնի՝ մաղթանքն, քարոզն, և աղօթքն։

Մաղթանք տէրունական տօնից.

Փառք հրաշափառ ծննդեան քո տէր. զօրհնեալ և զփառաւորեալ, զհրաշալի և զյաղթող զծնունդ քո ծ՟ը օրհնեմք և փառաւորեմք։

Մարդասէր տէր՝ մծ՟ սրբուհւոյ ա֊

նարատի մօր քո և կուսի՝ և մծ խաչի քո պատուականի, ընկալ զա- ղաչանս մեր. և կեցո զմեզ:

Այնպէս ասա և յամենայն տօնս տէրունականս ըստ պատ- շաճի աւուրն. Ի յայտնութեան, Ի գալստեան, Ի տնօրէնութեան, Ի ծննդութեան, Ի խաչելութեան, Ի թաղման, Ի յարութեան, Ի համբարձման, Ի գալստեան հոգւոյն սրբոյ, Ի պայծառակերպութեան, և Ի 'ի տօնս սրբոյ խաչի և եկեղեցւոյ: Բայց 'ի գալստեան հոգւոյն սրբոյ՝ շմարտաւէր տէրն այսպէս ասա: Մար- դասէր տէր՝ վասն սրբուհւոյ անարատի մօրն և կուսի. և վասն խաչին պատուականի՝ ըն- կալ զաղա: Զ ի սխալին՝ որչ ասեն ա հոգին սուրբ, Ի մօր քոյ կամ խաչի քո: Նոյն 'ի տօնս եկեղեցւոյ ասա, Փառք տէրութեան քո տէր. և այլն որպէս 'ի վերոյ:

Մաղթանք 'ի տօնս սրբոց:

Բարեխօսութեամբ սրբուհւոյ ած- ածնին. և յովհաննու մկրտչին. որյն ստեփաննոսի նախավկային. և որյն գրիգորի մերոյ լուսաւորչին: Յի- շատակաւ և աղօթիւք սրբոց այս ա- ւուր, որոց այսօր է յիշատակ: Եւ մծ խաչի քո պատուականի, տէր ըն- կալ զաղաչանս մեր. և կեցո զմեզ:

Երան Սա՛ է իմ Ած, և փառաւոր առ-
գհ նեմ զսա. Ած հօր իմոյ՝ և բարձր
արարից զսա: Մարդասէր տէր:

Երկին Տուք փառս Այ, տուք օրհնութի՜
աձ մարդասիրին Թագաւորին յաւիտե-
նից, որ փրկէ զծառայս իւր և կե-
ցուցանէ: Մարդասէր տէր:

Ձ՛ նա Դու ես Տր մեր՝ դու ես Քս փըր-
ակ կիչ մեր, զքեզ օրհնեն անձինք մեր:
Մարդասէր տէր:

Ողոր Բարձրացաւ եղջիւր իմ յԱծ փրկիչ
բձ իմ. հաստատեցաւ սիրտ իմ 'ի Տր՝
տերամբ և հաւատով: Մարդասէր:

Եբրա Խաղաղութեանց տուող Քրիստոս՝
բկ զխաղաղութիւն և զերկնային ողոր-
մութիւն քո պարգևեա յարարա-
ծըս քո: Մարդասէր տէր:

Պետր Յոյս կենդանութեան, յոյս և ա-
գձ պաւէն փրկութեան Տէր Յիսուս
փրկիչ. փրկեա և փարատեցո ըզ-
ցաւս անձին իմոյ: Մարդասէր Տր:

Խոս Ընկեսցեն աղօթք մեր 'ի տաճար Սբ
գկ քո. խոնարհեսցի ունկն քո 'ի խըն-

գըրուածս մեր։ Մարդասէր տէր։
Լուր մեզ տէր լուր մեզ, աստ- Ձ՛ՆԷՂ
ուածային ողորմութեամբ և գը- ԳՃ
թութեամբ քո խնայեա յարարա-
ծըս քո։ Մարդասէր տէր։

---

Քարոզ՝ Երրորդի և Իններորդի կանոնացն։

Վասն ՚ի վերուստ խաղաղութեան՝ ԲԿ
և փրկութեան անձանց մերոց, ըզ ԴԿ
տէր աղաչեսցուք։ Տէ՛ր ողորմեա։
Վասն լսելի լինելոյ ա̃ռ ա̃յ ձայնի ա-
ղաչանաց մերոց, զտէր աղա։
Վասն քաւիչ և ներող լինելոյ ա̃յ ՚ի
վերայ մեղաց մերոց, զտէր աղա։
Վասն թողլոյ մեզ զա̃մ յանցանս
մեր, զկամայ և զակամայ, զտէր ա։
Վասն զի մի՛ ընդ խոստանան դատա-
նիցիմք յաւուրն պատասխանատը-
ւութեան, զտէր աղա։
Վասն հոգւոցն հանգուցելոց՝ որք
ճշմարիտ և ուղիղ հաւատով ՚ի ք̃ս
ննջեցին, զտէր աղա։
Եւ ևս միաբան վ̃ս ճշմարիտ և ո̃ւ
հաւատոյս մերոյ, զտէր աղա։

Զանձինս մեր՝ և զմիմեանս, տ̃ն ա̃յ
ամենակալին յանձն արասցուք։
Ողորմեաց մեզ տ̃ր ա̃ծ մեր ըստ մե-
ծի ողորմութեան քում. ասասցուք
ամենեքեան միաբանութեամբ։
Տ̃ր ողորմեա. տ̃ր ողորմեա. տ̃ր ո։

Աղօթք։

Տէր տուընջեան՝ և գոյացուցիչ գի-
շերոյ. որ արարեր զտիւ 'ի զբօսա-
նըս բարեգործութ̃ե՝ 'ի փրկութ̃ի
անձանց մերոց, և զգիշեր 'ի հան-
գիստ քնոյ՝ տկարացեալ բնութ̃ե
մերոյ։ Իսկ այժմ զարթուցեալ բա-
ցեր զբերանս մեր յօրհնաբանու-
թիւն՝ ահաւոր և փառաւորեալ
անուանդ քում տէր։ Ընկալ և այժմ
զաղաչանս մեր, և յաջողեա մեզ
ուղիղ հաւատով և առաքինասէր
վարուք 'ի նոյն պաշտօն քո կանխել
միշտ. և նովին կանոնիւս անդա-
դար փառաւորել զհայր և զորդի
և զսուրբ հոգիդ. այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Զքեզ, որ յա̃մի գթած և մարդա-
սէր տ̃րդ ես, աղաչեմք հանապազ,
զի զօրացուսցես զմեզ որ ըստ օրէ-
կաւ 'ի կարգի կրօնաւորութե̃ մե-
րում ։ Թեթևացո տէր՝ զքաղցր
լուծ քո՝ զոր եդեր 'ի վերայ մեր.
զի կարասցուք կալ 'ի պատուիրանի
քում, և զհաճոյսն առնել առաջի
քո յամենայն ժամ, 'ի տուէ և 'ի
գիշերի ։ Հրեշտակային երգակցու-
թեամբ զքեզ օրհնել՝ զքեզ գո-
վել, և քեզ գոհութիւն և փառս
մատուցանել ամենազօր տէրութե̃դ.
այժմ և միշտ և յաւիտեանս յա ։

Մաղթանք .

Սաղմոսիւք և օրհնութ̃բ՝ և երգօք
հոգևորօք անդադար փառաւորեմք
զհայր և զորդի և զսուրբ հոգիդ .
այժմ և միշտ և յա ։
Օրհնեալ տէր մեր յս̃ քս̃ . ամէն ։
Հայր մեր որ յերկինս ես ։

աձ Վասն 'ի գիշերի և 'ի տունջեան,
գձ և յամենայն ժամու խօսիլ մեզ ըզ-
բան տեառն՝ զՏէր աղաչեսցուք։
Վասն չանկանելոյ մեզ 'ի փորձու-
թիւն, որում ոչ կարեմք հանդուր-
ժել՝ զՏէր աղա։

Վս ամբիծ և անդատապարտ կալ
մեզ առջի ահեղ ատենին քի՝ զՏր։
Վս առաջնորդելոյ մեզ 'ի նաւահան-
գիստն կենաց անվախճանից՝ զՏր։
Վս արժանի լինելոյ մեզ վերին կոչ-
մանն՝ և երկնից արքայութեն՝ զՏր։
Վս հոգւոցն։ Եւ եւս։ Զանձինս։

Ողորմեաց։

Աղօթք․

Ի գիշերի և 'ի տունջեան և յամե-
նայն ժամու զքեզ աղաչեմք, և 'ի
քէն խնդրեմք մարդասէր Տէր։ Տուր
մեզ Աստուած փրկիչ մեր․ խոնարհեցի
ունկն քո 'ի խնդրուածս մեր․ զի մի՛
ունայն լիցին վաստակք ծառայից
քոց․ այլ համարեսս զաշխատու-
թիւնս մեր 'ի գործ արդարութե,

և 'ի պտուղ աստուածպաշտութե՟ն։ Ընկալ տէր՝ զաղօթս և զերկրպագութիւնս մեր, և հատո մեզ զողորմութիւն քո առատապէս. ծածկեա զմեզ ընդ հովանեաւ ամենազօր աջոյ քոյ. զօրացո զմեզ տ՟ր՝ զօրութեամբ սուրբ հոգւոյդ. պահեա զմեզ ո՟պ բիբ ական։ Եւ արա առ մեզ նշան բարի, 'ի գովեստ և 'ի փառաբանութ՟ի անուանդ քում սրբոյ։ Զի 'ի քո փառս կատարի ամենայն արարածոց մշտնջենաւոր փառաբանութիւն 'ի բարձունս, հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեա։

Խաղաղութիւն ամենեցուն։

Հովիւ քաջ՝ հովիւ բարի՝ և յաւիտենական՝ նայեաց և այց արա բանաւոր հօտի քո, զոր ժողովեցեր առ քեզ գթութեամբ քով։ Զի քո առաջի կամք տէր, և առ 'ի քէն ողորմութե՟ցդ և գթութե՟ցդ ակն ունիմք։ Զամենեսեան օրհնեա, զամենեսեան խնամեսցո,

զամենեսեան լուսաւորեա. և ամենեցուն պարգևեա զերկնից արքայութիւնդ։ Վասն զի դու ես տէր կենաց, և մծ ողորմութեանց. և քեզ վայելէ փառք իշխանութի և պատիւ, այժմ և միշտ և յա։

Մաղթանք ։

Ի գիշերի և ՚ի տունջեան և յամենայն ժամու անդադար փառաւորեմք զհայր և զորդի և զսուրբ հոգիդ, այժմ և միշտ և ։

---

Քարոզ՝ Մէ՛ նախանձէր, և խաղաղական կանոնացն ։

ակ
գկ

Վծ ուղղելոյ զգնացս մեր ՚ի ճանապարհս խաղաղութե՛ զտէր աղա։
Վասն ցրելոյ ՚ի մէնջ զամենայն խորհուրդս չարին՝ զտէր աղա։
Վծ պարգևելոյ մեզ սուրբ խորհուրդս և առաքինի վարս՝ զտր ա։
Վծ պահելոյ զմեզ ընդ հովանեաւ ամենազօր աջոյն իւրոյ՝ զտէր ա։
Վասն խորտակելոյ զհակառակորդն վաղվաղակի ընդ ոտիւք մերովք՝ ըդ։
Վս հոգւոցն։ Եւ եւս։ Զանձինս։

Ողորմեաց։

Աղօթք ։

Տէր երկնի և երկրի՝ արարիչ ամ՟ արարածոց երեւելեաց և աներեւութից ։ Առ քեզ կարդամք յամենայն ժամ. զի ընդ ամ՟ տեղիս է տէրութիւն քո, և արքայութիւն քո ամենեցուն տիրէ ։ Շնորհեա մեզ երկիւղիւ 'ի պաշտօն քո կանխել հանապազ, սիրել զքեզ 'ի բոլոր սրտէ և 'ի բովանդակ մտաց, և յամենայն զօրութենէ մերմէ պահել զպատուիրանս քո ։ Համբառնալ առ քեզ զձեռս մեր 'ի սրբութիւն աւանց բարկութեան և երկմտութեան, և գտանել 'ի քէն զշնորհս և զողորմութիւն, և զառաքինասէր գործոցն յաջողութիւն ։ Վասն զի դու ես տ՟ր կենաց և ամ՟ ողորմութե՟ց. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Քում ամենազօր և յաղթող տէրութեանդ կրկնի ամ՟ ծունր յերկրպագութիւն. և փառաւորի յա-

մենեցունց թագաւորութիւն քո։
Նայեա յերկրպագութիւնս մեր, և
ուսո մեզ առնել զարդարութիւն
ճշմարտութեան։ Վասն զի դու ես
ա͞ծ խաղաղութեան, որ բարձեր
զթշնամութիւն 'ի միջոյ, և արա-
րեր զխաղաղութի̄ յերկինս և յերկ-
րի. հեռաւորաց և մերձաւորաց
աւետարանեցեր զնոր պարգևս քո-
յին բարեացդ։ Որում և զմեզ մե-
ծի շնորհացդ արժանաւորս արա-
ցես, գտանելով ընդ ճշմարիտ եր-
կրպագուս քո, ա͞ծ մեր և տ͞ր մեր
և փրկիչ յիսուս քրիստոս։ Որ ես
օրհնեալ ընդ հօր և ընդ սուրբ
հոգւոյդ. այժմ և։

Մաղթանք։

Յերգս օրհնութե̄ և 'ի ձայն սաղմո-
սաց անդադար փառաւորեմք զհայր
և զորդի և զս͞բ հոգիդ, այժմ և։

Քարոզ՝ Ողորմեա, և ի Ներսեսեան կանոնացն։

բձ Ա͞ծ գտանելոյ մեզ զշնորհս և զո-
գձ ղորմութիւն 'ի բարերար տեառնէ
մերմէ՝ զտէր աղաչեսցուք։

վասն փրկելոյ զմեզ 'ի զրպարտու-
թենէ մարդկան և յորոգայթից սա-
տանայի՝ զտէր աղա։

Վասն ա̄մ անձանց քրիստոնէից և
տանց հաւատացելոց՝ զտէր ա։

Վ̄ որք 'ի լերինս յայրս և 'ի փապարս
բնակեալ են ս̄ք հարքն մեր՝ զտ̄ր։

Վասն որք սաղմոսիւք և օրհնու-
թեամբ կատարեն զամենայն ժամա-
նակս կենաց իւրեանց՝ զտէր աղա։

Վ̄ հոգւոցն։ Եւ եւս։ Զանձինս։

Ողորմեա։

Աղօթք։

Գոհանամք զքէն տէր ա̄ծ մեր, որ զարթուցեր զմեր 'ի հանգստենէ քնոյ շնորհիւ ողորմութ̄ե քո։ Զարթո զմիտս մեր արդարութ̄ե առ քեզ տէր ա̄ծ մեր, զի տեսցեն աչք մեր զփրկութիւն քո։ Իջցէ և բնակեսցէ առ մեզ ա̄ծութիւն քո. և ողորմութիւն քո հովանի և պահապան լիցի 'ի վերայ պաշտօնէից քոց։ Եւ զմեզ զծառայս քո արժանի արա 'ի տուէ և 'ի գիշերի և յա̄մ

ժամու միշտ խորհիլ ’ի սէր պատուիրանաց քոց։ Եւ գոհանալով փառաւորել զհայր և զորդի և զսուրբ հոգին, այժմ և միշտ և։

Խաղաղութիւն ամենեցուն։

Կենդանարար զօրութի̃ և աղբիւր անմահութե̃, դու ես քրիստոս ա̃ծ փրկիչ մեր։ Որ շնորհեցեր մեզ ’ի մէջ գիշերի յառնել և խոստովան լինիլ առ քեզ վասն իրաւանց և արդարութեան քո։ Եւ այժմ աղաչեմք զքեզ տէր ա̃ծ մեր, արա ըզ մեզ արթունս և պատրաստս ’ի ժամ առաւօտու ընդ սուրբս քո։ Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և։

Մաղթանք։

Գոհութեամբ և ճշմարիտ խոստովանութեամբ անդադար փառաւորեմք զհայր և զորդի և զսուրբ հոգին, այժմ և միշտ և։

Թագաւորք առաջնորդութեան։

Թագաւոր յաւիտեան։ բհ
Լուր մեզ աստուած փրկիչ
մեր. և կեցո ըզմեզ, որ յամենայ-
նի կարող ես։
Լուր մեզ ած փրկիչ մեր. յոյս ամ ող
ծագաց երկրի. և որ ՚ի ծով հեռի։
Որ պատրաստէ ըզ լերինս զօրութ
իւրով. և ըզգեցեալ է զօրութի.
և կեցո ըզմեզ, որ յամենայն։
Լուր աղաչանաց մերոց տէր մար- փ
դասէր, և գթա ՚ի մեզ։
Մի զիս անտես առներ. այլ թ
օգնեա ինձ մարդասէր։
Մի ընկեներ զիս տր յերեսաց քոց. ող
և զհոգի քո սբ մի հաներ յինէն։
Տուր ինձ զցնծութիւն փրկու-
կութե. և հոգւով պետութե քո հաս-
տատեա զիս. այլ օգնեա ինձ։

փ Որ անուամբ տեառն եկիր զխս տէր աստ-
ւած փրկիչ իմ. այլ շնորհեա ինձ
թողութիւն բազմագութ մար-
դասէր, եւ կեցո։

թ Երկինք եւ երկիր գոհանան ընդ
քեն տէր. արարածք ամ քեզ եր-
կրպագանեն. եւ հրեշտակք 'ի բար-
ձունս աղաղակեն եւ ասեն. ողոր-
մեա դու ստեղծեր, մի կորուսաներ։

ադ Երկինք երկնից, ջուրք որ 'ի վերոյ
քան զերկինս օրհնեցէք զանու-
նորին տեառն։ Զի նա ասաց, եւ
եղեն. հրամայեաց եւ հաստատե-
ցան. եւ հրեշտակք 'ի։

փ Երկինք եւ երկիր հանապազ ընդքեզ
գովեն, թագաւոր փառաց. սե-
րովբէք եւ քերովբէք 'ի խոնարհ
ունելով ընդ դէմս իւրեանց. եւ
միաձայն բարբառով աղաղակեն
եւ ասեն. սուրբ. սուրբ. սուրբ.
տէր զօրութեանց։

Երկայնամիտ ես Տէր առ ամե- դշ
նեսեան. և գթած Տէր ի
վերայ մեր. որպէս և առաջին
կին փրկիչ և կեցո:

Երկայնամիտ բազումողորմ և ճշմա- ող
րիտ նայեաց առ իս, և ողորմեաց
ինձ: Տուր զօրութիւն ծառայի քո.
կեցո զորդի աղախնոյ քո. և արա
առ իս նշան բարութեան. և գթա:

Տէր որ գթացար յաւազակն խա- փ
չակցին քեզ. և մաքրեցեր զաղ-
տեղութիւն յանցանաց նորա յաղ-
բերէն կողի քո. գթա և յիս ի
մեղաւորս, որ ծառայելս եմ առ
քեզ. և փափագիմ ի գալուստն քո
որպէս ըղձի ի յեղջերուաց ի յաղ-
բերս ջուրց:

Մարտեան ընդ իս թշնամին. հա- թ
նապազ զիս կամի կորուսանել.
այլ դու Տէր իմ այց արա մոլորեալ
ոչխարիս, և կեցո:

Մարտեան ընդ իս ի տարապար- ող

տուց. և փոխանակ սիրոյ իմոյ մատնէին զիս. այլ ես յաղօթս կայի: Հատուցին ինձ չար փոխանակ բարւոյ. ատելութիւն փոխանակ սիրոյ իմոյ. այլ դու տէր իմ այց ա:

փ Որ հովիւդ ես հօտից բանաւոր կենդանեաց. տուր ինձ յոյս կենաց ապաշխարութեան. և դարձո զմոլորեալս ի հօտ քո քրիստոս, և կեցո:

թ Մեղայ և ամբարշտեցայ ընդ քեզ. թողութիւն շնորհեա մեղաց իմոց. քանզի իմ լեր քո գթութեամբդ. որ միայնդ ես փրկիչ. և կեցո:

ող Մեղայ տէր մեղայ. և զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ: Աղաչեմ և խնդրեմ ի քէն, թող ինձ տէր. թող ինձ. և մի կորուսաներ զիս ընդ անօրէնութեան իմոյ. քա:

փ Մեղայ քեզ տէր. մեղայ քեզ տէր. մեղայ. և բան զաւազ ծովու բա-

զում են յանցանք իմ. պատրանք աշխարհիս խաբեցին զիս. և եղէ անպըտուղ ՚ի կենաց յուսոյդ. այլ դու անոխակալ և անյիշաչար փրըկիչ. խնայեա ՚ի մեղուցեալ ծառայս, և կեցո:

Տէր իմ, բազում են անօրէնութիւնք անձին իմոյ. ոչ յիշեցի զահեղ ըզդատաստանըն քո. այլ անկեալ ըզքեզ աղաչեմ. շնորհեա ինձ ապաշխարութիւն տէր. և ողորմեա: դհ

Անօրէնութիւնք իմ բարձրացան քան ըզգլուխ իմ. և որպէս բեռըն ծանր ծանրացան ՚ի վերայ իմ: Նեխեցան և փտեցան վէրք իմ յերեսաց անըզգամութեան իմոյ. սղ

ոչ յիշեցի զահեղ ըզդա:

Պաղատանօք մատուցանեմք քեզ հայր երկնաւոր. մի անտես առներ զաղաչանըս մեր. այլ անցո զցասումըն փ

քո ՚ի մէնջ. և յիշեա զի պատկեր
եմք բարերարութեանդ։

Թ Տէր իմ գթութիւնք քո բա-
զում են յոյժ. առ իս արա զբա-
րերարութիւնս քո. որպէս և մաք-
սաւորին, և ինձ ողորմեա։

տղ Գթութիւնք քո բազում են Տէր.
և ըստ իրաւանց քոց կեցո զիս։
Բազում են որք հալածեն և նեղեն
զիս. ՚ի վկայութեանց քոց ես ոչ խոտո-
րեցայ. առ իս արա զբա։

Փ Անոխակալ և անյիշաչար Տէր.
որ գթալով ՚ի մեղաւորս շնորհե-
ցեր ապաշխարութիւն. արդ գը-
թա և յիս Տէր ՚ի մեղուցեալ և
յանօրինեալ քո ծառայս. և փո-
խանակեա զիս գործողս չարեաց
՚ի զղջումն ապաշխարութեան,
և կեցո։

Թ Ի տաճարի քում սրբութեան,
փառաւորելով ընդ քեզ. դու ու-
նիս իշխանութիւն, ողորմեա մեզ։

Այլ ես ըստ բազում ողորմութե ող
քում մտից 'ի տուն քո. և երկիր-
պագից 'ի տաճար սուրբ քո երկիւ-
ղիւ քո։ Տէր, առաջնորդեա ինձ
յարդարութե քում վս թշնամեաց
իմոց. և ուղիղ արա առաջի իմ
ըզճանապարհըս քո. դու ունիս։

Ի տաճարի քում սրբութեան հա- փ
նապազ ընդ քեզ զովեմք թագաւոր
փառաց. որ ունիս իշխանութի
կենաց և փրկութեան, ողոր-
մեա մեզ։

---

Ապաշխարութե արտասուօք ա- եղ
ւազանն լինի, և լուանայ ըզ
բազմութիւն մեղաց. ամենա-
շնորհեա յուսոյ քան ըզ վարդա-
ճան դքաւութիւն և ըզ մեծ քո
ողորմութիւն։

Օրհնեալ է անձն իմ առ քեզ աստ- ող
ուած հզօր և կենդանի. երբ ե-
կից երևեցայց երեսացդ աստուա-

ծոյ։ Եղեն ինձ արտասուք իմ կե-
րակուր 'ի տուէ և 'ի գիշերի. և
այն զի ասէին ցիս զօրհանապազ,
թէ ուր է աստուած քո. սո-
վաւ չնորհեա յամ։

փ Յորժամ գաս փառօք հօր յահա-
գին ամպովն 'ի դատել զերկիր.
և դողան սարսափմամբ երկրածին
քս յահէն քումմէ. 'ի նոյն
տուք յատենին դատաւոր ահեղ.
և յանկարծուք յարարածս, յիշեա
և զիս ընդ բազմամեղս. որ ընկղ-
մեալս եմ յանցանօք բանսարկուին
խաբմամբ. և հայցեմ զանմասնն,
տէր և զես յիշեա. որ միայն ես
փրկիչ։

թ Ով ես որ 'ի նախ աշխարհի ան-
կոծեն միայնդէք իմ. նաւահանգ-
գիստ ապաշխարութեան չնորհեա
ինձ բարձումնորմ, և կեցո։

ող Կեցո զիս աստուած, զի հասին
ջուրք յանձն իմ. ընկլայ ես 'ի

խորս անդնդոց ուր ոչ գոյ ինձ
հանգիստ. նաւահանգիստ:
Նաւապետդ բարեգութ ամ. քեզ ա- Փ
պաւինիմ. տուր ինձ ձեռն որպէս եր-
բեմն պետրոսին ի վերայ ա-
լեաց. որ ծփիմս ալեկոծեալ
յանցանօք մեղաց, և կեցո:

Դու ես քս աղբիւր կենաց. բըղ- Թ
խումն ողորմութե. շնորհեա փըր-
կիչ անձանց մերոց ըզթողութի
մեղաց մերոց:

Ի քէն է տէր աղբիւր կենաց. և ՈՂ
լուսով երեսաց քոց տեսանեմք
ըզլոյս: Ծագեա ողորմութիւնս
քո որք ճանաչեն ըզքեզ. զարդա-
րութիւնս քո որք ուղիղ են սըր-
տիւք. շնորհեա փրկիչ անձանց:

Այր աղբիւրդ ես ծարաւեաց և Փ
հանգիստ աշխատելոց. ճանապարհ
մոլորելոց, և հովիւ հոգւոյ բա-
նաւոր հօտի. փախուցեալս առ
քեզ քրիստոս լեր նաւահանգիստ.

Եւ արբո մեզ ծարաւեալցս ըղձա-
ժամկ. քո. քաղցրութեն յանդորսպաու
յաղբերէդ:

=====

ուր Ի տաճարի սրբութեան քում
լուր տէր ձայնի իմում. և
աղաչանք իմ ժամանեսցեն
'ի յականջս քո տէր:

աղ Լուաւ ինձ 'ի տաճարէ սբյ իւր-
մէ ձայնի աղօթից իմոց. և աղա-
ղակ իմ առաջի նր, մտցէ յական-
ջս նորա. և աղաչանք:

փ / աղջ Որ լուսաւոր ես տիեզերաց քր-
իստոս աստուած. լուսաւորեա
զիմ ըղ խաւարային խորհուրդս, և
կեցո:

փ / ննջ Օրհնեալ ես տէր, և փառաւո-
րեալ է քո անուն մարդասիրութդ.
զաղաչանս մեր քեզ մատուցանեմք,
որ թագաւորդ ես յաւիտենից.
զննջեցեալսն մեր արժանի արա
տէր ընդունիլ 'ի կեանսդ յաւի-

տենից։

Արտասուս ինձ շնորհեա ի յաչ- Թ
պաշխարութիւն տէր. զի լուացից
ըզմեղս անձին իմոյ. որպէս պոռ-
նիկն աղաչեմ, եւ կեցո։

Վտանգեցայ ես ի հեծութեան ող
իմում. լուացի զամ գիշեր ըզ մա-
հիճս իմ. եւ արտասուօք իմովք
զանկողինս իմ թացի. զի լուա-
ցից ըզ մեղս։

Որ աղբիւր ես անսպական քը- փ
րիստոս աստուած. զվիրաւորեալ
անձն իմ ի մեղաց, բըժըշկեա որ
բըղխմամբ արտասուաց, եւ կեցո։

Զմոլորեալ ծառայս խընդրեա Թ
տէր. եւ մի դատապարտեր զիս
ի յաւուրն այցելութեան քո
մարդասէր։

Կեցցէ անձն իմ օրհնեսցէ ըզքեզ ող
եւ իրաւունք քո օգնեսցեն ինձ։
Մոլորեցայ ես ոպ զոչխար կորու-
սեալ. խնդրեա զծառայս քո, զի

զպատուիրանըս քո ես ոչ մոռացայ.
և մի դատապարտեր։

փ Որ մոլորեցայ 'ի հօտէ քումմէ հովիւ բարի. խնդրեա զիս ընդ մոլորեալս. և արժանաւորեա խառ-
նիլ 'ի հօտ քո Քրիստոս, և կեցո։

---

Թագաւորք մարտիրոսաց։

Թագաւոր յաւիտենից։

աձ Բարեխօսութեամբ սրբոց (այս անուն), աղաչեմք զքեզ. Թողութիւն շնորհեա յանցանաց մերոց. բարերար Քրիստոս։

սղ Մերձ է տէր առ այնոսիկ որք մաշեալ են սրտիւք. և զխոնարհըս հոգւով կեցուցանէ։ Բազում նեղութիւնք են արդարոց. յամենայնէ փրկէ զնոսա տէր. և պահէ զա̃մ ոսկերըս նց. և մի 'ի նոցանէ ոչ կորիցէ. Թողութիւն շն։

փ Որ յաղթող զօրութեամբ 'ի հանդէս

Ճըգնաւորական, անարատ
պահեցեր զխոստովանող վըկայս
քո. Քս ած. տուր մեզ զօգ-
նութիւն 'ի նեղութե մերում,
բարեխօսութեամբ սըրբոց մարտի-
րոսաց, և կեցո։

Թագաւոր յաւիտեան։

Ողորմութի .քո Տր արա 'ի ակ
մեզ. և բարեխօսութի սըրբոցն
(այս անուն), մի կորուսաներ ըզմեզ.
Երրորդութիւն սուրբ ողոր-
մեաց մեզ։

Փըրկութիւն արդարոց 'ի տեառնէ ող
է. վերակացու է նոցա 'ի ժամանա-
կըս նեղութեան։ Օգնեսցէ նոցա
տէր և փրկեսցէ զնս. ապրեցուս-
ցէ 'ի մեղաւորաց. և կեցուսցէ
զնս զի յուսացան 'ի նա. և բարե։
Որք ըզ տանջանս և ըզ մահ վա- փ
սըն .քո յանձն առին. և հեղին զա-
րիւնս իւրեանց վասն անուանըդ
.քոյ սըրբոյ. բարեխօսութեամբ նց

մի կորուսանէր ըզ մեզ. էր։

բձ Բարեխօսութեամբ սրբոցն (այս անուան), պարգեւեա մեզ տէր. առնուլ մասն եւ բաժին ընդ հրաւիրեալսըն 'ի կոչումն արքայութեանն երկնից։

սղ Սքանչելի է ած 'ի վր սրբց իւրոց ած խորագիտելի։ Նա տացէ զօրութիւն հաստատութե ժողովրդեան իւրոյ, օրհնեալ է ած. առնուլ մասն։

փ Մարտիրոսք երանեալք եւ փառաւորեալք. որք բազում տանջանացըն համբերեցէք. դուք ըզլոյսըն կենաց ըզգեցեալ ունիք. նաւ քն վասըն մեր բարեխօսեցէք։

բկ Դու ես քն աղբիւր կենաց. բըղխումն ողորմութե. շնորհեցեր սըրբոցն (այս անուան), յաղթող ըզնահատակութիւն. հալածել ըզխաւարն եւ լուսաւորել զանձինս մեր։

սղ Ած փառաւորեալ է 'ի խորհուրդս սրբց իւրոց. մեծ եւ ահաւոր 'ի վե-

րայ այնոցիկ՝ որք շուրջ են ըզնովաւ ։
Տէր ա՛ծ զօրութեանց ո՞ նմանի քեզ.
հզօր ես դու տէր, և ճշմարտութի
քո շուրջ է ըզ քեւ. շնորհեցեր
սրբոցն (այս անուն), յաղթող ըզնա-
համառակութիւն հալածել ըզխա-
ւարն և ըմբռնաւորել զայն ։

Ո՛վ շնորհօք սբ հոգւոյն յաղթե- փ
ցիք թշնամւոյն. Երանեալք սբ
վկայք քո. փառքն ձեր տօնողացս
հայցեցէք յայդ զթողութի մեղաց ։ փ
Ո՛ պսակակիրք էք պարծանաց ամ ա- փ
ռաքինեաց. նախաշաւիղ և առաջ-
նորդ կենացն յաւիտենից, ով սբ
վկայք. այս պսակիչն սրբոց
և փառքն մեր բարեխօսեցէք. շը-
նորհելով ողորմութիւն յանսպառ
ամբարէն կենացն յաւիտենից ։
Ի գթ օրհնութի սբց (այս անուն), բա- գծ
րեխօս ունիմք ամենք քեզ քրիստոս. գկ
Եւ աղաչեմք սրբոց քոց, շնորհեա ըզ
թողութիւն յանցանաց մերոց. և

'ի կեանսդ յաւիտենից նորո-
գեա եւ կեցո։

աղ Լոյս ծագեաց արդարոց. ուղղոց սրտից եղեւ ուրախութիւն։ Ուրախ եղերուք արդարք 'ի տէր. եւ խոստովան եղերուք յիշատակի սրբութեան նորա. եւ աղաչեմք։

գկ Պատուական է առաջի տն մահ սրբոց իւրոց. ո տէր ես ծառայ քո եմ. ծառայ եւ որդի աղախնոյ քոյ։ Հատեր ըզկապանս իմ. քեզ մատուցից պատարագ օրհնութեան, եւ զանուն տն կարդացից. եւ ա։

փ Հանդիսացեալք 'ի մարտս պատերազմի յաղթող գտայք սուրբ վկայք. քանզի ճանապարհ հորդեցիք ըմեզ յերկնային քաղաքն յերուսաղէմ, ընդ անմարմնոցն դասս փառաւորելով զտէր երրորդութիւնն։

գձ Որք 'ի խորանս սրբութեան եմք ժողովեալ օրհնել ըզքեզ քրիստոս.

աղաչանօք սրբոցըն (այս անուն), զպա-
ղատանըս մեր մի անտես առներ.
որ միածինդ ես բազմողորմ թա-
գաւոր փառաց քրիստոս։

Մերձ է տր առ ամն որք կարդան ող
առ նա. առ ամենեան որք կարդան
առ նա ճշմարտութեամբ։ Զկամս
երկիւղածաց իւրոց առնէ տր. ա-
ղօթից նց լսէ, և կեցուցանէ զն-
նս. աղաչանօք սրբոցն (այս անուն),
զպաղատանըս մեր մի ան։

---

Առաքելոց և մարգարէից՝ այս է։

Ոչ են բանք և ոչ են խօսք, որոց ող
ոչ լսին ձայնք նոցա։ Ընդ ամ
երկիր ել բարբառ նց. և մինչև ՚ի
ծագս աշխարհի են խօսք նոցա.
աղաչանօք սրբոց առաքելոցըն։

Նահատակք մե վերակացք քրիստոսի փ
աստուծոյ. ընդ հանուր տիե-
զերաց քարոզք փրկութե. որք
զանձինս ձեր մատուցէք պա-

տամրագ, և զենումն աստուծոյ
հօր ՚ի հօտ անուշից. Ժողովեալս
՚ի կատարեալ գլխաւորն անուան
ձերոյ, բարեխօսեցէք առ որ վա
սըն քաւութեան մեղաց մերոց։
դկ Օ Երեքսրբեան տէրութիւն քո
միաբան աղաչեմք, լոյս տէր,
աղաչանօք սրբոցն (այս անուն), խնա
նայեա ՚ի մեզ, և կեցո։
սղ Սուրբ լիցին ամբեան որք յուսա
ցեալ են ՚ի քեզ. յաւիտեան ցըն
ծասցեն. և բնակեսցի ոգի ՚ի նո
սա. Պարծեսցին ՚ի քեզ սիրելիք ան
ուան քոյ. զի օրհնեսցես դու զար
դարն. տէր որպէս զինու հաճութեան
քով պսակեցեր զնոսա. աղաչանօք։
փ Տօնէ այսօր եկեղեցի քո զգլխաւո
րս ձեր սուրբ վկայք. որք զօ
րութիւն քո հոգւոյն վանեցիք
զպատերազմ չարին. և ՚ի կամա
րս լուսեղէնս Թագաւորեալք.
օրհնել քո զերրորդութիւն։

Այսօր դասք հրեշտակաց ու-
րախանան ընդ ը ծըղնու-
թեան սրբոյն Ստեփաննո-
սի նախավըկային։
Քանզի գոչէ եկեղե-
ցի քո Քրիստոս ըզյաղթա-
նակ մարտ հեղման արեան սո-
րա ՚ի վերայ մեծի անուանն
քոյ տէր։
Բազում համարձակութիւն է սո-
րա առաջի աստուծոյ ՚ի ձեռըն
հեղման սուրբ արեան իւրոյ։
Քանզի յօժարութեամբ մատնեաց
զանձն իւր չարաչար եւ դառըն
տանջանաց վասըն մեծի անը-
ւանն տեառն։
Քանզի արհամարհելով անար-
գեաց զանցաւոր ըզկեանս աշխար-
հիս, եւ փափաքեաց յաւիտենական
կենացն. եւ միշտ և հանապազ ու-
րախանայ ընդ տեառըն իւրոյ.

յանըսպառ յուրախութեան:
Քանըզի գոչէ եկեղե-
ցի քո Քրիստոս ըզյաղթա-
նակ մարտ հեղման արեան սու-
րա 'ի վերայ մեծի անըսուան
քոյ աւէր:

Փառք Հօրն էականին, Որդւոյն
միածնին, և անպատիճ սուրբ Հոգւոյն
վայելէ:

Փառք պատիւ և իշխանութիւն.
այժմ և միշտ և յաւիտեանս յա-
ւիտենից. ամէն:

Սու յորժամ շարժին երկինք և
երկիր 'ի յահէ փառաց բանին
Տեառն Աստուծոյ:

Յայնժամ նստուցանէ ընդ
աջմէ խումբ ըզ սիրելիս անուան
խուրդ 'ի լուսեղէն խորանսըն զու-
գաւորել:

Այսօր դասք հրեշտակաց 'ի յերկինս ուրախանան:

## Ալէլուա գիշերային պաշտօնական փոխից կարգաւ:

### Ալէլուիա Ճրագալուցի Ծննդեան:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:
Առաքեաց զբան իւր, և բժշկեաց
զնս. և փրկեաց զնոսա յապակա-
նութենէ իւրեանց: Խոստովան ե-
ղիցին տն՝ ողորմութեանց նր, և ըս-
քանչելեաց նորա որդւոց մարդկան:
Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:
Իջցէ որպէս զանձրեւ ՚ի վերայ գեղ-
ման, որպէս ցօղ, զի ցօղէ յերկիր:
Ծագեսցի յաւուրս նր արդարու-
թիւն. բազում խաղաղութի մին-
չեւ կատարեսցի լուսին:
Փառք և երկրպագութիւն հօր և
որդւոյ և հոգւոյն սբյ. այժմ և
միշտ և յաւիտեանս յաւիտենից.
ամէն:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

աձ Տէր հովուեսցէ զիս. և ինձ ինչ
ոչ պակասեսցի: Ի վայրի դալարւոջ
անդ բնակեցոյց զիս. և առ ջուրս
հանգստեան սնոյց զիս:

փ Ալէ: Իջցէ որպէս անձրև 'ի վերայ
գեղման. որպէս ցօղ զի ցօղէ յերկիր:
Ծագեսցի յաւուրս նորա արդարու-
թիւն. բազում խաղաղութիւն
մինչեւ կատարեսցի լուսին:
Փառք և երկրպա. այժմ և միշտ և:
Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

---

Օրհնի ամենայն փառաբանական փոխի որ աձ
լինի՝ Դասքն ասա:

Դասք հրեշտակաց օրհնեն զքեզ
քրիստոս ալէլուիա. մարդկան
ազգ սաղմոսեն քեզ. ալէլուիա:
Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:

ակ Լուր դուստր և տես. խոնարհե-
ցո զունկն քո. մոռա զժողովուրդ

քո. և զտունն հօր քոյ. զի ցանկա-
ցաւ Թագաւոր գեղոյ քոյ։ Սա՛
ինքն է տէր քո՝ երկիրպագցես ն-
մա. և դուստր ծուրայ երկիրպագ-
ցէ նմա. և պատարագօք զերեսս
նորա պաշտեսցեն մեծամեծք 'ի ժո-
ղովրդո՛ց։

Ալէ՛։ Նա՛ կարդասցէ առ իս, հայր փ
իմ ես դու. աստուած ընդունող
փրկութեա՛ն իմոյ։ Ե՛ս անդրանիկ
արարից զնա. և բարձր քան զամե-
նայն Թագաւորս երկրի։

Փա՛ռք և երկիր. այ՛ժմ և միշտ և։

Ալէ՛լուիա. ալէ՛լուիա. ալէլու՛իա՛։

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Իջցէ՛ որպէս անձրև 'ի վերայ գեղ- բծ
ման. որպէս ցօղ զի ցօղէ յերկիր։
Ծագեսցի յաւուրս նորա արդա-
րութիւն. բազում խաղաղութիւն
մինչև կատարեսցի լուսի՛ն։

Ալէ՛։ Ցո՛յց տէր զփրկութի՛ իւր. փ
առաջի ազգաց յայտնեաց զարդա-
րութիւն իւր։ Յիշեա՛ց ողորմու-

թեամբ իւրով զյակոբ․ ճշմարտութ
իւրով զտունն իսրայէլի․ և տեսին
ամենայն ծագք երկրի զփրկութիւն
աստուծոյ մերոյ։
փառք և եր․ այժմ և․ ալէլու։

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա։
բկ Նա՛ կարդասցէ առիս՝ հայր իմ ես
դու․ ած ընդունող փրկութե՛ իմոյ։
Եւ ես անդրանիկ արարից զնա․ և
բարձր քան զամ թագաւորս երկրի։
փ Ալէ։ Ընդ քե՞զ է սկիզբն աւուրն
զօրութե․ 'ի վայելչութի սրբոց քոց յար-
գանդէ յառաջ քան զարուսեակ ծը-
նայ զքեզ։ Երդուաւ տր և ոչ եւս
զղջասցի․ թէ դու ես քահանայ յա-
ւիտեան ըստ կարգին մելքիսեդե-
կի․ և տէր ընդ աջմէ քումմէ։
փառք և եր․ այժմ և․ ալէլուիա։

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա։
գձ Ցոյց տր զփրկութի իւր․ առաջի
ազգաց յայտնեաց զարդարութի իւր։
Յիշեաց ողորմութ իւրով զյակոբ․

ճշմարտութեամբ իւրով զտունն իսրայէլի. և տեսին ամ ծագք երկրի զփրկութիւն աստուծոյ մերոյ։

Այլ։ Յիշեա՛ տէր զդաւիթ, և զամենայն հեզութիւն նորա։ Որպէս երդուաւ տեառն, և ուխտս եդ աստուծոյ յակոբայ։ փ

Փառք և եր. այժմ և. ալէլուիա։

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

Ընդ քեզ է սկիզբն աւուր զօրութեան. ՚ի վայելչութի սրբց քոց յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծընայ զքեզ։ Երդուաւ տէր և ոչ եւս զղջասցի. թէ դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին մելքիսեդեկի. և տր ընդ աջմէ քումմէ։ գկ

Այլ։ Տէ՛ր ասաց ցիս որդի իմ ես դու. և ես այսօր ծընայ զքեզ։ խնդրեա՛ յինէն, և տաց քեզ զհեթանոսս ՚ի ժառանգութի. և իշխանութի քեզ ընդ ամ ծագս երկրի։ փ

Փառք և եր. այժմ և. ալէլուիա։

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

դձ Յիշեա տէր զԴաւիթ, և զամ հեզութիւն նորա։ Որպէս երդուաւ տն, և ուխտս եդ այ յակոբայ։

փ Ալէ։ Տէր հովուեսցէ զիս. և ինձ ինչ ոչ պակասեսցի։ Ի վայրի դալարուոջ անդ բնակեցոյց զիս. և առ ջուրս հանգստեան սնոյց զիս։

փառք և. այժմ և. ալէ։

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

դկ Տէր ասաց ցիս որդի իմ ես դու. և ես այսօր ծնայ զքեզ։ Խնդրեա յինէն, և տաց քեզ զհեթանոսս 'ի ժառանգութիւն. և իշխանութիւն քեզ ընդ ամ ծագս երկրի։

փ Ալէ։ Լուր դուստր և տես, խոնարհեցո զունկն քո. մոռա զժողովուրդ քո և զտուն հօր քոյ. զի ցանկացաւ թագաւոր գեղոյ քոյ։ Սա ինքն է տէր քո՝ երկիրպագցես սմա. և դուստր Ծուրայ երկիրպագցէ սմա. և պատարագօք զերեսս սորա պաշտեսցեն մեծամեծք 'ի ժողովրդոց։

## Փառք և եր. այժմ և. ալէլու։

Ալէլուիա 'ի տօնի քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի աստուծոյ մերոյ 'ի տաճարն։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։
Օրհնեալ եկեալ յանուն տեառն. օրհնեալ որ գալոց ես։ Տէր ա̃ծ մեր երեւեցաւ մեզ. արարէք տօնս ուրախութեան կանխաւ մինչեւ յանկիւնս սեղանոյ։
Ալէ։ Տէր 'ի տաճար սուրբ իւրում, տէր յերկինս յաթոռ իւրում։ Աչք նր 'ի տնանկս հային. արտեւանունք նորա քննեն զորդիս մարդկան։ փ
Փառք և եր. այժմ և. ալէ։

Ալէլուք յարութեանն Քրիստոսի։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։
Ողորմութիւ ա̃ն լի եղեւ երկիր. և բանիւ ա̃ն երկինք հաստատեցան։ Եւ հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա։ ա̃ձ
Ալէ։ Յարեաւ ա̃ծ և ցրուեցան ա̃մ թշնամիք նորա։ Փախեան ա- փ

տելիք նորա յերեսաց նորա՛։
Փա՛ռք և եր․ այ՛ժմ և․ ալէլուիա։

---

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէ՛լուիա։
ակ Ծ՛ափս հարէք ա՟մ հեթանոսք․ ա-
ղաղակեցէք առ ա՟ծ ՚ի ձայն ցնծ-
ծութեան։ Տէ՛ր բարձրեալ և ա-
հարկու․ թագաւոր մեծ ՚ի վերայ
ամենայ՛ն երկրի՛։
փ Ալէ։ Հաճեցա՛ր տ՟ր ընդ երկիր քո․
և դարձուցեր զգերութի՟ն յա՛կոբայ։
թողե՛ր զանիրաւութի՟ն ժողովրդեան
քոյ․ և ծածկեցեր զա՟մ մեղս նց՛։
Փա՛ռք և եր․ այ՛ժմ և․ ալէ։

---

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէ՛լուիա։
բձ Յարեա՛ ա՟ծ․ և ցրուեսցի՛ն ա՟մ
թշնամիք նորա։ փախեա՛ն ատելիք
նորա յերեսա՛ց նորա՛։
փ Ալէ։ Տէ՛ր թագաւորեաց․ զվայել-
չութիւն ըզգեցաւ․ զգեցա՛ւ տէր
զօրութիւն ընդ մէջ իւր էա՛ծ։
Փա՛ռք և եր․ այ՛ժմ և․ ալէլու։

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա: բկ
Հաճեցար տէր ընդ երկիր քո. և
դարձուցեր զգերութիւն յակոբայ:
Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան
քոյ. և ծածկեցեր զամ մեղս նց:
Ալէ: Օրհնեցէք մանկունք զտէր.
և օրհնեցէք զանուն տեառն:
Եղիցի անուն տեառն օրհնեալ. փ
յայսմ հետէ մինչև յաւիտեան:
փառք և եր. այժմ և. ալէ:

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:
Տէր Թագաւորեաց. զվայելչութիւն գձ
ըզգեցաւ. զգեցաւ տէր զօրութիւն
ընդ մէջ իւր էած:
Ալէ. Գովեա երուսաղէմ զտէր. և փ
օրհնեա զաստուած քո սիոն: Զի
զօրացոյց զնիգս դրանց քոց. և օրհ-
նեաց զորդիս քո 'ի քեզ:
փառք և եր. այժմ և. ալէլուիա:

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա: գկ
Օրհնեցէք մանկունք զտր. և օրհ-
նեցէք զանուն տեառն: Եղիցի

անուն տեառն օրհնեալ. յայսմ հե-
տէ մինչեւ յաւիտեան։

փ Ալէ։ Կենդանի է տէր, և օրհնեալ
է ած. և բարձր եղիցի ած փրկ-
կութեան իմոյ։ Աստուած է որ
խնդրէ զվրէժ իմ. և հնազանդ
առնէ զժողովուրդս ընդ ինեւ։
փառք և եր. այժմ և. ալէլուիա։

=====

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

գձ Գովեա երուսաղէմ զտէր. և օրհ-
նեա զաստուած քո սիոն։ Զի զօ-
րացոյց զնիգս դրանց քոց. և օրհ-
նեաց զորդիս քո 'ի քեզ։

փ Ալէ։ Ողորմութեամբ տն լի եղեւ
երկիր. և բանիւ տն երկինք հաս-
տատեցան։ Եւ հոգւով բերանոյ
նորա ամ զօրութիւնք նոցա։
փառք և եր. այժմ և. ալէլուիա

===

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

գհ Կենդանի է տէր և օրհնեալ է ած.
և բարձր եղիցի աստուած փրկու-
թեան իմոյ։ Աստուած է որ խնդ-

րէ զկրէժ իմ. և հնազանդ առնէ
զժողովուրդս ընդ ինեւ։
Ալէ։ Ծափս հարէք ամենայն հե֊ փ
թանոսք. աղաղակեցէք առ ա̃ծ 'ի
ձայն ցնծութեան։ Տէր բարձրեալ
և ահարկու թագաւոր մեծ 'ի վե֊
րայ ամենայն երկրի։
փառք և եր. այժմ և. ալէլուիա։

Ալէլուք համբարձմանն Քրիստոսի։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։
Համբարձէք իշխանք դրունս ձեր աձ
'ի վեր. համբարձցին դրունք յաւի֊
տենից և մտցէ թագաւոր փառաց։
Ո՞վ է սա թագաւոր փառաց. տէր
հզօր զօրութեամբ իւրով. տէր
կարող 'ի պատերազմի։
Ալէ։ Կառք ա̃յ բիւրապատիկք. հա֊ փ
զարք ուղղիչք. և տէր 'ի նոսա 'ի
սինէ սրբութեամն իւրոյ։ Ել 'ի
բարձունս և գերեաց զգերութի.
էառ աւար. բաշխեաց պարգեւս,
և ետ որդւոց մարդկան։
փառք և եր. այժմ և. ալէլուիա։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:
ակ Համբարձաւ ած օրհնութբ. և տր մեր ձայնիւ փողոյ: Սաղմոս ասա-ցէք այ մերոյ. սաղմոս ասացէք Թագաւորին մերում. սաղմոս ա-սացէք:

փ Ալէ: Որ հովուեսդ իսրայէլի՝ նա-յեաց, որ առաջնորդես ոպ խաշին յովսէփու: Որ նստիսդ 'ի քերով-բէս՝ յայտնեաց առաջի եփրեմի բե-նիամինի և մանասէի:

փառք և եր. այժմ և. ալէլուիա:

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:
բձ Կառք այ բիւրապատիկք. հա-զարք ուղղինչք. և տէր 'ի նոսա 'ի սինէ սրբութեան իւրոյ: Ել 'ի բարձունս և գերեաց զգերութի. էառ աւար բաշխեաց պարգևս և ետ որդւոց մարդկան:

փ Ալէ: Ո՛ դնէ յամպս զգնացս իւր. և շրջի նա 'ի վերայ թևոց հողմոց: Խոստովանութիւն և մեծ վայել-չութիւն զգեցար. արկեր զլոյս որ

պէս զօթոց . ձգեցեր զերկինս ո-
պէս խորան . և արկեր 'ի վերայ
ջուրց զվերնայարկս նորա ։
փառք և եր . այժմ և . ալէլուիա ։

Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա ։
Որ հովուեսդ իսրայէլ՝ նայեաց, բկ
որ առաջնորդես ոպ խաշին յովսէ-
փու ։ Որ նստիս 'ի քրովբէս՝ յայտ-
նեաց առաջի եփրեմի բենիամինի
և մանասէի ։
Ալէ ։ Մեծ եղև մինչև յերկինս ո- փ
ղորմութիւն քո . և մինչև յամպս
ճշմարտութիւն քո ։ Բարձրեա՛լ ես
դու յերկինս աստուած . և յամե-
նայն երկրի են փառք քո ։
փառք և եր . այժմ և . ալէլուիա ։

Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա ։
Ո՛ր դնէ յամպս զգնացս իւր . և շրջի գձ
նա 'ի վր թևոց հողմոց ։ Խոստովա-
նութիւն և զմեծ վայելչութիւն
զգեցար . արկեր զլոյս ոպ զօթոց .
ձգեցեր զերկինս ոպ խորան . և ար-

կէր 'ի վն ջուրց զվերնայարկս նր՛։

փ Ալէ ։ Տէր, խոնարհեցո զերկինս և
էջ. մերձեա 'ի լերինս և ծխեսց-
ցին ։ փայլեա՛ զփայլատակունս քո
և խռովեա զնոսա. առաքեա զնե-
տըս քո, և ցրուեա ըզ նոսա՛ ։
փառք և եր. այժմ և. ալէլուիա ։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա ։
գկ Մե՛ծ եղեւ մինչեւ յերկինս ողոր-
մութիւն քո. և մինչեւ յամպս ճըշ-
մարտութիւն քո ։ Բարձրեա՛լ ես
դու յերկինս աստուած. և յամե-
նայն երկրի է՛ն փառք քո ։
փ Ալէ ։ Խոնարհեցո՛յց զերկինս և էջ.
և մէգ 'ի ներքոյ ոտից նորա ։ Ն՛ստ 'ի
քրովբէս և թռեաւ. սլացաւ նա
'ի թեւըս հողմո՛ց ։
փա՛ռք և եր. այժմ և. ալէլուիա ։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա ։
գծ Յերեսա՛ց նորա ելցեն հարուածք.
և զհետ շաւղաց նորա երթիցեն
մեծամեծք 'ի՛ թաչնոց ։ Լերինք հա-

լեսցին և անտառք վառնեսցին.
ճանապարհք որք 'ի սկզբանէն էին
կուրասցին. և 'ի նմանէ դողասցի
ամենայն երկիր:

Ալէ: Համբարձէ՛ք իշխանք զդրու- փ
նըս ձեր 'ի վեր. համբարձցին դը-
րունք յաւիտենից և մտցէ Թագա-
ւո՛ր փառաց: Ո՞վ է սա Թագաւոր
փառաց տէր զօրութեանց. սա
ինքն է Թագաւո՛ր փառաց:
Փառք և եր. այժմ և. ալէլուիա:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա: դկ
Խոնարհեցո՛յց զերկինս և էջ. և
մէգ 'ի ներքոյ ոտից նորա: Ե՛լ 'ի
քրովբէս և Թռեաւ. սլացաւ նա
'ի Թեւըս հողմոց:

Ալէ: Համբարձա՛ւ աստուած օրհ- փ
նութեամբ. և տէր մեր ձայնիւ
փողոյ: Սաղմո՛ս ասացէք աստուծոյ
մերում. սաղմոս ասացէք Թագա-
ւորին մերում. սաղմոս ա̂սացէ՛ք:
Փա՛ռք և եր. այժմ և. ալէլուիա:

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա։
ած Ցանկալի է նա քան զոսկի և քան
զականս պատուականս բազումս,
քաղցր է նա քան զմեղր խորիսխ։
Քանզի ծառայ քո պահեսցէ զայս,
'ի պահել նմա զհատուցումն բա-
զում։

փ Ալէ։ Թեւք աղաւնւոյ արծաթա-
պատ․ և թիկնամէջ նորա 'ի գոյն
ոսկւոյ։ Ի գումարել երկնաւորին
զթագաւորս 'ի վերայ նորա․ ձիւ-
նասցին 'ի Սաղմոն։
Փառք և եր․ այժմ և․ ալէլուիա։

---

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա։
ակ Սիրտ սուրբ հաստատեա յիս Ած․
և զհոգի ուղիղ նորոգեա 'ի փորի
իմում։ Մի ընկենուր զիս տէր յե-
րեսաց քոց․ և զհոգի քո սուրբ մի
հաներ յինէն։

փ Ալէ։ Գտի զդաւիթ ծռյ իմ․ և իւ-
ղով սրբով իմով օծի զնա։ Ձեռն
իմ ընկալցի զնա․ և բազուկ իմ զօ-

րացուսցէ՛ զնա՛։

Փա՛ռք և եր. ա՛յժմ և. ալէլուիա։

Ալէլուիա. ալէլուիա. ալէ՛լուիա։
Թե՛ւք աղաւնւոյ արծաթապատ. բձ
և թիկնամէջ նորա ՚ի գո՛յն ոսկւոյ։
Ի գումարե՛լ երկնաւորին զթագա-
ւորս ՚ի վերայ նորա, ձիւնացին ՚ի
սաղմո՛ն։
Ալէ։ Առաքեա՛ զոգի քո և ստանաս փ
զնոսա, և նորոգես զերե՛սս երկրի։
Եղիցի՛ն փառք տն յաւիտեան, և
տր ուրախ եղիցի յարարա՛ծս իւր։
Փա՛ռք և եր. ա՛յժմ և. ալէլուիա։

Ալէլուիա. ալէլուիա. ալէ՛լուիա։
Գտի՛ զԴաւիթ ծառայ իմ. և իւ- բկ
ղով սրբով իմով օծի՛ զնա։ Ձե՛ռն
իմ ընկալցի զնա. և բազուկ իմ զօ-
րացուսցէ՛ զնա՛։
Ալէ։ Յայտնութի՛ւն բանից քոց փ
լուսաւոր է. և իմաստուն առնէ
ընդ տղայս։ Զբերա՛ն իմ բացի և
առի զհոգի. ՚ի պատուիրանս քո

փափաքեմց անձն իմ։
փառք և եր. այժմ և. ալէլուիա։

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։
գձ Առաքեա զհոգի քո և ստանաս զնոսա. և նորոգես զերեսս երկրի։ Եղիցին փառք տեառն յաւիտեան. և տէր ուրախ եղիցի յարարածս իւր։
փ Ալէ։ Հոգի քո սուրբ և բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ։ Վասն անուան քոյ տէր կեցուսցես զիս. արդարութեամբ քով հանցես 'ի նեղութենէ զանձն իմ։
փառք և եր. այժմ և. ալէլուիա։

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։
գկ Զբերան իմ բացի և առի զհոգի. 'ի պատուիրանս քո փափաքեմց անձըն իմ։ Նայեաց առ իս և ողորմեաց ինձ ըստ իրաւունս սիրողաց անուան քոյ։
փ Ալէ։ Ի սաստէ քումմէ տէր և 'ի շընչել հողմոյ բարկութեան քո։ Առաքեաց 'ի բարձանց՝ և ընկալաւ զիս.

ընկալաւ զիս ՚ի ջուրց բազմաց։
Փառք և եր․ այժմ և․ ալէլուիա։

---

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա։
Որպէս իւղ զի իջանէ ՚ի գլուխ և դձ
՚ի մօրուսն Ահարօնի․ և ՚ի մօրուացն
իջանէ ՚ի գրապանս զգեստու նորա։
Որպէս ցօղ զի ցօղէ ՚ի Հերմոնէ ՚ի
վերայ լերին Սիօնի։
Ալէ։ Ի վայրի դալարւոջ անդ բնա- փ
կեցոյց զիս․ և առ ջուրս հանգըս-
տեան սնոյց զիս։ Դարձոյց զանձն
իմ առ իս․ և առաջնորդեաց ինձ ՚ի
ճանապարհս արդարութեան վասն
անուան իւրոյ։
Փառք և եր․ այժմ և․ ալէլուիա։

---

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա։
Ի սաստէ քումմէ տէր և ՚ի շընչել դկ
հողւոյ բարկութե քոյ։ Առաքեաց
՚ի բարձանց և ընկալաւ զիս․ ընկա-
լաւ զիս ՚ի ջուրց բազմաց։
Ալէ։ Սիրտ սբ հաստատեա յիս փ
ած․ և զհոգի ուղիղ նորոգեա ՚ի

փորի իմում։ Մի՛ ընկենուր զիս ՚ի յերեսաց քոց. եւ զՀոգի քո սուրբ մի՛ հաներ յինէ՛ն։

Փա՛ռք եւ եր. ա՛յժմ եւ. ալէլուիա։

### Ալէլուք Խաչի։

Ալէլուիա. ալէլուիա. ալէ՛լուիա։

աձ Ցո՛ւպ քո եւ գաւազա՛ն, նոքա մխիթարեցի՛ն զիս։ Պատրաստ արարեր առաջի իմ սեղա՛ն. ակ՛ն յա՛նդիմա՛ն նեղչա՛ց իմո՛ց։

փ Ալէ։ Ետո՛ւր երկիւղածաց քոց նշա՛ն. զի ապրեսցի՛ն յերեսաց ա՛ղեղա՛ն։ Որպ՛ փրկեսցա՛ն սիրելիք քո. կեցո աջով քո եւ լուր մե՛զ։

Փա՛ռք եւ եր. ա՛յժմ եւ. ալէլուիա։

Ալէլուիա. ալէլուիա. ալէ՛լուիա։

ակ Նե՛տք քո սրեալ ե՛ն հզօր. եւ ժողովուրդք ՚ի ներքոյ քոյ ա՛նկցի՛ն. ՚ի սիրտս թշ՛նամեաց թագա՛ւորի։ Աթո՛ռ քո Ած յաւիտեա՛նս յաւիտե՛նից. գաւազա՛ն ուղղութե՛, գաւազա՛ն արքայո՛ւթեա՛ն քո՛յ։

Ալէ: Տո՛ւր զօրութի՛ւն ծառայի փ
քո. կեցո զորդի աղախնոյ քո. և
արա առ իս նշա՛ն բարութեան:
Տեսցե՛ն ատելիք իմ և ամաչեսցեն.
զի դու տէր օգնեցեր ինձ՝ և մ-
խիթարեցեր զի՛ս:
Փառք և եր. այժմ և. ալէլուիա:

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:
Ետո՛ւր երկիւղածաց քոց նշան. զի բձ
ապրեսցին յերեսաց աղեղան: Ո՛պ
փրկեսցին սիրելիք քո. կեցո աջով
քո և լուր մեզ:
Ալէ: Դո՛ւ պատրաստեցեր զուղ- փ
ղութի՛ւն և զիրաւո՛ւնս. և զար-
դարութի՛ւն յակոբայ դու արարեր:
Բա՛րձր արարէք զտէր ա՜ծ մեր. եր-
կրպագէք պատուա՛նդանի ոտից
նորա զի սուրբ է՛:
Փա՛ռք և եր. ա՛յժմ և. ալէլուիա:

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:
Տո՛ւր զօրութի ծառայի քո. կեցո բկ
զորդի աղախնոյ քո. և արա առ իս

զնշան բարութ՟ե ։ Տեսցե՛ն ատելիք
իմ և ամաչեսցեն. զի դու տէր օգ-
նեցեր ինձ՝ և մխիթարեցեր զիս ։

փ Ասէ ։ Ասա՛ց Տ՟ր ցՏ՟ր իմ, Նիստ ընդ
աջմէ իմմէ. մինչև եդից զթշնամիս
քո պատուանդան ոտից քոց ։ Գա-
ւազա՛ն զօրութ՟ե առաքեսցէ քեզ
տէր 'ի սիոնէ. և տիրեսցես դու 'ի
մէջ թշնամեաց քո՛ց ։

փա՛ռք և եր. այ՛ժմ և. ալէլուիա ։

=====

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա ։

դձ Դու՛ պատրաստեցեր զուղղութ՟ի
և զիրաւունս. և զարդարութիւն
յակոբայ դու արարեր ։ Բարձր ա-
րարէք զտէր աստուած մեր. եր-
կրպագէք պատուանդանի ոտից
նորա, զի սուրբ է՛ ։

փ Ասէ ։ Յայտնեսցե՛ն երկինք զվայել-
չութ՟ի փառաց նր՟. և օրհնութ՟բ նր՟
լցան տիեզերք ։ Ճառագայթք ոս՟կ 'ի
լուսոյ հատան 'ի նմանէ. և եղջիւրք
'ի ձեռին նր՟ գտան. և անդ հաստա-
տեցաւ զօրութիւն փառաց նորա՛ ։

փառք և եր․ այժմ և․ ալէ։

====

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա։
Ասա՛ց տէր ցտէր իմ, նիստ ընդ աջ- գկ
մէ իմմէ․ մինչև եդից զթշնամիս
քո պատուանդան ոտից քոց։ Գա-
ւազա՛ն զօրութեան առաքեսցէ
քեզ տէր ՚ի սիօնէ․ և տիրեսցես
դու ՚ի մէջ թշնամեաց քոց։
Ալէ։ Նշանեցա՛ւ առ մեզ լոյս երե- փ
սաց քոց․ և ետուր ուրախութի սըր-
տից մերոց։ Ի պտղո՛յ ցորենոյ գինւոյ
և ձիթոյ իւրեանց լցուցեր ըզնո՛ս։
փառք և եր․ այժմ և․ ալէլուիա։

====

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա։
Յայտնեսցե՛ն երկինք զվայելչութի գձ
փառաց նր․ և օրհնութք նր լցան
տիեզերք։ Ճառագա՛յթք ոտ ՚ի լու-
սոյ հաստատն ՚ի նմանէ․ և եղջիւրք ՚ի
ձեռին նր գտան․ և անդ հաստա-
տեցաւ զօրութի փառաց նորա՛։
Ալէ։ Ցո՛ւպ քո և գաւազան, նոքա փ
մխիթարեսցեն զիս։ Պատրաստ ա-

բարեր առաջի իմ զսեղան. ակն յան-
դիման նեղչաց իմոց։
փառք և եր. այժմ և. ալէլուիա։

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։
դկ Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց. և ետուր ուրախութի սրտից մերոց։ Ի պտղոյ ցորենոյ գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր ըզնոսա։
փ Ալէ։ Նետք քո սրեալ են հզօր. և ժողովուրդք ՚ի ներքոյ քոյ անկցին. ՚ի սիրտս թշնամեաց թագաւորի։ Աթոռ քո ած յաւիտեանս յաւիտենից. գաւազան ուղղութեան, գաւազան արքայութեան քո։
փառք և եր. այժմ և. ալէլուիա։

---

Ալէլուք Եկեղեցւոյ։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։
աձ Լսել ինձ զձայն օրհնութե քոյ. և պատմել զամ սքանչելիս քո։ Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո. և զտեղի յարկի փառաց քոց։
փ Ալէ. Երանի զոր ընտրեցեր և ըն-

կալար․ և բնակեսցին ՚ի գաւիթս
քո։ Լցցուք մեք ՚ի բարութենէ
տան քո․ սուրբ է տաճար քո ս-
քանչելի արդարութեամբ։
փառք և եր․ այժմ և․ ալէլու։

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա։ ակ
Մեծ է տէր և օրհնեալ է յոյժ․
՚ի քաղաք աստուծոյ մերոյ ՚ի լերան
սուրբ նորա։ Հաստարմատ ցնծու-
թեամբ ցնծացէ ամենայն երկիր․
լերինք սիոնի՝ կողմանք հիւսիսոյ՝ ՚ի
քաղաք Թագաւորին մեծի։
Ալէ։ Հիմունք նորա ՚ի լերան սր դ
նորա․ սիրէ տէր զդրունս սիոնի
առաւել քան զամենայն յարկսն յակ-
կոբայ։ Փառաւորեալ խօսեցան
վասն քոյ․ ահաւասիկ քաղաքդ այ։
փառք և եր․ այժմ և․ ալէ։

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա։
Երանի զոր ընտրեցեր և ընկալար․ բձ
և բնակեսցին ՚ի գաւիթս քո։
Լցցուք մեք ՚ի բարութենէ տան

քոյ. սուրբ է տաճար քո սքանչելի
արդարութեամբ:

փ Ալէ: Դու տէր յաւիտեան կաս,
և յիշատակ քո ազգէ մինչև յազգ:
Դու յարուցեալ գթասցիս՝ի վերայ
սիոնի. ժամանակ գթալոյ նորա
հասեալ է ժամ:
փառք և եր. այժմ և. ալէլուիա:

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:
բկ Հիմունք նր՝ի լեառն սբ նր. սիրէ
տէր զդրունս սիոնի առաւել քան
զամ յարկսն յակոբայ: փառաւո-
րեալն խօսեցաւ վասն քոյ. ահա-
ւադիկ քաղաքդ աստուծոյ:
փ Ալէ: Այսօր է զոր արար տէր. ե-
կայք ցնծասցուք և ուրախ եղի-
ցուք՝ի սմա: Ի տնէ եղև այս. և է
սքանչելի առաջի աչաց մերոց:
փառք և եր. այժմ և. ալէլուիա:

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:
գձ Դու տէր յաւիտեան կաս. և յի-
շատակ քո ազգէ մինչեւ յազգ:

Դու՛ յարուցեալ գԹասցիս ՚ի վե-
րայ սիօնի. ժամանակ գԹալոյ նո-
րա հասեալ է ժամ։

Այլ։ Խոստովա՛ն եղէց քեզ տր բո- փ
լորով սրտիւ իմով. առաջի հրեշտա-
կաց սաղմոս ասացից քեզ։ Զի լու-
ա՛ր զբանս բերանոյ իմոյ. Երկիր-
պագից ՚ի տաճար սբ քո. և խոստո-
վան եղէց անուան քում վն ողոր-
մութե և ճշմարտութեան քո՛յ։
Փա՛ռք և եր. այժմ և. ալէլուիա։

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։
Այսօր է զոր արար տէր. եկայք գկ
ցնծասցուք և ուրախ եղիցուք ՚ի
նմա։ Ի տնէ՛ եղև այս, և է սքան-
չելի առաջի աչաց մերո՛ց։

Այլ։ Տէ՛ր ո՞վ կացցէ ՚ի խորանի փ
քում. կամ ո՞վ բնակեսցի ՚ի լեա-
ռն սուրբ քո։ Որ գնայ՛ անբիծ,
գործէ զարդարութիւն. և խօսի
զճշմարտութիւն ՚ի սրտի իւրում։
Փա՛ռք և եր. այ՛ժմ և. ալէլուիա։

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէ՟լուիա:

դձ Ուրա՟խ եղէ ես որք ասէին ցիս, 'ի
տուն տ՟ն երթիցուք մեք: Հաստատեա՟լ
կային ոտք մեր առ դրունս քո Ե-
րուսաղէ՟մ:

փ Ալէ: Լսե՟լ ինձ զձայն օրհնութե՟
քոյ. և պատմել զա՟մ սքանչելիս քոյ:
Տ՟ր սիրեցի զվայելչութի՟ տան քոյ.
և զտեղի յարկի փա՟ռաց քո՟ց:
փա՟ռք և եր. այժմ և. ալէլուիա:

====

Ալէլուիա. ալէլուիա. ալէ՟լուիա:

դկ Տէ՟ր ո՞վ կացցէ 'ի խորանի քում.
կամ ո՞վ բնակեսցի 'ի լեառն ս՟բ քո:
Որ գնա՟յ անբիծ, գործէ զարդա-
րութիւն. և խօսի զճշմարտութի՟
'ի սրտի՟ իւրու՟մ:

փ Ալէ: Մե՟ծ է տէր և օրհնեալ է
յոյժ. 'ի քաղաք ա՟յ մերոյ 'ի լեառն
ս՟ուրբ նորա: Հաստատարմա՟մբ ցնծու-
թեամբ ցնծացէ ա՟մ երկիր. լե-
րի՟նք սիօնի՝ կողմանք հիւսիսոյ՝ 'ի
քաղաք թագաւորի՟ն մեծի՟:
փա՟ռք և եր. այժմ և. ալէլուիա:

Ալէլուիա ՚ի տօնի հրեշտակապետաց ։

Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա ։
Որ առնէ զհրեշտակս իւր հոգիս, և զպաշտօնեայս իւր ՚ի հուր կիզե-
լոյ ։ Հաստատեաց զերկիր ՚ի վերայ հաստատութեան իւրոյ . զի մի
սասանեսցի յաւիտեան ։

Ալէ ։ Օրհնեցէք զՏէր յերկնից . օրհ- փ
նեցէք զնա ՚ի բարձանց ։ Օրհնեցէք
զնա ամ հրեշտակք նր, օրհնեցէք
զնա ամ զօրութիւնք նորա ։
փառք և եր . այժմ և . ալէլու ։
Գունդք հրեշտակաց օրհնեն զքեզ
քրիստոս ալէլուիա . մարդկան
ազգ սաղմոսեն քեզ . ալէլուիա ։

Դարձեալ ։

Երկինք և երկիր գոհանան ընդ թ
քեզ տէր . արարիչ ամ քեզ եր-
կրպագանեն . և հրեշտակք ՚ի բար-
ձունս աղաղակեն և ասեն . ողոր-
մեա դու ստեղծեր, մի կորուսաներ ։
Երկինք երկնից, ջուրք որ ՚ի վերայ ա

քան զերկինս, օրհնեցէք զանու-
նըն տեառն։ Զի նա ասաց, և
եղեն. հրամայեաց և հաստատե-
ցան. և հրեշտակք 'ի։

փ Երկինք երկնից հանապազ ընդ քեզ
գովեն, Թագաւոր փառաց. սե-
րովբէք և քերովբէք 'ի խոնարհ
ծնելով ընդ դէմս իւրեանց. և
միաձայն բարբառով աղաղակեն
և ասեն. սուրբ. սուրբ. սուրբ.
տէր զօրութեանց։

Ալէլուիա Ղազարու յարութեանն։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։
ած Բարձր առնեմ զքեզ տէր, զի ըն-
կալար զիս. և ոչ ուրախ արարեր
զթշնամիս իմ յիս։ Տէր աստուած
իմ կարդացի առ քեզ և բժշկեցեր
զիս. տէր հաներ 'ի դժոխոց զանձն
իմ. փրկեցեր զիս յայնցանէ, որք
իջանեն 'ի գուբ։

փ Ալէ։ Եհան զիս 'ի գբոյ տառապա-
նաց. 'ի կաւոյ և 'ի տղմոյ։ Հաստա-
տեաց 'ի վերայ վիմի զոտս իմ. և

ուղղեաց զգնացս իմ։
փառք և եր․ այժմ և․ ալէլուիա։

Ալէլուիա ծաղկազարդին ողորմեան։

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա։ ակ
Տէր Ած մեր երեւեցաւ մեզ․
արարէք տօնս ուրախութե կան-
խաւ, մինչեւ յանկիւնս սեղանոյ։
Աստուած իմ ես դու, և խոստո-
վան եղէց քեզ․ աստուած իմ ես
դու՝ և բարձր արարից զքեզ։ փ
Ալէ։ Լերինք ցնծասցեն առաջի
տեառն, զի գայ և հասեալ է տէր
՚ի դատել զերկիր։ Դատէ զաշխար-
հըս արդարութեամբ․ և զժողո-
վուրդս իւր ուղղութեամբ։
փառք և եր․ այժմ և․ ալէ։

Ալէլուք աւուրց աւագ շաբաթուն։

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա։ բհ
Զի Նա ասաց, և եղեն․ հրամայ-
եաց և հաստատեցան։ Կարգեաց
զնոսա յաւիտեան, սահման եդ որք
ոչ անցանեն։

փ Ալէ ։ Իսկզբանէ որ զհիմունս երկ-
րի հաստատեցեր․ և գործք ձեռաց
քոց երկինք են ։ Նոքա կորնչին, և
դու կաս և մնաս յաւիտեան ։
փառք և եր․ այժմ և․ ալէլուիա ։

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա ։
դՀ Կայցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ․
'ի հանդերձս ոսկեհուռս զարդա-
րեալ և պաճուճեալ ։ Լուր դուս-
տր և տես․ խոնարհեցո զունկն
քո․ մոռա զժողովուրդ քո և ըզ
տուն հօր քոյ․ զի ցանկացաւ Թա-
գաւոր գեղոյ քոյ ։
փ Ալէ ։ Տարցին Թագաւորի կուսանք
զհետ նորա․ և ընկերս նր տար-
ցին նմա ։ Ածցին ցնծութեամբ և
ուրախութբ․ և տարցին 'ի տաճար
Թագաւորի․ և փոխանակ հարց
քոց եղիցին որդիք քո ։
փառք և եր․ այժմ և․ ալէլուիա ։

Ալէլուիա․ ալէլուիա․ ալէլուիա ։
դՀ Որ ուտէր զհաց իմ, յաճախեաց

առնել ինձ զխաբէութիւն։ Այլ
դու տէր ողորմեա ինձ, և կանգ-
նեա զիս. և ես հատուցից նոցա։
Այլ։ Խորհեցան և խօսեցան չա- փ
րութի. և զապիրատութի 'ի բարձու-
նս խորհեցան։ Եդին յերկինս ըզ
բերանս իւրեանց. և լեզուս իւ-
րեանց անցին զերկրաւ։
փառք և եր. այժմ և. ալէլուիա։

====

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։
Լուացից սրբութեամբ զձեռս իմ. եղ
և շուրջ եղէց զսեղանովք քո տէր։
Տէր սիրեցի զվայելչութի տան քոյ.
և զտեղի յարկի փառաց քոց։
Այլ։ Պատրաստ արարեր առաջի փ
իմ զսեղան. ակն յանդիման նեղ-
չաց իմոց։ Օծեր իւղով զգլուխ
իմ. բաժակ քո որպէս անապակ
արբեցոյց զիս։
փառք և եր. այժմ և. ալէ։

=====

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։
Օրհնեալ աղեղն քո, զնետս կա- ուր

պարծից քոց արբեցուցեր. զգետս
ցուցեր. զերկիր դողացուցեր 'ի
սաստկութե անձրևի, որք անցանեն
ընդ սա։ Ընդունողք ապաշխարեցին
մեծապէս. լոյս փայլման արեգա-
կանն արգելաւ. և ծագումն լուսա-
նին դադարեցաւ։

փ Ալէ։ Մատնեցայ և ոչ ելանէի. աչք
իմ տկարացան յաղքատութե։ Աղա-
ղակեցի առ տէր զօրհանապազ. և
համբարձի առ քեզ ըզ ձեռս իմ։
Փառք և եր. այժմ և. ալէլուիա։

===

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։
Հւ Եդին զիս 'ի գբի ներքնումն. 'ի
խաւարի և 'ի ստուերս մահու։
Յիս հաստատեցաւ սրտմտութիւն
քո. զամենայն զբօսանս քո ածեր
'ի վերայ իմ։

փ Ալէ։ Եղէ ես որպէս մարդ առանց
օգնականի. և 'ի մեռեալս ազատ։
Որպէս զվիրաւորս որք ննջեն 'ի գե-
րեզմանի։
Փառք և եր. այժմ և. ալէ։

Յայլ օրինակէ է այս ։

Ի՛նքն ՚ի գերեզմանի գնաց և ՚ի տա-
պանի ո՛չ քննեցաւ ։ Բաղցրացա՛ն նը-
մա խիճք հեղեղատի ․ և ըզհետ
նորա ամենայն մարդ գը՛նասցէ՛ ։
Փա՛ռք և եր ․ այժմ և ․ ալէլուիա ։

---

Ալէլուք պայծառակերպութեանն Քրիստոսի ․
որ ասի Վարդավառ ։

Ալէլուիա ․ ալէլուիա ․ ալէ՛լուիա ։
Քո՛ են երկինք ․ և քո է երկիր ․ կր
զաշխարհ լրիւ իւրով դու հաստա՛-
տեցեր ։ Զհիւսիս և զհարաւ դու
արարեր ․ Թաբոր և Հերմոն յա-
նուն քո ցնծասցե՛ն ։
Ալէ ։ Բարձրութի՛ւնք լերանց նորա փ
են ․ նորա է ծով և նա արար զնա ․
և զցամաքն ձեռք նորա ըստեղծին ։
Եկայք երկրպագեսցուք նմա ․ անկ-
ցուք և լացցուք առաջի տեառն
արարչի՛ն մերոյ ։
Փա՛ռք և եր ․ այժմ և ․ ալէլուիա ։

---

Ալէլուիա ․ ալէլուիա ․ ալէ՛լուիա ։
Բարձրութի՛ւնք լերանց նորա են ․ բշ

Նորա է ծով, և նա արար զնա. և
զցամաք ձեռք նո՟ ստեղծին։ Մով-
սէ՛ս և ահարօն երիցունք նորա.
սամուէլ ընդ այնոսիկ որք կարդան
զանո՛ւն նորա՛։

փ Ալէ։ Լերի՛նք ցընծասցեն առաջի
տեառն, զի գայ. և հասեալ է ո՟ր
՚ի դատե՛լ զերկիր։ Դատէ՛ զաշխար-
հըս արդարութեամբ. և զժողո-
վուրդս իւր ո՛ւղղութեամբ։
փա՛ռք և եր. ա՛յժմ և. ալէլուիա։

---

Ալէլուիա. ալէլուիա. ալէ՛լուիա։
գշ Ի ձե՛ռս նորա են ամենայն ափե-
զերք երկրի. և բարձրութիւնք լե-
րանց նորա են։ Նորա՛ է ծով և նա
արար զնա. և զցամաք ձեռք նորա
ստեղծի՛ն։

փ Ալէ։ Լերի՛նք որպէս մոմ հալեսցին
յերեսաց տ՟ն. յերեսաց տ՟ն ա՟մ եր-
կիր։ Պատմեսցե՛ն երկինք զարդա-
րութիւն նորա. և տեսցեն ամե-
նայն ժողովուրդք զփա՟ռս նորա՛։
փառք և եր. ա՛յժմ և. ալէլու։

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից առաւօտու ժամուն ։ Որ կատարի 'ի դէմս որդւոյն աստուծոյ ․ որ երեւեցաւ իւղաբերիցն ։

Լցաք առաւօտու ողորմութբ̃ քով. ցնծացաք և ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց։ Ուրախ եղաք փոխանակ աւուրցն՝ յորս խոնարհ արարեր զմեզ, և ամացն՝ յորս տեսաք զչարչարանս։ Հայեա տ̃ր 'ի ծառայս քո և 'ի գործըս ձեռաց քոց, և առաջնորդեա որդւոց նոցա. եղիցի լոյս տեառն աստուծոյ 'ի վերայ մեր։

Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա 'ի մեզ տէր. և զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ։

Փառք հօր և որդւոյ և։

Եւ ևս խաղաղութեան զտէր ա։

Օրհնութիւն և փառք հօր և։

### Օրհնութիւն երից մանկանցն Դանիէլի ։

Օրհնեալ ես տէր ա՟ծ հարցն մերոց, օրհնեալ փառաւորե՟լ անուն քո յաւիտեան ։

Ցիրաւունս անցուցեր զայս ա՟մ ընդ մեզ. արդար ես դու տէր, և ամենայն գործք քո ճշմարիտ են ։

Ճանապարհք քո ուղիղ են, և ա՟մ դատաստանք քո արդար են ։

Դատաստան արդարութեան ածեր 'ի վ՟ր մեր ըստ ա՟մի՝ զոր ինչ ածեր 'ի վերայ մեր, և քաղաքի սրբոյ հարցն մերոց երուսաղէմի ։

Արդարութե՟բ և յիրաւի ածեր զայս ա՟մ 'ի վերայ մեր վ՟ս մեղաց մերոց ։

Անօրինեցաք և յանցեաք ապստամբ լինել 'ի քէն. մեղաք յա՟մի, և պատուիրանաց քոց մեք ոչ անսացաք ։

Ոչ պահեցաք և ոչ արարաք որպէս պատուիրեցեր դու մեզ, զի զբարիս գտցուք մեք 'ի քէն ։

Արդ՝ զամենայն զոր արարեր և զոր ինչ ածեր 'ի վերայ մեր, արդար

զաստատանաւ արարեր ։

Մատնեցեր զմեզ 'ի ձեռս թշնամեաց մերոց, անօրինաց, խստաց և ապստամբողաց ։

Ի ձեռս թագաւորի անօրինի և չարի քան զա̃մ երկիր, մատնեցեր զմեզ ։

Եւ արդ՝ ոչ գոյ մեզ ժամ բանալ զբերանս մեր, զի ամօթ և նախատինք եղաք ծառայից քոց պաշտօնէից ։

Մ.ՋԼ մի՛ մատներ զմեզ իսպառ վասն անուան քո ․ մի՛ ցրեր զուխտ քո, և մի՛ 'ի բացեայ առներ զողորմութիւնս քո 'ի մէնջ ։

Վասն Աբրահամու սիրելւոյ քո, Իսահակայ ծառայի քո, և Իսրայէլի սրբոյ քո ։

Խոստացար նոցա և ասացեր, բազմացուցից զզաւակ ձեր որպէս զաստեղս երկնից բազմութեամբ, և որպէս զաւազ առ եզր ծովու ։

Եւ արդ տէր՝ նուազեցաք մեք քան զա̃մ ազգս, և եմք տառապեալ յա̃մ երկրի այսօր վ̃ս մեղաց մերոց ։

Ոչ գոյ 'ի ժամանակի յայսմիկ իշխան՝

մարգարէ եւ առաջնորդ. ոչ ողջա-
կէզք պատարագաց, ոչ խունկք օ-
րհնաց, եւ ոչ տեղի պատարագս
մատուցանելոյ առաջի քո, եւ զո-
ղորմութիւն գտանել ՚ի քէն։

Այլ անձամբք խոնարհեալ եւ հոգ-
ւով տառապանաց ընդունելի լի-
ցուք մեք որպէս ողջակէզս խո-
յոց եւ զուարակաց. եւ որպէս բիւ-
րաւորս գառանց պարարտաց։

Այնպէս ընդունելի լիցին պատա-
րագք մեր այսօր առաջի քո, զի
կատարեալ գտցուք զկնի քո, եւ
չիք ամօթ յուսացելոցս ՚ի քեզ։

Եւ արդ՝ գամք զհետ քո ամենայն
սրտիւք մերովք, երկնչիմք ՚ի քէն,
եւ խնդրեմք զերեսս քո. տէր մի՛
յամօթ առներ զմեզ։

Այլ արա ընդ մեզ ըստ հեզութե̃
քում, եւ ըստ բազում ողորմութե̃
քում. փրկեա զմեզ վասն սքանչե-
լեաց քոց տէր. եւ փառաւորեսցի
անուն քո յաւիտեան։

Յամօթ լիցին ամ̃քն, որ չարչարեն

զծառայս քո. ամաչեցեալ լիցին բռնութիւնք նոցա, և ամենայն զօրութիւնք նոցա խորտակեսցին:

Եւ ծանիցեն զի դու ես տր̃ ած̃ միայն, որ փառաւորեալդ ես 'ի վերայ ամենայն տիեզերաց:

Օրհնեալ ես դու տէր աստուած հարցն մերոց. գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան:

Եւ օրհնեալ է անուն սուրբ փառաց քոց գովեալ. և առաւել բարձրացեալ յաւիտեան:

Օրհնեալ ես 'ի տաճարի փառաց սրբութեան քո. գովեալ և առա:

Օրհնեալ ես 'ի վերայ աթոռոյ արքայութեան քո. գովեալ և առա:

Օրհնեալ ես որ նստիս 'ի քրովբէս և հայիս յանդունդս. գովեալ և:

Օրհնեալ ես 'ի վերայ հաստատութեան երկնից. գովեալ և առա:

Օրհնեցէք ամենայն գործք տեառն զտէր. օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան:

Օրհնեցէք երկինք զտէր. օրհնե-

ցէք և բարձր արարէք զնա յա։
Օրհնեցէք հրեշտակք տն, և ջուրք
որ ՚ի վերոյ երկնից զտէր. օրհ։
Օրհնեցէք զօրութիւնք տեառն,
արեգակն և լուսին զտէր. օրհ։
Օրհնեցէք աստեղք երկնից, անձ-
րեւք և ցօղք զտէր. օրհ։
Օրհնեցէք ամենայն հողմք հուր
և ջեր զտէր. օրհ։
Օրհնեցէք ցուրտ և տօթ, ցօղ և
ձիւնաբեր զտէր. օրհ։
Օրհնեցէք սառն և պարզ, եղեամն
և ձիւն զտէր. օրհ։
Օրհնեցէք տիւք և գիշերք, լոյս
և խաւար զտէր. օրհ։
Օրհնեցէք ամպք և փայլատա-
կունք և երկիր զտէր. օրհ։
Օրհնեցէք լերինք և բլուրք, և ա-
մենայն բոյսք երկրի զտէր. օրհ։
Օրհնեցէք աղբիւրք ծովք և գետք
զտէր. օրհ։
Օրհնեցէք կէտք և ամենայն կայ-
տառք՝ որ ՚ի ջուրս, և թռչունք
երկնից զտէր. օրհ։

Օրհնեցէք գազանք և անասունք,
և որդիք մարդկան զտէր. օրհ։
Օրհնեսցէ Իէլ զտէր. օրհնեսցէ և
բարձր արասցէ զնա յաւիտեան։
Օրհնեցէք քահանայք զտէր. օրհ-
նեցէք և բարձր արարէք զնա յա։
Օրհնեցէք ծառայք տն զտր. օրհ։
Օրհնեցէք անձինք, և շունչք ար-
դարոց զտէր. օրհ։
Օրհնեցէք սուրբք և խոնարհք
սրտիւք զտէր. օրհ։
Օրհնեցէք Անանիա Ազարիա և Մի-
սայէլ զտէր. օրհ։
Փառք հօր և որդւոյ և։

### Մաղթանք։

Օրհնեցէք ամ արարածք զարարիչն արարածոց, զտէրն տերանց, զԹագաւորն Թագաւորաց, զաստուածն աստուծոց։ Օրհնեցէք գովեցէք՝ բարեբանեցէք. զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմութիւն նր։

Կանոն սրբոյ յարութեանն Քրիստոսի ։

հ Որ եկիր 'ի փրկութիւն տիեզերաց
աձ Թագաւոր յաւիտենից Քրիստոս ·
զքեզ փառաւորեմք ընդ հարցըն
մերոց ։ Յանձն առեր ընդ չարչարանս
կամաւորապէս · և զմահ ճաշակե-
ցեր վասն մեր · զքեզ փա ։ Կընքե-
ցար վիմաւ 'ի գերեզմանի · և լու-
ծեր զկնիք մահու յանցանաց · զքեզ ։
գ Օրհնեցէք ամենայն գործք տեա-
ռըն զտէր օրհնեցէք բարձր արա-
րէք զնա յաւիտեանս ։ Զյարու-
ցեալն 'ի մեռելոց քս տր ծ · որ
ըզ մահ խափանեաց յարուբն իւ-
րով · բարձր ։ Զըսքանչելի յարու-
թիւնըն քի տր · ամենայն ժողո-
վուրդք բարեբանելով · բարձր ա ։

Կանոն սրբոց Հրեշտակապետաց ։

հ Անըսկիզբըն հայր · առաջին լոյս ան-
գկ ճառելի · որ 'ի լուսոյ լոյս ներգոր-
ծեալ զիմանալեաց գոյակսն · ըզքեզ

Օրհնեմք զքեզ հայրըն մերոյ: Աթոռա-
կիցըդ հօր. 'ի լուսոյ լոյս ծագումն
մըդի. որ առաքեր 'ի պաշտօն փա-
ռաց քոց զհրեշտակնացըն զօրս. Ընդ:
Ի հօրէ բղխումն փառաւորից որդ-
ւոյ հոգիդ անեղ. որ ըստեղծեր 'ի
յոգիս կատարեալ զհոգեղինացըն
դասս. Ընդքեզ:

Գ Օրհնեցէք ամ գործք տն զտր օրհ-
նեցէք բարձր արարէք զնա յաւի-
տեան: Երկնային զուարթունք հրեշ-
տակք և հրեշտակապետք. վերին
պետութիւնք. բարձր արարէք զհայրն
երկնաւոր: Անմարմնոց բազմութիւնք,
իշխանութիւնք, զօրութիւնք, անմահ
աթոռութիւնք. բարձր արարէք
զքրիստոս թագաւորն: Վեցթեւ-
եանն սերովբէք քառակերպեան
քերովբէք. աթոռք անեղին. բար-
ձր արարէք զհոգին ճշմարիտ:

Հ գձ Որ ընդ հողեղէն բնութե մերոյ
խառնեցեր ըզ բանական հոգիս,
ունել զօրութիւն ընդունելոյ զաստ-
ուածային և զհոգևոր զշնորհս ի-
ջեալ ՚ի վերուստ. օրհնեալ տէր
ած հարցըն մերոց ։ Որ շնորհեցեր
մաքուր հոգւոյ յարայէլի զհոգի
մարգարէութեան. որով ծանու-
ցեր յառաջագոյն, բազմապատիկ օ-
րինակօք զանճառելի խորհուրդ քո
մարդեղութեանդ. օրհնեալ ։ Որ
զանեղ գոյիդ լինելութիւն իբրեւ
զեղեալ տեսանէին, յառաջնորդա-
կան միտըս նոցա. տպաւորեալ
հոգւոյդ զկերպարան իրին գերագոյն
հրաշիւք ՚ի վեր քան ըզբան. օրհ ։

Գ Օրհնեցէք ամենայն գործըք տեա-
ռըն ըզտէր օրհնեցէք բարձր արա-
րէք ըզնա յաւիտեանս ։ Ընդ աւե-
տաւորսն յառաջագոյն փրկութե
մերոյ, ծափս հարէք եկեղեցիք հե-

Թանոսայ աղաղակելով. ըղտ՛ր օրհ։
Ո°նդ տեսանողաց մարգարէից հինն
խորայէլի, քա՛հա՛նայք Նորոյ ուխ-
տին ըսպասաւորք. ըղտէր օրհնեմ։

====

Կանոն ապաշխարութեան։

Որ հայցմս քաղցրութեամբ յարա- Հ
րածըս քո՛ հայր ամենակալ. օրհ- ած
նեալ ես ա՛ծ հա՛րցըն մերոց։ Որ
իջեր ՚ի փրկել զարարածըս քո որ-
դին միածին. օրհ։ Որ խնամես
տեսչութեամբ զարարածըս քո հո-
գիդ ճշմարիտ. օրհ։
Օրհնեցէք ա՛մ գործըք զ՛ն ըղտէր. Գ
ամենայն գործըք քո ըղքեղ օրհ-
նեն։ Որ յոչընչէ գոյացուցեր զեր-
կինս և զերկիր. յիշեա զմեզ տ՛ր
սարգասիութեամբդ քո. ամե։ Որ
անդադար փառաբանիս ՚ի քո յա-
րարա՛ծոց. ըն՛կալ զաղաչանըս մե
եկեղեցւոյ քո. ամենայն։

====

Հ Լուսակից բանդ Հօր և Հոգւոյն. որ
ած իջեր ՚ի յերկնից ՚ի փրկութի ազգի
մարդկան. տէր հարցըն մերոց: Որ
պահեցեր յաղթող ըզձըրգնութի սրբոյ
առաքելոցն. այսօր և մեք ընդ նո
սին ցընծութբ օրհնեմք ըզ քեզ.
տէր: Որ առաւել բարձրացեալդ ես
յաւիտենից. այսօր ընդ դասս վե
րայից քոց բարեբանեմք զքեզ. տէր:
գ Օրհնեցէք ամենայն գործըք տեա
ռըն ըզտէր. օրհնեցէք բարձր
արարէք զնա յաւիտեան: Որ ընտ
րեաց զերանելի առաքեալսն և նո
քօք որսաց ՚ի հաւատս ըզ տիեզե
րըս քրիստոս. բարձր: Որք ըզխա
ւար կռապաշտութեցըն փանեցին
և ըզ լոյս գիտութեան ընդհա
նուր յերկիր ծաւալեցին. ընդ նո
սին բարձր. արա:

Օրհնեալ ես դու Քս. որ յարեարդ ՚ի մեռելոց ողորմած և կոխեցեր զմահ. տէր աստուած հարցն մերոց։ Որ մահկանացուացս կեանք եղեր. զհոգիս ննջեցելոց մեր ընկալ տէր։ Զորս փոխեցեր յաշխարհէն կենդանեաց. հանգստեան արժանաւորեա. տէր։ հ ած

Օրհնեցէք ամ գործք Տն զՏր օրհնեցէք. և բարձր արարէք զնա յաւիտեան։ Գիշերք ըզտէր օրհնեցէք. Որ գալոցն է զօրութեամբ բազմաւ. ազդմամբ ձայնի կենագործէ զննջեցեալսն. ըզ տէր օրհ։ Իսրայէլ ըզտէր օրհնեսցէ. Աղաչեմք զքեզ բարերար. հանգո զհոգիս ծառայից քոց ընդ սուրբս քո. օրհնեսցուք և բարձր արասցուք զանուն քո յաւիտեան ։ գ

հ / ած Ընդ քեզ արդա՛ր և ուղիղ դատա-
ւոր 'ի մէջ սրբո՛ց քո՛ց բա՛րեբանիս.
հարցը՛ն մերո՛ց աստուած օրհնեալ
ես յաւիտեան: Ընդ քեզ որ 'ի հնոցն
իջե՛ր ապաւէ՛ն. խոնարհեալ 'ի
գունդըս մարտիրոսաց գովե՛ս. հար-
ցըն: Ընդ քեզ որ ահաւոր թագա-
ւոր յաւիտենից. այսօր ընդ դա՛սս
վըկայի՛ց քոց բարեբանեմք. հարցն:

գ Օրհնեցէ՛ք ամենայն գործք տեա-
ռըն զտէր օրհնեցէք. բարձր ա-
րարէ՛ք զնա յաւիտեա՛ն: Անբաւե-
լին երկնից և՛ հրեղինա՛ց. 'ի հողեղէ-
նա՛ց հաճեցաւ ընտրել իւր զինա-
ւորս. բարձր: Ուստի և մեք հա-
ւատացեալքըս քրիստոսի՛ աստու-
ծո՛յ. ընդ նոսին խընդրե՛լով զթո-
ղութիւն մեղաց մերոց. բարձր ա-
րարէք զն:

Նշկեալքս ամենեքեան 'ի մեր կաթուղիկէ և առաքելական եկեղեցի, աղաչեսցուք զմիածին որդին աստուծոյ, զտէր մերն և զփրկիչն յիսուս քրիստոս: Որ էջ փառօք հօր 'ի մէջ հնոցին. և փրկեաց զերիս մանկունսն 'ի քաղդէացւոց անտի: Լուսաւոր և սուրբ պահեսցէ զմիտս մեր. զի մի երբէք խաբեսցուք մեք 'ի մեղաց, և 'ի չարութենէ աշխարհի: Այլ արժանի եղիցուք պահել զպատուիրանս նորա. առնուլ զպսակն լուսոյ և կենաց 'ի յանձինս մեր: Զոր խոստացաւ սիրելեաց իւրոց ճշմարիտն աստուած յիսուս քրիստոս տէր մեր. կեցո և ողորմեա:

Տէ՛ր ողորմեա. տէ՛ր ողորմեա. տէ՛ր ու:

Մաղթանք կիւրակէից. և այլոց տէրունական աւուրց.

Զօր յաղթող՝ սքանչելագործ. տէ՛ր մեծի յարութեանն քրիստոսի աստուծոյ մերոյ վայելէ փառք իշխա-

նութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:

Մաղթանք Մարտիրոսաց:

Ցօղեա տէր զցօղ բարերար ողորմութեան քո 'ի մեղուցեալ անձինըս մեր. շիջո զբոց հնոցի յանցանաց մերոց. և փրկեա զմեզ 'ի յաւիտենական հրոյն: Արա արժանի ընդ երիս սուրբ մանկունսն՝ և ընդ երանելի սուրբ վկայսն՝ օրհնել զքեզ և գովել, և քեզ գոհութիւն և փառս մատուցանել հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւի:

Մաղթանք պահոց:

Ցօղեա տէր զցօղ բարերար ողորմութեան քո 'ի մեղուցեալ անձինըս մեր. շիջո զբոց հնոցի յանցանաց մերոց. և փրկեա զմեզ 'ի յաւիտենական հրոյն: Արա արժանի ընդ երիս սուրբ մանկունսն և ընդ երանելի սուրբ վկայսն՝ օրհնել, ստ

քեզ՝ գովել և ասել: Աստուած քա-
ւեա զիս զմեղաւորս: Աստուած
քաւեա զիս զմեղաւորս: Աստուած
քաւեա զիս զմեղաւորս 'ի մեղաց,
և կեցո:

### Երգ Մարիամու Աստուածածնին:

Մեծացուսցէ անձն իմ զտէր. և
ցնծասցէ հոգի իմ աստուծով
փրկչաւ իմով:
Այց արար 'ի վերայ խոնարհութե
աղախնոյ իւրոյ. այսուհետեւ ե-
րանիցեն ինձ ամենայն ազգք:
Արար ընդ իս մեծամեծս հզօրն. և
սուրբ է անուն նորա:
Ողորմութիւն արար ազգաց յազգս
երկիւղածաց իւրոց. արար զօրու-
թիւն բազկաւ իւրով:
Ցրուեաց զամբարտաւանս 'ի մտաց
սրտից, և քակեաց զհզօրս յաթոռոց:
Զխոնարհս բարձրացոյց, զկարօտս
ելից բարութեամբ, և զմեծատու-
նըս արձակեաց ունայնս:

Պաշտպանեաց իէ՟լի ծառայի իւրոյ
յիշելով զողորմութիւն իւր։
Որպէս խօսեցաւ առ հարսն մեր,
ընդ աբրահամու և զաւակի նորա
յաւիտեան։

---

Օրհնութիւն Զաքարիայի հօրն Յովհաննու Մկրտչի․

Օրհնեալ տէր աստուած իսրա-
յէլի, որ յայց ել, և արար փրկու-
կութիւն ժողովրդեան իւրոյ։
Յարոյց մեզ եղջիւր փրկութեան
՚ի տանէ դաւթի ծառայի իւրոյ․
որպէս խօսեցաւ բերանով սրբոց՝
որ յաւիտենից մարգարէքն էին։
Փրկութի՟ ՚ի թշնամեաց մերոց, և ՚ի
ձեռաց ամենայն ատելեաց մերոց։
Առնել ողորմութի՟ առ հարսն մեր, և
յիշել զկտակարանս սրբութե՟ իւրոյ։
Երդումն զոր երդուաւ աբրահա-
մու հօր մերոյ՝ տալ մեզ առանց
երկիւղի զփրկութիւն ՚ի թշնա-
մեաց մերոց։
Պաշտել զնա սրբութեամբ և ար-
դարութեամբ առաջի նորա զա՟մ

աւուրս կենաց մերոց ։

Եւ դու մանուկ՝ մարգարէ բարձ-
րելոյն կոչեցիր ․ գնասցես առաջի
տն՝ պատրաստել զճանապարհս նր ։

Տալ գգիտութիւն փրկութեան ժո-
ղովրդեան իւրոյ, 'ի թողութիւն
ամենայն մեղաց մերոց ։

Վասն գթոյ ողորմութեան տեառն
այ մերոյ, որով երեւեցաւ մեզ ա-
րեգակն 'ի բարձանց՝ լուսաւոր առ-
նել զխաւար մեր ։

Ծագել լոյս 'ի վերայ այսոցիկ՝ որ
նստէաք 'ի խաւարի և 'ի ստուերս
մահու, ուղղել զոտս մեր 'ի ճա-
նապարհս խաղաղութեան ։

Աղօթք Սիմէոնի ծերունւոյն ։

Արդ արձակեա զծառայս քո տէր
ըստ բանի քում 'ի խաղաղութիւն ․
զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր
պատրաստեցեր առաջի ամ ժողովրդոց ․
Լոյս յայտնեցար հեթանոսաց, և
փառք ժողովրդեան քում իսրայէլի ։
փառք հօր և որդ ։

մ
ած Յանճառ փառաց խոնարհեցար 'ի մեր բնութիւն. բա՛նդ աստուած և մարմնացար 'ի սրբոյ կուսէ՛ն: Նո-ծնար 'ի սուրբ կուսէ անապական մարմնով. ըզ քեզ անդադար բարե-բանեա՛լ մեծացուցանեմք: Այսօր զեկեալդ 'ի փրկութի ազգի մարդ-կան. միաբանութեամբ ամենե-քեա՛ն մեծացուցանեմք:

մ
գկ Մայր և կոյս աղախին քրիստոսի, որ բարեխօսդ ես միշտ աշխարհի. քեզ երանեն ամենայն ազգի՛նք: Մա-քուր աղաւնի և հարսն երկնից մարիամ. տաճար և աթոռ այ բա-նին. քեզ երա: Քե՛ հաճեցան իմա-նալիքն ընդ հողեղէնքս. Ե՛ քե՛ մեր-ձեցաք 'ի փայտըն կենաց. քեզ ե:

մ
գձ Անարատ կոյս աստուածածին մա-րիա՛մ սրբուհի և մայր քրիստոսի. յարգանդի տաճար զանտանելին ա-մենեցու՛ն. օրհնութեամբ ըզ քեզ տծածին մեծացուցանեմք: Ըզ

քեզ երկնային դուռն զոր ետեսն
եզեկիէլ. եւ այրն զոր ծանեա-
գեդէօն. սերովբէ հողեղէն մե-
հագոյն քերովբէից. օրհնու: Երկ
խորհուրդըս սոսկալիս 'ի քեզ տե-
սանի ածածին. յղութի աներմ-
նական. ծնունդ անարատ. կու-
սութիւն յետ ծննդեան մնալով
անապական. օրհ:

Զքեզ երբեւեալ դուռն առ եզե- մ
կիէլիւ մարգարէիւ. ընդ որ ոչ ոք ած
էանցեալ ոչ ած միայն. ածածին
կոյս. օրհնութ մեծացուցանեմք:
Զքեզ որ 'ի մարենւոջն առ մով-
սէսիւ մարգարէիւ. ըզնոր խոր-
հուրդ կուսի յայտնեցեր մարդկան
ազգի. օրհ: Զքեզ որ 'ի հօրէ ան-
ժամանակայ և 'ի մօրէ ան-
թարգմանաբար. 'ի ժամանակի ծը-
նընդեան 'ի բոլորից փրկութեան
յայտնեցար որդի բարձրելոյն. օրհ: մ
Այսօր նոր ժողովուրդք. ցնծու- ած

ցէ՟ք ընդ գալըստ հոգ՟ւոյն սըր-
բոյ. մեծացուցանեմք զեղեալն ՚ի
հճրէ. Այսօր ցընծան առաքեալ-
քըն. զարդարեալք ՚ի շնորհաց
հոգ՟ւոյն սրբ՟. մե. Այսօր զուարճա-
ցան արարածք, ճշմարիտ գալըս-
տեամբ հոգ՟ւոյն սրբոյ. մեծա.

մ ած Յարուցելոյն ՚ի մեռելոց բնակա-
րան մայր և կոյս. որ զննջեցեալ-
սըն յադամայ կենդանարարդ անապա-
կան. զքեզ մեծացուցանեմք որ
օրհնեալդ ես ՚ի կանայս. Արարողին
երկնի և երկրի եղեր տաճար և օ-
թևանդ. որ զննջեցեալսն մեր
հրեղէն նորոգէ. զքեզ մեծա. Կե-
րանորդին տիեզերաց արտուցեր
զքո սուրբ զկաթն. որ ըզննջեց-
եալսն մեր վերստին նորոգէ. ըզ
քեզ մեծացու.

մ ած Որ զաւետիս հոգ՟ւոյն ՚ի հրեղէն
՚ի հրեշտակէն ընկալար. ուրախ լեր
ընկերակից տէր ընդ քեզ մարիամ

անհարնայեամ՞։ Ընկիցէրն բանին հաճեցաւ առնուլ մարգերութին սկիզբն ՚ի կուսէդ. քրիստոս աստուած ծ թագաւորն յաւիտենից։ Աղաչեմք ըզքեզ սուրբ ածածին. առ քրիստոս բարեխօսեա՛ փրկել զժողովրդս իւր. որ գնեաց արեամբն իւրով։

---

Քարոզ զկնի մեծացուցէին.

Սուրբ զատուածածինն՝ և զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ հայր ՚ի յերկինս. զի կամեսցի ողորմեսցի՝ և գթասցի կեցուսցէ զարարածս իւր։ Ամենակալ տէր աստուած մեր կեցո և ողո՛ր։

Աղօթք Մարտիրոսաց և պահոց.

Ընկալ տէր զաղաչանս մեր՝ բարեխօսութեամբ սուրբ աստուածածնին անարատ ծնողի միածնի որդւոյ քոյ. և աղաչանօք ամ սրբոց քոց. և որոց այսօր է յիշատակ։ Լուր մեզ տէր, և ողորմեա. նե-

րեա քաւեա և թող զմեղս մեր։
Արժանաւորեա գոհութեամբ փա-
ռաւորել զքեզ ընդ որդւոյ և ընդ
սրբոյ հոգւոյդ. այժմ և միշտ և։

Քարոզ՝ զկնի մեծացուցէին կիւրակէից աւուրց։

Եւ եւս խաղաղութեան զտէր ա։
Վասն սուրբ տեղւոյս շինութե,
և՝ բարեկարգութեան. զտէր աղա։
Վ՞ ժողովրդեանս՝ որք մտանեն ընդ
դրունս սբյ եկեղեցւոյ. զտէր ա։
Վ՞ ընդունելոյ զպաղատանս սոցա
ըստ մեծի ողորմութե իւրում. զտր։
Եւ եւս։ Զանձինս։ Աղօթեաց։

Աղօթք։

Դու ես թագաւոր յաւիտենս
յաւիտենից քրիստոս աստուած
մեր։ Եւ քեզ ընդ հօր և հոգւոյդ
սրբոյ վայելէ փառք իշխանութիւն
և պատիւ. այժմ և միշտ և յաւի։

---

Երգ խաղաղերից աւետարանին.

Եղիցի անուանն տեառն օրհնեալ.
՚ի յայսմ հետէ, մինչեւ ՚ի յաւէ

տեառն։

Օրհնեցէք մանկունք զտէր. և
օրհնեցէք զանուն տեառն։ Եղիցի
անուն տեառն օրհնեալ յայսմ
հետէ մինչև ՚ի յաւիտեան։ Յա-
րեւելից մինչ ՚ի մուտս արեւու
օրհնեալ է անուն տեառն. ՚ի յայ-
սըմ հետէ մին։

Փառք և երկրպագութիւն հօր և
որդւոյ և սուրբ հոգւոյն. և այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտե-
նից ամէն. ՚ի յայսմ հետէ
մինչև ՚ի յաւիտեան։

Որ տէր ծնեալ մեզ, և փրկ-
եալ զմեզ. վասն անուան
քո։

Որ և մի մերժեր ըզ մեզ ՚ի ս-
պառ. վասն անուն։

Թագաւորեսցէ տէր յաւիտեան
աստուած քո սիոն յազգէ յազգ։
Օրհնեա անձն իմ ըզ տէր. օրհնե-
ցից ըզ տէր ՚ի կենդանութեան իմում։

սրկ Օ՛րհնի։

քհ Խաղաղութի՛ւն ամենեցուն։

դպ Եւ ընդ հո՛գւոյդ քում։

սրկ Երկի՛րպագութեամբ լուարո՛ւք։

քհ Ս̃բյ աւետարանիս որ ը̃ս Մատթէոսի։

դպ Փա՛ռք քեզ տէ՛ր աստուա՛ծ մե՛ր։

սրկ Պռօ՛սխումէ՛։

դպ Ասէ՛ ա՛ստուա՛ծ։

Աւետարան ըստ Մատթէոսի։

Եւ յերեկոյի շաբաթուն՝ յորում լուսանայր միաշաբաթին, եկն մարիամ մագդաղենացի, և միւս մարիամն՝ տեսանել զգերեզմանն։ Եւ ահա շարժումն մեծ եղև. զի հրեշտակ տեառն իջեալ յերկնից՝ մատուցեալ ՚ի բաց թաւալեցոյց զվէմն ՚ի դրանց անտի, և նստէր ՚ի վերայ նորա. և էր տեսիլ նորա իբրև զփայլակն, և հանդերձ նորա սպիտակ իբրև զձիւն։ Եւ յահէ անտի նորա խռովեցան պահապանքն, և եղեն իբրև զմեռեալս։ Պատասխանի ետ հրեշտակն՝ և ասէ

ցկանայսն. մի՛ երկնչիք դուք, գի-
տեմ զի զՅիսուս զխաչեալն խնդ-
րէք. չէ աստ, քանզի յարեաւ,
որպէս ասացն։ Եկայք և տեսէք զտե-
ղին ուր կայր։ Եւ վաղվաղակի եր-
թայք ասացէք աշակերտացն նորա՝
թէ յարեաւ. և ահա յառաջանայ
քան զձեզ 'ի գալիլեայ, անդ տե-
սանիցէք զնա. ահա ասացի ձեզ։
Եւ ելեալ վաղվաղակի 'ի գերեզմա-
նէ անտի ահիւ և խնդութեամբ
բազմաւ՝ ընթանային պատմել աշա-
կերտացն։ Եւ ահա պատահեցաւ
նոցա Յիսուս՝ և ասէ. ողջ էք։ Եւ
նոքա մատուցեալ կալան զոտս նո-
րա՝ և երկիրպագին նմա։ Յայնժամ
ասէ ցնոսա Յիսուս. մի՛ երկնչիք,
երթայք ասացէք եղբարցն իմոց՝
զի երթիցեն 'ի գալիլեայ, և անդ
տեսցեն զիս։ Իբրև նոքա գնացին,
ահա ոմանք 'ի զօրականացն եկին
'ի քաղաքն՝ և պատմեցին քահանա-
յապետիցն զամենայն որ ինչ եղե-
ալն։ Եւ նոքա ժողովեալ հանդերձ

ծերովքն խորհուրդ առին՝ արծաթ յոյժ ետուն զօրականացն, և ասեն. ասասջիք՝ եթէ աշակերտքն նորա եկեալ գիշերի գողացան զնա՝ մինչ մեք ՚ի քուն էաք։ Եւ եթէ լուր լիցի այդ առ դատաւորն, մեք հաճեսցուք զնա՝ և զձեզ անհոգս արասցուք։ Եւ նոքա առեալ զարծաթն, արարին որպէս ուսանն. և ել համբաւս այս ՚ի Հրէից մինչեւ ցայսօր։

Իսկ մետասան աշակերտքն գնացին ՚ի Գալիլեա ՚ի լեառն՝ ուր ժամադիր եղեւ նոցա Յիսուս։ Իբրեւ տեսին զնա, երկիրպագին նմա. և ոմանք երկուացան։ Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա՝ և ասէ։ Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի. որպէս առաքեաց զիս Հայր, և ես առաքեմ զձեզ։ Գնացէք այսուհետեւ՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս. մկրտեցէք զնոսա յանուն Հօր՝ և Որդւոյ՝ և Հոգւոյն սրբոյ։

Ուսուցէք նոցա պահել զամենայն՝ զոր ինչ պատուիրեցի ձեզ. և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչև 'ի կատարած աշխարհի:

Աւետարան ըստ Մարկոսի:

Եւ իբրև երեկոյ եղև՝ քանզի ուրբաթ էր՝ որ 'ի շաբաթն մտանէր, եկեալ Յովսէփ որ յԱրիմաթեայն էր՝ այր պարկեշտ նախարար, որ և ինքն իսկ ակն ունէր արքայութեանն Աստուծոյ. համարձակեցաւ՝ եմուտ առ Պիղատոս, և խնդրեաց զմարմինն Յիսուսի: Եւ Պիղատոս զարմացաւ թէ այնչափ վաղ մեռաւ. և կոչեալ առ ինքն զհարիւրապետն, եհարց զնա և ասէ՝ թէ արդարև այնչափ վա՞ղ մեռաւ: Եւ իբրև ստուգեաց 'ի հարիւրապետէ անտի, շնորհեաց ըզ մարմինն Յովսէփայ: Եւ Յովսէփ գնեաց կտաւ՝ և իջուցեալ զնա պատեաց կտաւովն, և եդ 'ի գերեզմա-

նի, որ էր փորեալ 'ի վիմէ, և թաւալեցոյց զվէմ մի 'ի դուռն գերեզմանին։ Իսկ մարիամ մագդաղենացի և մարիամ յակովբայ՝ և յովսեայ, տեսին զտեղին ուր եդաւ։ Եւ իբրեւ էանց շաբաթն, մարիամ մագդաղենացի՝ և մարիամ յակովբայ և սաղոմէ՝ չոգան պատրաստեցին խունկս, զի եկեսցեն և օծցեն զնա։ Եւ ընդ առաւօտս միաշաբաթուն գան 'ի գերեզմանն ընդ արեւագալըն, և ասէին ցմիմեանս, ո՞վ թաւալեցուսցէ մեզ զվէմն 'ի դրանց գերեզմանին։ Եւ հայեցեալ տեսին՝ զի թաւալեցուցեալ էր վէմն 'ի գերեզմանէն. քանզի էր մեծ յոյժ։ Եւ մտեալ 'ի ներքս 'ի գերեզմանն՝ տեսին զերիտասարդ մի զի նստէր ընդ աջմէ կողմանէ՝ զգեցեալ պատմուճան սպիտակ, և զարհուրեցան։ Եւ նա ասէ ցնոսա. մի՛ երկնչիք, զյիսուս խնդրէք զնազովրեցի զխաչեցեալն, յարեաւ՝ չէ աստ. ահաւասիկ տեղին՝ ուր եդին զնա։ Այլ

Երթայք ասացէք ցաշակերտս նո-
րա՝ և ցպետրոս, թէ ահա յառա-
ջագոյն երթայ քան զձեզ 'ի գալի-
լեա, անդ տեսանիցէք զնա՝ որպէս
ասացն ձեզ: Եւ իբրև լուան՝ ե-
լին և փախեան 'ի գերեզմանէն,
քանզի զահի հարեալ էին. և ոչ
ումեք ինչ ասացին, զի երկնչէին:

Աւետարան ըստ Ղուկասու:

Եւ ահա այր մի անուն յովսէփ,
որ էր նախարար՝ այր բարե-
գործ և արդար. սա չէր միաբա-
նեալ ընդ խորհուրդս և ընդ գոր-
ծըս նոցա. յարեմաթեայ քաղաքէ
հրէից, որ և ինքն իսկ ակնունէր
արքայութեան աստուծոյ: Սա մա-
տուցեալ առ պիղատոս՝ խնդրեաց
զմարմինն յի. և իջուցեալ զնա՝ պա-
տեաց պաստառակալաւ, և եդ 'ի
կոփածոյ գերեզմանին. ուր չէր բը-
նաւ զոք եդեալ: Եւ օրն էր ուր-
բաթ, և շաբաթ լուսանայր: Եւ
երթային զհետ նորա կանայք՝ որք

եկեալ էին ընդ նմա 'ի գալիլէէ.
տեսին զգերեզմանն, և որպէս ե-
դաւ մարմին նր: Դարձան և պատ-
րաստեցին խունկս և իւղս. և 'ի
շաբաթուն հանգարտեցին վասն
պատուիրանին:

Բայց 'ի միաշաբաթուն վաղքաջ
ընդ առաւօտն եկին 'ի գերեզմանն,
բերին զխունկսն զոր պատրաստե-
ցին. և այլ կանայք ընդ նոսա. և
գտին զվէմն թաւալեցուցեալ 'ի
գերեզմանէ անտի: Եւ մտեալ 'ի
ներքս՝ ոչ գտին զմարմինն յիսուսի:
Եւ եղեւ ընդ հիանալն նոցա վասն
այնորիկ, և ահա արք երկու հա-
սին առ նոսա 'ի հանդերձս լուսա-
ւորս: Եւ իբրեւ զահի հարան, և
խոնարհեցուցին զերեսս իւրեանց
յերկիր, ասեն ցնոսա. զի՞ խնդրէք
զկենդանին ընդ մեռեալս: Չէ աստ
այլ յարեաւ. յիշեցէք՝ որպէս խօ-
սեցաւ ընդ ձեզ մինչ էրն 'ի գալի-
լեայ, և ասէր՝ թէ պարտ է որդ-
ւոյ մարդոյ մատնիլ 'ի ձեռս մար-

դոց մեղաւորաց, և 'ի խաչ ելանել՝ և յերրորդ աւուր յառնել։ Եւ յիշեցին զբանսն նորա։ Եւ դարձան պատմեցին զայս ամենայն մետասանիցն, և այլոցն ամենեցուն։ Էին Մարիամ Մագդաղենացի և Յովհաննա և Մարիամ Յակովբեայ, և այլք ընդ նմա՝ որք պատմեցին զայս առաքելոցն։ Եւ երեւեցան առաջի նոցա շաղփաղփութիւն բանք նոցա՝ և չհաւատային նոցա։ Բայց Պետրոս յարուցեալ ընթացաւ 'ի գերեզմանն, և հայեցեալ տեսանէ զկտաւսն լոկ՝ զի կային. և գնաց՝ ընդ միտս զարմացեալ, թէ զինչ եղեւ։

Աւետարան ըստ Յովհաննու։

Յետ այսորիկ աղաչեաց զպիղատոս Յովսէփ, որ յարեմաթեայ էր աշակերտ յիսուսի 'ի ծածուկ՝ վասն ահին հրէից, զի բարձցէ զմարմինն յիսուսի. և հրամայեաց պիղատոս. եկն և եբարձ զնա։ Եկն

և Նիկոդեմոս՝ որ եկեալն էր առ
յիսուս 'ի գիշերի զառաջինն. և ե-
բեր զմուռս խառն ընդ հալուէ՝
իբրև լտերս հարիւր։ Առին զմար-
մինն յիսուսի, և պատեցին կտաւ-
ովք՝ և խնկովք հանդերձ, որպէս
օրէն էր հրէից պատել։ Եւ էր 'ի
տեղւոջն յորում խաչեցաւ՝ պար-
տէզ. և 'ի պարտիզի անդ գերեզ-
ման նոր, յորում ոչ ոք երբէք էր
եդեալ։ Անդ վասն ուրբաթուն հը-
րէից՝ զի մօտ էր գերեզմանն՝ ե-
դին զյիսուս։

Եւ 'ի միաշաբաթօջն մարիամ մագ-
դաղենացի գայ առաւօտուն ընդ
արշալուսն 'ի գերեզման անդր, և
տեսանէ զվէմն բարձեալ 'ի դրանց
գերեզմանին։ Ապա ընթանայ՝ և
գայ առ սիմոն պետրոս և առ միւս
աշակերտն՝ զոր սիրէրն յիսուս, և
ասէ ցնոսա. բարձին զտէր 'ի գե-
րեզմանէ անտի, և ոչ գիտեմ՝ ո՞ւր
եդին զնա։ Ել պետրոս և միւս ա-
շակերտն՝ և գային 'ի գերեզմանն։

ընթանային երկոքեան 'ի միասին. և միւս աշակերտն յառաջեաց ընթացաւ վաղագոյն քան զպետրոս՝ և եկն նախ 'ի գերեզմանն: Եւ խոնարհեալ տեսանէ՝ զի կային անդ կտաւքն, բայց 'ի ներքս ոչ եմուտ: Եկն և սիմոն պետրոս՝ որ գայրն ըզկնի նորա. և եմուտ 'ի գերեզմանն, և տեսանէ զկտաւսն՝ զի կային անդ. և վարշամակն որ էր 'ի գլլուխ նորա՝ ոչ ընդ այլ կտաւսն կայր, այլ ուրոյն ծալեալ 'ի մի կողմն: Յայնժամ եմուտ և միւս աշակերտն, որ եկեալն էր յառաջագոյն 'ի գերեզմանն, ետես և հաւատաց. զի չև ևս գիտէին զգիրս՝ թէ պարտ է նմա 'ի մեռելոց յառնել: Չոգան դարձեալ առ միմեանս աշակերտքն: Բայց մարիամ կայր արտաքոյ գերեզմանին՝ և լայր. և մինչդեռ լայր՝ խոնարհեցաւ 'ի գերեզմանն, և տեսանէ երկուս հրրեշտակս 'ի սպիտակս, զի նստէին մի 'ի սնարից և մի յանոտից՝ ուր

կայր մարմինն յիսուսի։ Եւ նոքա
ասեն ցնա. կին դու զի՞ լաս. ասէ
ցնոսա. զի բարձին զտէրն իմ ՚ի գե-
րեզմանէ անտի, եւ ոչ գիտեմ՝ ուր
եդին զնա։ Զայս իբրեւ ասաց,
դարձաւ ՚ի թիկունս կոյս, եւ տե-
սանէ զյիսուս զի կայր. եւ ոչ գի-
տէր թէ յիսուս իցէ։ Ասէ ցնա յի-
սուս. կին դու՝ զի՞ լաս, զո՞ խնդ-
րես. Նմա այսպէս թուեցաւ՝ թէ
պարտիզպանն իցէ, ասէ ցնա. տէ՛ր՝
եթէ դու բարձեր զնա՝ ասա ինձ
ուր եդիր զնա, զի ես առից զնա։
Ասէ ցնա յիսուս. մարիամ, եւ նա
դարձաւ, եւ ասէ ցնա եբրայեցե-
րէն. րաբունի, (որ թարգմանի՝
վարդապետ)։ Ասէ ցնա յիսուս. մի՛
մերձենար յիս, զի չեւ եւս ելեալ եմ
առ հայր իմ. այլ երթ դու առ
եղբարսն իմ, եւ ասա ցնոսա. ելա-
նեմ ես առ հայրն իմ՝ եւ առ հայր
ձեր, եւ աստուածն իմ՝ եւ աստ-
ուած ձեր։ Գայ մարիամ մագդա-
ղենացի՝ եւ պատմէ աշակերտացն,

եթէ ետես նա զտէր, և զայս ինչ
ասայ ցնա ։

---

Երգ՝ չնի Իւղաբերից աւետարանին ։

Փառք յարութե քո տէր․ ոչ դա-
դարեցայց Քրիստոս օրհնել զքեզ
զամ աւուրս կենդանութե իմոյ ։
Փառք յարութե քո տէր․ ոչ դա-
դարեցայց յիսուս գովել զքեզ զա-
մենայն աւուրս կենդանութե իմոյ ։
Ես ոչ դադարեցայց փրկիչ փառա-
ւորել զքեզ զամենայն աւուրս
կենդանութեան իմոյ ։

Երգ՝ աղուհացի կիւրակէից․ երիցս կրկնեա․
և զվերջինն բարձր ասա ։

Զամենայն աւուրս կենաց իմոց,
ես ոչ դադարեցայց օրհնել զքեզ
Քրիստոս փրկիչ աշխարհի ։
Զամենայն աւու ։ Զամենայն ա ։
Ի գիշերի համբարձէք զձեռս
ձեր ՚ի սրբութիւն․ և օրհնեցէք
զտէր ։

Աստ օրհնեցէք ամենայն ծառայք
տեառն զտէր 'ի սրբութիւն. եւ
օրհնեցէք ըզտէր :

Գալստեան ողորմեան :

Դասք լուսեղէն զուարթնոցն լու-
սաւորին մեծի գալստեանն տն :
Եւ երգէին երգ նոր. օրհնեալ է
քո սուրբ գալուստդ :

զատ Լուսապայծառ հրեշտակըն նստե-
լով 'ի կենսատու գերեզմանին : Եւ
աւետէր կանանցն յարեաւ տր ծ

հմբ Համբարձէք իշխանք զդրունս ձեր
'ի վեր : Եւ գայ մտանէ փառօք 'ի
փառս :

հգւ Իջեալ հոգին յառաքեալսն. եւ հը-
րազինեաց զընտրեալսն անկէզ 'ի
սուրբ վերնատունն : Եւ հանդեա
նորօք յազգըս մարդկան զանազա
լեզուաց բաժանմամբ :

վար Ցնծայ Թաբօր հերմոնիւ. եւ ա-
ռաքեալքն 'ի հայրական ձայնէ
Թըմբրեալք : Եւ կենդանեաց եւ մ

ռելոյ տէր ծանուցին ըզքեզ մով-
սէս և եղիա։

Այսօր եկեալ կամաւ տէրն 'ի խաչ։ Նա տարածեաց զբազուկս իւր 'ի նմա։ խաչ

Դուք հոգեղէնք ընդ հովիւսն քարոզէին 'ի յանքանից մըսուր ըզ բանն բազմեալ։ Նա մոգքն ա-տեղըն գուշակեալ՝ մատուցին զըն-ծայսըն խորհրդոյ։ ծնն

Քառասնօրեայ տղայ և տէրն օրի-նադիր անօրինաբար եկն 'ի տաճա-րըն։ Նա սիմէօն գգուէր գըրգօքն· և յօրինաց կապից լուծումն հայ-ցէր 'ի կեանս աւետարանի։ տրն ընդ առջ

Քարոզ՝ զկնի խաղաղերից աւետարանին, և երգոյն։

Զուարճացեալքս մեծաւ ուրա-խութեամբ աւետեօքս յարութեան տեառն մերոյ և փրկչին յիսուսի քրիստոսի։ Որ եղև պտուղ և անդ-րանիկ ամենայն ննջեցելոց· խորտա-

կեաց զդրունս դժոխոց. և եղծ զբռնութիւն մահու. և ետ յոյս հաստատութեան վերստին նորոգման կենդանութեան ամ մարդկան: Խնդրեսցուք հաւատով 'ի փրկչէն մերմէ յիսուսէ քրիստոսէ. զի ըզ մեզ արժանի արասցէ յարութեան իւրոյ. կերպարանակից առնել ըզ մարմին խոնարհութե մերոյ ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց: Վասն զի զայս խոստացաւ, զմեծ և զանճառելի շնորհս պարգեւել սիրելեաց իւրոց ճշմարիտն աստուած յիսուս քրիստոս տէր մեր. կեցո և ողորմեա:

աղ Ամենակեցոյց ճշմարիտ՝ սուրբ մեծի յարութեանն քրիստոսի աստուծոյ մերոյ, վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և:

Եւ ասի փոխս:

Ողորմեա ինձ ած ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում գթութեան քում քաւեա զանօ-

րէնութիւնս իմ։
Առաւել լուա զիս յանօրէնուէ̃ իմ-
մէ. և ՚ի մեղաց իմոց ս̃բ արա զիս։
Զանօրէնութիւնս իմ ես ինձէն
գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են
յամենայն ժամ։
Քեզ միայն մեղայ տէր, և չար ա-
ռաջի քո արարի։
Որպէս արդար եղիցիս ՚ի բանս քո,
և յաղթող ՚ի դատել գաս։
Անօրէնութեամբ յղացայ, և ՚ի մե-
ղս ծնաւ զիս մայր իմ։
Դու տէր զճշմարտութիւն սիրեցեր,
զանյայտս և զծածկեալս իմաստու-
թեամբ քով յայտնեցեր ինձ։
Ցօղեա յիս մշտկաւ և ս̃բ եղէց, լու-
ա և քան զձիւն սպիտակ եղէց։
Լսելի արա ինձ տէր զցնծութիւն
և զուրախութիւն, և ցնծասցեն
ոսկերք իմ տառապեալք։
Դարձո զերեսս քո ՚ի մեղաց իմոց.
և զամենայն անօրէնութիւնս իմ
քաւեա յինէն։
Սիրտ սուրբ հաստատեա յիս աստ̃

ուած, և հոգի ուղիղ նորոգեա 'ի
փորի իմում։

Մի՛ ընկենուր զիս տէր յերեսաց
քոց, և զհոգի քո սուրբ մի՛ հա-
նէր յինէն։

Տուր ինձ ցնծութիւն փրկութեան
քոյ, և հոգւով պետութեան քոյ
հաստատեա զիս։

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո,
և ամբարիշտք առ քեզ դարձցին։

Փրկեա զիս յարենէ ա՛ծ, ա՛ծ փրկու-
թեան իմոյ. ցնծասցէ լեզու իմ
յարդարութեան քում։

Տ՛ր եթէ զշրթունս իմ բանաս, բե-
րան իմ երգեսցէ զօրհնութիս քո։

Թէ կամեցեալ էիր պատարագս մա-
տուցանէաք. բայց դու ընդ ողջա-
կէզս իսկ ոչ հաճեցար։

Պատարագ ա՛յ հոգի խոնարհ, ըզ
սիրտ սուրբ և զհոգի խոնարհ ա՛ծ
ոչ արհամարհէ։

Բարի արա տէր կամօք քովք սիօնի,
և շինեսցին պարիսպքն եէմի։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարա-

դըս արդարութեան. յորժամ ուխ-
տից պատարագս հանցեն ՚ի սեղան
քո զուարակս ։
Փառք հօր և որդւոյ և ։

---

Բանդ որ ՚ի հօրէ իջեալ մարմնա- ող
ցար ՚ի կուսէն. խաչեցար կամա- ած
ւ հօր վասն մեր զմեղս սպաներ. տ՟ր
ա՟ծ ողորմեա մեզ ։ Որ յարարածոց
ես անբովանդակելի. ՚ի խաչափայ-
տին բեւեռելով զմահ կոխեցեր.
սուրբ ։ Որ ՚ի նախնումն զանկեալն
՚ի ծառայութիւն մահու, պատ-
ուական մարմնով և արեամբդ քո
ազատեցեր. սուրբ ։

Որ ՚ի հրեղէն զօրաց երկնից փա- ող
ռաբանիս աստուած. որով զերկնա- դծ
յին աննմանական ա՟ծային զշնորհս
հեղեր յորդիս ադամայ. աղաչանօք
սոցա ողորմեա մեզ աստուած ։ Ե-
րեւելով հողեղինացս անհիւթա-
կանքն ՚ի ձեւ մարմնոյ. որք և ծա-

նուացին մարգարէիցն. զխորհուրդ
քո գալըստեանդ բազմապատիկ
տեսլեամբ օրինակելով. աղա: Ան-
ճառելի տնօրէնութեանդ քո աւե-
տաբերք առաքելցան, գաբրիէլ և
միքայէլ. անմարմնական դասուքն
իւրեանց յերկրի սպասաւորելով.

աղաչանօք սո:

ող Որ աւետաւոր քում գալստեանդ
գձ առաքեցեր յաշխարհ ընդ սուրբ մար-
գարէսն. և եկեալ խոնարհութբ
նոր օրինօք զլծերին ցեր ՚ի գիրս օ-
րինաց և մարգարէից. բարեխօսու-
թեամբ սոցա քրիստոս ողորմեա
մեզ: Որ կոչեցեր մարգարէիւք յա-
ռաջագոյն զհեթանոսս քեզ նոր ժո-
ղովուրդ. և ընդունօղըր սիրովն զե-
կեղեցի հեթանոսաց հարսըն սիրե-
լի անմահ փեսային. բարե: Որ ըզ
փառըս տաճարիս զոր շինեցեր շի-
նողդ էին ՚ի վերայ վիմին, բարձրա-
գոյն քան զնաւաջինն. և գերազարդ

վայելչութեամբ տեսանողքըն ծա-
նուցին իմաստիւք հոգւոյն. բա։
Հայր բազումողորմ, խոստովանիմ ող
առ քեզ որպէս զանառակ որդին. ած
թո՛ղ ինձ զմեղս իմ. և ողորմեա՛։
Տէր, որ գթացար ՚ի կինըն քանանա-
ցի, գթա և յիս ՚ի մեղաւորս. և ո։
Տէր, որ դարձուցեր զմաքսաւորն ՚ի
գիտութիւն ճշմարտութե, դար-
ձո և զիս ըզ մոլորեալս. և ողոր։
Տէր, որ զգթութիւնդ քո զառատ ող
հեղեր յերկնից ՚ի մէջ սրբոց առա- ած
քելոց քոց. աղաչանօք սոցա ողոր-
մեա՛։ Որ ՚ի ձեռըն սոցա՛ սփռե-
ցան շնորհք հոգւոյդ սրբոյ ընդ
ամ երկիր. ա։ Որ առքօք լուսաւո-
րեցեր մկրտութեամբ աւազանին
զեկեղեցի քո սուրբ. աղա։
Որ ստեղծմամբ ըստ պատկերի քո ող
տէ՛ր պատուեցե՛ր ըզմեզ. ընկալ և ած
այժմ զննջեցեալսն ՚ի քեզ ուղիղ
հաւատով. ըստ մեծի՛ քում ողոր-

մութեամն: Որ շնորհօք քո հոգ-
ւոյն լուսաւորեցեր. յիշատակի իւ-
րեանց զհոգիս նոցա՝ ընկալ մար-
դասէր. ըստ մե: Որք հաղորդե-
ցան մարմնոյ և արեան քո տէր.
հանգո զհոգիս նոցա ընդ սուրբս
քո Քրիստոս մրծ. քանզի գինք մբ
արեան քո են:

ող
ած
Ժողովեալքս ՚ի յիշատակ սրբոց
քոց Քրիստոս, աղաչեմք ըզքեզ.
սոցա բարեխօսութեամբ ողորմեա:
Երկրպագեմք առաջի բեմի քո Քրիս-
տոս. ընկալ քո գթութբրդ զա-
ղաչանըս մեր. սոցա: Զորս հոգ-
ւով և մարմնով որպէս զանմարմինն.
անարատ ՚ի գալուստ քո պահես-
ցես մարդասէր փրկիչ. սոցա բա:

=====

Քարոզ՝ զկնի ողորմեային:

Երկրպագեմք քեզ տէր աստուած
մեր՝ անցեալքս ընդ երկարութիւն
գիշերիս. և կանխեալքս ՚ի տեղւոջ

խոստովանութեան. մատուցանեմք զառաւօտու աղօթս մեր: Զ՝քեզ տէր օրհնեմք եւ փառաւորեմք, եւ զքէն տէր գոհանամք. որ արժանի արարեր զգիշերս խաղաղութեամբ անցուցանել եւ հասանիլ ՚ի ժամ առաւօտուս: Արժանաւորեա զմեզ տէր անձառ խոստմանց քոց. զոր խոստացար սիրելեաց քոց ճշմարիտութ. աստուած՝ յիսուս քրիստոս տէր մեր. կեցո եւ ողորմեա: Ողորմեաց մեզ տէր աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութբ: Տէր ողորմեա. տէր ողորմեա. տէր ո:

Մաղթանք յարութեան:

Ողորմած՝ գթած՝ ճշմարիտ՝ սուրբ մեծի յարութեանն քրիստոսի աստուծոյ մերոյ, վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ:

Մաղթանք պահոց:

Ողորմութբ եւ գթութբ քով, լուր մեզ տէր եւ ողորմեա. ներեա քա-

ւեա և թող զմեզս մեր ։ Արժա-
նաւորեա գոհութեամբ փառաւո-
րել զհայր և զորդի և զսուրբ հո-
գին . այժմ և ։

Մաղթանք Մարտիրոսաց ։

Բարեխօսութեամբ և աղօթիւք
սրբոց մարտիրոսացն, որոց այսօր է
յիշատակ՝ և ամենայն սրբոց քոց,
լուր մեզ տէր և ողորմեա . ներեա
քաւեա և թող զմեզս մեր ։ Արժա-
նաւորեա գոհութեամբ փառա-
ւորել զհայր և զորդի և ։

---

Ալէլուիա ալէլուիա ։

Օրհնեցէք զտէր յերկնից . օրհ-
նեցէք զնա 'ի բարձանց ։
Օրհնեցէք զնա ամ հրեշտակք նր .
օրհնեցէք զնա ամ զօրութիւնք նր ։
Օրհնեցէք զնա արեգակն և լու-
սին . օրհնեցէք զնա ամենայն աս-
տեղք և լոյս ։
Օրհնեցէք զնա երկինք երկնից . և
ջուրք որ 'ի վերոյ քան զերկինս,

օրհնեցէք զանուն տեառն։
Զի նա ասաց՝ և եղեն, հրամայեաց՝
և հաստատեցան։
Կացոյց զնս յաւիտեանս յաւիտե֊
նից. սահման եդ, և ոչ անցանեն։
Օրհնեցէք զտէր յերկրէ՝ վիշապք
և ամենայն խորք։
Հուր և կարկուտ, ձիւն և սառն,
հողմ և մրրիկ, որք առնէք զբան նր։
Լերինք և ամ բարձունք, ծառք
պտղաբերք և ամենայն մայրք։
Գազանք՝ և ամ անասունք. սողունք,
և ամ թռչունք թեւաւորք։
Թագաւորք երկրի և զօրք իւրեանց.
իշխանք և ամ դատաւորք երկրի։
Երիտասարդք և կուսանք, ծերք և
տղայք՝ օրհնեցէք զանուն տեառն։
Բարձրացաւ անուն նորա միայն.
խոստովանութիւն նմա յերկինս և
յերկրի։
Բարձր առնէ տէր զեղջիւր ժողո֊
վրդեան իւրոյ. օրհնութիւն նմա
յամ սրբոց նր. յորդւոցն իսրայէլի
ժողովրդն՝ որ մերձ է առ տէր։

Օրհնեցէք զտէր յօրհնութիւն ՚ի նոր,
օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց:
Ուրախասցի իսրայէլ յարարիչ իւր.
որդիք սիօնի ցնծասցեն ՚ի թագա-
ւորն իւրեանց:

Օրհնեսցեն զանուն նորա օրհնու-
թեամբ, սաղմոսիւք և օրհնութիւն
սաղմոս երգեսցեն նմա:

Հաճի տէր ընդ ժողովուրդ իւր տէր,
և բարձր առնէ զհեզս ՚ի փրկութեան:
Պարծեսցին սուրբքն փառօք, և
ցնծասցեն ՚ի հանգիստ իւրեանց,
և բարձր արասցեն զաստուած բե-
րանօք իւրեանց:

Սուր երկսայրի ետ ՚ի ձեռս նոցա,
առնուլ զհատուցումն ՚ի հեթանո-
սաց, ՚ի յանդիմանութիւն ամե-
նայն ժողովրդոց:

Ի կապել զթագաւորս նոցա կապա-
նօք, զզօրավարս նոցա ձեռնակա-
պօք երկաթեօք:

Առնել նոցա դատաստանս ըստ գը-
րոց. և փառք այս են ամենայն սրբոց նորա:
Օրհնեցէք զաստուած ՚ի սրբութեան նո-

րա, օրհնեցէք զնա 'ի հաստատու-
թեան 'ի զօրութեան նորա։

Օրհնեցէք զնա 'ի զօրութեան նո-
րա, օրհնեցէք զնա 'ի բազում մե-
ծութեան նորա։

Օրհնեցէք զնա 'ի ձայն օրհնու-
թեան, օրհնեցէք զնա սաղմոսիւք
և օրհնութեամբ։

Օրհնեցէք զնա ցնծութեամբ, գո-
վեցէք զնա ուրախութեամբ։

Օրհնեցէք զնա 'ի բանս քաղցր, գո-
վեցէք զնա 'ի բարբառ լսելի։

Օրհնեցէք զնա 'ի ձայն գոհութե.
ամենայն հոգիք օրհնեցէք զտէր։

փառք հօր և որդւոյ և։

---

Ընդ լուսանալ միաշաբաթին կան- ա
խեցին կանայքն 'ի գերեզմանն. 'ի աձ
խնկել զանապական մարմինն։ Եւ
գտին ըզվէմն բարձեալ 'ի դրանց
գերեզմանին. և լուեալ բարբառ
'ի հրեշտակէն. եթէ յարեաւ քս
և խափանեաց ըզմահ։ Եւ հանդի-

պեալ քո տէր առաքելոցն և տը-
ւեալ ոգւոյն կենդանարար. առաքե-
ցեր զնա 'ի փրկութիւն տիեզերաց:
տ
Անմահ արքային անմրուեստ ա-
դձ
թոռք. բազմաչեայք քերովբէք սրբ-
բասաց ձայնիւ սերովբէք. առաջին
յերկինս քահանայապետք. բա-
րեխօս լերուք առ տէր վասն ե-
կեղեցւոյ: Բարձրելոյն փառաց
բարձող տէրութիւնք. անյաղթելի
զօրութիւնք վեհագոյն իշխանութիւնք.
երկրորդին դասուք քահանայա-
պետք. բարե: Գերագոյն էին պե-
տութիւնք վերին. հրեշտակապետք
երկնաւորք հրեշտակաց զինուորու-
թիւնք. երրորդի յերկինս քահա-
նայապետք. ձեզ համաձայնեալ եր-
գեմք ընդ փառս 'ի բարձունս:
տ
Այսօր ժողովուրդք որք 'ի հեթա-
դձ
նոսաց, հրաւիրեալք յառաջագոյն
մարգարէիւք. գալ առ աստուածն
աբրահամու յերկրպագութիւն.

օրհնեցէք զտէր յերկի՛նս ընդ երկ-
նաւորացն ։ Այսօր որդիք դըստեր
վերին սիոնի , շինեալք ՚ի վերայ
հիման առաքելոց և մարգարէի՛ց .
որք և ըմպէք զառատաբուղխ վը-
տակ հոգւոյն ՚ի յաղբերացն խորա-
յելի յեկեղեցիս սըրբո՛ց . օրհնե-
ցէք զտէ՛ր յօրհնութի ՚ի նո՛ր ։ Այ-
սօր վերին զօրացըն համաձայնեալ,
դասք նահապետաց և մարգարէից .
երգեն աստուծոյ զերգըս հոգե՛ո-
րըս . ՚ի միջասակի սոցա երգեմք և
մե՛ք զփառս ՚ի բարձունս ։

Տէր որ ՚ի վերայ քերոբէից փա- ա
ռաբանիս . քաղցրութե՛ խոնար- աձ
հեալ ընկա՛լ զաղաչանըս մե՛ր ։ Տէր
որ շնորհեցեր ողորմութիւն ազգի
մարդկան . քաղց ։ Տէր որ ուսուցեր
մեզ յամ ժամ փառըս տալ ՝ ան-
ուանըդ քում սըրբոյ . քաղց ։

Որք ՚ի սկզբանէ պատուեալ եղեն ա
՚ի սէր բոլորից հօր . առաքելական աձ

կոչմամբ ըղտխեղերս հրաւիրեցին
յուսո՟վ հասանել մասին. փառա-
պետութեամբ սոցա ամե՟նեքեան
օրհնեսցուք զտէր։ Որք ականա-
տեսք և սպասաւորք եղեն մարմնա-
ցելոյ բանին. գեր 'ի վերոյ անմարմ-
նոց դասուցն հանդիպե՟լով շնորհի.
փառգա։ Որոց դատողական աթոռ
ահեղ ատենի՟ն հանդերձեալ մը-
նայ. կատարել 'ի մե՟ղ դատաստան
ըստ գրեա՟լսն. առ սոսա անկցուք
զղջացեալ անձամբ պաղատելով.
հաշտեցուցանել սօքօ՟ք ընդ մեզ
զա՟հաւո՟ր դատաւո՟րն։

ա Առաքեա՟լք աստուծո՟յ սիւնք.ք հա-
աձ ւատոյ կաթուղիկէ եկեղեցւո՟յ.
քրիստոսի աստուծո՟յ երկնաւոր
փառգապետի՟ն աշակերտք. բարե-
խօսեցէք շնորհել զխաղա՟ղու՟թի՟ւն
ամենայն աշխարհի։ Բարեկամք քը-
րիստոսի և հաղարապետք աստուա-
ծային խորհրդոցն. ընդունո՟ղք ըղ

բանըն կենաց և լուսաւորիչք տի-
եզերաց . բարե : Դատաւորք ահե՜ղ
ատենին և դատապարտողք զքո
ոչ խոստովանողաց . աղաչեմք ըզ
ձե՛զ . բարե :

Քեզ վայելէ աստուած օրհնու- ո
թիւն, որ յարութիւնդ ես ձայ- ած
նիւ յաւիտենից ննջեցելոցն . թա-
գաւո՛ր և իշխան վերօրհնեմք ըզ-
քե՛զ : Ի միւսանգամ գալըստեանըն
քո քրիստոս փառաւո՜ց թագաւոր . ՚ի
ձայն փողո՜յ նորոգին հոգիք ննջեցե-
լոցն . և յառնեն ՚ի մեռելոց անա-
պական մարմնո՛վ : Վասն որոյ և մեք
զքեզ աղաչեմըք հա՛յր երկնաւոր .
դասաւորեա զննջեցեալսըն մե՛ր ՚ի
լերինըդ քո եդեմ . ՚ի ժողովս անդ-
րանկաց գրելոց ՚ի յերկինս :

Զայն արկեալ կենարարին մեծա- ո
յին բարբառովն . ամէ երկինք ած
օրհնեալըք հօր իմոյ ժառանգե-
ցէք, պատրաստեա՛լ ձեզ զկեանսն

'ի հանդերձեալ երկրին ։ Ընդ ա-
ռաջ եղանել քեզ հաւատով 'ի յօ-
դըս վերինս ․ ոծազգեաց լուսով
պայծառացեալ 'ի դասս անմարմնո-
ցըն ․ 'ի լըսեղ ըղձայն երանաւէտ
կոչմանն ։ Ընդ աջմէ քումմէ կացո
ընդ իմաստունն որք կուսանն ․ 'ի լու-
սեղէն առագաստին պայծառաց-
եալ 'ի դասս անմարմնոցն ․ 'ի ժո-
ղովս անդրանկաց գրելոց 'ի յեր-
կինս ։

տ Ժողովեալք 'ի յիշատակ սրբոց մար-
ած տիրոսացըն, միաբանութբ երգե-
լով ․ օրհնութիւն 'ի բարձունս երկ-
նաւոր թագաւորին ։ Քանզի հեղ-
մամբ արեան սոցա պարտեցան
թշնամին ․ և մեծարեալ պսակի
սիօն երգելով ․ օրհ ։ Դասակցելոցն
ընդ զօրըս վերին զուարթնոցն ․ յի-
շատակս բերկրեալ 'ի սրբութիւն
սոցա երգեսցուք ․ օրհ ։

տ
ած Որք ըզհանդէս նահատակութե ա-

բռնաւորըն ցուցին. և յաղթե-
ցի՛ն հաւատով երրեակ լուսոյն ե-
ղե՛ն մեզ աւխթ. աղաչանօք սոցա
կեցո զմե՛զ: Որք ըզխաւար կռուա-
պաշտութեանցըն վանեա՞լ հերքե-
ցին. և կանգնեցի՛՛ն մեզ նըշան
յաղթող ընդդե՛մ թըշնամւոյն.
աղա՞: Եւ հրաշափառ ծընդութե՛
պատերազմեա՛լք ՚ի յերկրի. վեր
համբարձեա՛լք երկնայնոց դասուցն
եղե՛ն երգակից. աղա՞:

Ձնի Տէր երկնիցին՝ առ Օրհնութեան աստուածօթոռ, ասացեալ յանմարմնոց. այլև ՚ի Կոստանդնուպօլիս սրբոյ ժողովոյն ՃԾ Հայրապետացն:

Փա՛ռք ՚ի բարձունս տ՛յ. և յերկիր խաղաղութիւն ՚ի մարդիկ հա-
ճութիւն: Եւ օրհնութիւն քեզ ՚ի
բարձունս, օրհնեալ ես տէր աստ-
ուած մեր. օրհնեմք զքեզ և գո-
վեմք զքեզ: Խոստովանիմք տէր ըզ-
քեզ և երկրպագանեմք քեզ. փա-

ռաւորեմք զքեզ. գոհանամք տէր
զքէն վասն մեծի փառաց քոց: Տէր
Թագաւոր սուրբ երկնային. աստ-
ուած և հայր ամենակալ: Տէր և
որդի հօր միածին յիսուս քրիստոս
և սուրբ որդի: Տէր աստուած գա-
ռըն աստուծոյ և որդի հօր. որ ա-
ռեր զմերս 'ի կուսէն: Ողորմեցար,
բարձեր զմեղս աշխարհի. և արդ
ընկալ զաղաչանս մեր: Սուրբդ որ
նըստիս ընդ աջմէ հօր՝ ողորմեաց
մեզ: Զի դու միայն սուրբ՝ դու
միայն բարձրեալ ես՝ դու միայն
տէր մեր յիսուս քրիստոս: Տէր և
հոգիդ սուրբ՝ որ 'ի փառս աստուած
ընդ հօր. ամէ՛ն:

Ե՛ւ յամենայն ժամ օրհնեմք զքեզ,
տէր և գովեմք զանուն սուրբ քո՝
յաւիտեան և յաւիտեանս յաւի-
տենից: Արժանի արա տէր զօրս
զայս խաղաղութեամբ, և առանց
մեղաց պահեա զմեզ: Օրհնեալ ես
տէր աստուած հարցն մերոց. գո-
վեալ և փառաւորեալ է անուն քո

քո յաւիտեանս. ամէն։ Օրհնեալ տէր՝ ուսո ինձ զարդարութիս քո։ (Երիցս կրկնել)։ Տէր ապաւէն եղեր մեր յազգէ յազգ։ Ես ասացի տէր ողորմեա ինձ և բժշկեա զանձն իմ. ես մեղայ քեզ։ Ցոյց մեզ տէր զողորմութիւնս քո. և զփրկութիւնս քո տուր մեզ։ Տէր ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի անտես առներ։ Տէր իմ ըզ քեզ ապաւէն ինձ արարի. ուսո ինձ առնել զկամս քո՝ զի դու ես աստուած իմ։ Ի քէն է տէր՝ աղբիւր կենդանութեան. և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս։ Ձգեա զողորմութիւնս քո՝ որք ճանաչեն ըզ քեզ տէր։

Փառք պատիւ և երկրպագութիւն մաղ
՚ի բարձունս հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և։

Առաւօտու երգք յարութեան կարգաւ,
զկնի Փառք ՚ի բարձունսին ած

Օ յարութիւն ըզփրկչին օրհնես ակ

ցուք. զփրկչին մերոյ օրհնեսցուք
զյարութիւն։

Յարեաւ աստուած. և ցրուեցան
ամենայն թշնամիք նորա։

բձ Զյարութիւն զփրկչին օրհնես։

բկ Զյարուցեալն զՔրիստոս օրհնես-
ցուք. և զյարութիւն նորա փա-
ռաւորեսցուք։

գձ Զյարութիւն զփրկչին օրհնես։

գկ Որ ելն ՚ի բարձունս, և գերեաց
զգերութիւն. էառ աւար բաշխեաց
պարգևս և ետ որդւոց մարդկան։

դձ Զյարութիւն զփրկչին օրհնես։

դկ Որ համբերեաց խաչի և եդաւ ՚ի
նորափոր վիմի. և աստուածային
յարութեամբն զմահացեալսն վերա-
բերեաց ՚ի կեանս։

---

Երգ համբարձմանն Քրիստոսի։

Զյարութիւն զփրկչին օրհնես-
ցուք. զփրկչին մերոյ օրհնեսցուք
զյարութիւն։

Համբարձաւ աստուած օրհնութբ.
Եւ տէր մեր ձայնիւ փողոյ ։
Զգալուստ հոգւոյն օրհնեսցուք . հգւ
զհոգւոյն սրբոյ օրհնեսցուք ըզ
գալուստ ։
Յեկեղեցիս բարեբանեցէք զաստ-
ուած . և զտէր յաղբերացն իէլի ։

====

Առաւօտու երգք աղուհացից՝ և այլոց աւուրց պահոց ։

Լոյս տուր տէր աչաց իմոց . զի մի՛ բՀ
երբէք ննջեցից ի մահ ։
Մի՛ ասասցէ թշնամին թէ յաղթե-
ցի նմա . կամ նեղիչք իմ ցնծաս-
ցեն թէ ես սասանեցայց ։
Ի քէն է տէր աղբիւր կենաց . և գՀ
լուսով երեսաց քոց տեսանեմք ըզ
լոյս ։
Ծագեա զողորմութիւնս քո որք
ճանաչեն զքեզ . զարդարութիւնս
քո ոյք ուղիղ են սրտիւք ։
Ես ասացի տէր ողորմեա ինձ . բժ- դՀ
շկեա զանձն իմ ես մեղայ քեզ ։

Երանի որ խորհի զաղքատն և ըզ-
տնանկն․ յաւուր չարի փրկէ ըզ-
նա տէր։

եշ Եւ ես առ քեզ տէր աղաղակեցի․ ա-
ռաւօտու աղօթք իմ ժամանես-
ցեն առ քեզ։

Ընդէր տր մերժես զանձն իմ․ կամ
դարձուցանես զերեսս քո յինէն։

ուր Մտցեն աղօթք իմ առաջի քո տր
խոնարհեսցի ունկն քո 'ի խընդր-
ուածս իմ։

Տր ած փրկութե իմոյ, 'ի տուէ կար-
դացի և գիշերի առաջի քո։

ղաղ Տէր հաներ 'ի դժոխոց զանձն իմ
փրկեցեր զիս յայնցանէ, որք իջա-
նեն 'ի գուբ։

Բարձր առնեմ ըզքեզ տէր զի ըն-
կալար զիս․ և ոչ ուրախ արարեր
զթշնամին իմ յիս։

ծաղ Այսօր մըտանէ թագաւորըն մեր
քրիստոս 'ի յերուսաղէմ նոր քա-
ղաք դաւթի։

Ընդ աւագ ելին ծերքն ոստովք ձի-
թենեօք. և զաստուածորդին փա-
ռաւորէին:

Ի սկզբանէ տէր զերկիր հաստատե- բհ
ցեր. և գործք ձեռաց քոց երկինք են:
Նոքա կորընչին և դու կաս և մը-
նաս յաւիտեան:

Տարցին թագաւորի կուսանք ընդ գհ
հետ նորա. և զընկերս նորա
տարցին նմա:
Ածցին ցնծութեամբ և ուրախու-
թեամբ. և տարցին ՚ի տաճար թա-
գաւորի:

Խորհեցան և խօսեցան զչարութիւն. դհ
և զապիրատութիւն ՚ի բարձունս
խորհեցան:
Եդին յերկինս զբերանս իւրեանց. և
զլեզուս իւրեանց ածէին զերկրաւ:

Որսացան զանձն արդարոյ. և զա- եհ
րիւն անմեղ պարտաւոր առնէին:
Եղև տէր ապաւէն իմ. աստուած
օգնական յուսոյ իմոյ:

ուր Մատնեցայ և ոչ ելանէի. աչք իմ տկարացան յաղքատութենէ։
Աղաղակեցի առ տէր զօրհանապազ.
և համբարձի առ քեզ զձեռս իմ։

սղ Փոխանակ սիրոյ իմոյ մատնէին զիս.
այլ ես յաղօթս կայի։

փ Ընդ օրհնութեան իմոյ մի լռեր. զի բերան մեղաւորի, բերան նենգաւորի բացաւ 'ի վերայ իմ։

Զփոխն ըմն ասա։

շք Եդին զիս 'ի գբի ներքնումն. 'ի խաւարի և 'ի ստուերս մահու։
Յիս հաստատեցաւ սրտմտութիւն քո. զամենայն զբօսանս քո ածեր 'ի վերայ իմ։

սղ Եդին զիս 'ի գբի ներքնումն. 'ի խաւարի և 'ի ստուերս մահու։

փ Տէր Աստուած փրկութեան իմոյ 'ի տուէ կարդացի և գիշերի առաջի քո։

Զփոխն ըմն ասա։

մահ Դարձ անձն իմ 'ի հանգիստ քո. զի տէր կոչեաց զքեզ։

Սիրեցի զի լուիցէ տէր զձայն աղօ- փ
թից իմոց. զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս. և ես յաւուրս իմ
կարդացի առ նա:

Զփոխն նա ըմն ասասցես:

Տան քում վայելէ սրբութի տէր եկղ
ընդ երկայն աւուրս:

Տէր թագաւորեաց վայելչութիւն զգեցաւ. զգեցաւ տէր զօրութիւն
ընդ մէջ իւր էած:

Արի տէր 'ի հանգիստ քո. դու և տապ
տապանակ կտակի սրբութեան քո: վեր

Յիշեա տէր զդաւիթ և զամենայն
հեզութիւն նորա:

Քո են երկինք և քո է երկիր. վար
զաշխարհս լրիւ իւրով դու հաստատեցեր:

Զհիւսիս և զհարաւ դու արարեր. թափոր և հերմոն յանուն քո ցնծասցեն:

Իջցէ որպէս զանձեւ 'ի վր գեղ- ծնն
ման. որպէս ցօղ զի ցօղէ յերկիր: աւե

Աստուած զիրաւունս քո արքայի
տուր. և զարդարութիւնս քո որդ-
ւոյ թագաւորի։

խաղ Ետուր երկիւղածաց քոց նշան. զի ապրեսցին յերեսաց աղեղան։
Որպէս փրկեսցին սիրելիք քո. կե-
ցո աջով քով և լուր մեզ։

հրշ Օրհնեցէք ըզ տէր յերկինս. օրհ-
նեցէք ըզնա ՚ի բարձունս։
Օրհնեցէք զնա ամենայն հրեշտա-
կք նորա. օրհնեցէք զնա ամենայն
զօրութիւնք նորա։

առք Ոչ են բանք և ոչ են խօսք. որոց
ոչ լսին ձայնք նոցա։
Ընդ ամենայն երկիր ել բարբառ
նոցա. և մինչև ՚ի ծագս աշխար-
հի են խօսք նոցա։

մրգ Ոչ են բանք և ոչ են խօսք. որոց
ոչ լսին ձայնք նոցա։
Յեկեղեցիս բարեբանեցէք զած. և
զտէր յաղբերաց իսրայէլի.

հայր Քահանայք քո զգեցցին զարդա-

րութիւն, և սուրբք քո ցնծալով
ցնծասցեն։

Յիշեա տէր զդաւիթ, և զամե-
նայն հեզութիւն նորա։

Պարծեսցին սրբքն փառօք. և ցըն- մրտ
ծասցեն 'ի հանգիստ իւրեանց։

Օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր.
օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց։

Տարածեա տէր զլոյս քո և զճշմար- մրտ
տութիւնս քո. ցոյց մեզ տէր զո- ակ
ղորմութիւն. և քո ծառայից լեր
օգնական. բարեխօսութեամբ սըր-
բոց մարտիրոսացն, որոց այսօր է
յիշատակ։

Զի սրբօք առաջնորդեալ ելցուք 'ի
լեառն սուրբ և 'ի յարկս քո. մըր-
տից առաջի սեղանոյ աստուծոյ
առ ած, որ ուրախ առնէ զման-
կութիւն իմ. ցոյց մեզ տէր զողոր։

Արեգակն արդարութեան այսօր յց
յայտնեցար ազգի մարդկան. մարդ- տն ը
եղեալ սրբեցեր զջուրս վերանծը առ ջ

նեալ զմեզ մկրտութեամբն սուր-
բոյ հոգւոյն:

Ի վայելչութիւն փառաց սրբութե՛ քո՛յ, 'ի յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ ըզքեզ. մարդ է:

Քարոզ՝ կիրակամտից, կիւրակէից, և Ցինանց:

Ասացուք ամենեքեան միաբանութեամբ. տէր ողորմեա:

Վասն խաղաղութեան ամ՛ աշխարհի՝ և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ. զտէր աղաչեսցուք:

Վասն ամենայն սուրբ և ուղղափառ եպիսկոպոսաց. զտէր աղա:

Վասն հայրապետին մերոյ տեառն (այս անուն) կենաց՝ և փրկութեան հոգւոյ նորին. զտէր աղա:

Վասն վարդապետաց՝ քահանայից՝ սարկաւագաց՝ դպրաց, և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ. զտր:

Վասն բարեպաշտ թագաւորաց և ածասէր իշխանաց՝ զօրավարաց և զօրաց նոցին. զտէր աղա:

Վասն զի տէրն ամենակալ հնազան-

դեցուսցէ առաջի նծ զնմ պատե-
րազմունս թշնամեաց. զտէր աղա:
Յաղագս հարց և եղբարցն մերոց՝
որք ՚ի գերութեան են և ՚ի չար
ծառայութեան. զտէր աղա:
Յաղագս ճանապարհորդաց և նա-
ւորդաց՝ խաղաղութեամբ հասա-
նիլ ՚ի նաւահանգիստն բարութե.
զտէր աղաչես:
Յաղագս հիւանդաց և ամենայն
վշտացելոց՝ փութապէս առողջու-
թեան. զտէր աղա:
Յաղագս բարեխառնութեան օդոց՝
անձրևաց քաղցրութե, և պտղոց
առատութեան. զտէր ա:
Յաղագս ուխտաւորաց և պտղաբե-
րից ՚ի սբ եկեղեցի այ. զտէր ա:
Եւ յաղագս այնոցիկ, որք մատնեալք
են ՚ի ձեռս անօրինաց վասն ան-
ուանն քրիստոսի. զտէր աղա:
Յաղագս հոգւոյն հանգուցելոց.
որք ճշմարիտ և ուղիղ հաւատով
՚ի քրիստոս ննջեցին. զտէր աղա:
Յաղագս փրկելոյ զմեզ տեառն այ՝

յերեւելի և յաներեւոյթ թշնամ-
ւոյն․ զտէր աղաչեսցուք։

մաղ Բարեխօս ունիմք սուրբ զմարի-
ամ զաստուածածինն զփառաւոր-
եալ և օրհնեալ միշտ սուրբ կոյսն․
սուրբ զյովհաննէս մկրտիչն․ սբ
զստեփաննոս նախավկայն․ սբ զա-
ռաքեալսն և զմարգարէսն, զար
և զյաղթող սուրբ զվկայսն։ Եւ
զմեծ խոստովանողն քրիստոսի ըզ-
հայրապետն մեր զսուրբն գրիգո-
րիոս լուսաւորիչն հայաստանեայց
աշխարհի։

Յիշեսջիք և զմեզ սուրբս և նո-
քօք զտէր աղաչեսցուք։

Զառաւօտս լուսոյ և զառաջակայ
օրս խաղաղութե̃ անցուցանել՝ հա-
ւատով 'ի տ̃նէ խնդրեսցուք։

Զհրեշտակ։ Զքաւու̃ի։ Զսրբոյ։
Եւ եւս։ Զանձինս։ Ողորմեաց։

Քարոզ՝ 'ի սրբոյն Գրիգորէ լուսաւորչէն մերմէ ասացեալ վասն սրբոց հռիփսիմեանցն. այլեւ վասն Առաքելոց և Մարգարէից:

Աստուած մեծ հզօր և փառա-
ւորեալ. լուսաւորիչ սրբոց՝ և 'ի
սուրբս հանգուցեալ. զճգնու-
թիւն սրբոց առաքելոցն բարեխօս
ունիմք առ քեզ. աղաչեմք:

Լուր տէր և ողորմեա:

Որ անդադար օրհնաբանիս 'ի դա-
սուց հոգեղինաց երկնաւոր զօ-
ւարթնոցն. արժանաւորեա զմեզ
ուղիղ փառատրութբ ընդ նոքօք
քո երկրպագել մեծի և ահաւոր
տէրութեանդ քո. աղաչեմք:

Օրհնեմք զքեզ միաբան սիրով 'ի
յիշատակս վկայից քոց. որք հե-
տեւողք եղեն լուսազարդ ճանա-
պարհաց քոց տէր. որ վասն մեր
յանձն առեր զչարչարանս խաչի և
մահու. աղաչեմք:

Կատարիչք հաճոյից կամաց աստ-
ուածութեանդ քո. զանձինս իւր-

եանց պատարագեցին ՚ի վկայութի՟ ճշմարիտ սի՟րոյ ք՟ոյ. և բուրեցին զհոտ անուշից տէրունեդ ք՟ոյ. ա՟:
Որբեցին զանձինս իւրեանց տաճար անուանդ քում սրբ՟ոյ. մաքրեալք զմիտս՝ և զխորհուրդս իւրեանց երկիւղիւդ քո՟վ սրբով. և դասակիցք եղեն հրեղինաց երկնաւոր զուարթնոցն. ա՟ղ՟:
Բարեխօսութեամբ սրբուհւոյ ա՟ծածնին. Նայլն ժէ. ՚ի Ներքոյ:

====

Քարոզ՝ Հայրապետաց, և Վարդապետաց:

Առաջնորդք եղեն մեզ ուղիղ գնացիւք ՚ի շաւիղս արքայութե՟ երկնից. մեծապայծառ ջահիւ՝ հաւատով և սիրո՟վն իւրեանց, ծագեցին զլոյս աստուածգիտութեան ՚ի սիրտս մե՟ր. ա՟ղաչեմք:
Պահպանութի՟ խորհրդոց բանից և գործոց մերոց. սրբութի՟ փառաւորել զամենասուրբ զերրորդութիւն,

զհայր և զորդի և զսուրբ հոգին յաւիտեանս ամէն. աղաչեմք ։

Աղաչանօք սրբոց արեամբ նահատակեալ վկայից. և այլն. տես 'ի ներքոյ ։

Քարոզ՝ Մարտիրոսաց, և ճգնաւորաց ։

Օ ճգնութիւն սրբոց մարտիրոսացն բարեխօս ունիմք առ բարերար որդիդ քոյ. զի շնորհեսցես աշխարհի զանշարժ զխաղաղութի. և պահեսցես հաստատուն սբ զեկեղեցի, հաստատեալ 'ի վերայ հիման առաքելոց և մարգարէից. աղաչեմք ։

Օ ճգնութիւն սբց մարտիրոսացն բարեխօս ունիմք առ բարերար որդիդ աստուծոյ. զի խաղաղասցին խռովութիւնք. դադարեսցին յարձակմունք թշնամեաց. տնկեսցի սէր և արդարութիւն 'ի յերկրի.

աղաչեմք ։

Աղաչանօք սրբոց մարտիրոսացն քո, որք ճգնեցան վս անուանդ քում

սրբո՛յ. Նայեաց յերկրպագութի ժո-
ղովրդոցս. և շնորհեա մեզ զթո-
ղութիւն. և հա՛ն մասն և բաժին
ընդ սուրբս ամենայ՛ն. աղաչե՛մք ։
Աղաչանօք սրբոց արեամբ նահա-
տակեալ վկայիցն տէ՛ր, որք զանձի-
նս իւրեանց տաճար մաքրեցին
հոգւոյդ քում սրբո՛յ. պարգևեա
յերկրի մերում զքաղցրախառն օդ.
և զզուարճալի ընդբոյս. առ ՚ի լցու-
մն լինել ամենայն հարկաւոր պի-
տոյից մերոց. աղաչե՛մք ։
Բարեխօսութեա՛մբ սրբուհւոյ ած-
ածնին, և յովհաննու կարապե-
տի՛ն. սրբոյն ստեփաննոսի նախա-
վկայի՛ն. և սրբոց առաքելոց մար-
գարէից և մարտիրոսաց. և սրբոյն
գրիգորի մերոյ լուսաւորչին ։ Բա-
րեխօսութեամբ և աղօթիւք սբցն
( այս անուն ) որոց այսօր է յիշատակ ։
Եւ ամենայն սրբոց քոց տէր՝ որք
միացան ՚ի սէր աստուածութեա՛ն

Նըդ. քո՝ յիշեա՟ զհոգիս ննջեցելոց
մերոց, և այց արա ՚ի քում գալըս-
տեա՟ն Նդ. աղաչե՟մք։
Եւ ևս առաւե՟լ զյորդորումն սի-
րոյ, և զգործս բարեաց պարգևել
մեզ խնդրե՟մք։
Զա՟նձինս։ Ողորմեա՟ց։

Քարոզ ծննդեանն Քրիստոսի. և Աւետեաց. և փոխմա՟ն ոչ
Աստուածածնին, և Տեառնընդառաջին։

Մ՝այր սո՟ւրբ սքանչելի լուսո՞յն.
որ զաստուածն ամե՟նայն յա-
ւիտենից յորովայնի քո՟ւմ կրեցեր,
և ցնծութիւն աշխարհի ծը՟նար ըզ-
բանն ա՟ստուա՟ծ. աղաչե՟մք։
Մ՝այր սուրբ բարեխօսեա՟։
Աղաչեա վասն մեր զառ ՚ի քե՟ն ըզ-
մարմնացեալն ա՟ստուա՟ծ. որ խո-
նարհեցաւ ՚ի հայրական ծոցո՟յ. ե-
ա՟ռ մարմին ըստ մարդկային բը-
նութեանս՝ առնե՟լ խաղաղութիւն
յերկինս և յերկրի. աղաչե՟մք։

Աղաչեա վա։ Ներել մեզ անտես առնել զյանցանս մեր. և տալ օգնականութիւն ընդդիմակաց լինել հակառակամարտից 'ի պատերազմի. աղաչեմք։

Աղա։ Զի լռեսցին պատերազմունք. դադարեսցին յարձակմունք թշնամեաց. տնկեսցի սէր և արդարութիւն 'ի յերկրի. աղաչեմք։

Աղա։ Աճեցուցանել յերկրի մերում զքաղցր բղխումն աղբերաց. զառատ պտղաբերութիւն բուսոց և տնկոց. առ 'ի զուարճալի լինել ամենայն հարկաւոր պիտոյից մերոց. աղաչեմք։

Աղա։ Զի միաբանեսցէ զեկեղեցի իւր սուրբ. շինեալ 'ի վերայ հիման առաքելոց և մարգարէից. պահել անսասան մինչև յօր երևելոյ գալստեան իւրոյ. աղաչեմք։

Աղաչեա վասն մեր սրբուհի զմիածին քո զորդին. և վասն հոգւոցն

հանգուցելոց՝ ընդունել յարքա-
յութիւնն երկնից. և տալ մասն
և բաժին ընդ սուրբս քմ. աղմ:

Յիշեա տէր և ողորմեա:

Եւ եւս առաւել զյորդորումն սի-
րոյ, և զգործս բարեաց պարգե-
ւել մեզ խնդրեմք:

Տուր մեզ տէր աստուած:

Զանձինս մեր և զմիմեանս քն
այ ամենակալին յանձն արասցուք:

Քեզ տեառնդ յանձն եղիցուք:

Ողորմեաց մեզ տէր աստուած մեր
ըստ մեծի ողորմութեան քում. ա-
սասցուք ամենեքեան միաբանութ:

Տէր ողորմեա. տր ողորմեա. լուր
տէր և ողորմեա:

Քարոզ պահոց:

Փառաւորեսցուք զամենակալն ած
զհայր տեառն մերոյ յիսուսի քրիս-
տոսի, գոհանալով զնմանէ՝ որ պա-
հեաց զմեզ խաղաղութեամբ ՚ի գի-
շերիս յայսմիկ: Եւ առաջնորդեաց

մեզ 'ի խաւարէ 'ի լոյս . 'ի մահուա-
նէ 'ի կեանս . յապականութենէ յա-
նապականութիւն . յանգիտութե-
նէ 'ի գիտութիւն ճշմարտութեան
իւրոյ : Աղաչեսցուք և խնդրեսցուք
'ի նմանէ , զի զերկարութիւն տը-
ւընջեանս խաղաղութեամբ և ա-
մենայն մաքիւր զուարթութբ
արասցէ անցուցանել 'ի մէնջ : Ու-
պարապեալ պահեսցէ զժողովուր-
դըս իւր աստուածային զօրութբն .
որ 'ի վերայ ամենայնի բարերարու-
թեամբն իւրով իշխանութիւն ու-
նի : Ամենակալ տէր աստուած մեր .
կեցո և ողորմեա : Զառաւօտս լու-
սոյ և զառաջակայ օրս խաղաղու-
թեամբ անցուցանել հաւատով 'ի
տեառնէ խնդրեսցուք :

Զհրեշտակ խաղաղութե պահա :
Զքաւութիւն և զթողութի յան :
Զսուրբ խաչին մեծ և կարող զօ :
Եւ եւս մի : Զանձինս : Ողորմեաց :

Աղօթք ։

Գոհանամք զքէն տէր աստուած մեր, որ երեւելի լուսով քով զուարճացուցեր զամենայն արարածս քո. իսկ իմանալի լուսով պատուիրանաց քոց՝ զամենեսեան լուսաւորեցեր զհաւատացեալս 'ի քեզ ։ Զօրացո եւ զմեզ տէր՝ 'ի պահպանութիւն պատուիրանաց քոց՝ 'ի տունջեանս յայսմիկ եւ յամենայն ժամանակի ։ Որպէս զի լուսաւորեալ մտօք՝ միշտ զհաճոյս քո արասցուք. եւ հանդերձեալ բարեացդ հասցուք ընդ ամենայն սուրբս քո ։ Շնորհօք եւ մարդասիրութեամբ տեառն մերոյ եւ փրկչին յիսուսի քրիստոսի. որում վայել է փառք իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Խաղաղութիւն մեր եւ կեանք՝ որ 'ի հօրէ առաքեցար՝ միածին որդի աստուծոյ, տէր մեր եւ փրկիչ յիսուս քրիստոս ։ Տուր մեզ զխաղաղութիւն քո՝ զոր շնորհեցեր սրբ

քոց առաքելոց. փչմամբ քո 'ի նո-
սա զկենդանացուցիչ և զամենա-
զօր հոգիդ քո սուրբ: Որպէս զի և
մեք խաղաղացեալք յամենայն աշ-
խարհական սահեցմանց՝ լիցուք տա-
ճար և բնակարան աստուածային
շնորհացդ. և գոհանալով փառա-
ւորեսցուք զքեզ ընդ հօր և սբ
հոգւոյդ քրիստոս աստուած մեր.
այժմ և միշտ և:

---

Եւ ասի Սուրբ աստուած ըստ պատշաճի:
Յաւուր Աւետեաց, Ծննդեան, և Թլփատութեան
զայս ասա:

Սուրբ աստուած. սուրբ և հզօր. սուրբ և անմահ. որ յայտնե-
ցար վասն մեր. ողորմեա մեզ:

Քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի, և Ծաղկազարդին:

Սբ ած. որ եկիր և գալոց ես. ո:

Ուրբաթու մատնութեան գիշերին.

Սբ ած. որ մատնեցար վս մեր. ո:

Ուրբաթու ճաշուն՝ և յամենայն տօնից սրբոց, խաչի և եկե-
ղեցւոյ, այլ և յաւուրս պահոց.

Սբ ած. որ խաչեցար վս մեր. ո:

Ուրբաթու երեկոյին, և շաբաթու գիշերոյն.

Աբ̄ ա̄ծ. որ Թաղեցար վ̄ս մեր. ո:

Զատկի և ամենայն Յարութեան կիւրակէից:

Աբ̄ ա̄ծ. որ յարեար 'ի մեռելոց. ո:

Համբարձմանն Քրիստոսի.

Աբ̄ ա̄ծ. որ համբարձար փառօք առ Հայր. ո:

Գալստեան Հոգւոյն սրբոյ.

Աբ̄ ա̄ծ. որ եկիր և հանգեար յառաքեալսն. ո:

Վարդավառին.

Աբ̄ ա̄ծ. որ յայտնեցար 'ի Թաբօր լերինն. ո:

Փոխման սուրբ Աստուածածնին.

Աբ̄ ա̄ծ, որ եկիր 'ի փոխումն մօր քոյ և կուսի. ո:

Թովմայի առաքելոյ ասացեալ.

Փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կոյս աստուածածին մարիամ մայր քրիստոսի. մատո զաղաչանս մեր՝ որդւոյ քոյ և ա̄յ մերոյ:

Ժող Փրկեա՛լ զմեզ 'ի փորձութենէ և յա-
մենայն վտանգից մերոց ։

Եւ եւս խաղաղութեան զտէր ա ։

Քրզ Վասն լսելի լինելոյ տեառն ա-
ստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝
բարեխօսութեամբ սուրբ աստ-
ուածածնին ։ Եւ իջանելոյ 'ի վերայ
մեր ողորմութեան և գթութեան
տեառն աստուծոյ ։ Ամենակալ տէր
աստուած մեր ․ կեցո և ողորմեա ։
Օրհնութիւն և փառք հօր և ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

---

Եւ ասի սաղմոս ձայնիւ յաւուր կիւրակէի յառաջընթաց աւետարանին ։

Եղիցի՛ անուն տ՟ն օրհնեալ, յայսմ
հետէ մինչև յաւիտեան ։
Օրհնեցէ՛ք մանկունք զտ՟ր․ և օրհ-
նեցէք զա՛նուն տեառն ։
Եղիցի՛ անուն տ՟ն օրհնեալ, յայսմ
հետէ մինչև յաւիտեան ։
Յարևելի՛ց մինչև 'ի մուտս արևու՝
օրհնեալ է ա՛նուն տեառն ։

Բարձր է ՚ի վերայ ամ ազգաց տէր.
և յերկինս են փառք նորա։
Ո՞վ է ով տէր ած մեր ՚ի բարձու-
նս բնակեալ. և զխոնարհս տեսա-
նէ յերկինս և յերկրի։
Յարուցանէ՛ զաղքատս յերկրէ. և
բարձր առնէ զտառապեալս յաղ-
բեւաց։
Նստուցանէ զնա իշխանս՝ ընդ իշ-
խանս ժողովրդեան իւրոյ։
Բնակեցուցանէ զամուլն ՚ի տան.
ուրախամիտ, որպէս մայր որդ-
ւովք բերկրեալ։

Յաւուրս կիւրակէից առ ընթերցեալ լինի աւետարան
Բժշկութեան։ Եւ ՚ի փոխս փէրոանաչանս աղմուս և
գիրք և աւետարանք ըստ յուայակին։

Աւետարան ըստ Մատթէոսի։

---

Եւ ելեալ անտի յիսուսի գնաց ՚ի
կողմանս տիւրոսի և սիդոնի։
Եւ ահա կին մի քանանացի ՚ի սահ-
մանաց անտի նոցա ելեալ, աղա-

ղակէր և ասէր. ողորմեաց ինձ տէր
որդի դաւթի, դուստր իմ չարա-
չար այսահարի: Եւ նա ոչ ետ նմա
պատասխանի. և մատուցեալ աշա-
կերտքն նորա՝ աղաչէին զնա և ա-
սէին. արձակեա զնա զի աղաղակէ
զհետ մեր: Նա պատասխանի ետ և
ասէ. ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ
ոչ առ ոչխարս կորուսեալս տանն
իսրայէլի: Եւ նա մատուցեալ եր-
կիրպագանէր նմա և ասէր. տէր՝
օգնեա ինձ: Պատասխանի ետ նմա
և ասէ. ոչ է բարւոք առնուլ ըզ-
հաց մանկանց՝ և արկանել շանց:
Եւ նա ասէ. այո՛ տէր, քանզի և
շունք կերակրին 'ի փշրանաց անկե-
լոց 'ի սեղանոյ տեառն իւրեանց:
Յայնժամ պատասխանի ետ նմա յս̃
և ասէ. ո՛վ կին դու՝ մեծ են հա-
ւատք քո. եղիցի քեզ որպէս և կա-
միս: Եւ բժշկեցաւ դուստր նորա
'ի նմին ժամու:

Եւ ելեալ միւսանգամ ՚ի սահմանացն Տիւրոսի և Սիդոնի, և եկն ՚ի ծովեզրն Գալիլեացւոց ՚ի մէջ սահմանացն ՚ի Դեկապօլիս ։ Եւ բերին առաջի նորա խուլ մի և համր . և աղաչէին՝ զի ձեռն դիցէ ՚ի վերայ նորա ։ Եւ առեալ զնա մեկուսի յամբոխէ անտի, արկ զմատունս իւր ընդ ականջս նորա՝ և եթուք անդր . և կալաւ զլեզուէ նորա . հայեցաւ յերկինս՝ յոգւոց եհան՝ և ասէ . եփփաթայ՝ որ է բացի՛ր ։ Եւ նոյն ժամայն բացան լսելիք նորա , և լուծան կապանք լեզուի նորա . և խօսէր ուղիղ ։ Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի՛ ումեք ասիցեն . և որչափ նա պատուիրէր նոցա , նոքա ևս առաւել քարոզէին . և ևս քան զևս զարմանային և ասէին . զամ ինչ բարւոք գործեաց սա , զի խուլից լսել տայ՝ և համերց խօսիլ ։

Եւ եղեւ 'ի վաղիւն մինչ իջանէին նոքա 'ի լեռնէ անտի, ընդ առաջ եղեւ նմա ժողովուրդ բազում: Եւ ահա այր մի 'ի ժողովրդենէ անտի աղաղակեաց եւ ասէ. վարդապետ՝ աղաչեմ զքեզ հայեաց յորդի իմ, զի միամօր է ինձ: Եւ ահա այս հարկանի 'ի նմա, եւ յանկարծ գոչէ՝ եւ զարկուցանէ զնա եւ թաւալեցուցանէ եւ փրփրեցուցանէ, եւ հազիւ մեկնի 'ի նմանէ խորտակեալ զնա. եւ աղաչեցի զաշակերտանքո զի հանցեն զնա, եւ ոչ կարացին: Պատասխանի ետ յիսուս եւ ասէ. ո՞վ ազգ անհաւատ եւ թիւր մինչեւ յե՞րբ եղէց ընդ ձեզ՝ եւ անսայցեմ ձեզ. մատո այսր զորդի քո: Եւ մինչդեռ մատչէր, զարկոյց զնա դեւն՝ եւ շարժլեաց: Սաստեաց յիսուս այսոյն պղծոյ, եւ բժշկեաց զմանուկն. եւ ետ զնա ցհայր իւր: Եւ զարմանային ամենեքեան 'ի վերայ մեծամեծացն ա̃յ:

Եկն դարձեալ 'ի Կանա Գալիլեացւոց՝ ուր արար զջուրն գինի. և անդ էր թագաւորազն մի, որոյ որդի նորա հիւանդ կայր 'ի Կափառնայում: Նա իբրև լուաւ եթէ Յիսուս եկեալ է 'ի Հրէաստանէ 'ի Գալիլեա, եկն առ նա՝ և աղաչէր, զի իջցէ և բժշկեսցէ զորդի նորա. քանզի մերձ էր 'ի մեռանել: Ասէ ցնա. եթէ ոչ նշանս ինչ և արուեստս տեսանէք՝ ոչ հաւատայք: Ասէ ցնա թագաւորազն. տէր՝ էջ, մինչչև մեռեալ իցէ մանուկն իմ: Ասէ ցնա Յիսուս. երթ՝ որդին քո կենդանի է: Եւ հաւատաց այրն բանին՝ զոր ասաց նմա Յիսուս, և գնաց: Եւ մինչդեռ իջանէր, ընդ առաջ եղեն նմա ծառայքն նորա. աւետիս ետուն և ասեն, թէ մանուկն նորա կենդանի է: Հարցանէր ցնոսա վասն ժամուն՝ յորում ապաքինեցաւ: Եւ ասեն ցնա. երէկ յեօթներորդ ժամու եթող զնա

ջերմն ։ Գիտաց հայրն նորա՝ եթէ յայնմ ժամու՝ յորում ասացն ցնա յիսուս՝ թէ որդին քո կենդանի է․ և հաւատաց ինքն և ամ̃ տուն իւր ։ Զայս դարձեալ երկրորդ նշան արար յիսուս եկեալ ՚ի հրէաստանէ ՚ի գալիլեա ։

Երգ առաջնոյ աւուր միաշաբաթին, և ՚ի խորհուրդ արարչութեանն, և ՚ի յարութեանն Քրիստոսի ։

Սորասասեծեալ բանն յանէից ՚ի սկզբանէ զերկինս երկնից․ և զերկնային զօրս անմարմնոց խմա-նալեայքն զուարթնոց․ և զգալի տարերց քաոսից հակառակաց միաբանից․ որով յաւէտ փառաբանի երրորդութիւնն անճառելի ։

Սրեքարբեան մի տէրութի միով բնութեամբ աստուածութիւն․ լոյսն որ անեղ արարչական ասաց լինել լոյս եղական․ զոր և ծագեաց յօրն առաջին միաշաբաթ կիւրակէին․ որով յաւէտ փա ։

Բարունորէ՜ն բացատրեցուք ըզծածկեալ խորհուրդըն ծանիցուք. զի լոյսն անտեսն իմանալի մաքուր հոգւոց տեսանելի, 'ի սոյն ծագեա՜ց միաշաբա՛թ մեզ յարութեան սուրբ ճառագայթ. եկայք փըրկեա՛լք ընդ զուարթնո՛յն տուք օրհնութիւն յարուցելո՛յն։

Սէրըդ սիրո՛վ խոնարհեցա՛ր 'ի փըրկութիւն մեր մարմնացար. նովի՛ն մարմնո՛վըն խաչեցար 'ի գերեզման մահու եդար. այսօր յարեա՛ր աստուածաբա՛ր 'ի հրեշտակաց քարոզեցար. եկայք փըր։

Երեւեցա՛ր խնկաբերի՛ցն յողջոյն կենացն ուրախալից. և 'ի լերի՜նըն գալիլեայ առաքելոց մետասանից. որժանացո՜ զմեզ ընդ նոսի՛ն զքեզ տեսանել յօրըն վերջին. եկայք։

Սիօնի՜ որդիք զարթիք հարսին լուսոյ տուք աւետիք. եթէ փեսա՜յն քո յա՛րուցեալ յաղթեաց մա՛հու

իշխանութեամբ․ գայ պսակէ զքեզ փառօք եւ ընդ առաջ պըճնեալ զարդուք․ երգեա երգ նոր յարուցելոյն ննջեցելոց կենաց պատողին։

Քարոզ կիւրակէից․ և այլոց տէրունական տօնից։

Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ 'ի տեառնէ՝ զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ 'ի վերայ մեր։ Տէրն ամենակալ կեցուսցէ և ողորմեսցի։ Կեցո՛ Տէր։ Տէր ողորմեա․ Տէր ողոր․ Տէր ո։

Աղօթք։

Քում ամենազօր և հրաշալի յաղթութեանդ քրիստոս ած մեր՝ երկրպագանեն զօրք հրեշտակաց․ զի դու միայն ունիս զանմահութիւն բնակեալդ 'ի լոյս անմատոյց։ Եւ մեք հողեղէն արարածքս խոնարհեալք երկիւղիւ երկրպագանեմք․ զսուրբ և զհրաշալի և զյաղթող զյարութիւնդ քո օրհնեմք և փառաւորեմք։ Եւ ընդ երկնային զօր-

որն մատուցանեմք զօրհնութիւն
և զփառս՝ ընդ հօր և ընդ սրբոյ
հոգւոյդ. այժմ և միշտ և։
Օրհնեալ տէր մեր յաւ. քա. ամէն։
Հայր մեր որ յերկինս ես։

---

Քարոզ յորժամ՚ի Թափոր ելանեն։

Եւ եւս խաղաղութեա՛ն զտէր ա- որկ
ղաչեսցո՛ւք։ Տէ՛ր ողորմեա։ դպ
Վասն ՚ի վերուստ խաղաղութեան որկ
և փրկութե անձանց մերոց. զտէր
աղաչեսցո՛ւք։ Տէ՛ր ողորմեա՛։ դպ
Ողորմեա՛ց մեզ տէր ա՜ծ մեր, ըստ որկ
մեծի ողորմութե քում. ասասցուք
ամենեքեան միաբանութեամբ։
Տէր ողորմեա՛. տէ՛ր ողոր. տէ՛ր ո։ դպ
Օրհնութի և փառք հօր և որդ- քհ
ւոյ և հոգւոյն սրբ՛յ. այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից։
Ամէ՛ն։ Ալէլու՛իա. ալէլուիա. ալէ՛։ դպ
Օրհնեսցի՛ և պահպանեսցի և նա- քհ
խախտանմեալ պահեսցի. արևելեան

կողմ աշխարհիս. և հայրապետութ
հայոց. այս նշանաւ սբ խաչիւս և
սբ աւետարանաւս, և աւուրս շը-
նորհիւ. անուամբ հօր և որդւոյ
և հոգւոյն սրբոյ. այժմ և ։

Եւ դարձուցանեն զերեսս յարեւմուտս ։

դպ Ամէն ։ Ալէլուիա. ալէլու. ալէ ։
քհ Օրհնեցի և պահպանեցի և նա-
խախնամեալ պահեցի. արեւմը-
տեան կողմ աշխարհիս. և թագա-
ւորութիւն քրիստոնէից. այս նշ ։

Եւ շրջելով դառնան 'ի հարաւ ։

դպ Ամէն ։ Ալէլուիա. ալէլու. ալէ ։
քհ Օրհնեցի և պահպանեցի և նա-
խախնամեալ պահեցի. հարաւա-
յին կողմ աշխարհիս. երկիրս ան-
դաստանս և պտղաբերութի տար-
ւոյս. այս նշա ։

Եւ դառնան դէպ 'ի հիւսիս ։

դպ Ամէն ։ Ալէլուիա. ալէլու. ալէ ։
քհ Օրհնեցի և պահպանեցի և նա
խախնամեալ պահեցի. հիւսիսա-

յին կողմն աշխարհիս. վանքս անա-
պատս. քաղաքս և գիւղս. և բընա-
կեալ ժողովուրդս 'ի սմա. ա՛յս նը։
Ամէն։

Եւ դառնան 'ի բեմն. և ասեն դարձեալ։

Օրհնութիւն և փառք հօր և որդ։ քհ

Քարոզ Թափօրի և խաչի։

Սուրբ խաչիւս աղաչեսցուք ըզ
տէր. զի սովաւ փրկեսցէ զմեզ 'ի
մեղաց՝ և կեցուսցէ շնորհիւ ողոր-
մութեան իւրոյ։ Ամենակալ տէր
ած մեր. կեցո և ողորմեա։

Աղօթք։

Պահպանեա զմեզ քրիստոս աստ-
ուած մեր՝ ընդ հովանեաւ սուրբ
և պատուական խաչիւդ քով 'ի
խաղաղութեան. փրկեա յերևելի
և աներևոյթ թշնամեաց։ Արժա-
նաւորեա գոհութեամբ փառաւո-
րել զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ
հոգւոյդ. այժմ և միշտ և։
Օրհնեալ տէր մեր յս քս. ամէն։
Հայր մեր որ յերկինս ես։

Իսկ յայլ աւուրս յետ Սուրբ Աստուածին, և քարոզին ասի սաղմոս 'ի ՃԺԲ :

Օրհնեցէք մանկունք զտէր. և օրհնեցէք զանուն տեառն:

Եղիցի անուն տն օրհնեալ, յայսմ հետէ մինչև յաւիտեան:

Յարևելից մինչև 'ի մուտս արևու՝ օրհնեալ է անուն տեառն:

Բարձր է 'ի վերայ ամ ազգաց տր. և յերկինս են փառք նորա:

Ո՞վ է որպէս տէր ած մեր 'ի բարձունս բնակեալ. և զխոնարհս տեսանէ յերկինս և յերկրի:

Յարուցանէ զաղքատս յերկրէ. և բարձր առնէ զտառապեալս յաղբեւաց:

Նստուցանէ զնոսա իշխանս՝ ընդ իշխանս ժողովրդեան իւրոյ:

Բնակեցուցանէ զամուլն 'ի տան ուրախամիտ, որպէս մայր որդւովք բերկրեալ:

Փառք հօր և որդւոյ և:

Երկնաւո՛ր հօտ բնութեալ․ զոր մկ
հովիւն քաջ թողեալ յերկինս, և ստ
եկեալ 'ի խնդիր մեզ մոլորելոցս․ դկ
որով լցեալ զթիւ հարիւրից,
արար ուրախութիւն 'ի յերկինս
երկնաւորացդ․ աղաչեմք ըզ ձեզ,
բարեխօս լերուք առ տէր վասն
քաւութեան մեղաց մերոց։ Տե-
սանողք անմահին․ խորհրդա-
ծուք խորոցն աստուծոյ․ որք իջէլ
ընդ միածնին սպասաւորել տնօ-
րէնութեանն․ 'ի ծննդեանն աւե-
տաւորք հովուացն․ և կանանցն
իւղաբերից կենաց բարոզք ըզկեն-
դանւոյն․ առա։ Պահապանք աշ-
խարհի․ բանակք տեառն շուրջ
զերկիւղածովք․ բարեկամք ազգի
մարդկան, միջնորդք մահու և յա-
րութեան, միքայէլ և գաբրիէլ
մեծք․ որ կայք միշտ առաջի ամե-
նասուրբ երրորդութեանն․ առա։ մկ
Այսօր ցնծայ զուարճացեալ եկե- դկ

ղեցի հեթանոսաց . տօնելով զյի-
շատակ մեծի նահապետին և հօ-
րըն հաւատոյ աբրահամու . օրհ-
նեցէք մանկունք սիովնի զհայրըն
լուսոյ աննըլուելի ։ Այսօր նոր Իս-
րայէլ կոչեցեալ մարգարէիւքն առ
ած . տօնեմք ցնծութեամբ ըզտօն
հոլովացն Իսրայէլին առաջնոյ . գո-
վելով զգլուխ անկեան երկուց որ-
մոց յարմարութեան ։ Այսօր 'ի գը-
լուխըս լերանց տուն այ հաստա-
տեալ . որ և յաւէտ առոգիս յամ-
պոց հոգւոյն ածաբուղխ առատա-
հոս անձրևօք . բարեբանեմ զաղ-
բիւրըն կենաց զարբուցանողըն
ծարաւեաց ։

մկ
ած
Զաւաւօտու զօրհներգութիւնս
մարգասիրութեամբըդ քո ընկալ .
Թագաւոր փառաց . և զմանկունս
եկեղեցւոյ քո պահեա 'ի խաղա-
ղութեան ։ Որ տեսողդ ես խո-
նարհաց յերկնից 'ի յերկիր , և տը-

ւող ողորմութեան ազգի մարդ-
կան. զման։ Ընդ սերովբէսըն սըր-
բասաց համաձայնեա՛լք քեզ երգեմք.
երեքսըրբեա՛ն տէրութիւն խընա-
յեա քաղցրութեամբ յարարածըս
քո. և զմանկունս ե։

Աշակերտըք քրիստոսի, և առ ա- մկ
մենա՛յն տիեզե՛րս առաքեա՛լք. բա- ակ
րեխօսեցէ՛ք առ տէր վասն մե՛ր։
Որք առի՛ք զպատուէ՛ր, քարոզել ա-
ներկիւղ զբանըն կենա՛ց յաշխարհի՛.
բարե։ Որք արժանի՛ եղէ՛ք տեսա-
նել մարմնով զորդին աստուծո՛յ
յայտնապէ՛ս. բարե։

Ի զձգնութի՛ւն մէջ քոյ քրիստոս մկ
տօնելով այսօր ընդ զօ՛րս անմարմնո- աձ
ցըն. քեզ երգե՛մք անլըռելի՛ զօրհ-
նաբանութի՛ւն։ Մերկացեա՛լք ըզ
մարդկային տըկարութեան զգեստ,
հաւատոյ վառեալ զգե՛ստուք.
յաղթեա՛լք հակառակամարտին
'ի պատերազմի։ Մըկըրտեա՛լք ընդ

քրիստոսի հեղմամբ արեան՚ի մահ, ա͞ծութեանն գոլով հրաշա՛կերտք · չինեա՛լք ՚ի վայելչութիւն սուրբ արքայութեա՛նն ։

Քարոզ՝ զկնի Մանկանցն ։

Վասն խաղաղութեան ա͞յ աշխարհի՛, և հաստատութե͞ան սրբոյ եկեղեցւոյ զտէր աղաչեսցուք ։ Ասասցուք ամենեքեան միաբանութեամբ ։ Տէր ողորմեա՛ · տէր ողոր · տէր ո ։

Աղօթք ։

Սուրբ ես տէր ա͞ծ մեր հզօր և փառաւորեալ · որ նստիս ՚ի կառս քրովբէականս և լոյս ծագես յարարածս քո ։ Լուսաւորեա զմեզ տէր ՚ի ժամ առաւօտուս · որպէս զի ՚ի ծագել լուսոյ տունջեանն՝ ծագեսցի առ մեզ գութ մարդասիրութեան քոյ ։ Հեռացո ՚ի մէնջ տ͞ր զխաբէութիւն սատանայի · և զբռնութիւն նորա խորտակեա աղօթիւք և բարեխօսութեամբ ա͞մ սրբ͞ց ։ Արա՛ և զերկիրս պտղաբերս

'ի մնունդս ծառայից քոց. Յորոց
հանապազ փառաւորեալ գովի ա-
մենասուրբ երրորդութիւնն. այժմ
և միշտ և ։

Յաւուրս աղուհացից ասա առ, Տէրամենակալ. և յետ
նորա Բանից խմոց. և յայլ աւուրս պահոց` միայն
Բանից խմոց. զոր գտանես յ290 երեսն ։
Իսկ 'ի փոխ սրբոց սաղմոսս այս ։

Սիրեցի` զի լուիցէ տէր զձայն աղօ-
թից իմոց. զի խոնարհեցոյց զու-
կըն իւր առ իս, և ես յաւուրս իմ
կարդացի առ նա ։
Շրջեցան զինև երկունք մահու.
և վիշտք դժոխոց գտին զիս ։
Զնեղութիւն և զանձկութի գտի,
և զանուն տեառն կարդացի ։
Ո՜ տէր` փրկեա զանձն իմ. ողորմած
աստուած մեր ողորմի` և պահէ
զտղայս տէր ։
Ես խոնարհ եղէ` և տէր կեցոյց զիս.
դարձ անձն իմ 'ի հանգիստ քո, զի
տէր օգնեաց քեզ ։
փրկեաց զանձն իմ 'ի մահուանէ ,

զաչս իմ յարտասուաց, և զոտս իմ ՚ի գայթակղութենէ, հաճոյ եղէց առաջի տեառն յերկրին կենդանեաց։

Հաւատացի զոր և խօսեցայ. և ես խոնարհ եղէ յոյժ։

Ես ասացի ՚ի զարմանալ իմում, Թէ ամենայն մարդ սուտ է։

Զի՞նչ տաց տրիտուր տեառն ընդ ամի՝ զոր և ետ ինձ։

Զբաժակ փրկութեան ընկալայց, և զանուն տեառն կարդացից։

Զաղօթս իմ տեառն տաց՝ առաջի ամենայն ժողովրդեան նորա։

Պատուական է առաջի տեառն մահ սրբոց իւրոց. ո՞ տէր ես ծառայ քո եմ, ծառայ և որդի աղախնոյ քո։

Հատեր զկապանս իմ. քեզ մատուցից պատարագ օրհնութեան, և զանուն տեառն կարդացից։

Զաղօթս իմ տեառն տաց առաջի ամենայն ժողովրդեան նր. ՚ի գաւիթս տան տեառն, և ՚ի մէջ քո Երուսաղէմ։

Օրհնեցէք զտէր ամենայն ազինք .
գովեցէք զնա ա̃մ ժողովուրդք ։
Զօրացի ողորմութիւն նորա 'ի վե̃ր
մեր . եւ ճշմարտութիւն տեառն
մնասցէ յաւիտեան ։

Աստուած յանուան քում կեցո
զիս, եւ 'ի զօրութեան քում իրաւ
արա ինձ ։
Աստուած լուր աղօթից իմոց, ուն-
կնդիր բանից բերանոյ իմոյ ։
Օտարք յարեան 'ի վերայ իմ, եւ հզ-
օրք խնդրեցին զանձն իմ, եւ ոչ հա-
մարեցան զքեզ ա̃ծ առաջի իւրեանց ։
Ահա ա̃ծ օգնական իմ, եւ տէր ըն-
դունող հոգւոյ իմոյ ։
Ի դարձուցանել զչարն 'ի թշնամիս
իմ, ճշմարտու̃թ քով սատակեա զն̃ս ։
Ես կամօք իմովք պատարագս մա-
տուցից քեզ . եւ խոստովան եղէց
անուան քում տէր, զի բարի է ։
Յա̃մ նեղու̃է իմմէ փրկեցեր զիս,
եւ 'ի թշնամիս իմ եանես ակն իմ ։
Տուր զօրութիւն ծառայի քո . կե-
քո որդւոյ աղախնոյ քո . եւ արա

առխ նշան բարութեան։
Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն.
զի դու տէր օգնեցեր ինձ, և մխ-
խիթարեցեր զիս։
փառք հօր և որդւոյ և։

---

Մաղթանք 'ի տօնի ամենայն սրբոց։

Քրիստոս աստուած մեր՝ վասն խաչի քոյ պատուականի զխաղաղութիւն քո տուր մեզ տէր։

Վասն սրբուհւոյ աստուածածնին, և յովհաննու կարապետին, և սըրբոյն ստեփաննոսի նախավկային, զխաղաղութի՟ քո տուր մեզ տէր։

Վասն սրբոց քոց առաքելոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց, հայրապետաց, ճգնաւորաց, կուսանաց, միանձանց, և երկնային զօրացն. զխաղաղութիւն քո տուր մեզ տէր։

Եւ վասն նախկին լուսաւորչացն մերոց թադէոսի և բարդուղիմէոսի, և սրբոյն գրիգորի մերոյ լուսաւորչին, և սրբոց յակոբեանց երջանի-

առաքելոյն. և սրբոյն յակոբայ մեծ-
քընայ հայրապետին, մարուգէի
ճգնաւորին, և մելիտոսի եպիսկո-
պոսին, և գէորգայ զօրավարին: Բարեխօսութեամբ յիշատակաւ և աղօթիւք սրբոցն (այս անուն) որոց այսօր է յիշատակ. զխաղաղութի և զմեծ ողորմութիւն քո պարգևեա մեզ մարդասէր տէր:

Քարոզ Առաքելոց, և ամենայն Սրբոց:

Սուրբ ճգնաւորքն աղաչեսցուք զտէր, որք զչարսն պարտեցին, նեղութեանցն համբերեցին: Լուսեղէն և երկնային անթառամ պըսակացն արժանի եղեն: Աղօթիւք նոցա և բարեխօսութեամբ մեզ ողորմեսցի: Ամենակալ տր̃ ա̃ծ մեր. կեցո և ողորմեա:

---

Աղօթք 'ի տօնի Առաքելոց, և Մարգարէից, և Հայրապետաց, և Վարդապետաց:

Որ ընտրեցեր և ընկալար զերանելի զվկայսն քո (այս անուն) քս̃ ա̃ծ մեր, և հաղորդս արարեր զնս̃ կա-

մաւոր չարչարանաց քոց։ Արդ՝ բարեխօս առ քեզ ունիմք, որք աստ, և ընդ ամենայն տիեզերս սուրբք կցեն։ Որպէս զի աղօթիւք նոցա և բարեխօսութեամբ խաղաղացուցես զկենցաղավարութիւնս մեր, փրկելով զմեզ յերեւելի և յաներեւոյթ թշնամւոյն։ Շնորհեա մեզ տէր ըստ օրինակի նոցա կեալ, և զվախճանն մեր կնքեա ուղղափառ խոստովանութեամբ ՚ի յոյս կենացըն յաւիտենից։ Զի և մեք արժանի եղիցուք մտանել յերկնային խորանսն լուսոյ, և ժառանգել ըզպատրաստեալն ՚ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց զարքայութիւն։ Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ հօր և ընդ սբյ
հոգւոյդ այժմ և միշտ և։

---

Ի սարկաւագ վարդապետէն ասացեալ։

Յիշեա տէր զպաշտօնեայս քո։ Զծնողսն մեր։ Զվարդապետս։ Զեղբարս։ Զընկերս։ Զկերակրի-

չըս ։ Զուխտաւորս ։ Զճանապար-
հորդըս ։ Զհանգուցիչս ։ Զվաստա-
կաւորս ։ Զխոստովանողս ։ Զապաշ-
խարողս ։ Զգերիս ։ Զհիւանդս ։
Զնեղեալս ։ Զիշխանս ։ Զչարարա-
րըս ։ Զբարերարս ։ Զթշնամիս ։
Զատելիս ։ Եւ որք պատուիրեցին
մեզ հաւատով ։

Յիշեա տէր և ողորմեա ։

Բարերար և բազումողորմ տէր՝ քո անմոռաց գթութեամբդ և անբաւ մարդասիրութեամբդ՝ յիշեա զամենայն հաւատացեալս ՚ի քեզ, և ողորմեա ամենեցուն ։ Օգնեա, և փրկեա յիւրաքանչիւր վտանգից և ՚ի փորձութեանց ։ Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զհայր և զորդի և զսուրբ հոգին · այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից · ամէն ։

Աղօթք Մարտիրոսաց · Ճգնաւորաց · և Կուսանաց ։

Պսակիչ սրբոց քրիստոս, որ պըսակես զսուրբս քո, և առնես զկամս

երկիւղածաց քոց, և նայիս սիրով և քաղցրութեամբ յարարածս քո։ Տուր մեզ յերկնից 'ի սրբութենէ քումմէ բարեխօսութեամբ սուրբ աստուածածնին, և աղաչանօք ամենայն սրբոց քոց, և որոց այսօր է յիշատակ։ Տուր մեզ տէր և ողորմեա, ներեա քաւեա և թող զմեղս մեր։ Արժանաւորեա զոհութեամբ փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ ս̃բ հոգւոյդ. այժմ և։

Յիշեա տէր զպաշտօ։

Բարերար և բազումողորմ ես։

Օրհնեալ տէր մեր յ̃ս ք̃ս. ամէն։

Հայր մեր որ յերկինս ես։

Աղօթք Մանասէի թագաւորին։

Տէր ամենակալ աստուած աբրահամու իսահակայ Յակոբայ՝ և զաւակի նոցա արդարոց. ամենա-

կալ տէր՝ թող զմեղս իմ։
Որ արարեր զերկինս՝ և զերկիր, և
զամենայն զարդ նոցա. ամենա։
Որ կապեցեր զծով բանիւ հրամա-
նի քո. փակեցեր զխորս, կնքեցեր
ահաւոր և փառաւորեալ անուամբ
քով սրբով. ամենա։
Որ ա̃մ ինչ սարսի և դողայ յերե-
սաց ահի զօրութեան քո. ամենա։
Անբաւ է մեծվայելչութի̃ փառաց
սրբութե̃ քո. սաստիկ է բարկութի̃
սպառնալեաց քոց ՚ի վերայ մեղաւո-
րաց. անչափ և անքննելի են ողոր-
մութի̃ք աւետեաց քոց. ամենա։
Դու տ̃ր բարձրեա̃լ՝ գթած, երկայ-
նամիտ, բազումողորմ. և զղջանաս
՚ի վերայ չարեաց մարդկան. ամե։
Դու աստուած՝ ոչ եդեր ապաշխա-
րութիւն վասն արդարոցն՝ աբրա-
համու իսահակայ և յակոբայ, որք
ոչ մեղան քեզ. ամե։
Այլ եդեր ապաշխարութի̃ ինձ իմ
մեղաւորիս. զի մեղայ աւելի քան
զաւազ ծովու, և բազմացան անօ-

րէնութիւնք իմ. ամէնա:

Չեմ արժանի հայիլ՝ և տեսանել զբարձրութիւնս երկնից՝ 'ի բազմութենէ անօրէնութե̄ իմոյ. ա:

Կորացեալ եմ ես 'ի բռնութենէ կապանաց երկաթից. և ոչ գոյ ինձ հանգիստ. ամէ:

Բարկացուցի զսրտմտութիւն, և չար առաջի քո արարի. կանգնեցի պատկեր և բազմացուցի զցասումըն. ամէնա:

Եւ արդ տէր՝ խոնարհեցուցանեմ զծունր սրտի իմոյ, և հայցեմ 'ի քաղցրութենէ քումմէ. ամէնա:

Մեղայ տ̄ր մեղայ, և զանօրէնութի̃ս իմ ես ինձէն գիտեմ. ամէնա:

Աղաչեմ և խնդրեմ 'ի քէն՝ թող ինձ տէր, թող ինձ, և մի կորուսաներ զիս ըստ անօրէնութեան իմոյ. ամէ:

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ տ̄ր, և մի՛ յիշեր զչարիսն իմ. և մի՛ դատապարտեր զիս ընդ իջեալսն 'ի ներքոյ երկրի չարեօք. ամէ:

Զի դու ած՝ ած ապաշխարողաց
ես. և յիս ցոյց զբարերարութիւն քո,
որ անարժան եմ. ամենա։

կեցուսցես զիս ըստ բազում ողոր-
մութեան քում. և ես օրհնեցից
զքեզ զամենայն աւուրս կենաց
իմոց. ամէ։

Զքեզ տր՝ օրհնեն ամենայն զուար-
թունք երկնից. և քո են փառք
յաւիտեանս. ամէն։

Փառք Հօր և որդւոյ և։

Աղաչեմ և խնդրեմ 'ի քէն տէր,
Թող ինձ զմեղս իմ։

Բազումողորմ տէր, ողորմեա ինձ։

Աստուած՝ քաւեա զիս զմեղաւորս
'ի մեղաց, և կեցո։

Արարիչ իմ և յոյս ած, գթա յիս
'ի մեղուցեալ ծառայս. և ողորմեա
ինձ բազմամեղիս։

Ամենօրհնեալ սրբուհի՝ և միշտ կոյս
ածածին մարիամ. բարեխօսեա առ
տէր վասն իմ մեղաւորիս։

Ամենայն սուրբք աստուծոյ՝ բարե-
խօսեցէք առ Հայր 'ի յերկինս վն

մեր մեղաւորացս ։

Քրիստոս որդի այ անոխակալ, ըն-
կալ զաղաչանս մեր. զի 'ի քեզ են
ապաւինեալ անձինք մեր ։

Յաղթող զօրութեամբ՝ սուրբ և
կենդանարար և պատուական խա-
չիւ քո տէր՝ պահպանեա զմեզ ։

Առաքեա տէր զհրեշտակ խաղա-
ղութեան քո. որ եկեալ պահեսցէ
զմեզ անխռովս 'ի տուէ և 'ի գի-
շերի ։

Եւ մարդասիրութեամբ քո փրկեա
զմեզ տէր՝ փրկեա զմեզ, յորժամ
գաս արքայութեամբ քո, և ողոր-
մեա մեզ ։

Քարոզ ։

Եկեալքս 'ի խոստովանութիւն
ապաշխարութե՝ . համառօտ զյոյս
միածնի որդւոյն այ դիցուք 'ի սըր-
տըս մեր, խնդրելով 'ի նմանէ զքա-
ւութիւն և զթողութիւն յանցա-
նաց մերոց ։ Վասն զի նա ինքն է
նախախնամողն աստուած յաւիտե-
նական. որ եկն կամաւ հօր 'ի փըր-

նել զարարածս. և տաց՝ զինքն լի-
նել քաւիչ մեղաւորաց, յոյս ա-
պաշխարողաց, շնորհելով զհան-
գիստ աշխատելոց, ընդունելով
զծանրաբեռնեալքս և զտաժան-
եալքս մեղօք յապաշխարութիւն
քաւութեան: Արդ՝ եկայք ամենքն
խոնարհեալ անձամբք՝ բեկեալ սրը-
տիւք անկցուք և լացցուք առաջի
տեառն արարչին մերոյ. զի անցու-
ցէ ՚ի մէնջ զցասումն պատուհասի
յանցանաց մերոց բարերարութեն
իւրով: Ամենակալ տէր աստուած
մեր. կեցո և ողորմեա:

Աղօթք:

Տէր աստուած փրկութեան մերոյ՝
որ ողորմած ես և գթած. երկայ-
նամիտ բազումողորմ, և զղջանաս
՚ի վերայ չարեաց մարդկան. որ ոչ
կամիս զմահ մեղաւորին, այլ ըզ-
դառնալ նր ՚ի չար ճանապարհէն
և զկեալն: Դու տէր՝ ըստ ողոր-
մութեանց քոց մխիթարեա զծա-
ռայս քո. և տուր սոցա տեղի ա-

պաշխարութեան։ Հաշտեա մար-
դասիրութբ քով. և արա զոսա
անդամս եկեղեցւոյ քում տր՛յ։ Որ՛
զի առողջացեալք հոգւով խոստո-
վանութբ և ապաշխարութբ մտցեն
յեկեղեցի քո սուրբ։ Ընդ ժող-
վրդեան քում, քեզ հանցեն զոր-
նութիւն և զփառս հօր և որդւոյ
և հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և։

Սաղմ. Ե.

Բանից իմոց ունկնդիր լեր, և 'ի
միտ առ զաղաղակ իմ։
Նայեա 'ի ձայն աղօթից իմոց, թա-
գաւոր իմ և աստուած իմ։
Ես զքեզ աղաչեմ տէր, ընդ առա-
ւօտս լուիցես ձայնի իմում. ընդ
առաւօտս պատրաստ եղէց, յա-
դիման լինիլ առ քեզ։
Ո՛չ թէ դու ած կամիս զանօրէնու-
թիւն. և ոչ բնակին առ քեզ
չարք. և անօրէնք մի՛ բնակեսցին
առաջի աչաց քոց։
Ատեցեր զայնոսիկ, ոյք գործեն զա-

նորէնութիւն. կորուսանես զամե-
նեսեան որք խօսին զսուտ։
Զայր արիւնահեղ եւ զնենգաւոր
պղծ առնես դու Տր. այլ ես ըստ
բազում ողորմութե քում մտից
'ի տուն քո. եւ երկիրպագից 'ի տա-
ճար սուրբ քո երկիւղիւ քո։
Տր առաջնորդեա ինձ յարդարու-
թե քում. վասն թշնամեաց իմոց՝
ուղիղ արա առաջի իմ զճանապար-
հըս քո։
Զի ոչ գոյ 'ի բերանս նոցա ճշմար-
տութիւն. եւ սիրտք նոցա նան-
րեալք են։
Ով գերեզմանք բաց են կոկորդք
նոցա. եւ լեզուօք իւրեանց նենգա-
ւորք եղեն։
Դատեա զնս Ած զի անկցին 'ի խոր-
հըրդոց սրտից իւրեանց. ըստ բա-
զում ամբարշտութե նց մերժեա զնո-
սա. զի դառնացուցին զքեզ։
Ուրախ լիցին ամքն՝ որք յուսաց
եալ են 'ի քեզ. յաւիտեան ցըն
ծասցեն. եւ բնակեսցիս դու 'ի նս։

Պարծեսցին 'ի քեզ սիրելիք անուան
քո, զի օրհնեսցես դու զարդարն.
տէր որպէս զինու հաճութեամբ
քո պսակեցեր զնոսա:

Լցաք առաւօտու ողորմութեամբ
քով. ցնծացաք և ուրախ եղաք
զամենայն աւուրս կենաց մերոց:

Ուրախ եղաք փոխանակ աւուրցն՝
յորս խոնարհ արարեր զմեզ, և ա-
մացն՝ յորս տեսաք զչարչարանս:

Հայեա տէր 'ի ծառայս քո և 'ի
գործս ձեռաց քոց, և առաջնորդ-
եա որդւոց նոցա. եղիցի լոյս տն
աստուծոյ 'ի վերայ մեր:

Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա
'ի մեզ տէր. և զգործս ձեռաց
մերոց յաջողեա մեզ:

Ի խորոց կարդացի առ քեզ տէր
տէր, լուր ձայնի իմում:

Եղիցին ականջք քո 'ի լսել զձայն
աղօթից իմոց:

Թէ զանօրէնութիս իմ քննես տէր
տէր, իսկ ո՞ կարէ կալ առաջի քո
զի 'ի քէն է քաւութիւն:

Վասն անուան քո համբերի տէր. համբերեր անձն իմ բանի քում. յուսացաւ անձն իմ ’ի տէր:

Ի պահէ առաւօտու՝ մինչև յերեկոյ. ’ի պահէ առաւօտու՝ յուսացաւ իսրայէլ ’ի տէր:

Ի տնէ է ողորմութիւն բազում. ’ի նմանէ է փրկութիւն, և նա փրկեաց զիսրայէլ յամենայն նեղութեանց նորա:

Լսելի արա ինձ առաւօտու զողորմութիւնս քո. զի ես ’ի քեզ տէր յուսացայ:

Ցոյց ինձ ճանապարհ՝ յոր և գնացից. զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ:

Փրկեա զիս ’ի թշնամեաց իմոց տր. զի զքեզ ապաւէն ինձ արարի:

Ուսո ինձ առնել զկամս քո. զի դու ես աստուած իմ:

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ’ի յերկիր ուղիղ:

Վասն անուան քո տէր՝ կեցուսցես զիս, արդարութեամբ քով հանցես

'ի նեղութէ զանձն իմ։

Ողորմութեամբ քով սատակեա զթշնամիս իմ. եւ կորո զամ նեղիչս անձին իմոյ. զի ես ծառայ քո եմ։

Ած յանուան քում կեցո զիս, եւ 'ի զօրութեան քում իրաւ արա ինձ։

Աստուած լուր աղօթից իմոց, ունկն դիր բանից բերանոյ իմոյ։

Օտարք յարեան 'ի վերայ իմ, եւ հզօրք խնդրեցին զանձն իմ, եւ ոչ համարեցան զքեզ Ած առաջի իւրեանց։

Ահա Ած օգնական իմ, եւ Տէր ընդունող հոգւոյ իմոյ։

Ի դարձուցանել զչարն 'ի թշնամիս իմ, ճշմարտութբ քով սատակեա զնս։

Կամօք իմովք պատարագս մատուցից քեզ. եւ խոստովան եղէց անուան քում Տէր զի բարի է։

Յամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս, եւ 'ի թշնամիս իմ ետես ակն իմ։

Փառք Հօր եւ որդւոյ եւ։

Երգ տեառն Ներսէսի վասն երկրորդի աւուր արարչութեանն. և վասն երկնայնոց զօրացն.

Արարչական բանիւն հրամա՛ն 'ի բէ
յերկրորդումն աւուր սկզբան.
զջուրսն 'ի ջուրցըն բաժանեցե՛ր հաս-
տատութեամբ պարունակեալ. ո-
րով զաշխարհս հողեղինաց անջըր-
պետեաց 'ի հրեղինաց. ընդ նոսի՛ն
որդիք լուսո՛յ տուք օրհնութիւն
երրեակ լուսոյն:

Բազմաչեայ հոյլք քրովբէից Երեք-
սրբեանըդ սրովբէից. աթոռք ա-
նեղ ծնունդըն համագոյ երրորդու-
թեանն. բարեխօս լերուք առ որ-
դի մանկանց եկեղեցւոյ. ընդ նո-
Գերագոյն իշխանութիւնք և ան-
փոփոխ միշտ տէրութիւնք անյաղ-
թելի ուրք զօրութիւնք 'ի յա-
րարչին փառաբանութիւն. աղաչե-

ցէ՛ք զտէրն ողորմա՛ծ անտես չառ-
նել զգործըս ձեռացն. ընդ նո:
Դասք անմարմնոցըն պէ՛տութեա՛նց
հրեշտակապետըք բա՛րձրութեանց. հո-
գիք հրեղէ՛նք և սպասաւո՛րք հը-
րեշտակաց զինուորութի՛ք. մաղթե-
ցէ՛ք զտէրն տերանց վասըն մարդ-
կան երկրաւորաց. ընդ նո:
Երկնաւորա՛ց դասուց վերնոց օրհ-
նաբանից քոց զուարթնոց. քաղց-
րացի՛ առ քեզ գթած որ վասն
մեր ձայն մաղթանաց. զորս և տա-
ցե՛ս մեզ պահապա՛ն յայսմ հետէ
մինչ 'ի վախճան. ընդ նո:
Զօրութե՛ց և տէրութեց իշխա-
նութեց և պետութեց. և ամենա՛յ
անուանելո՛ց որք 'ի յերկինս պաշտա-
մանօք. ընկալ քո՛ ուրախութե՛ ը-
մեզ յօր մահու և յարութե. ընդ
նոսի՛ն օրհնել հոգւով զքեզ ընդ
հօր փառաւորել՛մ:

Երգ վասն երրորդի աւուր արարչութեանն, և վասն երրորդի դարուն, և 'ի Յովհաննէս մկրտիչն:

ւակա՛ն բանն որ ընդ հօր արարչա-
կից և համագոր. յերրորդ աւո՛ւր
զջուրսըն զատեաց զբոյսս և զտուն-
կըս բղխեցոյց. իսկ 'ի յերրորդ դա-
րուն դարձեա՛լ զջուրցըն հեղեղ ցա-
մաքեցոյց. զնոյ տապանաւ՛ն իւր
ապրեցոյց զկենդանեաց սերս աճե-
ցոյց. տուք օրհնութի՛ւն անճառ
լուսոյն հօր և որդւոյ և սուրբ
հոգւո՛յն:

Ընդ ծառո՛ց երկրի զգալեաց տըն-
կեաց և զտունկս իմանալեաց. զհե-
ղեղ մեղացըն ցածուցեա՛լ զդաս
արդարոց բազմացուցեալ. յորոց և
մե՛ծն 'ի ծնունդս կանանց միջնորդ
շնորհաց և օրինաց. տուք օրհ:
Թագաւորի՛ն երկնից զհնու՞թ ար-
քայութե՛ն աւետաւոր. խընդրեա
զմե՛զ եւ 'ի սըրտի առ 'ի հաւատս
տըրտմականէ. յուխտեալ անձի՛ն

տէրունականն՚ի խոստացեալն որդ-
ւոց մարդկան. տուք օրհ։

Քաւանդին հօր սպասաւոր և յար-
գանդէ երկրպագող. կարապետ և
մկրտիչ այնմ որ մեղաց մերոց քա-
ւիչ. լեր բարեխօս առ նոյն գթած
ջնջել զգիր մեր յանցանաց. տուք։

Ի հօրէ լոյս ծագեցար մեռեալ բը-
նութեանս կենդանարար. առաքե-
ցեր յառաջընթաց սուրբ զյովհան-
նէս քարոզ կենաց. նորին հայց-
մամբն ամենակալդ զպաղատանս մեր
ընկալ. տուք օրհ։

Լուսաշաւիղ յերկինս ելին հողա-
նիւթեայքս հրեշտակին. արժանա-
ցո՛ զմեզ նորին նեղ և անձուկ ճա-
նապարհին. զի հետևող գոլով նո-
րին հօր քո վերին օթևանին. և
երգեսցուք ընդ երջանկացն որդ-
ւոց լուսոյ քեզ երգս փառաց։

Երգ վասն չորրորդի աւուր արարչութ՝ ան, և վասն չորրորդի դարուն, և վասն աւետեաց Աստուածածնին.

Խաւարն անգոյ և սկզբնածին հալածեցաւ յօրն առաջին. լոյսն այն պայծառ յօր չորրորդին յարեգական նիւթ հաւաքեալ. լուսինն ՚ի տիպ լուսոյ ստեղծել և աստեղաց պար յօրինեալ. որով օրհնի ստեղծողն էից ՚ի բանաւոր պաշտօնէից:

Ծածկեալ խորհուրդըն ծանուցաւ չորրորդ դարուն իսահակաւ. ՚ի չորրորդ օր դարձեալ հրեշտակն ետ զաւետիսըն կուսական. թէ լոյսն որ ոչ բովանդակի ՚ի քէն մարմնով պարունակի. յոր օրհնեցայք ազգ երկրածինք սուրբ օրհնութի ծնողոյ կուսին:

Կուսին նախնւոյ մօրն եւայի յորմէ ադամըն հին պարտի. բարձան անէծքըն տրտմական քո սուրբ ծընընդեամբ կոյս մարիամ. աղաչեա զքո միածինն թողուլ զմեղս որդ-

ւոյ Նոցին. յոր օրհ։

Հարսն ընծայեալ յերկրէ յերկինս
յոր համբառնամք առ քեզ գլու-
գլխս. յոր լըսելոյ քո զաւետիսն խընդ-
րեա լինել մեզ լըսելիս. զձայն ա-
ւետեաց քո միածնին եթէ եկայք
օրհնեալք հօր իմ. յոր օրհ։

Ձայնիւ առ քեզ տէր պաղատիմք և
առաջի քո անկանիմք. աղաչանօք
աստուածածնին շիջի ՚ի մէնջ ըզ-
բոց հնոցին. տուր արտասուօք ըզ-
մեզս ջնջել և վերստին զմեզ նորո-
գել. յոր օրհ։

Ղեկավար ճարտարապետ անցեր
ընդ ծով կենցաղս անհետ. վերա-
բերեալ ըն՝ պետրոսի զմեզ ՚ի յալ-
եաց մեղաց ծովէս. պաղատանօք
գերագունին անապական քում ծը-
նողին. յոր օրհնեցաք ազգ երկ։

Երգ վասն հինգերորդի աւուր արարչութեանն, և վասն հին-գերորդի դարուն, և ՚ի սուրբ Առաքեալսն Քրիստոսի։

Ճառայ ծեալ բանն ՚ի հօրէ յօր եշ
հինգերորդն հրամայէ. բղխել ՚ի
ջրոց սեռս կայտառաց և թեւաւորս
օդականաց. իսկ ՚ի դարուն հինգ-
երորդին յամայն և ՚ի ծովն խաղային
հին. տացուք հրաշից ներգործո-
ղին առատին և փառս անեղ բանին։
Մաքրափայլս օրինակք առաքելոցն
քրի. որք ՚ի ծովէն տիբերական ՚ի
յերկնայինսն կոչեցան. անցին ընդ
ծովն աշխարհական և ՚ի հոգին մ-
կրտեցան. տացուք հրա։
Յուրախութիւն անզրաւական ՚ի
հարսանիսն անմահական. զձեզ ա-
ռաքելոց հայրն գ. ոց հրաւիրա-
տուք ողորմականաց. սուրբ հար-
սանեացն այն հայցեցէք ընդ ձեզ
լինել մեզ պարակից. տա։
Նորոգօղք տիեզերաց ՚ի նախահօ-
րն յանցանաց. նորափետուր զար-

դարեցիք զեկեղեցիս հեթանոսաց. պաղատեցէք առ նոյն գըթա՛ծ զմեզ նորոգել 'ի հնոյ մեղաց. տա: Շինող էիցըս համայնից արարածոց 'ի յանգոյից. նոյն շինեցեր զեկեղեցի վէմդ 'ի վերայ վիմին բանի. ընդ եդեալ հիմունս 'ի նոր սիօն ըզմեզ յօդեա շինմամբ 'ի նոյն. տա: Ուրախացա՛ւ գնացիւք գետո՛ց քաղաք 'ի քէն շինեալ յա՛. յորմէ առ՛կք շնորհաց հոսե՛ն զոգիս մարդկա՛ն ուղղանեն. արբո եւ մեզ՛ 'ի ջրոյն կենա՛ց հայցմամբ հոգւոյն մաքրութեանց. զի բանաւո՛ր երկիրըս քո՛ պտղաբերի 'ի փառս քո:

---

Երգ վասն վեցերորդի աւուր արարչութեան, եւ վասն վեցերորդի դարուն, եւ 'ի խաչելութիւնն Քրիստոսի.

ուր Զըհանդուրժեա՛լ բնութեամբ բարու՛յն ունե՛լ միայն զանձառ բարին. այլ սահղծեալ զմա՛րդ յիւր

պատկերին 'ի վեցերորդն առաւօ-
տին. և 'ի յերրորդ ժամ ըզկողու-
ոնն 'ի յօգնութիւն եւ հողած-
ին. զոր 'ի դրախտին եդ վայելել
բայց 'ի պտղոյն մահու արգել:
Պապանձեալ առ դատողին յետ
յանցմանցն ադամըն հին. զկինն
պատճառ եդեալ խաբմանն և կի-
նին զօձն դաւաճան. որով երկիրս
այս անիծաւ փուշ և տատասկ 'ի
ամէն բուսաւ. վճիռ մահու մար-
դոյն տըւաւ դառնալ 'ի հող, ուս-
տի ստեղծաւ:
Ջնջել փութայր հայրըն փառաց
ըզգիր պարտեաց մեր յանցանաց.
որով զգեցաւ որդին գթած 'ի
վեց դարուն զմարմին մեղաց. հօր
հաճութեամբ 'ի մահ խաչին եկն
սմաւ 'ի յուրբաթին. գառն զե-
նաւ 'ի հին զատկին փոխան գա-
ռանցն օրինակին:
Ահիւ լուսոյ պատուիրանին ա-

դարութեան ճանապարհին. բարձ-
րանալով քո 'ի խաչին բարձրացու-
ցեր զմեզ 'ի յերկինս. քո անպա-
տում խոնարհութեամբքդ և կա-
մաւոր խաչելութբ՟դ. հաշտեաց
ընդ մեզ տէր գթութբ՟ և թող
զմեղս ողորմութեամբ։

Սոսկալի՛դ սերովբէից և ահաւորդ
քրովբէից. խոնարհեցա՛ր 'ի չարչա-
րանս չարչարելի բնութբ՟ մարդկան.
'ի խաչի՛ն զմեղս սպանե՛ր և զդա-
տակնիք մահու լուծեր. հաշտ։
Վեհագո՛յն բնութեանց էի՛ց և ա-
րարիչդ բոլորից. յորժամ ծագե՛ս
զխաչիդ նշա՛ն 'ի գալստեան քո միւ-
սանգամ. զերկրպագո՛ւս այժմ հա-
ւատո՛վ լուսաւորեա նորին լուսով
զի համաձա՛յն խաչազգեցիցն զքեզ
օրհնեմք յաւիտե՛նից։

Երգ. վասն եօթներորդի աւուր արարչութեան. և վասն եօթ-
ներորդի դարուն. և 'ի խորհուրդ հանգստեանն:

Տէ՛րն յետ ստեղծման՝ արարածո՛ց
հանգեաւ յեօթն օրն 'ի գործոց.
այն որ հանգիստ՝ աշխատելո՛ց և
կամքըն գործ է եղելոց. ուստի և
մե՛զ լոյս հաստատո՛ւն ես հան-
գստեամբըն շաբաթուն. թէ աստ
գործե՛լ զգործս ո՛յ, անդ է հանգ-
չել ընդ աստուծո՛յ:
Օսբունաբա՛ր վարդապետի՛մք յօրի-
նակէ տեառն խրատիմք. որ 'ի
յերկրո՛րդ արարչութեա՛նն յետ
կատարման տնօրէնութե՛ն. յեօթ-
ներո՛րդ օր հանգստեա՛ն իջե՛լ մարմ-
նով 'ի գերեզման. զկապեալ հոգի-
ըն՝ վերածեա՛ց զանանց հանգիստն
պատրաստեա՛ց:
Ցօղդ որ 'ի քո՛յդ կողէ ցօղեա՛լ բը-
ժըշկեսցէ զհանգուցեալսն. իջցէ 'ի
հո՛ղ մահու նոցի՛ն և բուսուցէ
յօրն վերջին. կենդանարա՛ր ձայնի-
ւըդ քո՛ կոչեա զնոսա 'ի կեանս քո.

և դասեցո ընդ արդարոցն երգել
քեզ փառս ընդ զուարթնոցն ։
Խուծեալ զենուլն կենաց ունօղ
դարձոյց յանցանքն 'ի մահու հող.
իսկ անմահիդ մեռելուդ շնորհեաց
դարձեալ զանմահութի . զորս են
ընդ քեզ թաղեալ մահուամբ ա-
ւազանին մկրտութե . յարո ընդ
քեզ քոյին փառօք արեգական նը-
ման լուսով ։

Փայլին արդարքն յարքայութեն և
ճգնաւորքն 'ի հանգստեանն . մար-
տիրոսքն պսակին և կուսանաց
լապտերք վառին . դասեցո տր ընդ
նոսին որք զքեզ ած խոստովանին .
արդարութե մի դատեսցին այլ գը-
թութեամբ քո քաւեսցին ։

Քո անպատում խոնարհութեդ որ
թաղեցար մեռելութե . և յարուցեր
յորդւոց մարդկան որք հաւատով
'ի քեզ անկան . յարո և զմեզ արդա-
րութե և ընծայեալսն ողորմութե .

զի կենդանեա՛ցըս բերանո՛վ տացին
քեզ փառս ընդ հօ՛ր հոգւո՛վ։

Մաղթանք պահոց՝ յետ Արարչականին։

Խաչ քո եղիցի մեզ ապաւէն տէր
յիսուս. յորժամ երեւիս փառօք
հօր ընդ ամպս լուսաւորս։ Յայն-
ժամ մեք մի՛ ամաչեսցուք յուսա-
ցեալքս 'ի քեզ. այլ զօրութեամբ
քով մեծաւ բերկրեսցուք ընդ աջ-
մէ քումմէ՝ որպէս զորդիս լուսոյ
և որդիս տունջեան։

Քարոզ։

Աղաչեսցուք զամենակալն ած, զի
պահպանեսցէ զժողովուրդս իւր
ընդ հովանեաւ սբ և պատուական
խաչիւն իւրով 'ի խաղաղութեան։
Ամենակալ տէր աստուած մեր. կե-
ցո և ողորմեա։

Աղօթք պահոց։

Օգնեա մեզ տէր. օգնեա մեզ ած
փրկիչ մեր՝ վասն մեծի փառաց ան-
ուանդ քո. տէր փրկեա զմեզ, և
քաւեա զմեղս մեր վասն անուան

քոյ սրբոյ։ Պարտական պահեա զաւ'ի քեզ զապաւինեալ և զյուսացեալ ժողովուրդս քո՝ ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչիւդ քով 'ի խաղաղութեան։ փրկեա յերևելի և յաներևոյթ թշնամւոյն։ Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ, այժմ և միշտ և։

Յիշեա տէր զպաշտօնեայս քո։

Բարերար և բազումողորմ աստ։

Օրհնեալ տէր մեր յն̃ քն̃. ամէն։

Հայր մեր որ յերկինս ես։

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից արեւագալի ժամուն.
Որ կատարի 'ի դէմս Հոգւոյն սրբոյ, այլեւ 'ի դէմս յարու-
թեանն Քրիստոսի, եւ երեւման աշակերտացն.

Եղիցի անուն տեառն օրհնեալ
յաւիտեան. զի յառաջ քան
զարեւ է անուն նորա.
Ի նա օրհնեսցին ամ ազգք երկրի,
և ամ ազինք երանեսցեն նմա.
Օրհնեալ տէր աստուած իսրայէ-
լի որ առնէ սքանչելիս միայն. և
օրհնեալ է անուն սուրբ փառաց
նորա յաւիտեան. լցցի փառօք նո-
րա ամենայն երկիր. եղիցի եղիցի.
Փառք հօր և որդւոյ և.
Եւ եւս խաղաղութեան զտէր ա.
Օրհնութիւն և փառք հօր և.

Երգ արեւագալին.

Յարեւելից մինչ 'ի մուտս. 'ի
հիւսիսոյ և 'ի հարաւոյ. ամ ազգ

Եւ ազգե՛նք ՝ յօրհնութիւն նոր օրհ-
նեցէք զարարիչն արարածոց . որ
ծագեաց ընդ լոյս արեգականն ան-
ւոր յաշխարհս ։

Եկեղեցիք արդարոց . փառաբա-
նեցէք ամենասուրբ Երրորդութեան .
յառաւօտս լուսոյ զառաւօտ խա-
ղաղուն քո գովեցէք ընդ հօր եւ
հոգւոյն . որ ծագեաց զլոյս գի-
տութեանն իւրոյ 'ի մեզ ։

Յորդորակ .

Յարեւելից յարեւմուտս մանկունք
Սիոնի . օրհնեցէք միշտ զանդամն
զծագողն լուսոյ ։

Եկեղեցիք արդարոց եւ փառաբա-
նեցէք . բարեբանեցէք որ եւս զե-
մանաւոր լուսոյ ։

Քարոզ .

Յարեւելից մինչեւ 'ի մուտս արե-
ւու ընդ ամենայն տեղիս քրիստո-
նէութեան , որ եւ կարդան զա-
նուն տեառն որդութեամբ՝ տէր

աղօթիւք նոցա և բարեխօսութե մեզ ողորմեսցի․ Ախտիւք զատաուած աղաչեսցուք զի նա փրկեսցէ զմեզ ՚ի մեղաց և ՚ի ցանկութէ աշխարհի․ Ընկալցի զուխտս և ըղխնդրուածս սրտից մերոց․ և արժանի արասցէ զմեզ հաւատոց և պատուիրանաց իւրոց ընդ ամենայն սուրբս իւր․ Ամենակալ տէր աստուած մեր կեցո և ողորմեա․ Զառաւօտս լուսոյ և զառաջիկայ օրս խաղաղութեամբ անցուցանել՝ հաստատով ՚ի տեառնէ խնդրեսցուք․ Զհրեշտակ․ Զ․ քաւութի․ Զեր․ Եւ ես․ Զանձինս․ Ողորմեաց․

Աղօթք․

Յարեւելից մինչեւ ՚ի մուտս արեւու օրհնեալ ես տէր․ վասն զի թագաւոր քաղցր ես․ և անուն քո ահեղ է ընդ ամենայն ազգերս․ Բազմացին ամպարշտութիւնք մեր առաջի քո․ եղեն իրաւունք յարդարութենէ քումմէ ՚ի սկրրութիւնս մեր, և փառաւորեսցի

ամենասուրբ անուն քո։ Եւ մեք արժանի եղիցուք կալ 'ի պատուիրանի քում. և քեզ երգել գոհնութիւն և զփառս հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ. այժմ և։

Խաղաղութիւն ամենեցուն։

Աստուած մշտնջենաւոր՝ աստուած յաւիտենականն. որ 'ի ստորին աշխարհս լոյս ծագեցեր՝ և լուսաւորեցեր զմեզ 'ի խաւարային մեղաց մերոց։ Որ վս մեր 'ի չափաւորութի եկիր անչափդ ած. և հեղեալ ծաւալեցեր զշնորհս հոգւոյդ սրբոյ յարարածս քո։ Այժմ և յաւիտեանս ժամանակաց բարեբանեալ ես ամենամեծդ աստուած, ընդ հօր և ամենասուրբ հոգւոյդ. այժմ և միշտ և յա։

Սաղմոս. ղթ.

Աղաղակեցէք առ տէր ամենայն երկիր. ծառայեցէք տեառն ուրախութեամբ։

Մտէք առաջի նորա ցնծութեամբ. ծաներուք զի նա է տէր ած մեր։

՚Նա արար զմեզ, և ոչ մեք էաք. մեք ժողովուրդք և խաշն արօտի նր՟:

Մտէք ընդ դրունս նորա խոստովանութեամբ, և օրհնութեամբ ՚ի յարկս նորա:

Խոստովան եղերուք տեառն, և օրհնեցէք զանուն նորա:

Քաղցր է տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա. ազգէ մինչև յազգ է ճշմարտութիւն նորա:

Փառք հօր և որդւոյ և:

Երգ.

Որդնաւորք սատանայ, և ժառանգորդք երկնից արքայութեն. որք փոխանակեալք զանցաւորս առիք զանանցըն բարութիւնն. բարեխօսեցէք առ տէր վասն մանկանց եկեղեցւոյ:

Նահատակք պանծալիք, և սիրեցեալք ՚ի յերկնաւոր հօրէն. որք մըկրտեցայք ընդ քո արեամբ ձերով ՚ի մահ խաչին. բարեխօ:

Մարտիրոսք ցանկալիք, և օթե-

վանք հոգւոյն ճշմարտութեանն. որք յաղթեցիք հոգւով կարեաց և ցանկութեան. բարեխօ։

Գովելիք աշխարհի, և բաղձալիք վերնոցըն պետութեանց. որք երանութե մասին հասիք քան զամենայն որդիս մարդկան. բարեխօսե։

կամաւոր պատարագք. մանկունք տիօք և կատարեալք իմաստութեբ. որք փոխանակ կաթին արբիք զգինին զմայլեցուցիչ. բարեխօսե։

Ցորդորակ։

Անդրանուորք ճշմարտիք վեհայք քրիստոսի. բարեխօսեցէք առ տէր վասն անձանց մերոց։

Նահատակք կենդանիք սիրողք քրիստոսի. որք չարչարեցայք մարմնով վասն անուանըն տեառն։

Մարտիրոսք ցանկալիք մարդկան ըղձալիք. հայցեցէք 'ի սուրբ հոգւոյն տալ մեզ ըզ բարիս։

Գովելիք վերնոց դասուց. պար-

ծանր աշխարհի. խնդրեցէք զխա-
ղաղութիւն տալ եկեղեցւոյ ։
կամաւորք պատարագք հասա-
մանկունք. հայցեցէք լինել և մեզ
ձեզ պարսպ կանկից ։

Մաղթանք ։

Աղաչեմք ողորմեաց տէր բարերար. աղաչեմք ողորմեաց. վասն աղօթից որոց ճգնաւորացն՝ աղաչեմք ողորմեաց ։

Քարոզ ։

Սուրբ ճգնաւորօքն աղաչեսցուք զտէր, որք զչարսն պարտեցին, նեղութեանցն համբերեցին ։ Լուսեղէն և երկնային անթառամ պսակացն արժանի եղեն ։ Աղօթիւք նոցա և բարեխօսութեամբ մեզ ողորմեսցի ։ Ամենակալ տէր աստուած մեր կեցո և ողորմեա ։

Աղօթք ։

Սուրբ ես տէր, և 'ի սուրբս հանգուցեալ. և մեք սուրբ վկայիւքս աղաչեմք զքեզ. բարեխօսութեամբ սուրբ աստուածածնին՝ և աղաչա-

նօք ամենայն սրբոց քոց. մի մեր-
ժեր զմեզ յողորմութենէ քում
մէ. այլ կեցո զմեզ աղօթիւք սո-
ցին. զի դու ես բազումողորմ ած.
և քեզ վայելէ փառք իշխանութի
և պատիւ. այժմ և միշտ:

Յիշեա տէր զպաշտօ:

Բարերար և բազումողորմ աստ:

Սաղմս. կբ.

Աստուած աստուած իմ, ես առ
քեզ առաւօտ առնեմ. ծարա-
ւեցաւ առ քեզ հոգի իմ, քանի՛
պատիկ ես և մարմին իմ:
Որպէս երկիր անապատ և անջուր,
ուր ո՛չ գոյ ՚ի նմա ճանապարհ:
Այսպէս ՚ի սուրբս երեւեցայց քեզ,
տեսանել ինձ զզօրութիւն քո և
զփառս քո:
Վասն զի լաւ է ինձ ողորմութիւն
քո քան զկեանս իմ. և շրթունք
իմ գովեսցեն զքեզ:
Այսպէս օրհնեցից զքեզ ՚ի կեանս
իմ, և յանուն քո համբարձից ըզ
ձեռս իմ:

Որպէս 'ի ճարպոյ պարարտութենէ
լցցի անձն իմ, շրթամբք ցնծութե
օրհնեսցէ զքեզ բերան իմ։
Զի թէ յիշէի զքեզ յանկողնի ի-
մում, ընդ առաւօտս կանխեալ
խօսէի ընդ քեզ։
Զի եղեր իմ օգնական, 'ի հովանի
թեւոց քոց ցնծացայց։
Եկն զկնի քո անձն իմ. և զիս ըն-
կալաւ աջ քո. և նոքա 'ի նանիր
խնդրեցին զանձն իմ։
Մտցեն 'ի ներքոյ անդնդոց երկրի.
մատնեսցին 'ի ձեռս սրոյ, և բա-
ժինք աղուեսուց եղիցին։
Թագաւոր յուսասցի 'ի տէր. գո-
վեսցին ամենեքեան՝ որք երդնուն
նովաւ. խցցին բերանք այնոցիկ՝
որք խօսէին զանիրաւութիւն։
Լուր աստուած աղօթից իմոց յա-
ղաչել իմ առ քեզ. յերկիւղէ
թշնամւոյն փրկեա զանձն իմ։
Ծածկեսցես զիս 'ի ժողովոց չարաց.
'ի բազմութենէ՝ որք գործեն զա-
նօրէնութիւն։

Ոյք սրեցին որպէս սուսեր զլե-
զուս իւրեանց. լարեցին զաղեղու-
նս իւրեանց յիրս դառնութեան։
Ձգել ՚ի գաղտնիս այնոցիկ՝ ոյք ու-
ղիղ են սրտիւք. յանկարծակի ձը-
գեսցեն ՚ի նոսա, և մի երկիցեն։
Ոյք զօրացուցին յանձինս իւրեանց
զբանս չարութե. խորհեցան թա-
քուցանել ինձ որոգայթ. և աս-
ցին ոչ տեսանէ զայս ոք։
Քննեցին զանօրէնութիւն, պատրաս-
տեցան ՚ի քննել զքննութիւն։
Մատիցէ այր ՚ի խորութիւն սրտի
իւրոյ, և բարձր եղիցի աստուած։
Նետք տղայոց եղեն վէրք նոցա.
տկարացան ՚ի նոսա լեզուք նոցա,
և խռովեցան ամենեքեան ոյք հա-
յէին ընդ նոսա։
Երկեաւ ամենայն մարդ ՚ի պատմել
զգործս աստուծոյ, և զարարածս
նորա ՚ի միտ առին։
Ուրախ եղիցի արդար ՚ի տէր, և
յուսասցի ՚ի նա. նախա գովեսցին
ամենքին, ոյք ուղիղ են սրտիւք։

Երգ.

Լոյս, արարիչ լուսոյ առաջին լոյս.
բնակեալդ ի լոյս անմատոյց, Հայր
երկնաւոր. ի դասուց լուսեղինաց
օրհնեալ. ի ծագել լուսոյ առաւօ-
տուս, ծագեա ի հոգիս մեր զլոյս
քո իմանալի:

Լոյս, ի լուսոյ ծագումն արեգակն
արդար. անճառ ծնունդ Հօր որ-
դի. յառաջ քան զարեւ անուն քո
գովեալ ընդ Հօր. ի ծա:

Լոյս, ի Հօրէ բղխումն աղբիւր բա-
րութեան. Հոգիդ ուղիղ. մա-
նկունք եկեղեցւոյ ընդ հրեշտակս
զքեզ բարեբանեն. ի ծա:

Լոյս, երրեակ և մի անբաժանելի
սուրբ երրորդութիւն. զքեզ ընդ
երկնայնոց երկրածինքս միշտ փա-
ռաւորեմք. ի ծա:

Յորդորակ.

Ննջեցելոց ո՛վ Հայր ամենա-
կալ. ընկալ զաղաչանս մեր քո

պաշտօնէից ։

Ի՛ հօրէ՛ ծագումն անժամ , անրեղամ
կլին արդամբ ․ ծագեա ՚ի յանձինս
մեր զլոյս աստուածութեանն ։

Ի՛ հօրէ՛ բղխեալ հոգի՛ , աղբիւր
բարութեան ․ լուսով քով լցո՛ զ
մեզ յայժմ առաւօտուս ։

Երեք անձինք և մի՛ բնութիւն
մի՛ Ա՛ծութի՛ ․ զերեք խոստովանիմք
յաւէտ անուր երրորդութիւն ։

Մաղթանք ․

Լուսով քո Քրիստոս ամենեքեան
լուսաւորեցաք ․ և ՚ի սուրբ խաչ
քո փրկիչ հաւատացեալքս ապա
ւինեցաք ․ Տուր մեզ Ա՛ծ փրկիչ
մեր ․ տուր մեզ զխաղաղութիւն
քո ․ և արա առ մեզ զողորմութի
քո մարդասէր տէր ։

Քարոզ ․

Եւ ևս խաղաղութեան զտէր աղա
Փառաւորեսցուք զամենակալն Ա՛ծ
որ ծագեաց զլոյս առաւօտու յա
րարածս իւր ․ ծագեսցէ և այժմ

զառատ ողորմութիւն իւր 'ի վե-
րայ փառաւորչաց անուան իւրոյ ։
Ամենակալ տէր ած մեր . կեցո և ։

Աղօթք .

Զառաւօտու աղօթս և զբանա-
ւոր պաշտօնս՝ ընկալ ամենակալ ա-
մենամեծդ աստուած 'ի քո անա-
պական և յերկնային խորանդ ։
Ծագեա առ մեզ զարդարութեան
և զիմաստութեան զլոյս քո . արա
զմեզ որդիս լուսոյ և որդիս տը-
ւընջեան . որպէս զի 'ի գալ առա-
ւօտս երկիւղածութբ վարեսցուք
զկեանս մեր . և առանց գայթակ-
ղութեան կատարեսցուք ։ Զի դու
ես օգնական և փրկիչ մեր . և քեզ
վայելէ փառք իշխանութիւն և
պատիւ . այժմ և ։

Սաղմոս . իբ .

Տէր հովուեսցէ զիս . և ինձ ինչ
ոչ պակասեսցի ։
Ի վայրի դալարւոջ՝ անդ բնակեցոյց
զիս . և առ ջուրս հանգստեան սը-

Նոյց զիս։
Դարձոյց զանձն իմ առ իս. և ա-
ռաջնորդեաց ինձ ՚ի ճանապարհս
արդարութեան վն̃ անուան իւրոյ։
Թէպէտ և գնացից ես ՚ի մէջ ըստ-
ուերաց մահու, ոչ երկեայց ՚ի չա-
րէ, զի դու տէր ընդ իս ես։
Ցուպ քո և գաւազան՝ նոքա մխի
թարեցին զիս։
Պատրաստ արարեր առաջի իմ ըղ
սեղան՝ ակն յանդիման նեղչաց ի-
մոց։
Օծեր իւղով զգլուխ իմ. բաժակ
քո որպէս անապակ արբեցոյց զիս։
Ողորմութիւն քո տէր զհետ իմ
եկեսցէ՝ զամենայն աւուրս կենաց
իմոց. բնակել ինձ ՚ի տան տեառն
ընդ երկայն աւուրս։
Ցոյց ինձ ճանապարհ՝ յոր և գնա-
ցից. զի առ քեզ տէր համբարձի
զանձն իմ։
Փրկեա զիս ՚ի թշնամեաց իմոց տ̃ր.
զի զքեզ ապաւէն ինձ արարի։
Ուս ինձ առնել զկամս քո. զի

դու ես աստուած իմ։
Հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ ինձ
'ի յերկիր ուղիղ։
Վասն անուան քո տէր՝ կեցուս-
ցես զիս, արդարութեամբ քով
հանցես 'ի նեղութենէ զանձն իմ։
Ողորմութեամբ քով սատակեա ըզ-
թշնամիս իմ. և կորո զա՛մ նեղիչս
անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ։
Աստուած մեր ապաւէն և զօրու-
թիւն. օգնական 'ի վերայ նեղու-
թեանց, որք գտին զմեզ յոյժ։
Վասն այսորիկ ոչ երկիցուք մեք 'ի
խռովել երկրի. 'ի փոփոխիլ լերանց
'ի սիրտս ծովու։
Գոչեցին և խռովեցան ջուրք նոցա.
խռովեցան լերինք 'ի զօրուէ նորա։
Գնացք գետոց ուրախ առնեն ըզ-
քաղաքն աստուծոյ. և սուրբ արար
զյարկս իւր բարձրեալն։
Աստուած 'ի մէջ նորա, և նա մի՛
սասանեսցի. օգնեսցէ նմա աստ-
ուած 'ի վաղորդենէ մինչև 'ի վա-
ղորդեան։

խռովեցան հեթանոսք, և խոնար-
հեցան թագաւորութիւնք. ետ
զձայն իւր բարձրեալն՝ և խռովե-
ցաւ երկիր:

Տէր զօրութեանց ընդ մեզ. ընդու-
նելի է մեր աստուած յակոբայ:

Եկայք և տեսէք զգործս աստու-
ծոյ, որ արար զնշանս և զարուես-
տըս ’ի վերայ երկրի:

Եհար զպատերազմ ’ի ծագաց մին-
չեւ ’ի ծագս երկրի. զաղեղունս
փշրեաց, զզէնս խորտակեաց, և
զասպարս այրեաց հրով:

Կանխեցէք և ծանիրուք, զի ես եմ
աստուած. բարձր եղէց ’ի հեթա-
նոսս, և բարձրացայց ’ի վր̃ երկրի:

Տէր զօրութեանց ընդ մեզ. ընդու-
նելի է մեր աստուած յակոբայ:

Աստուած յօգնել ինձ նայեաց. և
տէր յընկերել ինձ փութա:

Ամաչեսցեն և յամօթ լիցին, ոյք
խնդրէին զանձն իմ. դարձցին յե-
տըս և ամաչեսցեն, ոյք խորհէին
ինձ չար:

Դարձցին առ ժամայն ամաչեցեալք·
որք ասէին ինձ վաշ վաշ։
Ցնծասցեն և ուրախ լիցին 'ի քեզ
ամենեքեան, որք խնդրեն զքեզ տէր։
Ասասցեն յամենայն ժամ, մեծ է
աստուած. և որք սիրեն զփրկու-
թիւնս քո։
Ես աղքատ և տնանկ եմ, ա՜ծ օգ-
նեա ինձ. օգնական և փրկիչ իմ
ես. և դու տէր իմ՝ մի՛ յամենար։
Տուր զօրութի՜ ծառայի քո. կեցո
զորդի աղախնոյ քո. և արա առ իս
նշան բարութեան։
Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն.
զի դու տէր օգնեցեր ինձ, և մ-
խիթարեցեր զիս։
Փառք հօր և որդւոյ և։

Երգ։

Ճանապարհ. և ճշմարտու-
թիւն. և կեանք քրիստոս. ա-
ռաջնորդեալ հոգւոյ մերոյ.
յերկրէ երանելի յերկինս։
Դուռն կենաց մերոյ

յիսուս. մերձ է ընդ մեզ աստուած հայր քո և հոգի. երգեմ միշտ ընդ փառս:

Յորդորակ:

Ճանապարհ բարի քրիստոս և ճըշմարտութիւն. առաջնորդ հոգւոց մերոց յերկրէ 'ի յերկինս:

Դուռըն կենաց մըտից յա՛. աստուած ճըշմարիտ. մո՛յծ և զմեզ առ հայրըդ քո. հոգւովըդ սըրբով:

Մաղթանք:

Տէր ուղղեա զգնացս մեր 'ի ճանապարհս խաղաղութեան. տէր ուղղեա և առաջնորդեա հոգւոց մերոց և ամենայն հաւատացելոց՝ գնալ յարդարութեան ճանապարհըն և 'ի կեանսն յաւիտենից:

Քարոզ:

Աղաչեսցուք զամենակալն ած՝ զի յաջողեալ ուղղեսցէ զճանապարհըս ծառայից իւրոց 'ի բարի և 'ի խաղաղութիւն: Ամենակալ տէր աստուած մեր. կեցո և ողորմեա:

### Աղօթք ։

Առաջնորդ կենաց և պարգևիչ խաղաղութեան քրիստոս ած մեր. առաջնորդեա մեզ գնալ 'ի ճանապարհս քո արդարութեան. և խաղաղութեամբ ժամանել 'ի նաւահանգիստն կենաց և փրկութեան՝ շնորհօք ողորմութե քոյ. զի դու ես օգնական և փրկիչ մեր. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և ։

### Աղօթք աւուրց պահոց. յորս տօն ոչ լինի ։

Օրհնեալ ես տէր աստուած փրկիչ մեր՝ որ յամենայն ժամ ընդ մեզ ես, և ոչ երբէք թողուս 'ի ձեռանէ քումմէ զայնոսիկ՝ որք հաւատով և ճշմարտութեամբ կարդան առ քեզ։ Աղաչեմք և խնդրեմք 'ի քէն տէր, ճանապարհորդակից լեր ծառայից քոց քոյին վերակացութեամբդ՝ պահելով 'ի խաղաղութեան. և առաջնորդեա մեզ միւսանգամ խաղաղութեամբ և

խնդութեամբ հասանիլ յուրաքան-
չիւր 'ի բնակութիւնս 'ի քրիստոս
յիսուս 'ի տէր մեր ։ Որում վայե-
լէ փառք իշխանութիւն և պատիւ․
այժմ և միշտ և յաւիտեանս յա-
ւիտենից․ ամէն ։

Օրհնեալ տէր մեր յս̃ քս̃․ ամէն ։

Հայր մեր որ յերկինս ես ։



Կարգաւորութիւն հասարակաց աղօթից երրորդ ժամուն ։ Որ կատարի 'ի դէմս իջման Հոգւոյն սրբոյ, և 'ի դէմս Նախամօրն ճաշակման, և աղատութեանն Քրիստոսի ։

## Օրհնեալ Հոգին սուրբ աստուած ճշմարիտ. ամէն ։

Սաղմոս. Ծ ։

Ողորմեա ինձ ա՟ծ ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ ։

Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ. և 'ի մեղաց իմոց սր՟ արա զիս ։

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ ։

Քեզ միայն մեղայ տէր, և չար առաջի քո արարի ։

Որպէս արդար եղիցիս 'ի բանս քո, և յաղթող 'ի դատել դաս ։

Անօրէնութեամբ յղացայ, և 'ի մե-
ղս ծնաւ զիս մայր իմ։
Դու տէր զճշմարտութի սիրեցեր,
զանյայտս և զծածկեալս իմաստու-
թեամբ քով յայտնեցեր ինձ։
Ցօղեա յիս մշտկաւ և սբ եղէց, լը-
ւա և քան զձիւն սպիտակ եղէց։
Լսելի արա ինձ տէր զցնծութիւն
և զուրախութիւն, և ցնծասցեն
ոսկերք իմ տառապեալք։
Դարձո զերեսս քո 'ի մեղաց իմոց․
և զամենայն անօրէնութիւնս իմ
քաւեա յինէն։
Սիրտ սուրբ հաստատեա յիս աստ-
ուած, և հոգի ուղիղ նորոգեա 'ի
փորի իմում։
Մի ընկենուր զիս տէր յերեսաց
քոց, և զհոգի քո սուրբ մի հա-
ներ յինէն։
Տուր ինձ ցնծութիւն փրկութեան
քոյ, և հոգւով պետութեան քոյ
հաստատեա զիս։
Ուսուցից անօրինաց զճանապարհս քո,
և ամբարիշտք առ քեզ դարձցին։

փրկեա զիս յարենէ ա՜ծ ա՜ծ փրկու-
թեան իմոյ. ցնծասցէ լեզու իմ
յարդարութեան քում։

Տ՜ր եթէ զշրթունս իմ բանաս, բե-
րան իմ երգեսցէ զօրհնութ՜իս քո։

Թէ կամեցեալ էիր պատարագս մա-
տուցանէաք. բայց դու ընդ ողջա-
կէզս իսկ ոչ հաճեցար։

Պատարագ ա՜յ հոգի խոնարհ, ըզ
սիրտ սուրբ և զհոգի խոնարհ ա՜ծ
ոչ արհամարհէ։

Բարի արա տէր կամօք քովք սիօնի,
և շինեսցին պարիսպքն եէ՜մի։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարա-
գըս արդարութեան. յորժամ ուխ-
տից պատարագս հանցեն 'ի սեղան
քո զուարակս։

Փառք հօր և որդւոյ և։

Երգ երրորդի ժամու աւուրն՝ զկնի Ողորմեային։

Օրհնեմք ըզքե՜զ հայր անըսկիզբըն
էից էակ 'ի յանգոյից. բարձեր ձե-
ռօք նիւթ 'ի հողոյ և ստեղծեր
մարդ 'ի պատկեր քո. գլուխըն ո-

տի՛ց խոնարհեցաւ զի՛ զպատուի-
րան քո մոռացա՛ւ. դարձեալ ա-
սեմք ըստ անառա՛կին Թէ՝ հայր մե-
ղայ քեզ ՚ի յերկի՛նս:

Երկնաւորա՛ցն անքննելի եղեր մարդ-
կա՛ն տեսա՛նելի. զգեցար պատկեր
հողեղինի պատկերըդ հօր ա՛նփո-
խելի. ելե՛ր յերրո՛րդ ժամ ՚ի խա-
չի՛ն վասն ադամա՛յ նախաստեղ-
ծի՛ն, ը՛նդ աւազակի՛ն քում խա-
չակցի՛ն արժանացո ըզ մեզ դը-
րախտի՛ն:

Թագաւո՛ր Թագաւո՛րաց առատա-
բուղխ հոգի շնորհաց. ժողովելոցն
՚ի վերնատա՛նն առաքելոցն երկո-
տասան. ՚ի հրոյ լեզուս երեւեցար
յոգիս նոցա վերա՛նըստար. լուր
յանուն քո ժողովելոցս, էջ և առ
մեզ յերրորդ ժամո՛ւս:

Մաղթանք:

Յա՛մ ժամու աղաչանք իմ այս են,
ի մեղաց իմոց ո՛ք արա զիս տէր.

և յօտարէն պահեա զծառայս քո
մարդասէր տէր։
Եւ ես խաղաղուե̃ զսէր աղաչես։
Օրհնութիւն և փառք հօր և։

Քարոզ մեծ պահոցն 'ի Յովհաննու մանդակունւոյ ասացեալ։

Ա՛խաբան ամենեքեան գոհացարուք զմարդասիրէն աստուծոյ և զփրկչէն մերմէ յիսուսէ քրիստոսէ։ Որ ազատեաց զազգս մարդկան 'ի դատապարտութենէ անիծիցն. և եբարձ զմեղս աշխարհի 'ի ժամու յայսմիկ խաչին իւրով. և շնորհեաց առատապէս զպարգևս հոգւոյն սրբոյ երանելի առաքելոցն։ Խնդրեսցուք հաւատով զի զմեզ զամենեսեան՝ արասցէ հաղորդս մեծամեծաց և աստուածային բարեացն այնոցիկ, աղօթիւք և բարեխօսութեամբ ամենայն սրբոց, որք աստ և ընդ ամենայն տիեզերս։ Որպէս զի անարատ վարուք, և ճշմարիտ առաքինութեամբ կացեալք ընդ կամաց նորա յայսմ աշխարհիս,

զմասն և զվիճակ ժառանգութե՛
ընկալցուք ընդ ամենայն սուրբ.
նորա․ զընակութիւն յաւիտենա-
կան և երկնային խորանացն։ Զոր
խոստացաւ սիրելեաց իւրոց ճըշ-
մարիտն աստուած յիսուս քրիս-
տոս․ տէր մեր կեցո և ողորմեա։
Զժամս և զառաջակայ օրս խաղա-
ղութբ անցուցանել հաւատով՛ ի
տեառնէ խնդրեսցուք։ Զհրեշտակ
խաղաղութեան։ Զքաւութիւն։
Զսրբոյ։ Եւ ես միա։ Զանձինս։

Ողորմեաց։

Աղօթք։

Որ ՚ի քրովբէական և յանպա-
տում հանգուցեալ ես յաթոռ․ և
այցելու ես միշտ արարածոց քոց։
Որ և ՚ի ժամուս յայսմիկ հեղեր
յերանելի առաքեալսն զշնորհս հոգ-
ւոյդ սրբոյ։ Դու տէր յառաջակայ
ժամուս՝ և յաւէտ մինչև ՚ի կեն-
ցաղոյս աւարտումն՝ տպաւորեալ
միացո զմեզ ընդ ամենայն բարե-
գործութե յորդորմունս․ և խոս

տացելոց բարեացդ հաղորդս լինիլ զմեզ արժանի արա. տէր մեր և փրկիչ յիսուս քրիստոս։ Որ ես օրհնեալ ընդ հօր և ընդ սրբոյ
հոգւոյդ, այժմ և։

Խաղաղութիւն ամենեցուն։

Որ էիր յառաջ քան զյաւիտեանս բանդ աստուած. էակից հօր և առարչակից սուրբ հոգւոյդ։ Որ և զնախաստեղծին պատուիրանազանցութիւն պտղոյն ճաշակման՝ նըշանաւ ամենայաղթ խաչիւ քո 'ի ժամուս յայսմիկ ենթարկեալ՝ 'ի կենդանութիւն փոխեցեր. և զանօրէնութիւնս մեր 'ի նմա բեւեռեալ՝ կեանք անապական, և նորոգումն կենաց յուսացելոց 'ի քեզ խոստացար։ Որոց մասնաւորիլ և ըզմեզ արժանի արա տէր մեր յիսուս քրիստոս. որ ես օրհնեալ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ.
այժմ և։

Տէր աստուած օրհնեալ. օրհնեալ սղ
է տէր զօրհանապաղ։

Աստուած մեր՝ աստուած կենարար.
և նա փրկեսցէ զմեզ։
Տէր աստուած օրհնեալ. օրհնեալ
տէր զօրհանապազ, առաջնորդես-
ցէ մեզ աստուած փրկիչ մեր։

Քարոզ։

Խնդրեսցուք հաւատով ՚ի տեառ-նէ վասն ճանապարհորդաց հարց և եղբարց մերոց, որք ընդ ծով և ընդ ցամաք գնասցեն. որպէս զի առաջնորդեսցէ նոցա, խաղաղութ՟ պահեսցէ, և տարեալ հասուսցէ յիւրաքանչիւր տեղիս տէր աստ-ուած մեր։ Վասն զի նա ինքն է առաջնորդ կենաց, և յոյս փրկու-թեան. որ յաջողէ ծառայից իւրոց խաղաղութեամբ հասանել ՚ի նա-ւահանգիստ կենաց և փրկութե։ Օրհնեալ տէր ա՟ծ մեր. կեցո և։

Աղօթք։

Առաջնորդեա մեզ տէր ա՟ծ մեր, և ուսո մեզ գնալ ՚ի ճանապարհս քո արդարութեամբ. պահեա ՚ի խաղաղութեան զկեանս մեր, և

զգնացս 'ի հաճոյս քո. ժամանեցո զհոգեւոր եւ զմարմնաւոր ընթացս ծառայից քոց անարատ ճանապարհաւդ յաւիտենական 'ի կեանսդ. Շնորհօք միածնի քոյ տեառն մերոյ եւ փրկչին յիսուսի քրիստոսի. որ եղեւ մեզ առաջնորդ կենաց եւ յոյս փրկութեան. Ընդ որում օրհնեալ ես Հայր ամենակալ հանդերձ կենդանարար եւ ազատիչ սուրբ հոգւովդ, այժմ եւ միշտ եւ.

Յիշեա տէր զպաշտօնեայս քո.

Բարերար եւ բազումողորմ ա̃ծ՝ քո.

Սաղմոս.

Տէր հովուեսցէ զիս, եւ ինձ ինչ ոչ պակասեսցի.

Ի վայրի դալարւոջ անդ բնակեցոյց զիս, եւ առ ջուրս հանգըստեան սնոյց զիս.

Դարձոյց զանձն իմ առ իս, եւ առաջնորդեաց ինձ 'ի ճանապարհս արդարութե̃ վասն անուան իւրոյ. Թէպէտ եւ գնացից ես 'ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայց 'ի չա-

րէ՝ զի դու տէր ընդ իս ես։
Ցուպ քո և գաւազան, նոքա մխի
թարեսցեն զիս։
Պատրաստ արարեր առաջի իմ զսե-
ղան՝ ակն յանդիման նեղչաց իմոց։
Օծեր իւղով զգլուխ իմ. բաժակ
քո որպէս անապակ արբեցոյց զիս։
Ողորմութիւն քո տէր զհետ իմ
եկեսցէ զամենայն աւուրս կենաց
իմոց, բնակիլ ինձ 'ի տան տեառն
ընդ երկայն աւուրս։
Ցոյց ինձ ճանապարհ՝ յոր և գնացից,
զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ։
Փրկեա զիս 'ի թշնամեաց իմոց տէր,
զի զքեզ ապաւէն ինձ արարի։
Ուսո ինձ առնել զկամս քո, զի դու
ես աստուած իմ։
Հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ
ինձ 'ի յերկիր ուղիղ։
Վասն անուան քո տէր կեցուսցես
զիս արդարութեամբ քով, հանցես
'ի նեղութենէ զանձն իմ։
Ողորմութեամբ քով սատակեա ըզ
թշնամիս իմ. և կորո զամ նեղիչս

անձին իմոյ, զի ես ծառայ քո եմ։

Փառք Հօր և Որդւոյ և ։

Քարոզ․

Եւեւս խաղաղութեան զտէր ա։ Գոհաբանելով աղաչեսցուք զբարերար հոգին աստուած, և խնդրեսցուք զողորմութիւն 'ի նմանէ․ զի անցուսցէ 'ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբն իւրով։ Ամենակալ։

Աղօթք․

Խաղաղութեամբ քով հոգիդ տ̃ր ա̃ծ ճշմարիտ՝ որ 'ի վեր է քան զամենայն միտս և զխորհուրդս, մխիթարեա զանձինս ծառայից քոց՝ ընդունելով զաղաչանս մեր․ անցո 'ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբ քով։ Ներեա և լուր մեզ, քաւեա և թող զմեղս մեր․ արժանաւորեա գոհութե̃ փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ որդւոյն միածնի․ այժմ և միշտ և յաւիտեա։

Օրհնեալ տէր մեր յս̃ քս̃․ ամէն։

Հայր մեր որ յերկինս ես։

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից վեցերորդի ժամուն: Որ կատարի 'ի դէմս հօր աստուծոյ, այլեւ 'ի դէմս չարչարանաց եւ խաչելութեան որդւոյն աստուծոյ:

# Օրհնեալ հայր սուրբ աստուած ճշմարիտ. ամէն:

Սաղմոս. ԾԱ:

Ողորմեա ինձ աստուած ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազումգթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ:

Առաւել լուա զիս յանօրէնութէ.

Ն. այլն: Տես 'ի Եր֊ն. 329:

փառք հօր եւ որդւոյ եւ:

Երգ վեցերորդի ժամուն:

Խաւարեցաւ լոյսն արեւուն 'ի վեցերորդ ժամ ուրբաթուն. ծանոյց թէ լոյսն արարչական նըսեմացոյց զլոյսն եղական. կախեալ ըզ քեզ մերկ 'ի խաչին քօղով ստուերաւըն ծածկէին. հերքեա 'ի մէնջ ըզծան֊

րութիւն շրջող դիւին միջօրէի՛:
Զանձրութեան մա՛րտ այսոյն չարի
որ յայսմ ժամուս պատերազմի. ղօ-
ղեալ յոդւոց մեր հերքեսցի քո
նըշանա՛ւ սրբոյ խաչի՛ն. Ճըշմա՛ր-
տութեան քո ճառագայթ զմո՛ւ 'ի
յերկնից անկեալ փայլակն. մեր-
ժեալ 'ի մէնջ հալածեսցէ և զմեզ
լուսով քո վառեսցէ՛:
Յայս միջօրեա՛յ տուընջեան ժա-
մուս վայելչական աչաց մարմնոյս.
նետիւք գաղտնեաց մի՛ խոցեսցուք
'ի խաւարէն որ 'ի ծածո՛ւկ. շուր-
ջանակի՛ բանակեսցեն ըզմեօք բա-
նակըք հրեշտակաց. որք պարակից
մեզ լինելո՛վ ըզ քեզ ընդ հօր փա-
ռաւորելո՛վ:

Մաղթանք:

Յամենայն ժամու աղաչանք իմ
այս են 'ի մեղաց իմոց ո՞ւ ա:
Եւ ես խաղաղութեան զտէր ա:
Օրհնութիւն և փառք հօր և:

Արթուն մտօք և անզգօս խորհրդով կացցուք միաբան յաղօթս առաջի տեառն մերոյ և փրկչին յիսուսի քրիստոսի ։ Հաւատով խընդրեսցուք 'ի նմանէ զհրեշտակ խաղաղութե պահապան անձանց մերոց • որ եկեալ բանակեսցէ շուրջ զմեօք , և աներկիւղ պահեսցէ ըզմեզ յամենայն հրեղէն նետից սատանայի , որ թռչի 'ի տուէ • յիրաց խաւարային գնացից՝ 'ի գայթակղութենէ դիւին 'ի հասարակ աւուր ։ Յորմէ զգուշութեամբ պահելով աղօթիւք և բարեխօսութե ամենայն սրբոց , շնորհեսցէ մեզ մարդասէրն աստուած կեալ առաքինութեամբ 'ի փրկութիւն անձանց մերոց , 'ի պատիւ և 'ի փառս կենդանացուցիչ անուան իւրոյ ։ Յոյս հաղորդութեան ընկալցուք 'ի յայտնութե միածնի որդւոյն աստուծոյ • կերպարանակից՝ առնել ըզմարմին խոնարհութե մերոյ՝ ըստ

Նմանութեան մարմնոյ փառաց իւ-րոց։ Վասն զի զայս խոստացաւ սի-րելեաց իւրոց ճշմարիտն աստուած յս քս տէր մեր. կեցո և ողորմեա։ Զժամս և զառաջակայ օրս խաղա-ղութբ անցուցանել հաւատով 'ի տնէ խնդրեսցուք։ Զհրեշտակ խա։ Զքաւութիւն։ Զմքյ։ Եւ եւս։

Զանձինս։ Ողորմեաց։

Աղօթք։

Զգեցո մեզ տէր աստուած մեր զզէն արդարութեան. զօրաւոր և յաղթօղ լինիլ ընդդէմ սատանա-յական պատերազմաց. և զամենայն հրեղէն նետս նորա շիջուցանելով անկասկած լիցուք յիրաց խաւա-րային գնացից՝ 'ի գայթակղութենէ դիւին 'ի հասարակ աւուր։ Եւ ըզ-գաստացեալք վայելչական տուըն-ջեամբս՝ առաքինութբ կացցուք 'ի փրկութիւն անձանց մերոց. 'ի պատիւ և 'ի փառս սրբոյ երրոր-դութեանդ, այժմ և միշտ և.

Խաղաղութիւն ամենեցուն ։

Երկնաւոր խաղաղութե՟դ քով պա-
րըսպեալ պահեա զանձինս մեր տ՟ր
զօրութե՟ց ։ Վասն զի դու ես տ՟ծ
խաղաղութեան, և բաց ՚ի քէն
զայլ ոք ոչ գիտեմք. և զանուն քո
ամենազօր՝ կարդամք յօգնականու-
թիւն անձանց մերոց ։ Նայեա յեր-
կրպագութիւնս մեր. և ուսո մեզ
առնել զարդարութ՟ի ճշմարտութե ։
Եւ գոհութ՟ե փառաւորեսցուք ըզ
հայր և զորդի և զսուրբ հոգիդ,
այժմ և միշտ և ։

սղ Տէր՝ մի՛ յիշեր զմեղս մեր զառաջի-
նս. վաղվաղեսցէ առ մեզ ողոր-
մութիւն քո տէր. զի աղքատա-
ցաք յոյժ ։
Օգնեա մեզ աստուած փրկիչ մեր՝
վասն փառաց անուան քոյ ։
Տէր փրկեա զմեզ և քաւեա զմեղս
մեր վասն անուան քոյ ։

Քարոզ ։

Վասն հիւանդաց և ամ՟ վշտացե-
լոց՝ աղաչեսցուք զփրկիչն մեր ք՟ս.

զի ողորմեսցի ըստ մեծի ողորմու-
թեան իւրում. և բժշկեսցէ զախ-
տըս և զհիւանդութիւնս հոգւոց
և մարմնոց ծառայից իւրոց. և կա-
տարեալ առողջութեամբ հասու-
ցէ զամենեսեան 'ի մշտնջենաւոր և
յանախտ կեանս։ Որ առաքեցաւ
'ի Հօրէ 'ի բժշկութիւն ազգի մարդ-
կան՝ միածին որդին աստուծոյ. տ̃ր
մեր և փրկիչ յ̃ս ք̃ս կեցո և։

Աղօթք.

Փարատեա զցաւս և բժշկեա ըզ-
հիւանդութիւնս 'ի ժողովրդենէ
քումմէ տէր աստուած մեր. և շը-
նորհեա ամենեցուն զկատարեալ
առողջութ̃ի նշանաւ ամենայաղթ
խաչիւ քով. որով բարձեր զտկա-
րութիւն ազգի մարդկան, և դա-
տապարտեցեր զթշնամին կենաց և
փրկութեան մերոյ։ Դու ես կեանք
մեր և փրկութ̃ի՝ բարերար և բա-
զումողորմ ա̃ծ. որ միայն կարօղ
ես թողուլ զմեղս՝ և մերժել զախ-
տըս և զհիւանդութիւնս 'ի մէնջ.

որում յայտնի են պէտք կարեաց մերոց. պարգեւիչդ բարեաց՝ պարգեւեա զառատ ողորմութիւն քո ՚ի վերայ արարածոց քոց՝ ըստ իւրաքանչիւր պիտոյից. յորոց հանապազ փառաւորեալ գովի ամենասուրբ Երրորդութիւնդ, այժմ և։

Յիշեա տէր զպաշտօնեայս քո։

Բարերար և բազումողորմ աստ։

Սաղմոս. խ։

Երանի որ խորհի զաղքատն և զտընանկն, յաւուր չարի փրկէ զնա տր։
Տէր փրկէ զնա և կեցուցանէ, երանելի առնէ զնա ՚ի վերայ երկրի, և ոչ մատնէ զնա ՚ի ձեռս թըշնամեաց իւրոց։
Տէր օգնական է նմա ՚ի մահիճս ցաւոց իւրոց. զա̃մ անկողինս նր̃ դարձուցանէ ՚ի հիւանդութենէ նորա։
Ես ասացի տէր ողորմեա ինձ. բըժշկեա զանձն իմ, ես մեղայ քեզ։
Որ բնակեալն է յօգնութիւն բարձրելոյն, ընդ հովանեաւ աստուծոյ յերկնից հանգիցէ։

Ասասցէ տեառն՝ ընդունող իմ ես,
ապաւէն իմ աստուած, և ես յու-
սամ 'ի նա:

Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որս-
ղին, և 'ի բանից 'ի խռովութենէ:
Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ.
'ի հովանի թևոց նորա յուսասցիս:
Որպէս զէն շուրջ եղիցի զքև՝ ճըշ-
մարտութիւն նորա:

Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշե-
րի, և ոչ 'ի նետէ՝ որ թռչի 'ի տուէ:
Յիրէ որ շրջի 'ի խաւարի, 'ի դայ-
թակղութենէ դիւին 'ի հասարակ
աւուր:

Անկցին 'ի կողմանէ քումմէ հա-
զարք, և բիւրք ընդ աջմէ քումմէ.
և առ քեզ ինչ ոչ մերձեսցին:
Բայց միայն աչօք քովք հայեսցիս
դու, և զհատուցումն մեղաւորաց
տեսցես. զի դու տէր յոյս իմ ես:
Զբարձրեալն արարեր քեզ ապա-
ւէն. զի ոչ հասցեն առ քեզ չարք,
և տանջանք մի՛ մերձեսցին 'ի յար-
կըս քո:

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, 'ի պահել զքեզ յամենայն ճանապարհս քո:

Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ. զի մի երբեք հարցես զքարի զոտն քո:

Ի վերայ իժից և քարբից գնասցես դու, և առ ոտն կոխեսցես զառիւծն և զվիշապն:

Քանզի յիս յուսացաւ, և փրկեցից զնա. հովանի եղէց նմա, զի ծանեաւ զանուն իմ:

Կարդասցէ առ իս՝ և ես լուայց նմա. և առ նմա եղէց 'ի նեղութե:

Փրկեցից և փառաւոր արարից զնա. երկայն աւուրբք լցուցից, և ցուցից նմա զփրկութիւն իմ:

Փառք Հօր և Որդւոյ և:

Քարոզ:

Եւ ևս խաղաղութեան զՏէր ա:

Խնդրեսցուք հաւատով 'ի Հօրէ վասն քաւութեան մեղաց և թողութեան յանցանաց. փրկելոյ զմեզ 'ի վշտաց և 'ի նեղութեանց.

իջանելոյ 'ի վերայ մեր ողորմութե՟
և գթութեան տեառն աստուծոյ
ամենակալին. կեցո և ողորմեա ։

Աղօթք ։

Հայր գթութեանց և աստուած
ամենայն մխիթարութեանց. որ մը֊
խիթարես զմեզ յամենայն նեղու֊
թեան մերում. լուր և այժմ ձայ֊
նի պաղատանաց ծառայից քոց՝ ըն֊
դունելով զաղաչանս մեր. անցո 'ի
մէնջ զցասումն պատուհասի յան֊
ցանաց մերոց բարերարութեամբ
քով։ Ներեա և լուր մեզ. քաւեա
և թող զմեղս մեր. արժանաւոր֊
եա գոհութեամբ փառաւորել ըզ
քեզ ընդ որդւոյ և ընդ սրբոյ հոգ֊
ւոյդ. այժմ և միշտ և ։
Օրհնեալ տէր մեր յս՟ քս՟. ամէն։
Հայր մեր որ յերկինս ես։

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից իններորդի ժամուն։
Որ կատարի 'ի դէմս որդւոյն աստուծոյ, այլեւ մահուանն՝ և
բանական հոգւոյն աւանդմանն։

# Օրհնեալ որդիդ սուրբ աստուած ճշմարիտ. ամէն։

Սաղմոս. Ծ.

Ողորմեա ինձ աստուած ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ։
Առաւել լուա զիս յանօրէնութէ.
և այլն։ Տես 'ի Երեսն. 329։

Փառք հօր և որդւոյ և։

Երգ իններորդի ժամուն։

Զարչարակցեալ քեզ տէր լուսոյ երեք ժամու խաւարելոյ. պայծառացեալ յիններորդին 'ի տիպ լրման մահու ստուերին. ջահըդ լուսոյ մեծապայծառ աւանդեցեր ըզ հոգիդ առ հայր. ռահիւ կցորդ քեզ 'ի յերկինս ըզ մեզ ուղղեա հոգւովդ քով։

Սանդարամետըք սարսեցին զկա-
պեալ հոգիսն արձակեցին. վէմք 'ի
վիմէդ պատառեցան 'ի տապանաց
մեռեալք յարեան. տարերք երկ-
րի տատանէին և աշխարհի սիւնք
դողային. բամեալքս առ քեզ պա-
ղատեսցուք զի ընդ արդարսն դա-
սեսցուք:

Ցուցեր յայնժամ ըզքանչելիս և այ-
ժըմ մեզ ողորմեսցիս. ւիւծեալ բը-
նութիւնս քեւ ողջացաւ. շնորհեա
և մեզ լինել անցաւ. փոխան մա-
հու քո կենարար կեցո ըզմեզ տէր
բարերար. քեզ պաղատիմք ըստ ա-
ւազակին յիշեա ըզ մեզ յօրն ա-
հագին:

Մաղթանք:

Յամենայն ժամու աղաչանք իմայս
են, 'ի մեղաց իմոց ոք ա:
Եւ եւս խաղաղութեան զտէր ա:
Օրհնութիւն և փառք հօր և:

Սուրբ սրտիւ և հաստատուն հաւատով կացցուք միաբան յաղօթս առաջի տեառն մերոյ և փրկչին յիսուսի քրիստոսի, յիշելով զմեծամեծըս նորա զանչափ շնորհս, զհամբերութիւն կենսատու խաչին, և զհեղումն ազատեցուցիչ արեան նորա, և զսոցին նմանս՝ որ յայսմ ժամու վասն մեր մեղաւորացս կըրեաց նա։ Եւ մեք զայս ամենայն զմտաւ ածելով՝ սրբեսցուք ՚ի մեղաց զխորհուրդս՝ զբանս՝ և զգործըս մեր. կատարեսցուք զսրբութիւն անձանց մերոց ահիւն աստուծոյ։ Մի՛ յապաղեսցուք խոստովան լինիլ նմա զմեղս մեր և խընդրել զթողութիւն մեղաց մերոց. զի մի՛ կորիցիմք անապաշխար՝ զյաւիտենական կորուստն։ Այլ մինչդեռ ժամանակս ՚ի ձեռս է, գործեսցուք զբարիս ՚ի կեանս յայսոսիկ, օրինակ վարուց մերոց ունելով զամենայն սուրբս և զյաղթող

նահատակին. որք միանգամ 'ի բա-
կերգեանն հաճոյ եղեն տեառն և
փրկչին բոլորեցունց ։ Որոց աղօ-
թիւք և բարեխօսութեամբն՝ շը-
նորհեսցէ մեզ մարդասէրն աստ-
ուած՝ զհաճոյսն իւր և զօգուտն
մեր խորհիլ միշտ և առնել, և ան-
պատում պարգևացն հաղորդս գը-
տանիլ ։ Զոր խոստացաւ սիրելեաց
իւրոց ճշմարիտն աստուած՝ յս քս
տէր մեր. կեցո և ողորմեա ։ Զժա-
մըս և զաւաջիկայ օրս խաղաղու ։
Զհրեշտակ ։ Զքաւութի ։ Զսբյ ։
Եւ ևս ։ Զանձինս ։ Ողորմեաց ։

Աղօթք ։

Տէր զօրութեանց՝ որ կամաւոր
մահուամբ քով 'ի ժամուս յայսմիկ
կենդանացուցեր զմեզ 'ի մեռելու-
թենէ մեղաց մերոց. և բեւեռե-
ցեր զկնիք դատապարտութեան
մերոյ 'ի խաչին. և շնորհեցեր ա-
զատութիւն ազգի մարդկան 'ի ծա-
ռայութենէ ապականութեան՝ յա-
զատութիւն փառաց՝ հեղմամբ ա-

րեան քո սրբոյ։ Ընկալ և այժմ զաղաչանս մեր. և յաջողեա մեզ՝ ուղիղ հաւատով և առաքինասէր վարուք՝ կեալ յայսմ աշխարհիս, և արժանաւոր լինիլ յաւիտենական և երկնային ուրախութեանցն ընդ ամենայն սուրբս քո։ Եւ զոհանալով փառաւորել զքեզ ընդ հօր և սրբոյ հոգւոյդ. այժմ և միշտ և։

Խաղաղութիւն ամենեցուն։

Բազումողորմ աստուած և հաստիչ խաղաղութեան՝ հաստատեա զանձինս մեր քոյով խաղաղութբդ. որով ունիս յիւրաքանչիւր կարգի զամենայն արարածս քո՝ ուղիղ հըրամանաւդ մատակարարելով. վասն զի՝ այդ իսկ է կամք քո՝ խաղաղական և հոգևոր սիրով կալ մեզ առ միմեանս, և սպասել արթուն մտօք յայտնութեան միածնիդ աստուծոյ և փրկչիդ մերոյ յիսուսի քրիստոսի։ Որում արժանաւորք եղիցուք հանդիպիլ ամպովք ընդ առաջ տեառն յօդս. զուարթ-

երես կացցուք յաջմէ քումմէ ընդ սուրբս և ընդ սիրելիս անուանդ քո սրբոյ. և ժառանգեսցուք ըզ պատրաստեալն 'ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց զարքայութիւնդ։ Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ հօր և ամենասրբոյ հոգւոյդ. այժմ և միշտ։

Տէր մի մատներ զմեզ իսպառ վասն ող
անուանդ քում սբյ. մի ցրեր զուխտըս քո. և մի 'ի բացեայ առներ
զողորմութիւնս քո 'ի մէնջ։

Վասն աբրահամու սիրելւոյ քո, իսահակայ ծառայի քոյ, և իսրայէլի սրբոյ քոյ։

Տէր՝ մի մատներ զմեզ իսպառ վն անուանդ քում սբյ. մի ցրեր զուխտըս քո. և մի 'ի բացեայ առներ
զողորմութիւնս քո 'ի մէնջ։

Երգ տեառն Ներսէսի.

Նահապետին աբրահամու հայց- բձ
մամբն ընկալ տէր զաղաչանս։ Եւ
ծառային քում սահակայ խընդրը-

ուածո՛վք 'ի մեզ գըթա՜: Րենաւոր-ւի՛ն խաչելո՛յ: Սիրով սրբո՛յն 'ի մեզ խնայեա: Երեքսրբեա՛ն երիւք սո-ցի՛ն: Սրբեա զհոգի՛ զմիտս և ըզ մարմի՛ն:

Քարոզ:

Աղաչեսցուք զկենսատու փրկիչն մեր քրիստոս՝ որ կամաւոր խաչե-լութեամբն իւրով զարարածս փրկ-եաց. և հեղմամբ արեան իւրոյ՝ զթողութիւն շնորհեաց յուսացե-լոց իւրոց: Ամենակալ տէր աստ-ուած մեր, կեցո և ողորմեա:

Աղօթք:

Անկեալ առաջի քոյ բարերար և բազումողորմ աստուած՝ աղաչեմք ամենայն սրտիւք մերովք և խնդ-րեմք զթողութիւն 'ի քէն. որպէս խոստացար ծառայից քոց և աս-ցեր՝ զամենայն զոր ինչ խնդրիցէք հաւատով յանուն որդւոյ 'ի հօրէ, տացի ձեզ: Շնորհեա և այժմ հա-ւատացելոցս 'ի քեզ՝ և կատարեա

՚ի բարի զխնդրուածս մեր. զի ՚ի քեզ եմք ապաւինեալ։ Եւ քո աւատ ողորմութեամբդ մխիթարեա զմեզ ՚ի կեանս յայսմիկ. և առաջնորդեալ հասո յանձառ երկնից արքայութիւնդ, ՚ի փառաբանութի և ՚ի պատիւ ամենասուրբ երրորդութեանդ. այժմ և։

Յիշեա տէր զպաշտօնեայս քո։

Բարերար և բազումողորմ ած՝ քո։

Սաղմոս ճժդ

Սիրեցի՝ զի լուիցէ տէր զձայն աղօթից իմոց. զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս, և ես յաւուրս իմ կարդացի առ նա։

Շրջեցան զինեւ երկունք մահու. և վիշտք դժոխոց գտին զիս։

Զնեղութիւն և զանձկութի գտի, և զանուն տեառն կարդացի։

Ո՛ տէր՝ փրկեա զանձն իմ. ողորմած աստուած մեր ողորմի՝ և պահէ ըզ տղայս տէր։

Ես խոնարհ եղէ՝ և տէր կեցոյց զիս. դարձ անձն իմ ՚ի հանգիստ

քո. զի տէր օգնեաց քեզ։
Փրկեաց զանձն իմ ՚ի մահուանէ,
զաչս իմ յարտասուաց. եւ զոտս իմ
՚ի գայթակղութենէ, հաճոյ եղէց
առաջի տն՟ յերկրին կենդանեաց։
Հաւատացի զոր եւ խօսեցայ. եւ ես
խոնարհ եղէ յոյժ։
Ես ասացի ՚ի զարմանալ իմում, թէ
ամենայն մարդ սուտ է։
Զինչ տաց տրիտուր տեառն ընդ
ամենայնի՝ զոր ետ ինձ։
Զբաժակ փրկութեան ընկալայց,
եւ զանուն տեառն կարդացից։
Զաղօթս իմ տեառն տաց՝ առաջի
ամենայն ժողովրդեան նորա։
Պատուական է առաջի տեառն մահ
սրբոց իւրոց. ո՜վ տէր ես ծառայ քո
եմ, ծառայ եւ որդի աղախնոյ քո։
Հատեր զկապանս իմ. քեզ մատու-
ցից պատարագ օրհնութեան, եւ
զանուն տեառն կարդացից։
Զաղօթս իմ տեառն տաց առաջի
ամենայն ժողովրդեան նորա. ՚ի գաւ-
ւիթս տան տեառն, եւ ՚ի մէջ քո

Երուսաղէմ։

Օրհնեցէք զտէր ամ ազգք. գո-
վեցէք զնա ամենայն ժողովուրդք։
Զօրացի ողորմութիւն նորա ՚ի վե-
րայ մեր. և ճշմարտութի տեառն
մնացէ յաւիտեան։
փառք հօր և որդւոյ և.։

Շարական տէրունեաց և մարտիրոսաց։

Որ ստեղծմամբ ըստ պատկերի քո ած
տէր պատուեցեր զմեզ. ընկալ և
այժմ զննջեցեալսն ՚ի քեզ ուղիղ
հաւատով. ըստ մեծի քում ողոր-
մութեան։ Որ շնորհօք քո հոգ-
ւոյն լուսաւորեցեր. յիշատակի ի-
րեանց զհոգիս նոցա ընկալ մարդա-
սէր. ըստ մե։ Որք հաղորդեցան
մարմնոյ և արեան քո տէր. հան-
գո զհոգիս նոցա ընդ սուրբս քո
քրիստոս աստուած. քանզի գինք
սուրբ արեան քո են։ Միայն օրհ-
նեալդ ՚ի կանայս. մայր և միշտ
կոյս և իմանալի լոյս. ծնունդ ատա-

չի՛ն մերոյ անդադա՛ր բարեբանես-
ցո՛ւք ։

ակ Արարիչ աստուած և ըստեղծիչ
ազգի մարդկա՛ն. մի՛ անտես առ-
նէր զննջեցեալսըն մեր. այլ հան-
գո՛ զհոգիս նոցա ընդ սուրբս քո՛։
Որդի՛դ միածի՛ն յարութիւն տիե-
զերա՛ց. մի՛ անտես առ ։ Հոգի՛դ
ճշմարիտ մըխիթարիչ սըգաւորա՛ց.
մի՛ անտես առ ։ Հոգւոյն ըզքեւ
հովանացեալ միա՛յն սըրբուհի. ծը-
նար զբա՛նն աստուած զանճառել-
ւո՛յ հօր ծընունդ. և յայտնեցա՛ւ
միութիւն երրո՛րդութեա՛նն ։

բծ Որ կոչեցեր առ քեզ տէր ըզտիե-
զերս ամենայն. ընկալ զմեր զնըն-
ջեցեալսն ՚ի գոգ նահապետին աբ-
րահամու. ողորմա՛ծ տէ՛ր փրկի՛չ
և բարերա՛ր ։ Որ թողութեանց ես
տուող աստուա՛ծ. թող զմեղս մեր
նընջեցելոցն. կա՛րող յամենայնի և
հըզօր. ողոր ։ Որ լուսատու ես տի-

եղերաց քրիստոս աստուած · լու-
սաւորեա՛ և զմեր ըզննջեցեալսն
լուսով երանաւէտ զուարթնոցն ·
ողոր ։ Յոյս մեր և ապաւէ՛ն մայր
տեառն և կոյս սուրբ · որ հուր
աստուածութեն ոչ բոցակիզեաց
զքո սուրբ զորովայն · բարեխօսեա՛
առ տէր վասն մերոյ փրկութեան ։
Որ որդիդ ես և բանդ աստուած · բկ
հաւասարակից ընդ հօր յէութե ·
առ քեզ կարդամք մարդասէր · հան-
գո զհոգիս ննջեցելոց մեր ընդ սրբս
քո ։ Որ իջեր յերկնից վասն մեր ·
զառաջինն առեր զյանցանսն ադա-
մայ · մերով բնութեամբ բարձեր
'ի վերայ խաչին անարատ ձեռօք ·
հանգո ։ Որ լուծեր զիշխանութի
մահու · կամաւորական մահուամբ
քո քրիստոս · բանաւորաց զաղաչա-
նս առաջի քո հեղեալ մաղթեմք ·
հանգո ։ Տիրուհի անարատ մայր
տեառն և կոյս մարիամ · քրովբէա-

կան աթոռ զքեզ տեսաք 'ի յերկ-
րի․ բարեխօսեա առ տէր վասն
մերոյ փրկութեան։

գձ Հայր բարեգութ որ գթացար 'ի
յազգս որդւոց մարդկան․ առաքե-
ցեր զմիածինդ 'ի փրկութիւն․ յի-
շեա՛ զհոգիս ննջեցելոց մերոց․ և
հանգո ընդ սուրբս քո։ Որդիդ մի-
ածին որ յարեարդ 'ի մեռելոց․ 'ի
միւսանգամ գալըստեանըն քո յա-
րութիւն մեզ խոստացար․ յիշեա։
Հոգիդ ճշմարիտ մխիթարիչ սգա-
ւորաց․ աղաչանօք սուրբ ածած-
նին և ամենայն քոց սրբոց․ յիշեա։
Ի բարեխօսութի փութացիր մեզ
սուրբ աստուածածին․ առ 'ի փըր-
կել զժողովուրդս 'ի մեղաց և յա-
պականութենէ։

գկ Յանսկզբնական ծոցոյ հօր խոնար-
հեալ բանդ մարմնացար 'ի կու-
սէն վասն փրկութեան մերոյ․ ա-
ղաչեմք զքեզ․ զննջեցեալսն մեր 'ի

քեզ ուղիղ հաւատով. յիշեա՛ տէր
յորժամ գա՛ս թագաւորուե̃դ քո՛։
Ընտրական քաղցրութեա՛մբ որդի
աստուծոյ. հաճեցար բանալ ըզ
մեզս աշխարհի՛ քո խաչելութե՟ն.
աղա։ Կամաւորական մահուամբ քո
լուծե՛ր զերկուս մահու. և ար
ժանի արարեր թողութեան յան
ցանց՛ քաւիչ քո արեամբ. աղա։
Որ փոխանակ մեղաւորաց զմեռա
նի՛լ յանձն առեր. իջանելով 'ի դը
ժոխս փրկեցեր 'ի մեղասէ՛ր բան
տէն զգերեալսն. աղա։ Բարեբա
նեալք զանչափ քո՛ զմարդասիրուե̃դ.
որ երեքօրեայ յարուցեալ զկենդա
նութիւն պարգևե՛ցեր աշխարհի.
աղա։ Մաքուր և անբի՟ծ կոյս յետ
ծննդեան. որ մարմնով ծնար
զարձակո՛ղն 'ի կապից մահու. բա
րեխօս լեր մե̃ անձանց մերոց. փըր
կել 'ի սպա՟ռնալեաց գեհենո՛յն։
Յորժամ հարկանի փո՛ղ գա՛լըստեա՛ն դձ

քո՛ տէր. յայնժամ զարհուրեալ
դողա՛ն արարածք ՚ի յահէ՛ քում
մե՛. աղաչեմք ըզքեզ փրկիչ. հան-
գո՛ և զմեր զննջեցեալսն ընդ սրբս
քո. որ միա՛յնդ ես բազմողորմ:
Յահաբեկ լուսոյ ծագման քո տր.
ցընծան դասք անուաքին նեայն ՚ի
վերայ լուսեղէն ամպոյն. աղա-
Ընոխակալ բազմագութ ողորմած
տէր. մի՛ անտես առներ զմեղու-
ցեալքս յահագին աւուրն. որ մի-
ձր իջեր ՚ի յերկնից և մարմնացար
՚ի սուրբ կուսէն. անճառելի քո-
յին ծննդեամբդ. և զիս մի՛ ան-
տես առներ. այլ պահեա՛ պատ-
ուական և սուրբ խաչիւ քո:
դկ Որ թագաւորդ ես յաւիտենից քս
ած. ընկալ զծառայս քո ՚ի բարի.
և շնորհեա ՚ի յաջակողմեան քում
դասիդ: Որ ունիս իշխանութիւն
մահու և կենաց. հանգո զհոգիս
քոց ծառայից. և: Յորժամ կարգէ

աթոռ տէրութեանդ քո. և հաստատի ատեան դատաստանին. յայնժամ խնայեա՛ 'ի ծառայս քո. Ե՛: Ամենօրհնեալ ածածին մարիամ. քերովբէական աթոռ արարչին մերոյ տնօրէնութեա՛ն. զո՛ր երանե՛ն ամենայն ազգ՛ք հանապազ:

Հոգւոյն հանգուցելոց քրիստոս աստուած՝ արա հանգիստ և ողորմութիւն. և մեզ մեղաւորացս՝ շնորհեա զթողութիւն յանցանաց: մաղ

Եւ ևս խաղաղութեան զտէր ա:

Վասն հանգուցեալ հոգւոյն աղաչեսցուք զփրկիչն մեր քրիստոս՝ զի զնոսա ընդ արդարսն դասեսցէ. և զմեզ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ տէր: Տէր ողորմեա. տէր ողոր. տէր ո: քրզ

Աղօթք:

Քրիստոս որդի աստուծոյ անոխակալ և բարեգութ՝ գթա քո արարչական սիրովդ 'ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց: Յիշեա յա

ւուր մեծի գալստեան արքայութե՛ քոյ։ Արա արժանի ողորմութեան՝ քաւութեան և թողութեան մեղաց։ Դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քոյ յաջակողման դասուն։ Զի դու ես տէր և արարիչ ամենեցուն . դատաւոր կենդանեաց և մեռելոց ։ Եւ քեզ վայելէ փառք իշխանութի և պատիւ , այժմ ։

Օրհնեալ տէր մեր յս քս , ամէն ։

Հայր մեր որ յերկինս ես ։

Մաղթանք ։

Զսաղմոսերգութիւնս և զաղաչանս ընկալցի մարդասէրն աստուած , ՚ի հաճոյս բարերար կամաց իւրոց . մեր մեղացն և բազում յանցանացն թողութիւն շնորհեսցէ . ՚ի չարեաց փրկեսցէ . ՚ի մեղաց պահեսցէ . և նմա փառք յաւիտեանս . ամէն ։

Օրհնեալ թագաւորութիւն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ , այժմ և միշտ և ։

Եւ ապա ժամամուտ ըստ կարգի աւուրց պահոց, և տօնից տէրունականաց, և ամենայն սրբոց ։

Որ 'ի հօրէ առաքեցար փրկիչ և պահ
մարմնացար 'ի սրբոյ կուսէն. որ բշ
վասն մեր 'ի յերկնից իջեր և լու- գշ
սաւորեցեր զտիեզերս ։ Զխաղա- եշ
ղութիւն քո տուր մեզ տէր, որ
խաղաղութեանց ես թագաւոր.
զխաղաղութիւն և զողորմութիւն՝
որ յամենայնի ես դու կարող մար-
դասէր ։

Որ ըստ ամենայն միտս անցանես, գշ
զխաղաղութի քո աստուած տուր ուր
մեզ հանապազ՝ զքեզ աղաչեմք ։
Միածին որդի և բանդ աստուած կիր
և անմահ էութիւն, որ յանձն ա-
ռեր մարմնանալ 'ի սրբուհւոյ ա͞ծ-
ածնէն և 'ի միշտ կուսէն. անփո-
փոխելի մարդ եղեալ խաչեցար
քրիստոս ա͞ծ մեր. մահուամբ ըզ-
մահ կոխեցեր. մինդ 'ի սրբոյ եր-
րորդութենէն՝ փառաւորակից ընդ
հօր և սրբոյ հոգւոյն՝ կեցո զմեզ ։

ծնն Աստուածածին անհարսնացեալ՝ ըղ-
բանն անսկիզբն յղացար և զաստ-
ուածն անխառնալի ծնար. զանպա-
րագրելին 'ի գիրկս քո բարձեր. նը-
մա անդադար բարեխօսեա վասն
անձանց մերոց:

ծնն Աստուածածին զքեզ խոստովա-
նեալ երկրպագէ եկեղեցի ուղղա-
փառաց. քանզի՝ ուր քերովբէքն
բազմաչեայք և աթոռք հրանիւթք
և վեցթեւեան սերովբէքն նայիլ
ոչ իշխէին, կրեցեր անսերմնապէս
զանապականումն 'ի յարգանդի
քում որպ աղախին զտէր. և ծը-
նար որպէս զմարդ զաստուածն բո-
լորից զմարմնացեալն առ 'ի քէն
զանճառ զբանն 'ի փրկութիւն աշ-
խարհի և կեանս անձանց մերոց:

ծնն Աղաչեմք զքեզ սուրբ կոյս մարի-
ամ աստուածածին՝ բարձրելոյն զօ-
րութեամբն հովանաւորեալ և սր
հոգւոյն եկաւորութեամբն լուսա-
ւորեալ. որ զամենայն գոյութեց
ստեղծիչն յղացեալ ծնար անձա-

ռապէս. մարմնացելոյն առ 'ի քէն
բարեխօսեա կեցուցանել զանձի
նըս մեր:

Ծերունին այսօր սիմէօն՝ հոգւովն գայր 'ի տաճարն՝ երեւելով քերովբէիցն վեհագոյն, զի որոց Թեւօքն սաւառնեալ ոչ իշխէին հայիլ 'ի յահեղ փառացն, սա 'ի գիրկս իւր բարձեալ համբուրէր համարձակապէս և գգուէր որպէս զմանուկ. և աղերսելով հայցէր արձակիլ 'ի խաղաղութիւն ձն ը / առջ

Անսկզբնական բանդ աստուած, 'ի վերջին աւուրս յանձն առեր լինել մարդ 'ի կուսէն. և արարիչդ յաւիտենից՝ փակեցար ընդ ժամանակաւ. սուրբ, տէր սրբութեանց և անկարօտ մաքրութեանց. եկիր 'ի տաճարն քառասնօրեայ, զօրինացն կատարեցեր զարդարութիւն: Զոր բարձեալ սիմէօնի զանպարագրելիդ 'ի գիրկս իւր հայցէր, որ արձակիչդ ես կապելոց՝ արձակեա զիս 'ի խաղաղութիւն: Վասն որոյ՝ ընդ ձն ը̃ / առջ

ծերունույն սիմէօնի վերագոչեմք
առ քեզ տէր, ո՜վ` ո՜վ` ո՜վ` տէր
զօրութեանց, լի են երկինք և եր-
կիր փառօք քովք 'ի փրկութիւն
մեզ քրիստոս ած, փառք քեզ։

շաղ Օ ղազարու ննջումն` որպէս կան-
խագէտ յառաջ ասէիր. որ և 'ի բե-
Թանիա յառաջէիր` զի յարուցես
զսիրելին քո։ Արդ` և մեք գոչելով
ասեմք, օրհնեալ որ գաս 'ի չարչա-
րանս կամաւ հօր` 'ի փրկութիւն
անձանց մերոց։

շաղ Յորժամ եկեալ կենարարդ 'ի գե-
րեզմանն ղազարու. յորժամ եկեալ
կենարարդ 'ի գերեզմանն ղազարու.
աւետաւոր ձայնիւդ աղաղակէիր
ասելով` ղա՛զարէ` արի եկ արտաքս։
իսկ մեռեալն 'ի գերեզմանէն յար-
եաւ. և նոյն ինքն զանմահութե
պարգևեսդ ետուր սիրելւոյդ, և
աստուածային ձայնիւդ 'ի գերեզ-
մանէն կոչեցեր։ Վասն որոյ` և ման-
կունք եբրայեցւոց ոստովք օրհնէ-
ին զանմահ Թագաւորութիւն քո։

Ընդ նոսին և մեք ասեմք, միաբան-
նայ՝ օրհնեալ է գալուստ քո. օրհ-
նութիւն 'ի բարձունս, օրհնեալ
որ գալոցդ ես անուամբ տեառն։

Ցնծա երուսաղէմ և զարդարեա ծաղ
զառագաստ քո սիոն. քանզի՝ ահա
թագաւոր քո քրիստոս նստեալ 'ի
յաւանակի նորոյ՝ հեզութ̃ի ցու-
ցանելով գայ մտանէ յառագաստ
քո։ Եւ մեք աղաղակեմք, միաբան-
նայ օրհնեալ եկեալ 'ի յանուն
տ̃ն. որ ունի զմեծ զողորմութ̃ի։

Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց. զատ
մահուամբ զմահ կոխեաց. և յա-
րութեամբն իւրով մեզ զկեանս
պարգևեաց. նմա փառք յաւի-
տեանս ամէն։

Ահաւոր և սքանչելի է խորհուրդ յին
փրկութեան մերոյ. որ անսկիզբն
'ի հօրէ անճառաբար մարմնացաւ
'ի կուսէն. խաչի համբերելով և
կամաւոր մահուամբն իւրով զկեն-
դանութեան մեզ պարգևեաց շը-
նորհս։

յին Բանզի յարեաւ 'ի մեռելոց քս
աստուած յաւխտենից՝ արարիչ և
յարութիւն ազգի մարդկան. զոր
օրհնեն անդադար զինուորութիւք
հրեշտակաց և ամ զուարթունք
երկնից։ Ընդ որս գոչելով ասեմք,
փառք սոսկալի յարութե քո տր։

հմբ Ի խացան վերնական բազմութիւքն
տեսանելով զքեզ 'ի հրեղէն կառս
բազմեալ՝ սարսեալ ասէին. ո՛վ է
սա որ զխմեալ գայ յեդովմայ. և
եկեալ մտանէ փառօք 'ի փառս.
տէր փառք քեզ։

հմբ Որ յանպատում աթոռ նստիս և
յանմարմնոցն վեր օրհնիս, անհա-
սանելի բանդ աստուած, 'ի յերկ-
րի երեւեցար ճշմարիտ մարդ. ըզ
տնօրէնութեանն կատարեալ զխոր-
հուրդ, խաչի և մահու համբերե-
ցեր. և զհրաշալի զյարութիւնդ
քո ցուցեր հզօր զօրութեամբ. այ-
սօր համբարձար փառօք 'ի յերկի-
նըս և զկուսածին մարմինդ քո հը-
րաշափառապէս լուսազարդեցեր.

զոր տեսեալ եսայիաս՝ նախաձայ-
նեալ ասէր, ո՞վ է սա որ դիմեալ
գայ յերկրէ: Հիացեալ պետութեանց
երկնից գոչէին առ միմեանս, Համ-
բարձէք իշխանք դրունս ձեր 'ի
վեր և մտցէ Թագաւոր փառաց:
Որդ՝ որ յամենայնի կարող ես և
հզօր, շնորհեա և մեզ հանդիպիլ
քեզ ամպովք 'ի միւսանգամ քո
գալստեանդ. որ միայնդ ես մար-
դասէր:

Աստուած զքեզ խոստովանիմք ըղ- Հոգ
սուրբ հոգիդ և երկիրպագանեմք.
որ ես պատճառ կենդանութեան
եղելոցս և խաղաղարար աշխարհի.
որ զորդիութիւն աշակերտայն
բազում գիտութեամբ լցեր. և 'ի
հրեղէն լեզուս բաժանեալ անճա-
ռելեօք ցուցար նոցա. աղաղակեմք
տէր, խնայեա և կեցո զմեզ:

Այսօր 'ի հրեղէն լեզուս բաժա- բշ
նեալ հանդեպ առաքելոցն՝ լու-
սաւորելով զնոսա. և այժմ աղա-
չեմք զքեզ սուրբ հոգիդ ած, որ

ես պատճառ կենդանութեան ե-
ղելոց և խաղաղարար աշխարհի,
խնայեա և կեցո զմեզ:

գՀ Վասնորոյ և մեք զհոգիդ սուրբ
աստուած ընդ հօր և ընդ որդւոյ
միասնական խոստովանիմք. և հայ-
ցեմք մեզ 'ի վերնատուողէդ զհո-
գեւորական խաղաղութիւնդ.
տէր փառք քեզ:

վար Երեւի տէրդ այսօր աշակերտա-
ցըն 'ի թաբօրական լերինն. և ա-
շակերտացդ զարհուրեալք աղա-
ղակէին ասելով. արասցուք երիս
տաղաւարս՝ մի տեառնդ, և մի մով-
սիսի և մի եղիայի: Որդ՝ և մեք բա-
նաւոր հօտքս երգեմք ընդ քո ճըշ-
մարիտ վկայիցդ. առաքեա 'ի մեզ
զլոյս քո շնորհացդ 'ի քոյ միւսան-
գամ գալստեանդ և կեցո:

խաչ Առաջի պատուական ամենայաղթ
խաչի քոյ անկանիմք երկրպագելով
և խնդրեմք զթողութիւն յանցա-
նաց մերոց. քանզի սովաւ բարձեր
զդատապարտութիւն ազգի մարդ-

կան ։ Եւ այժմ վասն որոց ա͞ծային
քոյ նշանի՝ շնորհեա զերկնային ըղ-
խաղաղութիւնդ ա͞մ աշխարհի ։

Տէր մեր և փրկիչ յիսուս քրիս- էջ-
տոս, որ աղօթիւք և միջնորդու͞թ միա-
բազմաչարչար վկային քոյ և հօրն ծնի
մերոյ սրբոյն գրիգորի լուսաւորչին,
մեծաւ փառօք և բազմութեամբ
զօրացդ լուսեղինաց իջեր յերկնից
՚ի դաշտն արարատեան, ՚ի յայտե-
լութիւն փոքու հօտիդ քոյ ազգիս
հայոց՝ և ՚ի ցուցումն յատկակա-
նի սիրոյդ և մեծի ողորմութեանդ.
և ոսկէուռամբ բաղխեցեր զխորս
անդնդոց, և հալածեցեր զգունդս
սանդարամետականաց. ուր և լու-
սաձեւ յօրինմամբ հրաշակերտե-
ցեր զմայր աթոռն մեր զսուրբ էջ-
միածինն. և արարեր զնա շտեմարան
անսպառելի շնորհացդ աստուա-
ծայնոց՝ ՚ի լինիլ ծնող՝ դաստիարակ
և կատարելագործիչ ամենայն եկե-
ղեցեացս հայաստանեայց ։ Արդ՝
պահեա զնա անարատ, հաստա-

տուն և անաղօտ, 'ի պայծառազար-
դութիւն եկեղեցեացս մերոց և
մանկանցս սոցին մինչև 'ի կատա-
րած աշխարհի. յորոց միշտ փառա-
ւորի ամենասուրբ անուն քո յա-
ւիտեանս յաւիտենից ամէն:

եկգ Օ խաղաղութիւն շնորհեա եկե-
ղեցւոյ քում սրբոյ, զխաղաղուի
և զանշարժութիւն 'ի թշնամեաց
պատերազմէ. և հաստատեա 'ի մի
հաւատ զկաթուղիկէ եկեղեցի.
զքեզ խոստովանիմք տէր և աստ-
ուած կեցո զմեզ:

յօհ Օ յառաջընթացութիւն քո և ըզ
կարապետութիւն աստուծոյ բա-
նին խափանել կարծելով՝ որ 'ի ձե-
ռըն կնոջն զնախաստեղծն 'ի դրախ-
տէն արտաքս ընկէց: Նաև այժմ
զհռօդիադա անօրէնութեամբ բոր-
բոքեալ, և բազմելոցն հերօդիայ՝
զկաքաւս ոտից աղջկանն հաճոյա-
ցոյց՝ զի զքոյդ հատցէ զգլուխ որ
զամենեցուն ձեռնադրեցեր զգլու-
խըն քրիստոս: Այլ դու որ յանա-

պատէ բարբառոյ ձայն, գոչեմ ու-
րում ձեռնադրեցեր պարգեւել
զխաղաղութի և զմեծ զողորմութի։

— ստի —

Յնծա այսօր ցնծա և զուարճացիր
կաթուղիկէ եկեղեցի սուրբ՝ յիշա-
տակաւ սրբոյն ստեփաննոսի նա-
խավկային քրիստոսի վկայեցելոյ
հօր։ Որ աղօթիւք բանայր զերկի-
նըս զոր փակեաց ադամ. և հրեշ-
տակակերպ տեսլեամբ տեսանէր
զկերպարանն հօր 'ի կերպի ադամայ
նստեալ 'ի յաթոռ փառաց։ Որ
ըզազմութիւն քարանցն որպէս ըզ-
ծաղիկս հաւաքելով՝ բոլորէր պսա-
կըս փոխանակ փշոցն և եղէգանն։
Եւ զմարտիրոսական արիւնն իւր
խառնէր ընդ փրկական արեանն
քրիստոսի հոսեցելոյն 'ի կողէն։ Վե
րոյ՝ գերազանցեալ 'ի փառս ա-
ռաւել քան զամենայն ըս՝ հայ-
ցէ և վասն մեր 'ի վերնաստուղէն
զպարգեւս կենաց անխափանից և
զմեծ զողորմութիւն։

Յորովայնէ ընտրեալ սուրբն ստե- — ստի —

փաննոս, յորովայնէ ընտրեալ սբ̃ն ստեփաննոս. վկայ ճշմարիտ առաքելական քարոզութեանցն. որ 'ի վերայ անօրէն քարաձգողացն աղօթէր առ քրիստոս աստուածդ ասելով՝ մի՛ համարիր սոցա զայս մեղս։ Արդ՝ 'ի ձեռն սորին բարեխօսութեանն շնորհեա մեզ տէր ըզ մեծ քո ողորմութիւնդ։

Լուս Ցնծայ այսօր ցնծայ և զուարճանայ եկեղեցի սուրբ՝ տօնելով մեծաւ հանդիսիւ զհանրատենչ յիշատակս քո՝ ո՛վ գերազանցեալդ 'ի հարս սուրբ հայրապետ և լուսաւորիչ տանս թորգոմայ սուրբդ գրիգորիոս։ Որ քոյով անտանելի չարչարանօքդ զաշխարհս ամենայն հիացուցեր։ Անօրինակ ճգնութբ̃դ զհրեղէնսն զարմացուցեր. որք և գունդ գունդ յերկնից 'ի յերկիր խոնարհեալ՝ 'ի տես հանդիսի նահատակութեանդ փութային։ Եւ անհամեմատ համբերութեամբդ զգոռոզացեալ արքայն խուրական զօ-

րջքն ընդ ոտիւքդ նուաճեցեր ։ Եւ
աստուածահաճոյ աղօթիւքդ զկու-
րացեալ միտս նոցին լուսաւորե-
ցեր և աւետարանին քր̃ի պաշ-
տօնեայս արարեր ։ Ընդ նմին և զազ-
գըս հայոց նորոգ հոգեւոր ծընըն-
դեամբ 'ի լոյս աստուածգիտութե̃
ածեր ։ Վասն որոյ և յատկապէս
լուսափայլեցար 'ի մէջ ամենայն
սրբոց, և զառաքելականն ընկալար
զաթոռ և զպատիւ, և ընդ նոսին
պսակեցար 'ի քրիստոսէ աստուծոյ ։
Արդ` ով հայր մեր և լուսաւորիչ
հոգւոց մերոց. աղաչեմք զքեզ մի-
աբան ուխտիւք եկեղեցւոյ քոյ,
զի յաւուրս հրաշալւոյ տօնի քոյ,
յատկապէս բարեխօսիցես առ քս̃
աստուածն մեր, զի զեկեղեցիս և
զմնացորդս ժողովրդեան քոյ պա-
հեսցէ 'ի խաղաղութեան` փրկե-
լով 'ի հոգեւոր և մարմնաւոր թըշ-
նամեաց. զի և մեք միշտ զյիշատա-
կըս քո կատարելով` փառաւորես-
ցուք զհայր և զորդի և զսուրբ հո-

գին յաւիտեանս ամէն ։

լուս Գրիգոր սուրբ քահանայապետ՝ որ զհաւատս ուսուցեր և զբանակս դիւացն հալածեցեր ․ մարդկան ուսուցեր քարոզել զերրորդութին , պսակեցար յարքայութեանն ․ արդ բարեխօս լեր առ տէր վասն մեր ։

առ.ք Առաքեալք և վկայք քրիստոսի աստուծոյ՝ ամենակալ հոգւոյն զօրութեամբն զամենեսեան ընդհանուր յորդէգրութիւն կենաց կոչելով , միաբանական սուրբ երրորդութեանն յորդորեցին երգել ընդ փառս 'ի յաւիտեանս ամէն ։

որդ. օրհու Այսօր ահաւոր ձայնք որոտման հնչեցին յերկնից 'ի յերկիր՝ կոչելով յորդէգրութիւն զմեզ վերնոյն սիօնի ․ հաստատութիւնքն հաւատոյ և պարծանքն եկեղեցւոյ , որք ցօղով արեան իւրեանց մաքրեցին զտիեզերս յանօրէն կռապաշտուեց ․ և միշտ հայցեն 'ի քրիստոսէ զքաւութիւն տօնողացս անուանց իւրեանց ։ Արդ՝ մաղթանօք սոցա տր՝

խնայեա 'ի փրկեալ քո ժողովուր-
դըս որ միայնդ ես մարդասէր ։
Տէր, որ հիմնեցուցեր զեկեղեցի մրգ.
քո 'ի վերայ վիմի հաւատոյ, և կար-
գեցեր 'ի սմա առաքեալս և մար-
գարէս, հովիւս և վարդապետս՝
առ 'ի հաստատուն մեզ. և ճըգ-
նութեամբ վկայից զթշնամին սորա
վանեցեր. 'ի խաղաղութեան զսա
պահեա ա̃ծ որպէս մարդասէր ։
Օ հայրապետականն զարդարեցեր հայր
աթոռ 'ի յերկրի, առաքելական ա-
ւեր զպատիւ յերկնուստ՝ ծառայ
քրիստոսի, ով երանելիդ 'ի հայրս
սուրբ հայրապետ ։ Քանզի՝ քո վար-
դապետութեանդ սերմունք՝ բա-
րեպաշտութեան բուսուցին հա-
կըս, ուրախութիւն պտուղ հատու-
ցանելով և հաւատացելոցս փըր-
կութի̃ շնորհելով. վն̃ որոյ բարեխօ-
սեա առ տէր վն̃ անձանց մերոց ։
Որպէս յետ աստուածասէր թա- թագ.
գաւորին իսրայէլի եզեկիայ՝ յարոյց
ա̃ծ զյովսէ՝ որ զամենայն կռապաշ-

տութիւնն 'ի բաց ընկէց. որպէս և զբարեպաշտն կոստանդիանոս, որ զարիոսի զմոլութիւն խափանեաց. և զմեծն թէոդոս յարոյց աստուածային նախանձուն վառեալ՝ ընդդէմ այնոցիկ, որք զսուրբ հոգին հայհոյէին: Արդ՝ ով աստուածարեալ և ուղղափառ սուրբ թագաւոր՝ աղաչեմ զտէր 'ի փրկել զմեզ 'ի մարդապաշտ հայհոյութէ. զի և մեք տօնեսցուք զյիշատակս քո՝ խնդրելով 'ի քրիստոսէ զհաշտութիւն և զմեծ ողորմութիւն:

Թագ. Որպէս յետ աստուածասէր թագաւորին իսրայէլի եզեկիայ՝ յարոյց աստուած զյովսէ՝ որ զամենայն կռապաշտութիւնն հնոյ ժողովրդեանն 'ի բաց ընկէց, որպէս և 'ի նորումս յարոյց զանդրանիկն թագաւորաց զբարեպաշտն աբգարիոս, որ 'ի հեռաստանէ ծանեաւ զերկնաւոր թագաւորն զքրիստոս. և եղեւ քարոզ աստուածութեանն նորա ընդ ծագս տիեզերաց: Յետ

նորին և զմեծն տրդատիոս, որ խա-
պառ հալածեաց զդիւամոլ կռա-
պաշտութիւնսն յաշխարհէս հա-
յաստանեայց, և զարդարեաց ճըշ-
մարիտ և ուղղափառ հաւատով։
Արդ՝ ով աստուածարեալ և բարե-
պաշտ սուրբ թագաւոր, աղաչեա
զՏ̃ր, 'ի փրկել զմեզ յանօրէն բըռ-
նաւորաց. զի և մեք տօնելով զյի-
շատակս քո՝ խնդրեսցուք 'ի ք̃է ըզ-
խաղաղութ̃ի և զմեծ զողորմութի։ մրտ
Ի տաճարի սրբոց և յիշատակի սր̃ց
մարտիրոսաց՝ զձեռս համբառնա-
լով աղաչեմք. բարեխօսութեամբ
սոցա և աղօթիւք՝ զկենդանու-
թիւնս մեր խաղաղացո աստուած
որպէս մարդասէր։

Զինաւորք քրիստոսի, որք տանջա- ճգն
նաց անօրինացն համբերեցիք և ըզ-
մոլութիւն կռոցն խափանեցիք.
դասաւորեալք ընդ հրեշտակս 'ի
յերկինս, ունիք զհամարձակութ̃ի
'ի ք̃է՝ բարեխօսեցէք կեցուցա-
նել զանձինս մեր՝ զձեզ աղաչեմք։

հռ․ ի Որք ծագեցան մեզ յարեւմտից որ-
պէս զարեգակն, եւ լուսաւորեցին
համանգամայն զաշխարհս Հայաս-
տանեայց․ փարատեցին զխաւարն
անգիտութեան կռապաշտութե․
եւ լուսաւորեցին զամենայն հոգի
հաւատով աստուածգիտութեան։
Սոցա բարեխօսութբն քրիստոս
աստուած՝ պարգեւեա աշխարհի
քում զխաղաղութիւն․ եւ ան-
ձանց մերոց զմեղաց թողութիւն․
որպէս մարդասէր տէր։

գ․ այ Զյաղթանակ ձեր զհանդէս զո-
ւարճացեալ տօնէ եկեղեցի որք
քանզի սրբութբ ստացայք զկու-
սութիւն․ եւ 'ի մարմնի զանմարմնո-
ցըն ցուցիք զհանդէս։

կուս Հարսնացեալք քրիստոսի երկնա-
ւոր փեսային դստերք վերին սիօ-
նի․ խնդրեցէք 'ի քրիստոսէ զհաշ-
տութիւն եւ զմեծ ողորմութիւն։

վար-դ․նից Յաշխարհական 'ի ճակատամարտին,
յաշխարհական 'ի ճակատամարտին
եւ 'ի մեծ պատերազմին ընդդիմա-

մարտեալ լինէր անօրինացն պատե-
րազմ։ Իսկ երանելի Նահատակքն՝
զմոլութիւն անօրինացն խափանե-
ցին և յաղթող գտան. քանզի՝ ո-
րոց ստացեալ էր զաստուածային
զօրութիւն, ոչ ժուժկալէր նոցա
մարմնաւորական պատերազմ։ Արդ՝
քս̃ ա̃ծ՝ սոցա բարեխօսութեամբն
խնայեա ՚ի մեզ և ողորմեա։

Օրական և վկայ ճշմարիտ՝ քաջ գինս
նահատակդ քս̃ի սուրբդ (Ներսէս).
որ փոխանակեցեր զմարմինդ ընդ
հոգւոյդ քում փրկանս. և ոչ ա-
ծեր զմտաւ զսպառնալիսն անօրէն
բռնաւորացն։ Այլ վերին ազդե-
ցութեամբն դիտելով զայրեցումն
հոգւոց նոցա, վասն այնորիկ լու-
ցեր զտաճար կռոցն և անարգեցեր
զպաշտամունս նոցա։ Արդ՝ ՚ի յաղ-
թող պատերազմի տօնողացս զոր
նահատակութե քոյ, բարեխօսեա
առ սէր վասն անձանց մերոց։

Գնալով փառաց քոց ՚ի փառս կա- քուն
թուղիկէ եկեղեցի քո քրիստոս մ̃կն

մեծապէս պայծառանայ. քանզի՝
Թագաւորեալքն 'ի քէն դիմեալք
'ի յերկինս, 'ի սեբաստիա նահա-
տակին՝ 'ի յամօթ և 'ի քարընկէց
յերեսս բանսարկուին։ Որք և քա-
ջալերէին զմիմեանս, զի մի՛ լու-
ծեալ ոք բաղանեօք անցաւորիս
պսակսեսցի. այլ դողալով առաքի-
նաբար՝ զինքն ըղերձեալ 'ի յանիւս
աստուածային գանձուցն հոլովիցի
աղաղակելով առ քրիստոս։ Արդ՝
սոցա բարեխօսութեամբն՝ ընկալ
և զորդէգրութիւն ժողովոյս մերոյ
'ի յոյս սիրողաց քոց՝ ո՛ր փառք քեզ։

Երից ման

Որ 'ի վերայ քերովբէիցն հանգչիս
և 'ի զօրացն հրեղինաց օրհնաբա-
նիս, իջեր 'ի բաբիլօն և փրկեցեր
զերիս մանկունսն 'ի հրոյն բռնու-
Թենէ։ Որք աղաղակելով գոչէին
երգ նոր. ամենայն գործք օրհնեցէք
և բարձր արարէք։ Թագաւոր փա-
ռաց և արարիչ բոլորից, որ մար-
դասիրապէս գԹացար 'ի սք̃ման-
կունսն և փրկեցեր 'ի բորբոքեալ

բոցոյն. որք անարգեցին զբռնուի
թագաւորին և շիջուցին զզօրութի
հրոյն. ընդ նոսին և մեք քեզ վե-
րագոչեմք, փրկեա զմեզ 'ի հրոյն
յաւիտենից: Զի դու միայն ես
բազմագութ տէր՝ քեզ փառք յա-
ւիտեանս ամէն:

Զոր օրհնեն անլռելի ձայնիւ ի- Հրշ
մանալի զօրութիւնք՝ երկնաւոր նա-
հապետութիւնք. հրեշտակք և հր-
րեշտակապետք. աթոռք և տէրու-
թիւնք. իշխանութիւնք և պետու-
թիւնք. սերովբէք և քերովբէք՝ և
մեք օրհնեսցուք զնոյն ամենասուրբ
երրորդութիւնն և զմի ածութին:

Այսօր երկրաւորս եկեղեցւոյ քա- Հրշ
հանայապետութիւն, ցնծայ հրա-
շափառապէս՝ զերկնաւոր քահա-
նայապետութեանց կատարելով
զտօնախմբութեան տօնս: Եւ ընդ
անմարմնականաց և հոգեղինաց դա-
սուցդ՝ և մեք մարմնականքս և հո-
ղեղէնքս համաձայնեալ փառաւո-
րեմք զփառաւորեցեալն 'ի ձէնջ:

Արդ՝ ով սուրբ գաբրիէլ և միքա-
յէլ մեծ հրեշտակապետք բարձրե-
լոյն. և ամենայն զինուորութիւնք
երկնից, որք կայք միշտ առաջի ա-
թոռոյ աստուածութեանն. անդա-
դար բարեխօս լերուք վասն մեր
առ տէր, վերաբերել զմեզ զամե-
նեսեան ընդ ձեզ յերկնից արքա-
յութիւնն. և միաձայն բարբառով
երգել զփառս։

ձ̂մ սէց Բարեխօսութե̃ սրբուհւոյ աստ-
ուածածնին, սրբոյն յօհաննու կա-
րապետին, սրբոյն ստեփաննոսի նա-
խավկային, և սրբոյն գրիգորի մե-
րոյ լուսաւորչին. և սրբոց առաքե-
լոց և մարգարէից, հայրապետաց
և վարդապետաց, մարտիրոսաց և
թագաւորաց, ճգնաւորաց և կու-
սանաց, նահատակաց և միանձանց,
և ամենայն սրբոց քոց հնոց և նո-
րոց, յայտից և անյայտից, որոց
այսօր է յիշատակ. զխաղաղութի̃
և զերկնային ողորմութի̃ քո պար-
գևեա մեզ մարդասէր տէր։

Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչես- քրզ
ցուք. ընկալ կեցո և ողորմեա։
Օրհնութիւն և փառք Հօր և որդ-
ւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և։

Խաղաղութիւն ամենեցուն.

---

Խորագ։ Աւետեաց, ծննդեան, տեառնընդառաջին, վարդավառին, վերափոխման, և ամենայն տօնից աստուածածնին՝ ճաշու ձայն այս է։

Մեծացուսցէ անձն իմ. և այլն, 195։

Աղուհացին, ծաղկազարդին, հոգւոյ գալստեանն, խաչի, եկեղեցւոյ, և ամենայն կիւրակէից՝ ճաշու ձայն այս է։

Տէր թագաւորեաց՝ զվայելչութի
զգեցաւ, զգեցաւ տէր զօրութի
ընդ մէջ իւր էած։
Հաստատեաց զաշխարհ՝ զի մի սա-
սանեսցի. պատրաստ է աթոռ քո՝
'ի սկզբանէ յաւիտենանս դու ես։
Ամբարձան գետք տէր, և ամբար-
ձին գետք զձայնս իւրեանց. և յա-
րիցեն գետք 'ի գնացս իւրեանց։
Ի ձայնէ ջուրց բազմաց, սքանչելի
եղեն զբօսանք ծովու.

Աքանչելի ես դու տէր 'ի բարձու-
նըս. վկայութեանց քոց մեզ յոյժ
հաւատացաք:
Տան քում վայելէ սրբութի տէր՝
ընդ երկայն աւուրս:
Փառք հօր և որդւոյ և:

---

Զատկէն մինչև 'ի հոգւոյ գալուստն՝ այս է ճաշու-
ցոյն:

Գովեա երուսաղէմ զտէր:
Եւ օրհնեա զաստուած քո սիօն:
Զի զօրացոյց զնիգս դրանց քոց, և
օրհնեաց զորդիս քո 'ի քեզ:
Ո եդ զսահմանս քո 'ի խաղաղու-
թիւն. պարարտութեամբ ցորենոյ
լցոյց զքեզ:
Առաքէ զբան իւր յերկիր. վաղվաղ
ընթանան պատգամք նորա:
Դնէ զձիւն որպէս զասր, և զմէգ
որպէս մոխիր ցանեաց:
Արկանէ զսառն ոպ՟ պատառս. ա-
ռաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կեալ:
Առաքէ զբան իւր՝ և հալէ զնոսա,
շնչեսցեն հողմք՝ և գնասցեն ջուրք:

Պատմէ զբան իւր յակոբայ, զար-
դարութի̃ և զիրաւունս իսրայէլի։
Ոչ այսպէս արար ամենայն ազգաց
ո̃ր, և զդատաստանս իւր ոչ յայտ-
նեաց նոցա։

---

Ամենայն սրբոց տօնից՝ ճաշու ժողովն այս է։

Սիրեցի՝ զի լուիցէ տէր զձայն ա-
ղօթից իմոց։ Եւ այլն որպէս ՚ի ներ-ն, 277։

Ճաշաբաշխական յորս տօն ոչ տօնի, և ամենայն չորեքշա-
բաթի և ուրբաթի յորս պահք լինի՝ ճաշու ժողովն այս է։

Օրհնեցէք զտէր ա̃մ ազինք. գո-
վեցէք զնա ա̃մ ժողովուրդք։
Զօրացաւ ողորմութիւն նորա ՚ի վե-
րայ մեր. և ճշմարտութի̃ տեառն
մնացէ յաւիտեան։
Փառք հօր և որդւոյ և։

---

Եւ ապա ասի շարական ըստ տօնից պատշաճից և
կիւրակէի յարութեան։

Օ Թագաւորըն փառաց քրիստոս. ած
որ վասըն մեր մարմնացար ՚ի սրբոյ ճշ
կուսէն և խաչի համբերելով. մի

աքանութեամբ երգով բարեբա-
նեսցուք: Որ զթաղումն երեքօրեայ
յանձն էառ յարուցեալ ՚ի մեռե-
լոց իշխանութեամբ. միա: Կարո-
ղապէս զդրունս դժոխոց խորտա-
կեաց. եկեղեցւոյ իւրում զգեցոյց
զմեծավայելչութիւն. միաբանու:

Հրեշտակապետաց:

դկ Այսօր ուրախացեալ է եկեղեցի
քրիստոսի. տօնէ խնդութեամբ զտօն
վերինն Երուսաղէմի, սրբասաց ձայ-
նիւ փառաւորելով զՔրիստոս: Այ-
սօր համաձայնեալք որդիք սիոնի
երկրայնոյ. տօնին զուարճանան
որդւոց անդրանկաց վերին սիոնի.
սրբ: Այսօր դասք անմարմնոցն երգս
առեալ պարեն ընդ մարդկան
զերգս հոգեւորս յանմահ փեսային
առագաստ. սրբ:

Մարգարէից:

ած Ճառագայթ անճառ լուսոյ ան-
քննելի տէրութիւն. յառաջա-

գոյն հրաշացուցեր զտեսողութին մարգարէիցն. իջանելո՛վ ՚ի ստորինս աստուածային տնօրէնութեամբ։

Որք ըզտաճա՛ր հաւատոյ հիմնեցուցին շնորհօ՛ք սուրբ հոգւո՛յն. յոր եմո՛ւտ բանն աստուա՛ծ եօթնարփեան ճառագայթիւք. իջանէ։

Երեւեցա՛ն յաշխարհի ճշմարիտ մարդեղութեամբ. զոր քարոզեցին մեզ հրաւիրողքըն համագոյ հօր և հոգւոյն. լուսաւորելով ըզտիեզերս ածային տնօրէ՛նութեամբ։

Ամենայն չորեքշաբաթի պահոց և ուտեաց։

Փառաբանութի՛ւն առաքեմք քեզ հայր երկնաւոր. յիշեա՛ զննջեցեալսըն մեր, և հանգո ընդ սուրբըս քո՛։ Որ էակի՛ցդ ես հօր և հոգւոյ՝ որդի՛դ միածին. յիշ։ Որ փառակի՛ցդ ես հօր և որդւոյ՝ հոգի՛դ ճշմարիտ. յիշ։ դկ

Հինգշաբաթի առաքելոց.

Որ սիրո՛ղդ էք արարչին արար- ակ

ծո՛ց քրիստոսի սուրբ առաքեա՛լք,
բարեխօսեցէ՛ք առ տէր վասն մե՛ր։
Որ քարո՛զդ էք ընդհանուր տիե-
զերա՛ց, քրիստոսի սուրբ առա։ Որ
պսա՛կ կդ էք ամենայն եկեղեցեա՛ց,
քրիստոսի սուրբ առա։

դկ Որ անսկիզբըն յէութե՛ն եկիր յաշ-
ուր խարհս. մարմնացա՛ր ՚ի կուսէն յա-
ղագս մերոյ պարտեաց. հանգո՛րէ
զննջեցեալսըն մե՛ր։ Որ ՚ի հօրէ՛ լու-
սոյ լոյս ծագեցար մեզ և՛ կեանք.
միածի՛ն որդի՝ հօր համագոյակից.
հանգո՛։ Որ ՚ի վե՛րդ ես քան զմիտս
և զխո՛րհուրդս. և խաչի՛ համբեր-
եալ փրկեցեր ըզ տիեզերս. հան։

---

Շաբաթապահոց յորում սուրբք ոչ փոխեսցին, Երկուշա-
բաթի, Երեքշաբաթի, Հինգշաբաթի զայս ասա.

գձ Քրիստոս աստուա՛ծ. յի՛շեա՛ ըզ
ննջեցեալսն ՚ի սուրբ անունդ քո։
Օգնեա արեա՛ն քո՛ տէր. յի՛շեա՛ և

հանգո ընդ սուրբս քո։ Եւ ՚ի միւ-
սանգամ քո գալըստեանն, ըզնըն-
ջեցեալըն մեր յիշ։

Որ յանէից ստեղծող գոյից ա- գկ
րարչականց հօր բանդ ծնեալ. ուր
Թողութիւն շնորհեա ննջեցելոց
քոց ծառայից, յորժամ գաս դա-
տել զոր անարատ ձեռօք ստեղծեր։
Որ ՚ի հօրէ առաքեցար, և մարմ-
նացար ՚ի սուրբ կուսէն. Թողու-
թիւն շնոր։ Որ ՚ի խաչին անշըն-
չացար, զմահու լուծեր զիշխա-
նութիւն. Թողու։ Որ պըսակիչդ
ես քոց սըրբոց, և անվախճան
բարեաց բաշխող. Թողու։

Մարտիրոսաց։

Արիւնաւորք ճըշմարիտք և վկայք գկ
քրիստոսի. որք զչարչարանս և ըզ
մահ յանձն առիք վասն նո. ըզ
ձեզ ունիմք բարեխօս առ քրիստոս
վասն անձանց մերոց։ Քանզի հեղ-
մամբ արեան ձերոյ պայծառացան

սուրբ Եկեղեցիք. և զըստուերա-
ման խաւար կռապաշտութեանցն
բարձիք. զձեզ: Երկնային զօրքն
իջեալ ՚ի պատիւ պատարագի մահ-
ուանն ձերոյ. և զպըսակս անապա-
կանս առբերելով ՚ի հօրէ լուսոյ.
զձեզ ունիմք:

Աւետեաց:

գկ Աստուածածին խորան լուսոյ ան-
փայրափակ արփւոյն կենաց, որ ե-
ղեր արեւելք արեգականն ար-
դարութեան, և նստելոցս ՚ի խա-
ւարի լոյս ծագեցար. վասն որոյ ա-
մենեքեան զքեզ միշտ մեծացու-
ցանեմք: Անապական տաճար և
մորենի անկիզելի. որ զանշէջ հուր
աստուածութեանն ՚ի քեզ տար-
եալ կրեցեր. որով բնութեանս կի-
զեալ շիջաւ կրիցբոց. վասն որոյ ա-
կն նշանի տապանակ կտակարանաց
նորոյ ուխտին. որով ելք յերկիր
աւետեաց հորդեալ, հոգւով ՚ի

քեզ տըպաւորեալ բանին · վասն ո ։

Ծննդեան ։

Սուրբ զաստուածածինն օրհնութեամբ մեծացուցանեմք ։ Աւետաւոր հրեշտակն աւետարանէր, զծընեալ փրկիչն 'ի սրբոյ կուսէն ։ Ասէր ուրախ լեր բերկրեալդ · քանզի տէր տերանց է ընդ քեզ ։ գծ

Տեառնընդառաջին ։

Անսկիզբըն բանըն յանսկըզբնական 'ի հօրէ, և սկզբնաւորեալ 'ի կուսէն մարմնոյ զգեցմամբ, բովանդակելով յորովայնի և ընդ հօր գոլով, և սահմանեալ ժամանակածընեալ լինի աստըւած և մարդ ։ Մըտեալ ընդ օրինօք՝ անհիւթականըն հողանիւթ գոլով, զի զհողածնեալքըս հօրն ընծայեսցէ · աստուածորդին որ 'ի ծոցն հօր, տղայ քառասնօրեայ բառնի 'ի գիրկըս ծերունւոյն, և յայտնապէս ծանուցանի աստըւած ։ Վասն որոյ և սիմէօն ցըն- դկ

ծայր հոգւոյն աղաղակէր 'ի տաճարին. արդ արձակեա՛ս զծառայս քո տէր ըստ բանի քում 'ի խաղաղութիւն. զի ընդհանուր տեսի ըզ փըրկողդ աստը։

Ծաղկազարդին.

դկ Անըսկիզբըն բանըն հօր՝ որ 'ի վերայ քերովբէիցըն հանգչի. այսօր 'ի վերայ յաւանակի նորոյ նստեալ. օրհնեալ արքայ եկեալ անյաղթելի թագաւորն։ Յաւաչ քան զյաւիտեանս որդին՝ որ 'ի վերայ քառակերպիցըն բազմի. այսօր 'ի ծերոց և 'ի տղայոց փառաւորեցաւ. օրհ։ Եկայք նոր ժողովուրդք ընդ անմարմնոցըն դասս բազմութեան, ըզսա հընչմամբ երգով քաղցր ձայնիւ փառաւորեսցուք. օրհ։

Զատկին.

աձ Յարեաւ քրիստոս 'ի մեռելոց. ալէլուիա։ Եկայք ժողովուրդք, երգեցէք տն. ալէլուիա։ Յարուցե-

լոյսն 'ի մեռելոց ալէլուիա. որ զաշ-
խարհս լուսաւորեաց. ալէլուիա։

Համբարձման։

Որ համբարձումն այսօր աստուա- աձ
ծային իշխանութեամբ 'ի հայրա-
կանն 'ի կառս. սպասաւորելով
'ի հրեշտակական դասուցն. որք
նուագէին ասելով. համբարձէք
իշխանք զդրունս ձեր 'ի վեր, և
մտցէ թագաւոր փառաց։ Զիա-
ցան վերնական իշխանութիւնքն
և սոսկալի ձայնիւ աղաղակէին
առ միմեանս. ով է սա թագա-
ւոր փառաց. Եկեալ մարմնով և
զքանչելի զօրութեամբ. համբար։
Աղանակէին վերնական պետութիւ-
նքն հրաշալի ձայնիւ. երգէին
երգ նոր ասելով. սա ինքն է թա-
գաւոր փառաց. փրկիչ աշխարհի
և ազատիչ ազգի մարդկան. համ։

Հոգւոյ գալստեան։

Որ 'ի հարաշարժ 'ի յածղերն բձ

յառաջ բղխեալ անհատաբար 'ի յորդւոյ տիրապէս ծ՛բ հոգին այսօր 'ի յերկնից սամոթին հեղեալ 'ի դասս առաքելոցն լեզուացին բոլորից. ընդ նմա օրհնեսցուք երկրպագելով: Որ յանըսկիզբն և 'ի միշտ 'ի յէութեան, նոյնագոյ ընութեամբ անորիշ բաժանմամբ 'ի յորդւոյ արարչակից սուրբ հոգին այսօր հրով բաժանեալ լեզուս քարոզչացըն. 'ի լոյս ածեալ զազգըս մարդկան բաժանմամբ պէս պէս շընորհաց. ընդ նմա ան: Որ 'ի վերայ ջուրցըն գոլով գոյացուցեալ զարարածս. անանջըրպելեան 'ի հօրէ և յորդւոյ իշխանակից սուրբ հոգին այսօր. վերանորոգեաց զազգս մարդ. ջըրով կենդանութ բղխեալ յերուսաղէմ. ընդ նմա ան:

Վարդավառ.

դկ Ուրախացիր պայծառակ կուսութեան տիրամայր. այսօր որդին քո զհայ-

րենին փայլեաց ըղփառս. Նը-
մա յաւէժ յանձին առեալ զանձի-
նըս մեր: Նըմա մոլեկս է հեղեանս
սպասեն յանուն նորա. ցընծան
թաբոր և հերմոն. Նըմա: Ի սա-
յիսն ըզքեզ թեթևէ ամպ ե-
տես. և հայր յամպոյն զքո զոր-
դին իւր դաւանեաց. Նըմա յա:

Փոխման Աստուածածնին:

Անթառամ ծաղիկ անդաստա- բձ
պարտ շառաւիղ. վերաբուսեալ
յարմատոյն յեսսեայ. զքեզ եսա-
յիաս կանխաւ վերագուշեաց. եօթ-
նարփէն շնորհաց հոգւոյն ընդու-
նարան գոլ. աստուածածին եւ
կոյս. զքեզ մեծացուցանեմք: Հա-
մեղամ ճաշակ պտղոյն բանաւոր
բարունակ. յորմէ կթեցաւ մեզ
ողկոյզն անսպառ ուրախութի
տըրտմեցելոց, ի ճաշակմանէ ծա-
ռոյն գիտութեան. սրբուհի ա-
նարատ ամենեքեան զքեզ մեծա:

Բաղաքամայրեալ ՚ի մարմնի անա-
րատ վարուք․ այսօր յառաքելոցն
ամփոփեալ վերին ակնարկութեամբն
վերափոխեցար յարքայութիւն որդ-
ւոյ քո և աստուծոյ մերոյ․ բարե-
խօսեա խոստովանողացս, զքեզ մե։

Խաչի։

գկ Յաղթող և զնոր օրհնութիւն միշտ
՚ի բարձունս երգեսցուք, թագա-
ւորին քրիստոսի հաւատացեալ ժո-
ղովուրդք։ Որ եկն ՚ի լուսաւորել
զընտրեալ սուրբ զեկեղեցի, և պը-
սակեաց սուրբ խաչիւն․ նըմա ըզ-
փառս երգեսցուք։ Այսօր և մեք
տօնեսցուք զնաւակատիս սուրբ
խաչին․ և փրկողին մատուսցուք
փառք և պատիւ յաւիտեան։

Տապանակին։

ակ Որ ՚ի սկզբանէ իմաստութբ հաս-
տատեցեր զեկեղեցի հօր իմաս-
տութիւն․ զոր նախանըկար տե-
սութբ նըշանակեալ մովսէս խորա-

նաւն երկնահանգստի՛ն 'ի սինա՛ լե-
րին . լուսաւորելո՛վ փառօքն ա՛-
ստուծոյ ։ Որ զխորհուրդ անապա-
կան տնօրէնութեանդ քո՛ 'ի սրբո՛յ
կուսէն, տրպաւորելո՛վ տապանակն
աստուածային ուխտին կտակարա-
նա՛ց բանիւ աստու՛ծոյ, փառաց ա-
նեղի՛դ տեղի հա՛նգստեա՛ն ։ Որ
'ի կեանս վերադարձի բնութեան
դարձմամբ յորդանանու՛ օրինակե՛-
ցեր . և զբնութիւն մահու և
դժո՛խոց կործանմամբն երիքովի
տապանակաւ խաչին հրաշագործ-
եա՛լ նոր իսրայէ՛լի . օրհնութիւն
քեզ տէր երգեսցե՛ն մանկո՛ւնք ։

Եկեղեցւոյ ։

Որ հաստատեցե՛ր բանիւ զեկեղե- դձ
ցի քո քրիստո՛ս, 'ի վերայ առաքե-
լական վիմի . Երգել 'ի սմա՛ զերգըս
հոգեւո՛րս ։ Կանգնեալ 'ի սմա սե-
ղան սրբութեան , բաշխէ զմար-
մին իւր և զարիւն . և տայ 'ի սը-

մանէ մեզ նորոգութիւն, 'ի թո-
ղութիւն մե՛ղաց մերոց։ Իջե՛լ հոգ-
ւոյն սրբոյ, աղաւնակերպ երևմամբ
'ի վերայ մարմնոյ և արեանն տեառն.
'ի բժշկութիւն հոգւոց մերոց։

Հայրապետաց։

դկ Այսօր երկնայնոցն ընդ մեզ տօ-
նախմբելով զյիշատակ սրբոց վարդա-
պետացն. որք լուսաւորեցին զհա-
ւատոյ մանկունս, և ընդ հրեշտա-
կացըն դասս վերակարգեցան։ Այ-
սօր առաքելոց և մարգարէիցըն
դասք, տօնակից գոլով դասեր վե-
րին սիրեն 'ի յիշատակի սրբոց վար-
դապետացն. որք զիմաստից նոցին
զխորոց յայտնեցին զխորհուրդ։
Այսօր քահանայք և պաշտօնեայք
սուրբ եկեղեցւոյ, վերապատուեն
զյիշատակ սուրբ վարդապետացն.
որով զարդարեցան երկնային շնոր-
հօքն. երգեն ընդ նոսին զփառըս
յաւիտեան։

Սուրբ աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ. և այլն ըստ պատշաճի։

Երիցս երգեն

Եւ ևս խաղաղութե զտէր աղա։ քրզ

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի, և հաստատութե սրբոյ եկեղեցւոյ, զտէր աղաչեսցուք։

Վասն ամ սուրբ և ուղղափառ եպիսկոպոսաց, զտէր աղա։

Վասն հայրապետին մերոյ տեառն (այս անուն) կենաց և փրկութեան հոգւոյ նորին, զտէր աղա։

Վասն վարդապետաց՝ քահանայից՝ սարկաւագաց՝ դպրաց՝ և ամ ուխտի մանկանց եկեղեցւոյ, զտէր աղա։

Վասն բարեպաշտ թագաւորաց՝ և ածասէր իշխանաց, զօրավարաց՝ և զօրաց նոցին, զտէր աղա։

Վասն հոգւոցն։ Եւ ևս։ Զանձինս։

Ողորմեաց։

Մաղթանք։

Զի ողորմած և մարդասէր ես ած գոլով. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և։

Սաղմոս ճաշուն՝ որ ասէ չէնանցն, յառաջն երեք փոխ. զէ մինչև 'ի Հոգւոյ գալուստն ձծ փոխ սաղմոս Դաւթի վճարեայն. Եւ ամեն փոխի վերջն երեք ալէլու" աաա:

Երանեալ է այր որ ո՛չ գնաց 'ի խոր. ալէլուիա. ալէլուիա. ալէ:
Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք. ալէ:
Տէ՛ր զի՞ բազում եղեն նեղիչք իմ. ա:

Համբարձմանն՝ ճաշու սաղմոս կցորդ.

Համբարձաւ աստուած օրհնութ. և տէր մեր ձայնիւ փողոյ: Ծափս հարէք ամ հեթանոսք, աղաղակեցէք առ աստուած 'ի ձայն ցնծութեան: և այլն:(սղ. խզ):

Ընթերցուածս 'ի գործոց առաքելոց:

Այնպէս պաշտեմ զհայրենի աստուածն. հաւատացեալ ամենայնի որ ինչ յօրէնս և 'ի մարգարէս գրեալ է: Ունիմ յոյս առ աստուած. որում և դոքա իսկ ակն ունին՝ թէ յարութիւն լինելոց է արդարոց և մեղաւորաց: Յորում և ես իսկ ճգնիմ, անխիղճ միտս ունել առ աստուած և առ մարդիկ յամենայն

ժամ։ Ի բազում ամաց ողորմութիս
եկի առնել յազգս իմ. և՛ետու
պատարագս. որովք գտին զիս
սրբեալ ՚ի տաճարին։

Հոգւոյ գալստեան՝ ճաշու սաղմոս կցորդ։

Հոգի քո բարի առաջնորդեսցէ
ինձ ՚ի յերկիր ուղիղ։
Տէր լուր աղօթից. և այլն։ (սղ. ճխբ)։

Տապանակին՝ ճաշու սաղմոս կցորդ։

Արի տէր ՚ի հանգիստ քո՝ դու և
տապանակ կտակի սրբութե քո։
Յիշեա տէր զդաւիթ, և զամենայն
հեզութիւն նորա։ և այլն։ (սղ. ճլա)։

Վարդավառին՝ ճաշու սաղմոս։

Տէր, ո՞վ կացցէ ՚ի խորանի քում, կեր
կամ ո՞վ բնակեսցէ ՚ի լեառն սբ քո։
Որ գնայ անբիծ գործէ զարդարու-
թիւն, խօսի զճշմարտութիւն ՚ի
սրտի իւրում։
Որ ոչ նենգաւորեաց լեզուաւ իւ- բշ
րով, և չար ընկերի իւրում ոչ ա-
րար։
Նախատինս ՚ի մերձաւորաց նա ոչ

առնու. արհամարհեալ է առաջի
նորա չարագործն։

գշ Զերկիւղածս տեառն փառաւոր
առնէ. որ երդնու ընդ ընկերի իւ-
րում և ոչ ստէ։
Զարծաթ իւր 'ի վարձու ո՛չ տայ,
և կաշառս 'ի վերայ իրաւանց ոչ
առնու. որ զայս արասցէ՝ նա մի՛
սասանեսցի յաւիտեան։

Վերափոխման Աստուածածնին՝ ճաշու սաղմոս կցորդ.

Արի տ՜ր 'ի հանգիստ քո՝ դու և տա
պանակ կտակի սրբութեան քո։
Յիշեա տէր զդաւիթ և զամե.
և այլն։ (սղ. ճլա)։

Սուրբ խաչին՝ ճաշու սաղմոս կցորդ։

Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց
քոց. և ետուր ուրախութիւն սըր-
տից մերոց։
Ի կարդալ իմում լուար ինձ աստ.
և այլն։ (սղ. դ)։

Շողակաթին և այլոց եկեղեցեաց տօնի՝ ճաշու սաղմոս կցորդ.

Աստուած հիմունս էարկ նմա յա-
ւիտեան. ընկալաք ա՜ծ ողորմութի՜
քո 'ի մէջ ժողովրդեան քո։

Մե՛ծ է տէր, և օրհնեալ է յոյժ ՚ի քաղաք աստուծոյ մերոյ, ՚ի լեառն սուրբ նորա։ և այլն։ (սղ. խէ)։

Աւետեաց Աստուածածնին՝ ճաշու սաղմոս կցորդ։

Տէր տացէ զբան, որք աւետարանեն զօրութեամբ բազմաւ։

Յարիցէ աստուած՝ և ցրուեսցին ամենայն թշնամիք նորա, փախիցեն ատելիք նր յերեսաց. և այլն։ (սղ. կէ)։

Ծննդեանն Քրիստոսի՝ ճաշու սաղմոս կցորդ։

Տէր ասաց ցիս՝ որդի իմ ես դու, և ես այսօր ծնայ զքեզ։

Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք. և ժողովուրդք խորհեցան ՚ի սնոտիս։ և այլն։ (սղ. բ)։

Քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի՝ ճաշու սաղմոս կցորդ։

Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն աստուծոյ մերոյ։

Օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս ա. և այլն։ (սղ. ղէ)։

Մեծի ողոգոմեանն որ է ծաղկազարդին. ճաշու սաղմոս կցորդ։

Լերինք ցնծասցեն առաջի տեառն, զի գայ զի հասեալ է տէր ՚ի դատել զերկիր։

# Օրհնեցէք զՏ̃ր յօրհնու̃ի Նոր․ զի․

Ն ձ̃յն ։ (աղ․ ղէ) ։

Համարակաց կիւրակէից՝ ճաշու սաղմոս ։

Քեզ վայելէ օրհնութիւն աստուած 'ի սիոն. և քեզ տացին աղօթք յերուսաղէմ ։

Լուր աղօթից իմոց, զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ ։

Բանք անօրինաց զօրացան 'ի վերայ մեր. և զամբարշտութ̃իս մեր դու քաւեսցես ։

Երանի զոր ընտրեցեր և ընկալար, և բնակեսցին 'ի գաւիթս քո ։

Լցցուք մեք 'ի բարութենէ տան քո. սուրբ է տաճար քո՝ սքանչելի արդարութեամբ ։

Լուր մեզ աստուած փրկիչ մեր, յոյս ամենայն ծագաց երկրի, և որ 'ի ծով հեռի ։

Ա պատրաստէ զլերինս զօրու̃ք իւրով. և զգեցեալ է զօրութիւն ։

Ա խռովեցուցանէ զմեծու̃ի ծովու, և զձայն ալեաց ն̃ր ցածուցանէ ։

Խռովեսցին հեթանոսք, և երկիցեն

բնակիչք երկրի 'ի նշանաց քոց ։

Ելս առաւօտու՝ ընդ երեկոյս զուարճացին․ հայեցար յերկիր՝ արբեցուցեր զնա, և բազում արարեր զմեծութիւն նորա ։

Գետն այ լի եղեւ ջուրբ․ պատրաստ արարեր զկերակուր նորա, զի այսպէս է պատրաստութիւն ։

Զակօս նորա արբեցուցեր, և բազում արարեր զարմտիս նորա ։

Ի ցօղել նորա զուարթ եղիցի բոյս նորա․ օրհնեսցի պսակ տարւոյ քաղցրութեան քո ։

Դաշտք քո լցցին պարարտութբ․ պարարտասցին գեղեցկութիւնք անապատի ։

Բլուրք զցնծութիւն զգեցցին, և զգեցցին խոյք մաքեաց ։

Հովիտք բազում արասցեն զցորեան, աղաղակեսցեն և օրհնեսցեն ։

Հրեշտակապետաց՝ Ճաշու սաղմոս կցորդ ։

Ո՞ արար զհրեշտակս իւր յոգիս, և զպաշտօնեայս իւր 'ի հուր կիզելոյ ։

Օրհնեա անձն իմ զտէր․ տէր ած

իմ մեծ եղեր յոյժ ։ Ն այն ։ (ճգ)։

Առաքելոց և մարգարէից ճաշու սաղմոս կցորդ ։

Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա, և մինչև ՚ի ծագս աշխարհի են խօսք նոցա ։

Երկինք պատմեն զփառս աստուծոյ, և զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատու. Ն այն ։ (սղ. ժը)։

Հայրապետաց և վարդապետաց՝ ճաշու սաղմոս կցորդ .

Քահանայք քո զգեցցին զարդարութի, և սբք քո ցնծալով ցնծասցեն ։

Յիշեա տէր զդաւիթ, և զամենայն հեզութիւն նորա ։

Որպէս երդուաւ տեառն. և ուխտըս եդ այ յակո. Ն այն ։ (սղ. ճլա)։

Համօրէն մարտիրոսաց՝ ճաշու սաղմոս կցորդ ։

Պատուական է առաջի տն մահ սբց իւրոց. ո՞ տէր ես ծառայ քո եմ, ծառայ և որդի աղախնոյ քո ։

Հաւատացի զոր և խօսեցայ, և. Ն այն ։ (սղ. ճժե)։

Յօհաննու առաքելոյն ՚ի կաթուղիկեայց առաջին թղթոյն է ընթերցուած ։ (գ. 7)։

Սիրելիք՝ սիրեսցուք զմիմեանս, զի

սէր յաստուծոյ է. և ամենայն որ սիրէ՝ յաստուծոյ է ծնեալ՝ և ճանաչէ զաստուած։ Եւ որ ոչն սիրէ՝ ոչ ճանաչէ զաստուած, զի ա̃ծ սէր է։ Եւ զի յայսմ երևեցաւ սէրըն աստուծոյ 'ի մեզ, զի զորդին իւր միածին առաքեաց յաշխարհ, զի եղիցուք նովաւ կենդանիք։ Յայսմ է սէրն. ոչ զի մեք սիրեցաք զաստուած՝ այլ զի նա սիրեաց ըզմեզ, և առաքեաց զորդին իւր 'ի քաւութիւն մեղաց մերոց։ Սիրելիք՝ եթէ աստուած այնպէս սիրեաց զմեզ, ապա և մեք պարտիմք զմիմեանս սիրել։ Զաստուած ուրուք երբէք չէք տեսեալ. եթէ սիրեսցուք զմիմեանս՝ աստուած 'ի մեզ բնակէ, և սէր նորա 'ի մեզ կատարեալ է։ Այսուիկ գիտեմք, եթէ մեք 'ի նմա բնակեալ եմք՝ և նա 'ի մեզ, զի 'ի հոգւոյն իւրմէ ետ մեզ։ Եւ մեք տեսաք՝ և վկայեմք զի հայր առաքեաց զորդին իւր փըրկիչ աշխարհի։ Որ ոք խոստովանես-

ցի՝ եթէ յիսուս է որդի աստու-
ծոյ, աստուած 'ի նմա բնակէ՝ և
նա յաստուած ։ Եւ մեք հաւատա-
ցաք՝ և ծանեաք զսէրն աստուծոյ
զոր ունի առ մեզ ։ Աստուած սէր
է, և որ կայ 'ի սէրն՝ բնակեալ է
յաստուած, և աստուած 'ի նմա
բնակէ ։ Յայսմիկ կատարեալ է սէ-
րըն նորա 'ի մեզ. զի համարձակու-
թիւն ունիցիմք յաւուրն դատաս-
տանի ։ Զի որպէս և նայն է՝ նոյն-
պէս և մեք եմք յաշխարհի յայս-
միկ ։ Երկիւղ ոչ գոյ 'ի սէր, այլ սէ-
րըն կատարեալ 'ի բաց մերժէ զեր-
կիւղն. զի երկիւղ ընդ տանջանօք
է. իսկ որ երկնչին, չէ կատարեալ
'ի սէրն ։ Մե՛ք սիրեսցուք զա՛ծ, մն̃
զի նա նախ սիրեաց զմեզ ։ Եթէ ոք
ասիցէ՝ եթէ սիրեմ զաստուած, և
զեղբայր իւր ատիցէ, սուտ է. որ
ոչ սիրէ զեղբայր իւր՝ զոր տեսա-
նէ, զաստուած զոր ոչն ետես՝ զի-
ա՞րդ կարիցէ սիրել ։ Եւ զայս պատ-
ուէր ունիմք առ 'ի նմանէ, զի որ

սիրէ զաստուած՝ սիրէ նա և զեղ-
բայր իւր ։

Մեսեդիք՝ ճաշու յինանցն զկնի գործոցն . 'ի չորեքշա-
բաթէն սկսեա ։

Գովեա երուսաղէմ զտէր ։ դշ
Եւ օրհնեա զած . և այլն ։ ( սղ . ճխէ ) ։
Բարձր արարէք զտէր աստուած եշ
մեր . երկիրպագէք պատուանդանի
ոտից նորա, զի սուրբ է ։
Տր թագաւորեաց, բարկացան ժո-
ղովուրդք՝ որ նստիս 'ի քրովբէս,
սասանեցաւ երկիր ։ և այլն ։ ( սղ . ղը ) ։
Տեսին ամ ծագք երկրի զփրկուի ։ ուր
Օրհնեցէք զտէր . և այլն ։ ( սղ . ղէ ) ։
Աստուած ողորմեա մեզ և օրհնեա շբ
զմեզ . երևեսցի զերեսս քո 'ի մեզ՝
և ողորմեա մեզ ։
Ճանաչել յերկրի զճանապարհս քո,
յազինս ամ զփրկու . և այլն ։ ( սղ . կզ ) ։
Քեզ վայելէ օրհնութիւն ած 'ի . կիր
և այլն ։ ( սղ . կդ ) ։
Քեզ վայելէ օրհնութիւն ած 'ի . բշ
և այլն ։ ( սղ . կդ ) ։

գհ Տէր որպէս զինու հաճութեամբ քով պսակեցեր զմեզ։

Բանից խմոց ուն. Ն այլն։ (սղ. ե)։

=====

## Յերկրորդ Ծաղկազարդին ընթերցուածն։

Ընթերցուած Յեսայեայ մարգարէէ։ (կգ. 1)։

Իսկ այս ո՞վ է որ դիմեալ գայ յԵդովմայ. կարմրութիւն ձորձոց իւրոց 'ի Բոսորայ. գեղեցիկ պատմուճանաւ և բուռն զօրութ՟։ Ես խօսիմ զարդարութիւն և իրաւունս փրկութեան։ Վասն է՞ր կարմիր են ձորձք քո. և հանդերձք քո իբրև հնձանահարի լիոյ հնձանի կոխելոյ։ Հնձան հարի միայն. և 'ի հեթանոսաց ոչ ոք էր ընդ իս։ Կոխեցի զնոսա սրտմտութեամբ՝ և ճըմլեցի զնոսա բարկութեամբ՝ և իջուցի յերկիր. և զամենայն հանդերձս իմ թաթաւեցի։ Զի հասեալ էր 'ի վերայ նոցա օր հատուցման. և ամ փրկութեան եկեալ հասեալ։ Հայեցայ՝ և ոչ ոք էր որ օգնէր. զմտաւ ածի՝ և ոչ ոք էր

որ 'ի թիկունս հասանէր. փրկեաց
զնոսա բազուկ իմ և սրտմտութի̃
իմ միայն զդէմ կալաւ: Կոխեցի զզ-
նս̃ բարկութբ̃ իմով. և զենի զնո-
սա սրտմտութեամբ իմով. և ի-
ջուցի զնոսա յերկիր:

Մեսեդիք՝ ճաշու շաբաթապահոց. Նախ քան զգիրքն.

Ողորմութիւն քո արքայութիւն բՀ
ամ̃ յաւիտենից. և տէրութիւն
քո ազգէ մինչև յազգ:
Հաւատարիմ է տր̃ յամ̃ բանս իւր, փ
և արդար է յամենայն գործս իւր:
Երկիրպագից 'ի տաճար սուրբ քո՝ գՀ
երկիւղիւ քո տէր:
Պարծեսցին 'ի քեզ սիրելիք անուան փ
քո, զի օրհնեսցես դու զարդարն:
Կեցո զծառայս քո աստուած իմ, դՀ
որ 'ի քեզ յուսացայ:
Ողորմեա ինձ տէր, զի առ քեզ ա- փ
ղաղակեցի զօրհանապազ:
Բարձր արարէք զտէր ած̃ մեր. եր- եՀ
կիրպագէք պատուանդանի ոտից
նորա՝ զի սուրբ է:
Տր̃ թագաւորեաց, բարկացան ժո- փ

ժողովուրդք՝ որ նստիս 'ի քրովբէս,
սասանեցաւ երկիր։

ուր Տեսին ամենայն ծագք երկրի ըզ
փրկութիւն աստուծոյ մերոյ։

փ Օրհնեցէք զտէր յօրհնութի նոր.
զի սքանչելիս արար։

Մեսեդիք՝ ձայնու Աղջից.

բշ Դարձո զիս տէր 'ի մեղացիմոց. և
զա՛մ անօրէնութիսիմ քաւեա յինէն։

փ Ողորմեա ինձ ա՛ծ ըստ մեծի ողոր-
մութե քում. ըստ բազում գթութե
քում քաւեա զանօրէնութիս իմ։

գշ Երանի ա՛մցն՝ ոյք երկնչին 'ի տ՛նէ,
և գնան 'ի ճանապարհս նորա։

փ Զվաստակս ձեռաց քոց կերիցես.
երանի է քեզ, և բարի եղիցի։

դշ Մի՛ թողուր զիս տէր ա՛ծ իմ. և մի՛
'ի բացեայ առնիր յինէն, հայեաց
յօգնել ինձ՝ տէր փրկութե իմոյ։

փ Տէր առաջի քո է ամենայն ցան-
կութիւն իմ. և հեծութիւն իմ
'ի քէն ոչ ծածկեցաւ։

եշ Մի՛ ընկենուր զիս տէր 'ի ժամանա-
կի ծերութեան. 'ի պակասիլ զօրու-

թեան իմոյ մի՛ թողուր զիս ։
Ի քեզ տէր յուսացայ, մի՛ ամաչե- փ
ցից յաւիտեան ․ յարդարութեան
քում փրկեա և ապրեցո զիս ։
Մերձեսցին խնդրուածք իմ առաջի ուր
քո տէր ․ ըստ բանի քում իմաս-
տուն արա զիս ։
Չայնի իմում լուր տէր՝ ըստ ողոր- փ
մութեան քում ․ և յիրաւունս քո
կեցո զիս ։

Մեսեդիք՝ ձայնու Յարութեան ։

Ամենայն երկիր երկիրպագցեն քեզ ․ աձ
և սաղմոս ասասցեն քեզ ։
Աղաղակեցէք առ ա՟ծ ա՟մ երկիր ․ փ
սաղմոս ասացէք անուան նորա ․ և
տուք զփառս օրհնութեան նորա ։
Մեծ արարէք զտ՟ր աստուած մեր ․ ակ
և բարձր արասցուք զանուն նորա
՚ի միասին ։
Օրհնեցից զտէր յամենայն ժամ, փ
յամենայն ժամ օրհնութիւն նո-
րա ՚ի բերան իմ ։
Օրհնեցէք զտէր յօրհնութ՟ի նոր ։ բձ
Օրհնեցէք զտ՟ր ա՟մ երկիր ․ օրհնե- փ

ցէք զնր և օրհնեցէք զանուն նր։

բկ Օրհնեցէք զած մեր. օրհնեցէք և
սաղմոս ասացէք տեառն այ։

փ Տէր աստուած օրհնեալ. օրհնեալ
է տէր զօրհանապազ։

գձ Մեծ է տէր, և մեծ է զօրութի նր.
իմաստութեան նորա ոչ գոյ բաւ։

փ Օրհնեցէք զտէր՝ զի բարի է սաղ-
մոս. աստուծոյ մերում քաղցր ե-
ղիցի օրհնութիւն։

գկ Սաղմոս ասացէք այ մերում, սաղ-
մոս ասացէք թագաւորին մերում.
սաղմոս ասացէք։

փ Ծափս հարէք ամենայն հեթա-
նոսք, աղաղակեցէք առ աստուած
'ի ձայն ցնծութեան։

դձ Սուրբ է տաճար քո սքանչելի ար-
դարութեամբ։

փ Քեզ վայելէ օրհնութի ած 'ի սիօն.
և քեզ տացին աղօթք յէմ։

դկ Այսօր է զոր արար տր. եկայք ցըն-
ծասցուք և ուրախ եղիցուք 'ի սմա։

փ Խոստովան եղերուք տն. զի բարի
է. զի յաւիտեան է ողորմութի նր։

Մնացեալք Աջից կիւրակէից :

Ուխտս դիք և կատարեցէք տեառն աստուծոյ մերոյ :

Յայտնի է 'ի հրէաստանի ա͞ծ, և յիսրայէլ մեծ է անուն նորա :

Սաղմոսք մեծի Ուրբաթու Ճաշուն :

Առաջին սաղմոս . լզ :

Յարեան 'ի վերայ իմ վկայք չարաց . և զոր ինչ ոչ գիտէի՝ հարցանէին ցիս :

Դատեա տէր զայնոսիկ՝ որք դատեն զիս . մարտիր ընդ այնոսիկ , որք մարտնչին ընդ իս :

Երկրորդ սաղմոս . լէ :

Ես 'ի տանջանս պատրաստ եմ . և ցաւք իմ առաջի իմ են յա͞մ ժամ :

Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս . և մի բարկութեամբ քով խրատեր զիս :

Երրորդ սաղմոս . խ :

Մ՝տանէր տեսանել զնանրութիւն , խօսէր 'ի սրտի իւրում . և ժողովէր զանօրէնութիւն յանձն իւր :

Երանի որ խորհի զաղքատն և զտ-

նանկն. յաւուր չարի փրկէ զնա Տր:

Զորրորդ սաղմոս. խա:

Բաժանեցին զհանդերձս իմ ՚ի մէջ իւրեանց. և ՚ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին:

Աստուած աստուած իմ՝ նայեաց առիս. ընդէ՞ր թողեր զիս. հեռի եղէ ՚ի փրկութենէ իմմէ՝ վասն բանից յանցանաց իմոց.

Հինգերորդ սաղմոս. լ.

Ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ: Ի քեզ տէր յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան. յարդարութե քում փրկեա և ապրեցո զիս:

Վեցերորդ սաղմոս. կը:

Ետուն ՚ի կերակուր ինձ լեղի. և ՚ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ: Կեցո զիս ած, զի հասին ջուրք յանձըն իմ. ընկլայ ես ՚ի խորս անդընդոց, ուր ոչ գոյ ինձ հանգիստ:

Եօթներորդ սաղմոս. ձէ:

Եղէ ես որպէս մարդ առանց օգնականի, և ՚ի մեռեալս ազատ: Տէր ած փրկութե իմոյ, ՚ի տուէ

կարդացի և գիշերի առաջի քո ։

Ութերորդ սաղմոս. ճա ։

Կցեցաւ ոսկր իմ 'ի մարմին իմ. նըմանեցայ ես հաւալուսան անապատի ։

Տէր՝ լուր աղօթից իմոց. աղաղակ իմ առ քեզ եկեսցէ. և մի դարձուցաներ զերեսս քո յինէն ։

---

Պօղոսի առաքելոյն 'ի Տիմոթէոսի առաջին թղթոյն է ընթերցուած ։

Պօղոս առաքեալ յիսուսի քրիստոսի՝ ըստ հրամանի փրկչին մերոյ աստուծոյ՝ և քրիստոսի յիսուսի յուսոյն մերոյ. տիմօթեայ որդւոյ սիրելւոյ հաւատովք, շնորհք ողորմութիւն խաղաղութիւն յաստուծոյ հօրէ և 'ի տեառնէ մերմէ յիսուսէ քրիստոսէ ։ Որպէս աղաչեցի զքեզ կալ յեփեսոս՝ մինչ երթային 'ի մակեդոնիա. զի պատուէր տացես ոմանց չլինել օտարուսմունս, և չհայել յառասպելս և 'ի տոհմաթիւս անչափս. որ մա-

նուանդ խնդիրս յուզեն, և ոչ զտնտեսութիւն աստուծոյ հաւատովք։ Քանզի գլուխ պատուիրանին սէր է, 'ի սուրբ սրտէ՝ և 'ի մտաց բարեաց՝ և յանկեղծաւոր հաւատոց։ Յորոց ոմանք վրիպեցան՝ խոտորեալք յունայնութիւն բանից։ Կամին լինել վարդապետք օրինաց. ինքեանք ոչ իմանան զինչ խօսին՝ և ոչ վասն որոց պնդեալն են։ Գիտեմք՝ եթէ բարւոք են օրէնք՝ եթէ ոք զնոսա օրինօքն կիրեսցէ։ Բայց զայս գիտասցէ՝ զի 'ի վերայ արդարոց օրէնք ոչ կան, այլ 'ի վերայ անօրինաց և անհնազանդից՝ ամբարշտաց և մեղաւորաց՝ անսրբոց և պղծոց, զհայր և զմայր անարգողաց, մարդասպանաց, պոռնկաց, արուագիտաց՝ մարդագողաց, ստաց, ստերդմանց. և եթէ այլ ինչ իցէ հակառակ ողջամիտ վարդապետութե̃ս. որ ըստ աւետարանի փառաց երանելոյն այ̃ է, որում եղէ ես հաւատարիմ։

Աղէլուիայք ճաշու աւուրց պահոց · որք ասին ըստ ձայնից ։

Հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ աձ
ինձ 'ի յերկիր ուղիղ ։
Վասն անուան քո տէր՝ կեցուս֊ կամ
ցես զիս, արդարութեամբ քով ։
Տէր մի սրտմտութեամբ քով յան֊ ակ
դիմաներ զիս . և մի բարկութեամբ
քով խրատեր զիս ։
Զգնացս իմ ուղիղ արա ինձ ըստ կամ
բանի քում . և մի տիրեսցեն ինձ
ամենայն մեղք ։
Սիրտ իմ խռովեցաւ յիս, և եր֊ բձ
կիւղ մահու անկաւ 'ի վերայ իմ ։
Դարձ տէր և փրկեա զանձն իմ . բկ
կեցո զիս տէր ըստ ողորմութեան
քում ։
Վս անուան քոյ տէր քաւեա զմե֊ գձ
ղս իմ, զի բազում եղեն յոյժ ։
Ողորմեա ինձ տէր զի հիւանդ եմ գկ
ես . բժշկեա զանձն իմ, զի խռովե֊
ցան ոսկերք իմ ։
Յիշեա տէր զգթութիւս քո, և զո֊ դձ
ղորմութիւս քո՝ որք են յաւիտենից ։
Զմեղս մանկութեան իմոյ՝ և զան֊ կամ

գիտութեան իմոյ մի՛ յիշեր. այլ յիշեա զիս տէր ըստ ողորմութե քում՝ վասն քաղցրութեան քո. զի քաղցր և ուղիղ ես։

դկ Տէր՝ ողորմութիւն քո յաւիտեան, զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ։

կամ Զմեղս մանկութե իմոյ. որպէս 'ի վերոյ.

կամ Աղաղակեցի առ քեզ տէր՝ և ասացի, դու ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց։

Մեղեդի այլ շաբաթապահոց։ Առաջաւոր շաբաթի, Առաջաւորշաբաթի և Հինգշաբաթի՝ երբ ած և դկ լինի՝ ասացուածն ասա։ Իսկ երբ այլ ձայնիք՝ զբարեխօսն ասա։

բշ Եկայք ցնծասցուք 'ի տէր, աղաղակեսցուք առ ա̃ծ փրկիչ մեր։

գշ Երգեցէք տեառն երգ նոր. երգեցէք տեառն ա̃մ երկիր. երգեցէք ա̃ն և բարձր արարէք՝ զանուն նր̃։

եշ Բարձր արարից զքեզ 'ի ժողովրդենէ իմմէ։ Գտի զդաւիթ ծառայ իմ, և իւղով սրբով իմով օծի զնա։

Ալէլուիա Աղջից կիւրակէից ։

Աղաղակեցէք առ տէր ամ երկիր. ծառայեցէք տեառն ուրախութբ ։ Մտէք առաջի նորա ցնծութեամբ ։

Զփոխն ըմձն ասա ։ ( սղ. ղ̀թ ) ։

Ալէլուիայք Ճաշու Յարութեան ըստ ձայնին ։

Դու յարուցեալ գթասցիս 'ի վե-րայ սիոնի. ժամանակ գթալոյ նո-րա հասեալ է ժամ։ աձ

Թագաւոր մեծ 'ի վերայ ամենայն երկրի աստուած է. սաղմոս ասա-ցէք նմա իմաստութեամբ ։ կամ

Օրհնեցէք զտէր յօրհնուի 'ի նոր. օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբց ։ ակ

Ծափս հարէք ամենայն հեթա-նոսք, աղաղակեցէք առ աստուած 'ի ձայն ցնծութեան ։ բձ

Աստուած դու դարձեալ կեցու-ցես զմեզ. և ժողովուրդ քո ու-րախ եղիցի 'ի քեզ։ կամ

Արի տր ած իմ 'ի հրամանս քո՝ զոր պատուիրեցեր. և ժողովք ժողո-վրդոց շուրջ եղիցին զքև ։ Վասն այսորիկ 'ի բարձունս դարձ տէր ։ բկ

գձ Ուրախ եղեւ Իսրայէլ յարարիչ իւր. որդիք Սիոնի ցնծասցեն 'ի թագաւորն իւրեանց։

գկ Եկայք և տեսէք զգործս Աստուծոյ, որպէս զի ահեղ են խորհրդով՛ք քան զա՜մ որդւոց մարդկան։

գձ Հաճեցար տէր ընդ երկիր քո, և դարձուցեր զգերութի՜ յակոբայ։

գկ Յարեաւ ա՜ծ՝ և ցրուեսցին ամենայն թշնամիք նորա, փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա։

Զատկին ։

Հասեալ կային ոտք մեր առ դրունս քո Երուսաղէմ։

Ալէլուիայք Զատկի, Յարութեան և Յինանց ճաշու աւետարանի ։

զատ կիր Գովեա եէ՜մ զտ՜ր. և օրհնեա զա՜ծ.
և այլն ։ (սղ. ճխէ)։

բշ Գովեա եէ՜մ զտ՜ր. և օրհնեա զա՜ծ.
և այլն ։ (սղ. ճխէ)։

գշ Տէր 'ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն. 'ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ։
և այլն ։ (սղ. ի)։

Քեզ վայելէ օրհնութի ած 'ի սիօն. դհ
Ն այն։( սղ. կդ )
Տր ով կացցէ 'ի խորանի քում. կամ. եհ
Ն այն։( սղ. ժդ )։
Տէր թագաւորեաց՝ վայելչութի. ուր
Ն այն.( սղ. ղը )։
Ցնծացէք առ աստուած, օգնա- հը
կան է մեր. աղաղակեցէք առ աստ-
ուած յակոբայ։
Առէք սաղմոս, և տուք օրհնութի.
սաղմոս ասացէք նմա 'ի ձայն քաղց-
րութեան։
Փող հարէք 'ի գլուխս ամսոց, յա-
ւուր նշանաւորի տարեկանաց
մերոց։
Հրաման է այս իսրայէլի, և իրա-
ւունք են աստուծոյ յակոբայ։
Վկայութիւնն յովսէփու՝ զոր եդ
ընդ նմա. որպէս ելանէր նա յերկ-
րէն եգիպտացւոց, լեզու զոր ոչ
գիտէր՝ լուաւ։
Ի բաց արար 'ի բեռանց զթիկունս
նորա. և զձեռս նորա յորթ և 'ի
թի ծառայելոյ։

Ի նեղութեն կարդացեր առ իս՝ և փրկեցի զքեզ. լուայ քեզ 'ի գաղտնուէ մրրկին, և փորձեցի զքեզ 'ի վերայ ջուրցն հակառակութեան։

Լուր ժողովուրդ իմ և վկայեմ քեզ. և իէլ՝ թէ լուիցես ինձ։

Մի եղիցին քեզ աստուածք առժամայնք. և մի երկիրպագանիցես դու աստուծոյ օտարի։

Ես եմ տէր ած քո՝ որ հանի ըզ քեզ յերկրէն եգիպտացւոց. բաց զբերան քո՝ և լցից զդա։

Ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի իմում, և իէլ յիս ինչ ոչ նայեցաւ։

Բարձի թողի զնս երթալ զհետ կամաց սրտից իւրեանց. զի գնացին նոքա ըստ կամս անձանց իւրեանց։

Զի թէ ժողովրդեան իմոյ լուեալ էր ինձ, կամ իսրայէլի զճանապարհըս իմ գնացեալ էր։

Առ ոչինչ խոնարհ արարել էր իմ զթշնամիս նոցա, և 'ի վր նեղչաց նոցա արկեալ էր զձեռն իմ։

Թշնամիք տն ստեցին նմա. և եղի-

ցին ժամանակք նոցա յաշխարհի։
կերակրեաց զնոսա ՚ի պարարտու-
թենէ ցորենոյ, և ՚ի վիմէ մեղր յա-
գեցոյց նոցա։

Նոր կիւրակէին. մինչև ցհամբարձումն։

Գովեա երուսաղեմ զտէր. և օրհ.
և այլն։ (սղ. ճխէ).

═════

Ալէլուիա համբարձմանն Քրիստոսի. մինչև ՚ի Գալուստ
Հոգւոյն սրբոյ։

Համբարձէք իշխանք զդրունս ձեր
՚ի վեր. համբարձցին դրունք յաւի-
տենից, և մտցէ թագաւոր փ̃ց։

Ալէլուիայք ճաշու Հոգւոյն սրբոյ Գալստեան։

Ողորմութեամբ տեառն լի եղև կիր
երկիր, և բանիւ տեառն երկինք
հաստատեցան. և հոգւով բերա-
նոյ նորա ամ̃ զօրութիւնք նոցա։
Եկայք ցնծասցուք ՚ի տէր, աղաղա- բհ
կեսցուք առ ած̃ փրկիչ մեր։
Երգեցէք տեառն երգ նոր. ծառա- դհ
յեցէք տեառն ուրախութեամբ։
Վասն անուան քո տէր՝ կեցուսցես դհ
զիս, արդարութեամբ քով հանցես

՚ի նեղութենէ զանձն իմ։

եշ Ողորմեա ինձ տէր զի հիւանդ եմ
ես. բժշկեա զանձն իմ, զի խռո-
վեցան ոսկերք իմ։

ուր Յիշեա տէր զդաւիթ և զամենայն
հեզութիւն նորա։

շբ Յեկեղեցիս օրհնեցէք զա̃ծ, և զտէր
յաղբերացն իսրայէլի։

Ալէլուիա Տապանակին։

Արի տէր ՚ի հանգիստ քո՝ դու և
տապանակ կտակի սրբութեան քո։

Ալէլուիա ճաշու Այլակերպութեանն Քրիստոսի, որ կոչի Վարդավառ։

կիր Ամպ լուսաւոր հովանի լինէր նց̃.
ձայն եղև յամպոյն՝ որ ասէ, դա է
որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ։

բշ Բարձրութիւնք լերանց նորա են.
նորա է ծով՝ և նա արար զնա, և
զցամաք ձեռք նորա ստեղծին։ Ե-
կայք երկիրպագցուք նմա. անկ-
ցուք և լացցուք առաջի տեառն
արարչին մերոյ։

դշ Քո են երկինք՝ և քո է երկիր. զաշ-
խարհս լրիւ իւրով դու հաստա-

տեցեր · զՀիւսիս և զՀարաւ դու-
արարեր · Թաբոր և Հերմոն յա-
նուն քո ցնծասցեն ։

Ալէլուիա ճաշու նաւակատեաց խաչի և եկեղեցւոյ ։

Սիրեաց տէր զՍիոն և ընտրեաց բնա- շբ
կել 'ի նմա · ասէ՝ այս է հանգիստ իմ
յաւիտեանս յաւիտենից · 'ի սմա
բնակեցայց՝ զի հաճեցայ ընդ սա ։
Տուր զօրութիւն ծառայի քո · կե- կիր
ցո զորդի աղախնոյ քո · և արա առ
իս նշան բարութեան ։
Ետուր երկիւղածաց քոց նշան, զի բշ
ապրեսցին յերեսաց աղեղան ։
Սիրեաց տէր զՍիոն և · որպէս 'ի վերոյ · գշ
Տէր սիրեցի զվայելչութի տան քո, դշ
և զտեղի յարկի փառաց քոց ։
Որպէս սիրելիք են յարկք քո տէր եշ
զօրութեանց · ցանկայ և փափաքէ
անձն իմ 'ի գաւիթս քո ։ Սիրտ իմ
և մարմին իմ՝ ցնծացէ առ աստ-
ուած կենդանի ։
Ետուր երկիւղածաց · որպէս 'ի վերոյ · ուր
Որպէս փրկեցան սիրելիք քո · կեցո շբ

աջով քո, և լուր մեզ։

եկղ Հիմունք նորա 'ի լերան սուրբ նո-
րա. սիրէ տր զդրունս սիոնի առա-
ւել քան զամ յարկսն յակոբայ։

եկղ Փառաւորեալն խօսեցաւ վասն քո,
ահաւադիկ քաղաքդ աստուծոյ։

եկղ Տէր ով կացցէ 'ի խորանի քում.
կամ ով բնակեսցէ 'ի լերան սբ քո։
Որ գնայ անբիծ գործէ զարդարութի.
խօսի զճշմարտութի 'ի սրտի իւրում.

խաչ Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց
քոց. և ետուր ուրախութի սըր-
տից մերոց։

Ալէլուիա ճաշու Վերափոխման Աստուածածնին իՆն աւուրն։

կիր Այսօր ծնաւ որ 'ի հօրէ յառաջ
քան զյաւիտեանս որդին. որ է ա-
ծեալ տէր 'ի քաղաքի դաւթի։ Ի
վայելչութի սբց քոց՝ յարգանդէ յա-
ռաջ քան զարուսեակ ծնայ զքեզ։

բշ Ուրախ լեր բերկրեալդ տէր ընդ
քեզ. օրհնեալ ես դու 'ի կանայս,
և օրհնեալ է պտուղ որովայնի քո։

գշ Արի տէր 'ի հանգիստ քո. դու և
տապանակ կտակի սրբութե քո։

Ալէլուիայք ձայնու Աւետեաց Աստուածածնին։

Ուրախ լեր բերկրեալդ. որպէս 'ի վերոյ։

Ալէլուիայք ձայնու Ծննդեան ըստ աւուրց։

Հոգին սուրբ եկեսցէ 'ի քեզ. և ձրգ
զօրութիւն բարձրելոյն հովանաւ-
ցի քեզ։

Այսօր ծնաւ որ 'ի. Ն այլն որպէս 'ի վերոյ։ ա
Հոգւով սրբով զօրացեալ սուրբ բ
ստեփաննոս. և ընտրեալ յոլո-
վայնէ. ճշմարիտ վկայ. սիրող և ա-
ռաքեալ առաքողին. 'ի քրիստոսէ
ընկալար զզուարթնոցն զպսակ։

Կարապետն յովհաննէս զարհու- գ
րեալ՝ 'ի յորովայնէ յորովայն եր-
կրպագէր. սպասաւոր եղեւ բա-
նին աստուծոյ. և լուեալ զահա-
ւոր զձայնն՝ աղաղակէր ասելով,
ահա գառն աստուծոյ որ բառնայ
զմեղս աշխարհի։

Ուրախ լեր բերկ. Ն այլն որպէս 'ի վերոյ։ դ
Դու մանուկ՝ մարգարէ բարձրելոյն ե
կոչեսցիր. գնասցես առաջի տեառն՝
պատրաստել զճանապարհս նորա։

Ածան զիս 'ի գբոյ տառապանաց. զ

'ի կաւոյ և 'ի տղմոյ։ Հաստատեաց 'ի վերայ վիմի զոտս իմ. և ուղղեաց զգնացս իմ։

կամ Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի. և տէր ընդ աջմէ քումմէ։

է Երդուաւ տէր դաւթի ճշմարտութեամբ՝ և ոչ ստեաց նմա, 'ի պտղոյ որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա։

ը Ուրախ լեր բերկ. և այլն որպէս 'ի վերոյ։

Աւէլուիայ ճաշու քառասնօրեայ Գալստեանն Քրիստոսի 'ի տաճարն։

Տէր 'ի տաճար սուրբ իւրում. տէր յերկինս յաթոռ իւրում։

Մեծի ողորմեան ճաշուն։

Տէր ա̃ծ մեր երեւեցաւ մեզ. արարէք տօնս ուրախութեան կանխաւ, մինչեւ յանկիւնս սեղանոյ։

Աւէլուիա ճաշու Հրեշտակապետաց։

Ողորմութեամբ տեառն լի եղեւ երկիր, և բանիւ տեառն երկինք հաստատեցան. և հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք ն̃ց։

Յովհաննու կարապետին ։

Դու մանուկ մարգարէ . որպէս ՚ի վերոյ .

Յովհաննու գլխատման ։

Կարապետն յովհաննէս . որպէս ՚ի վերոյ ։

Համօրէն Մարգարէից ։

Յեկեղեցիս օրհնեցէք զա̃ծ, և զտ̃ր յաղբերաց իսրայէլի ։

Ամենայն Առաքելոց ։

Կացուսցես զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր . և յիշեսցի անուն քո ընդ ա̃մ ազգս ազգաց ։
Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա, և մինչև ՚ի ծագս աշխարհի են խօսք նոցա ։

Դաւթի և Յակոբայ ։

Յիշեա տէր զդաւիթ, և զամենայն հեզութիւն նորա ։

Նախահարցն ։

Պատմէ զբան իւր յակոբայ զարդարութ̃ի և զիրաւունս իսրայէլի ։

Գրիգորի լուսաւորչին ։

Համբերելով համբերի տեառն, և նայեցաւ առ իս . և լուաւ աղօթից իմոց ։

Հայրապետաց և վարդապետաց ·

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն · և սուրբք քո ցնծալով ցնծասցեն ։

Ճգնաւորաց ·

Երանելի են որք բնակեալ են 'ի տան տեառն · յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ ։

Կուսանաց ։

Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ՝ 'ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ ։
Տարցին թագաւորի կուսանք զհետ նր · և զընկերս նր տարցին նմա ։

Թագաւորաց ·

Տէր 'ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն · 'ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ ։

Քառասնից՝ և երկուց բիւրուցն ։

Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր, և հաներ զմեզ 'ի հանգիստ ։

Մեծի հինգշաբաթի ։

Պատրաստ արարեր առաջի իմ ըզսեղան՝ ակն յանդիման նեղչաց իմոց ։

Այգուց։

Ընդ երեկոյս հանգիցէն լալիք. ա-
ռաւօտու եղիցի ուրախութիւն։

Ալէլուիա ճաշու Մարտիրոսաց։

Տէր սիրէ զիրաւունս. և ոչ ընդ աձ
վայր հարկանէ զսուրբս իւր. այլ
յաւիտեան պահէ զնոսա։

Փրկութիւն արդարոց ՚ի տեառնէ կամ
է. վերակացու է նոցա ՚ի ժամանա-
կս նեղութեան։

Պարծեսցին սբքն փառօք՝ և ցըն- ակ
ծասցեն ՚ի հանգիստ իւրեանց. և
բարձր արասցեն զաստուած բերա-
նոք իւրեանց։

Լոյս ծագեաց արդարոց. ուղղոց կամ
սրտից եղեւ ուրախութիւն։

Պարծեսցին սբքն փառօք. որպէս ՚ի վերոյ։ բձ

Կարդացին արդարքն առ տէր, և բկ
տէր լուաւ նոցա. յամ նեղութէ
նոցա փրկեաց զնոսա։

Վասն քո մեռանիմք զօրհանապազ. գձ
համարեցաք որպէս զոչխար ՚ի զե-
նումն։

Ուրախ լիցին ամենեքեան որք յու- գկ

սացեալ են 'ի քեզ . յաւիտեան ցըն-
ծասցեն . և բնակեսցիս դու 'ի նս :

գձ Արդարքն որպէս զարմաւենիս ծաղ-
կեսցին . որպէս զմայրսն լիբանանու
բազումք եղիցին :

գկ Բազում նեղութիւնք են արդա-
րոց . յամենայնէ փրկէ զնոսա տէր .
և պահէ զամենայն ոսկերս նոցա .
և մի 'ի նոցանէ ոչ կորիցէ :

Ապա ընթեռնանի աւետարան ըստ պատշաճի . և յետոյ ասի հանգանակն նիկիական .

Աւետարան ըստ Մատթէոսի . Ե . 1 .

Եւ տեսեալ զժողովուրդն՝ ել 'ի լեառն . և իբրև նստաւ անդ՝ մատեան առ նա աշակերտքն նորա . և բացեալ զբերան իւր ուսուցանէր զնոսա , և ասէր : Երանի աղքատաց հոգւով , զի նոցա է արքայութիւն երկնից : Երանի սգաւորաց , զի նոքա մխիթարեսցին : Երանի հեզոց , զի նոքա ժառանգեսցեն զերկիր : Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան , զի նոքա

յագեցցին ։ Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն ։ Երանի այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զաստուած տեսցեն ։ Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք աստուծոյ կոչեսցին ։ Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութե, զի նոցա է արքայութիւն երկնից ։ Երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն, և ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ ։ Ցնծացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս. զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յառաջ քան ըզ ձեզ էին ։

Աւետարան ըստ Մարկոսի ։ գ. 13 ։

Ելանէ 'ի լեառն՝ և կոչէ առ ինքն զորս ինքն կամեցաւ, և չոքան առ նա ։ Եւ արար երկոտասանս՝ զի իցեն զնովաւ, և զի առաքեսցէ ըզ նոսա քարոզել. և ունել իշխանութիւն բժշկելոյ զցաւս՝ և հանելոյ զդեւս ։ Եւ եդ անուն սիմոնի՝ պետ-

րոս. և յակովբու զեբեդեայ՝ և յովհաննու եղբօրն յակովբայ, եդ նոցա անուանս բաներեգէս, որ է՝ որդիք որոտման, և զանդրէաս, և զփիլիպպոս, և զբարդուղիմէոս, և զմատթէոս զմաքսաւորն. և զթովմաս, և զյակովբոս ալփեայ, և ըզթադէոս, և զսիմովն կանանացի. և զյուդա իսկարիովտացի, որ և մատնեացն զնա։

Աւետարան ըստ Ղուկասու։ ժդ. 12։

Ասէ և ցկոչնատէրն. յորժամ առնիցես ճաշ կամ ընթրիս, մի կոչեր զբարեկամս քո, և մի զեղբարս քո, և մի զազգականս քո, և մի զդրացիս քո, և մի զմեծամեծս. զի մի և նոքա փոխարէն կոչեսցեն ըզքեզ, և լինիցի քեզ հատուցումն։ Այլ յորժամ առնիցես ընդունելութիւն, կոչեա աղքատս և ըզխեղս և զկաղս և զկոյրս։ Եւ երանելի լինիցիս. զի ոչ ունին փոխարէն հատուցանելոյ քեզ. և հատուցի քեզ փոխարէն 'ի յարու-

թեան արդարոց։ Իբրեւ լուաւ զայս ոմն 'ի բազմականացն՝ ասէ ցնա. Երանի որ կերիցէ հաց յարքայութեանն Աստուծոյ։

Աւետարան ըստ Յովհաննու։ Ժ. 11։

Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ 'ի վերայ ոչխարաց։ Իսկ վարձկանն՝ որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարքն. իբրեւ տեսանէ զգայլն զի գայ՝ թողու զոչխարսն եւ փախչի. եւ գայլն յափշտակէ զնոսա եւ ցրուէ. քանզի վարձկան է, եւ չէ փոյթ նմա վասն ոչխարացն։ Ես եմ հովիւն քաջ, եւ ճանաչեմ զիմսն՝ եւ ճանաչիմ յիմոցըն։ Որպէս գիտէ զիս հայր, գիտեմ եւ ես զհայր. եւ զանձն իմ դընեմ 'ի վերայ ոչխարաց։ Նաեւ՝ այլ եւս ոչխարք են իմ, որք ոչ են յայսըմ գաւիթէ. եւ զայն եւս պարտ է ինձ ածել այսր. եւ ձայնի իմում լուիցեն, եւ եղիցին մի հօտ՝ եւ մի հովիւ։

փառք քեզ տէր աստուած մեր։

Հաւատամք 'ի մի Աստուած 'ի Հայ-
րըն ամենակալ՝ յարարիչն երկնի և
երկրի, երեւելեաց և աներեւու-
թից: Եւ 'ի մի Տէր Յիսուս Քրիս-
տոս Որդին Աստուծոյ՝ ծնեալն յա̃յ
Հօրէ՝ միածին, այսինքն յէութենէ
Հօր: Աստուած յԱստուծոյ, լոյս 'ի
լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱս-
տուծոյ ճշմարտէ՝ ծնունդ և ոչ
արարած: Նոյն ինքն 'ի բնութենէ
Հօր. որով ամենայն ինչ եղեւ յեր-
կինս և 'ի վերայ երկրի, երեւելիք
և աներեւոյթք: Որ յաղագս մեր
մարդկան և վասն մերոյ փրկուե̃
իջեալ 'ի յերկնից՝ մարմնացաւ, մար-
դացաւ. ծնաւ կատարելապէս 'ի
մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն
սրբով: Որով էառ զմարմին զհո-
գի և զմիտ, և զամենայն որ ինչ
է 'ի մարդ, ճշմարտապէս և ոչ կար-
ծեօք: Չարչարեալ, խաչեալ, թա-
ղեալ, յերրորդ աւուր յարուցեալ,
ելեալ 'ի յերկինս նովին մարմնովն

նստաւ ընդ աջմէ հօր։ Գալոց է նովին մարմնովն և փառօք հօր 'ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։ Հաւատամք և 'ի սուրբ հոգին՝ յանեղն և 'ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս։ Որ էջն 'ի յորդանան, քարոզեաց զառաքեալըն, և բնակեցաւ 'ի սուրբսն։ Հաւատամք և 'ի մի միայն ընդհանրական և յառաքելական եկեղեցի, 'ի մի մկրտութիւն, յապաշխարութի, 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։ Ի յարութիւնն մեռելոց, 'ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարքայութին երկնից և 'ի կեանսն յաւիտենականս։

Ա՛ինչ— ցասպ էն հաւատոյ բանք։

Իսկ որք ասեն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր որդի. կամ էր երբեմն, յորժամ ոչ էր սուրբ հոգի. կամ թէ՝ յոչէից եղեն, կամ յայլմէ է-

ութենէ ասեն լինել զորդին մի և
կամ զսուրբ հոգին. և թէ՝ փո-
փոխելիք են կամ այլայլելիք, զայն-
պիսին նզովէ կաթուղիկէ և ա-
ռաքելական եկեղեցի։

Ի սուրբ Լուսաւորչէն մերմէ ասացեալ։

Իսկ մեք փառաւորեսցուք որ յա-
ռաջ քան զյաւիտեանս, երկրպա-
գանելով սրբոյ երրորդութեանն և
միոյ աստուածութեանն հօր և որդւոյ և
հոգւոյն սրբոյ, այժմ և։

Քրդ Եւ եւս խաղաղութեան զտէր ա։
Եւ եւս հաւատով աղաչեսցուք և
խնդրեսցուք ՚ի տեառնէ աստու-
ծոյ և ՚ի փրկչէն մերմէ յիսուսէ քը-
րիստոսէ ՚ի ժամուս պաշտաման և
աղօթից, զի արժանի ընդունելու-
թեան արասցէ. լուիցէ տէր ձայ-
նի աղաչանաց մերոց, ընկալցի ըզ-
խնդրուածս սրտից մերոց, թողցէ
զյանցանս մեր, ողորմեսցի ՚ի վե-
րայ մեր։ Աղօթք մեր և խընդըր-
ուածք յամենայն ժամ մտցեն առա-
ջի մեծի տէրութեան նորա, եւ

Նա տացէ մեզ միաբան մտով հաւատով և արդարութեամբ վաստակիլ 'ի գործս բարեաց, զի ողորմութեան շնորհն իւր՝ արասցէ 'ի վերայ մեր տէրն ամենակալ, կեցուսցէ և ողորմեսցի: Զ. ժամն և: Զ. հրեշ: Զ. քաւութի: Զ. տէյ խա: Եւ եւս: Զ. անձինս: Ողորմեաց:

Աղօթք:

Տէր մեր և փրկիչ յիսուս քրիստոս. որ մեծդ ես ողորմութեամբ և առատ պարգևօք բարերարութեան քո: Որ դու քոյին կամաւդ 'ի ժամուս յայսմիկ համբերեցեր չարչարանաց խաչի և մահու՝ յաղագս մեղաց մերոց: Եւ պարգևեցեր առատապէս զպարգևս հոգւոյդ սրբոյ երանելի առաքելոցն: Զաղօթս սրա և զմեզ տէր աղաչեմք զքեզ՝ աստուածային պարգեւացդ. թողութեան մեղաց և ընդունելութեան հոգւոյդ սրբոյ: Որպէս զի՝ արժանաւորք եղիցուք գոհութեամբ փառաւորել զքեզ

ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ. այժմ և միշտ և։

Խաղաղութիւն ամենեցուն։

Խաղաղութեամբ քով ք̃ս փրկիչ մեր. որ 'ի վեր ես քան զամենայն միտս և զբանս. ամրացո զմեզ և աներկիւղ պահեա յամենայն չարէ։ Հաւասարեա զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս քո. որք հոգւով և ճշմարտութեամբ քեզ երկրպագանեն։ Վասն զի՝ ամենասուրբ երրորդութեանդ վայելեն փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և։

Օրհնեալ տէր մեր յ̃ս ք̃ս։ Տէր ա̃ծ օրհնեսցէ զամենեսեանդ. ամէն։

Հայր մեր որ յերկինս ես։

դպ Միայն սուրբ. միայն տէր. յ̃ս ք̃ս 'ի փառս աստուծոյ հօր. ամէն։

քհ Օրհնեալ Հայր ս̃բ՝ Ա̃ծ ճշմարիտ։

դպ Ամէն։

քհ Օրհնեալ Որդին ս̃բ՝ Ա̃ծ ճշմարիտ։

դպ Ամէն։

քհ Օրհնեալ Հոգին ս̃բ՝ Ա̃ծ ճշմարիտ։

դպ Ամէն։

Օրհնութիւն և փառք Հօր և ։ քհ
Հայր մբ ։ Որդիդ մբ ։ Հոգիդ մբ ։ դպ
Օրհնութի Հօր և Որդւոյ և սըր- քհ
բոյ Հոգւոյն, այժմ և միշտ և ։
Եղիցի անուն տն օրհնեալ՝ յայսմհե- դպ
տէ մինչև յաւիտեան ։ Երիցս կրկնե ։
Կատարումն օրինաց և մարգարէից քհ
դու ես քրիստոս աստուած փըր-
կիչ մեր. որ լցեր զամենայն հայ-
րական տնօրէնութիւնս քո. լից և
զմեզ հոգւովդ քով սրբով ։
Օրհնեցից զտէր յամենայն ժամ. սրկ
յամենայն ժամ օրհնութիւն նորա
՚ի բերան իմ ։
Օրհնեալք եղերուք ՚ի շնորհաց քհ
սրբոյ հոգւոյն. երթայք խաղա-
ղութեամբ. և տէր եղիցի ընդ
ձեզ և ընդ ամենեսեան ամէն ։

Օրհնութիւն սեղանոյ վասն մարմնաւոր կերակրոց ․ և ըմպելեաց ․

Պատրաստեն զսեղանն հայր, և զարդարեն կերակրօք, և հանգնեն իւրաքանչիւրոք 'ի տեղիս իւրեանց ։ Եւ գայ եկեղեցականն, կամ քահանայն, և ասէ, սաղմոս կցորդ ։

Աչք ամ͞ցն 'ի քեզ յուսան, և դու տաս կերակուր նոցա 'ի ժամու ։

դպ Բարձր առնեմ զքեզ աստուած իմ, և թագաւոր իմ, և օրհնեմ զանուն քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից ։

Զօրհանապազ օրհնեցից զքեզ, և գովեցից զանուն քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից ։

Մեծ է տէր և օրհնեալ է յոյժ, և մեծութեան նորա ոչ գոյ չափ ։

Ազգք և ազգք գովեսցեն զգործս քո, և զզօրութ͞իս քո պատմեսցեն ։

Զմեծվայելչութիւն փառաց սրբութեան քո խօսեսցին, և զսքանչելիս քո պատմեսցեն ։

Զզօրութիւն ահի քո ասասցեն, և զմեծութիւնս քո պատմեսցեն ։

Զյիշատակ բազում քաղցրութ͞ե քո բղխեսցեն, և արդարութեամբ

քո ցնծասցեն ։

Գթած ողորմած է տէր, երկայնա-
միտ և բազումողորմ։

Քաղցր է տէր առ ամենեսեան, և
գթութիւն նորա 'ի վերայ ամենայն
արարածոց իւրոց ։

Խոստովան եղիցին առ քեզ տէր
ամենայն գործք քո. և սուրբք քո
օրհնեսցեն զքեզ ։

Զփառս արքայութեան քո ասաս-
ցեն, և զզօրուի̃ս քո պատմեսցեն ։

Ծանուցել որդւոց մարդկան զզօրու-
թիւնս քո, և զփառս մեծվայել-
չութեան արքայութեան քո ։

Արքայութիւն քո արքայութիւն
ամենայն յաւիտենից. և տէրութի̃
քո ազգէ մինչև յազգ ։

Հաւատարիմ է տէր յամենայն բա-
նըս իւր, և արդար է յամենայն
գործս իւր ։

Հաստատէ տէր զա̃մ գայթակղեա-
լըս, և կանգնէ զա̃մ գլորեալս ։

Աչք ամենեցուն 'ի քեզ յուսան,
և դու տաս կերակուր նց̃ 'ի ժամու ։

Տաս դու նոցա և կերակրին, բա-
նաս զձեռն քո, և լցուցանես զա-
մենեսեան քաղցրութ̃ կամօք քովք ։
Արդար է տէր յա̃մ ճանապարհս
իւր, և սուրբ է յա̃մ գործս իւր ։
Մերձ է տէր առ ամենեսեան՝ որք
կարդան առ նա, առ ամենեսեան՝
որք կարդան առ նա ճշմարտութ̃ ։
Զկամս երկիւղածաց իւրոց առնէ
տէր, աղօթից նոցա լսէ և կեցու-
ցանէ զնոսա ։

Պահէ տէր զամենեսեան որք սիրեն
զնա, և զա̃մ մեղաւորս սատակէ տ̃ր ։
Զօրհնութիւնս տեառն խօսեսցի
բերան իմ. օրհնեսցէ ամենայն կեն-
դանի զանուն սուրբ նորա յաւի-
տեան, և յաւիտեանս յաւիտենից ։

Փառք հօր և որդւոյ և ։

քհ Ողորմած գթած է տ̃ր. կերակուր
տայ երկիւղածաց իւրոց ։

սրկ Եւ ես խաղաղութեան զտէր ա ։

սրկ Աղաչեսցուք զամենակալն ա̃ծ՝
զի պարգեւեսցէ մեզ կերակուր
ուրախութեան, և լցուսցէ զմի-

տըս մեր 'ի լիութենէ արարածոց իւրոց: Ամենակալ տէր ա͞ծ մեր:

Օրհնեա քրիստոս աստուած մեր քհ
հոգեւոր օրհնութեամբ զկերակուրս և զըմպելիս ծառայից քոց. և շնորհեա առողջութիւն հոգւոյ և մարմնոյ: Որպէս զի կրօնաւորական պարկեշտութեամբ վայելելով 'ի մարմնաւոր պիտոյից՝ անանց բարեացդ և երկնից արքայութե͞դ հաղորդս լիցուք ընդ ամենայն ս͞բս քո: Եւ գոհութեամբ փառաւորեսցուք զքեզ ընդ հօր և ամենասուրբ հոգւոյդ. այժմ և:

Հայր մեր որ յերկինս ես:

Եւ օրհնող սեղանոյն կալով կանգուն՝ և առեալ զհացըն բեկանէ ընդ պատուաւորսն, որք առընթեր կան. կամ զհետ այնորիկ, որ պատրաստող է ճաշոյն. և նոքա առ ամենեսեան. և ասէ, Ճաշակեցէք խաղաղութ. և նստին 'ի ճաշն: Իսկ եթէ վանականք իցեն, կամ անապատաւորք, նստի մինն յեղբարց 'ի բարձրագոյն տեղւոջ. և առեալ ընթեռնուցու զգիրս աստուածային. և ամենեքեան ունկն դիցեն ընթերցմանն՝ անմռունչ ճաշակմամբ: Եւ եթէ ոչ խնդրեսցէ զլուծումն ինչ տարակուսանաց, լուծցեն՝ որք կարողքն իցեն. և դադարեալ ճաշելոյն լռելեայն, և ոչ աղաղակաւ: Եւ յետ յա-

Ներքոյ 'ի սեղանոյն, դարձեալ կացցեն 'ի փեղկս խորանոյ ։
Եւ ասասցէ քահանայն ։

Քհ Տէր յմ̃ լցաք 'ի բարութեց̃ քոյ ։
Դպ Տացուք գոհութի̃ տ̃ն ա̃յ մերոյ ։
Աչ.ք տեառն 'ի վերայ երկիւղածաց
իւրոց, և ո.ք յուսան յողորմու-
թիւն Նորա ։
Փրկել 'ի մահուանէ զանձինս Նոցա,
և կերակրել զնոսա 'ի սովու ։
Անձինք մեր համբերեսցեն տեառն,
զի օգնական և պաշտպան մեր է ։
Ի նա ուրախ եղիցին սիրտք մեր,
և յանուն սբ̃ Նորա յուսասցուք ։
Եղիցի ողորմութի̃ քո տէր 'ի վերայ
մեր, որպէս յուսացաք 'ի քեզ ։
Փառք հօր և որդւոյ և ։
Քհ Կերակրիչ և ուրախարար տէր,
փառք քեզ. լցուցանող քրիստոս
գոհանամք զքէն ։
Եւ ևս խաղաղութեան զտէր ա ։
Սրկ Գոհացարուք 'ի վերայ լիութեանց
պարգևաց տեառն աստուծոյ մե-
րոյ ։ Որ կերակրէ զմեզ օր ըստ օրէ
առատապէս քաղցրութեամբ կա-

մօք իւրովք։ Զի հոգեւոր բարու-
թեանն եւ երկնից արքայութեանն
հաղորդս արասցէ զծառայս քո
ըստ անձկալութեան յուսոյն մերոյ։
Ամենակալ։

Աղօթք։

Օրհնեալ ես տէր աստուած մեր՝
որ կերակրես զմեզ ՚ի մանկութէ,
եւ տաս կերակուր ա̃մ մսեղեաց.
լցո ուրախութեամբ եւ բերկրու̃թ
զսիրտս մեր։ Որպէս զի զամենայն
բաւականութիւն ունիցիմք առա-
ւելեալք ՚ի գործս բարութեան ՚ի
քրիստոս յս̃ ՚ի տէր մեր։ Որում
վայելէ փառք իշխանութիւն եւ
պատիւ. այժմ եւ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Փառք քեզ տէր՝ փառք քեզ թա-
գաւոր փառաց. որ ետուր մեզ
կերակուր ուրախութեան, եւ լցու-
ցեր զսիրտս մեր ՚ի լիութէ ամե-
նաբաւական ողորմութեան քո.
լցո եւ այժմ զմեզ հոգւովդ քով
սրբով. որպէս զի գտցուք առաջի

քոյ հաճոյք, և մի՛ ամաչեցեալք, զի դու գաս և հատուցանես իւրաքանչիւր ըստ գործս իւր. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և։

Օրհնեալ տէր մեր յս֊ քս֊. ամէն։

Հայր մեր որ յերկինս ես։

Զկերողքս աստուած օրհնեսցէ. սպասաւորացն և երախտաւորացն վարձս բարեաց պարգևեսցէ. և օրհնեսցէ զամենեսեան։ Քրիստոս աստուած որ զմեզ կերակրեաց և լիացոյց, նմա փառք յաւիտեանս ամէն։



Կարգաւորութիւն հասարակաց աղօթից երեկոյի ժամուն ։ Որ կատարի 'ի դէմս որդւոյն Աստուծոյ, որ էջ 'ի խաչէն և պատեալ պատանակաւ՝ եդաւ 'ի գերեզմանի ։

Ես առ աստուած կարդացի, և նա լուաւ ինձ յերեկոյս՝ 'ի վաղորդայն՝ և 'ի հասարակ աւուր ։ Սպասէի աստուծոյ իմոյ, և ակնունէի կենարարին. որ փրկէ զծառայս իւր և կեցուցանէ ։

Փառք հօր և որդւոյ և ։

Եւ եւս խաղաղութեան զտէր ա ։

Օրհնութիւն և փառք հօր և ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

---

Սաղմոս. ձե ։

Խոնարհեցո տէր զունկն քո և լուր ինձ. զի աղքատ և տնանկ եմ ես ։

Պահեա զանձն իմ սուրբ տէր. և

փրկեա զծառայս քո աստուած իմ
որ 'ի քեզ յուսացայ ։

Ողորմեա ինձ տէր զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ, ուրախ արա զանձն ծառայի քո, զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ։

Զի դու տէր քաղցր և ուղիղ ես, բազումողորմ առ ամենեսեան որք կարդան առ քեզ։

Ունկնդիր տէր աղօթից իմոց, և նայեա 'ի ձայն խնդրուածաց իմոց ։

Յաւուր նեղութեան իմոյ կարդացի առ քեզ, և լուար ինձ ։

Ոչ ոք է նման քեզ յածս տէր, և ոչ ոք է որպէս զգործս քո ։

Զամենայն ազգս զոր արարեր՝ եկեսցեն և երկիրպագցեն առաջի քո, և փառաւոր արասցեն զանուն քո յաւիտեան ։

Մեծ ես դու տէր և առնես սքանչելիս, և դու միայն ես աստուած ։

Առաջնորդեա ինձ 'ի ճանապարհի քում, և գնացից 'ի ճշմարտութե

քում, և ուրախ եղիցի սիրտ իմ՝
երկնչիլ յանուանէ քումմէ։
Խոստովան եղէց առ քեզ տէր ա͞ծ
իմ բոլորով սրտիւ իմով. փառա-
ւոր արարից զանուն քո յաւիտեան։
Մեծ եղեւ 'ի վերայ իմ ողորմու-
թիւն քո տէր, և փրկեցեր զանձն
իմ 'ի դժոխոց ներքնոց։
Աստուած՝ անօրէնք յարեան 'ի վե-
րայ իմ, և ժողովք հզօրաց խնդ-
րեցին զանձն իմ, և ոչ համարե-
ցան զքեզ ա͞ծ առաջի իւրեանց։
Այլ դու տէր աստուած իմ՝ գը-
թած ես և ողորմած, երկայնամիտ
բազումողորմ և ճշմարիտ, նայեա
առ իս և ողորմեա ինձ։
Տուր զօրութ͞ի ծառայի քո, կեցո
զորդի աղախնոյ քո, և արա առ իս
նշան բարութեան։
Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն,
զի դու տէր օգնեցեր ինձ և մխի-
թարեցեր զիս։
Փառք հօր և որդւոյ և։
Փառք քեզ աստուած՝ փառք քեզ. մաղ

յաղագս ծմի՝ տէր փառք քեզ։
Եւ ես խաղաղութեան զտէր ա։
Օրհնութիւն և փառք հօր և։

Խաղաղութիւն ամենեցուն։

Սաղմոս. ճլթ։

Ապրեցո զիս տէր 'ի մարդոյ չարէ, յառնէ անիրաւէ փրկեա զիս։
Խորհեցան զանօրէնութիւն 'ի սիրտըս իւրեանց, զոր ամենայն պատրաստեցան 'ի պատերազմ։
Սրեցին զլեզուս իւրեանց որպէս զօձի, և թոյնք իժից 'ի ներքոյ շըրթանց նոցա։
Պահեա զիս տէր 'ի ձեռաց մեղաւորի, և 'ի մարդոյ չարէ փրկեա զիս։
Խորհեցան խափանել զգնացս իմ, թագուցին ամբարտաւանք որոգայթ ինձ։
Լարս ձգեցին որոգայթ ոտից իմոց, շուրջ զշաւղօք իմովք եդին ինձ գայթակղութիւն։
Ասացի տր ած իմ ես դու, ունկն դիր տէր ձայնի աղօթից իմոց։
Տէր տէր զօրութիւն փրկութեան

իմոյ, հովանի գլխոյ իմոյ յաւուր
պատերազմի։
Մի՛ մատներ զիս տ՟ր ՚ի ցանկու՟ի մե-
ղաւորաց, զ.ք խորհեցան վ՟ իմ՝
մի՛ ընդ վայր հարկաներ զիս։
Զ.ի մի՛ երբէք բարձրասցին, և խոր-
հուրդ.ք նց մի՛ կատարեսցին. վախ-
ճան կատարածի նոցա վաստակ շըր-
թանց իւրեանց ծածկեսցէ զնոսա։
Արկցես ՚ի վերայ նց զկայծակունս
հրոյ, և կործանեսցես զնս. ՚ի տա-
ռապանաց մի՛ կարասցեն կեալ։
Մարդոյ լեզուանւոյ մի՛ յաջողեսցի
՚ի վերայ երկրի. զայր մեղաւոր չա-
րիք իւր որսասցեն ՚ի կորուստ։
Ծանեայ զի առնես տ՟ր դատաստան
աղքատի, և իրաւունս տնանկի։
Արդարք գոհասցին զանուանէ քում-
մէ, և բնակեսցին ուղիղք առաջի
երեսաց քոց։
Տէր կարդացի առ քեզ և լուր ինձ,
նայեա ՚ի ձայն աղօթից իմոց ՚ի
կարդալ իմում առ քեզ։
Ուղիղ եղիցին աղօթք իմ ո՟ր խունկ

առաջի քո տէր. համբարձումն ձե-
ռաց իմոց պատարագ երեկոյի:

Դիր տէր պահապան բերանոյ իմոյ.
և դուռն ամուր շրթանց իմոց, զի մի
խոտորեսցի սիրտ իմ բանիւ չարուե:

Ի պատճառել զպատճառս մեղաց
ընդ մարդս՝ ոյք գործեն զանօրէ-
նութիւն. և ոչ եղէց կցորդ ընտ-
րելոց նոցա:

Խրատեսցէ զիս արդարն ողորմուբ՝
և յանդիմանն արասցէ. իւղ մեղա-
ւորի մի օծցէ զգլուխ իմ, այլ ա-
ղօթք իմ 'ի կամս նորա:

Արգելան մերձ առ վիմին դատա-
ւորք նոցա. լուիցեն բանից իմոց
և քաղցրասցին:

Ոպ թանձրուի հողոյ՝ զի սփռեալէ
'ի վերայ երկրի. ցրուեսցին ոսկերք
նոցա մերձ 'ի դժոխս:

Առ քեզ տր տր են աչք իմ, 'ի քեզ
յուսացայ՝ մի հաներ զհոգի յինէն:

Պահեա զիս յորոգայթէ որ թա-
ղուցան ինձ, 'ի գայթագղութենէ
գործողին զանօրէնութիւն:

Ընկեցին 'ի ցանցս նորա մեղաւորք,
միայն եմ ես մինչեւ անցից:
Ձայնիւ իմով ես առ տէր կարդա-
ցի. ձայնիւ իմով զտէր աղաչեցի:
Սփռեցից առաջի տեառն զաղօթս
իմ, եւ զնեղութիւնս իմ առաջի նո-
րա պատմեցից:
Ի նուաղել յինէն հոգւոյ իմոյ, դու
տէր ծանեար զշաւիղս իմ, 'ի ճա-
նապարհ յոր եւ գնայի, թագու-
ցաւ ինձ որոգայթ:
Հայէի յաջմէ եւ տեսանէի, եւ ոչ
ոք ճանաչէր զիս. կորեաւ յինէն
փախուստ իմ. եւ ոչ գտաւ խնդ-
րող անձին իմոյ:
Աղաղակեցի առ քեզ տէր եւ ասա-
ցի, դու ես յոյս եւ բաժին իմ յերկ-
րին կենդանեաց:
Նայեա տ̃ր յաղօթս իմ զի ես խոնարհ
եղէ յոյժ. ապրեցո զիս 'ի հալած-
չաց իմոց, զի հզօրք եղեն քան զիս:
Տէր հան 'ի բանտէ զանձն իմ, գո-
հանամ զանուանէ քումմէ:
Եւ քեզ սպասեն արդարք՝ մինչեւ

հատուցես ։

փառք հօր և որդւոյ և ։

Երգ կերակամունից ։

Ալէլուիա. Ալէլուիա ։

Լոյս զուարթ սուրբ փառաց անմահի, հօր երկնաւորի սրբոյ կենարարի յիսուս քրիստոս ։ Եկեալքս 'ի մտանել արեգականն, տեսաք ըզլոյս երեկոյին ։ Օրհնեմք ըզհայր և զորդի և զսուրբ հոգին աստուծոյ ։ Եւ ամենեքեան ասեմք ամէն ։ Արժանաւորեա զմեզ յամենայն ժամ, օրհնել ձայնիւ երգով զանուն փառաց ամենասուրբ երրորդութեանդ ։ Որ տաս ըզ կենդանութիւն վասն որոյ և աշխարհս զքեզ փառաւորէ ։

Մաղթանք ։

Օրհնեալ տէր՝ որ բնակեալդ ես 'ի բարձունս, և օրհնեալ են փառք

մեծութեան քոյ. որ հաստատե֊ցեր զլուսաւորս 'ի բարձունս. 'ի յերկնից լոյս ծագեցեր ընդ ամենայն տիեզերս: Արարեր զարեգակն լուսատու տունջեան, զլուսինն և զաստեղս՝ լուսատու գիշերոյ, և զլոյս ճրագի. դու ես լոյս գովելի. սուրբ և առաջին լոյսն. 'ի քէն փախնու խաւարն. և զլոյս քո կենդանի՝ տէր, ծագեա 'ի սիրտս մեր: Եւ մեք միաբան ասասցուք, օրհնեալ է անուն սուրբ փառաց քոց. և քեզ երգեմք զօրհնութիւն և զփառս հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ, այժմ և:

Քարոզ:

Հասեալքս 'ի ժամ երեկոյիս ամենեքեան համբառնալով զձեռս մեր փառաւորեմք զքեզ տէր ած մեր. որ շնորհեցեր մեզ զտիւս խաղաղութեամբ անցուցանել. և հասանիլ 'ի ժամ երեկոյիս: Արժանաւորեա զմեզ տէր՝ սուրբ սրտիւ, հրրեշտակային երգով՝ գոհաբանու֊

Թիւն մատուցանել տեառն աս-
տուծոյ ամենակալին․ կեցո և ողոր-
մեա։ Ողորմեաց մեզ տէր աստ-
ուած մեր ըստ մեծի ողորմութե-
քում․ ասասցուք ամենեքեան մի-
աբանութեամբ։

Տէր ողորմեա․ տէր ողոր․ տէր ո։

Մաղթանք․

Հասեալքս 'ի ժամ երեկոյիս ամե-
նեքեան՝ անդադար փառաւորեմք
զհայր և զորդի և զսուրբ հոգին,
այժմ և։

---

Մեսեդիք ծննդեանն Քրիստոսի, և Աւետեաց, և Վերափոխ-
մանն, և՝այլոց տօնից Աստուածածնին․

ա Տէր ասաց ցիս՝ որդի իմ ես դու,
և ես այսօր ծնայ զքեզ։
Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք․ և
ժողովուրդք խորհեցան 'ի սնոտիս։
բ Մեծացուսցէ անձն իմ զտէր․ և
ցնծասցէ հոգի իմ աստուծով փրկ-
չաւ իմով։
Զի հայեցաւ 'ի խոնարհութիւն
աղախնոյ իւրոյ․ ահա յայսմ հետէ

երանիցեն ինձ ամենայն ազգք ·

Իջցէ որպ͞ զանձրեւ 'ի վերայ գեղ- գ
ման, որպէս ցօղ զի ցօղէ յերկիր ։

Աստուած զիրաւունս քո արքայի
տուր, և զարդարութիւնս քո որդ-
ւոյ թագաւորի ։

Մեսեդիք Յարութեան ։

Տէր կարող և հզօր · տէր կարող աձ
'ի պատերազմի ։

Տեառն է երկիր լրիւ իւրով · աշ-
խարհ՝ և ամենայն բնակիչք նորա ։

Աթոռ քո աստուած յաւիտեանս ակ
յաւիտենից, գաւազան ուղղու͞ե՝
գաւազան արքայութեան քո ։

Բղխեաց սիրտ իմ զբան բարի · և
ասեմ զգործս իմ թագաւորի ։

Տէր թագաւորեաց՝ ցնծասցէ երկիր · բձ
ուրախ եղիցին կղզիք բազումք ։

Երեւեցան փայլատակունք նորա
տիեզերաց · ետես՝ և սասանեցաւ
երկիր ։

Երգեցէք տեառն երգ նոր ամե- բկ
նայն երկիր · ծառայեցէք տեառն
ուրախութեամբ ·

Մտէք առաջի նորա ցնծութեամբ.
ծաներուք զի նա է տէր ա՛ծ մեր։
գձ Եկայք և տեսէք զգործս աստու-
ծոյ, որ արար զնշանս և զարուես-
տըս 'ի վերայ երկրի։
Աստուած մեր ապաւէն և զօրու-
թիւն. օգնական 'ի վերայ նեղու-
թեանց, որք գտին զմեզ յոյժ։
գկ Աստուած մեր յերկինս և յերկրի,
զա՛մ զոր ինչ կամեցաւ և արար։
Յելանելն իսրայէլի յեգիպտոսէ.
տանն յակոբայ 'ի ժողովրդենէ այ-
լազգեաց։
դձ Եղիցի ձեռն քո 'ի վերայ առն, աջ
քո 'ի վերայ որդւոյ մարդոյ, զոր
զօրացուցեր զնա 'ի քեզ։
Որ հովուեսդ իէլի՝ նայեաց, որ ա-
ռաջնորդես որպ՛ խաշին յովսեփու։
դկ Աստուած աստուծոց տէր խօսե-
ցաւ, և կոչեաց զերկիր։
Յելից արեգական մինչեւ 'ի մու-
տըս արեւու։

Մեսեդիք Գալստեան։

Օրհնեալ որ գաս յանուն տեառն,

օրհնեալ որ գալոց ես։

Տէր աստուած մեր երեւեցաւ մեզ. արարէք տօնս ուրախութեան կանխաւ, մինչեւ յանկիւնս սեղանոյ։

Եկեղեցւոյ։

Աստ օրհնեցէք ամենայն ծառայք տեառն զտէր։

Ո՛ կայք ՚ի տան տն, եւ ՚ի գաւիթս աստուծոյ մերոյ։

Կիւրակամտի։

Սիրեցի՝ զի լուիցէ տէր զձայն աղօթից իմոց։

Զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս, եւ ես յաւուրս իմ կարդացի առ նա։

Մեսեդիք Մարտիրոսաց։

Եղիցի ողորմութիւն քո տէր ՚ի ած
վերայ մեր. որպէս յուսացաք ՚ի քեզ։ Ցնծացէք արդարք ՚ի տէր. ուղղոց վայելէ օրհնութիւն։

Տէր սիրէ զիրաւունս, եւ ոչ ընդ– ակ
վայր հարկանէ զսուրբս իւր։ փրկութիւն արդարոց ՚ի տեառնէ է. վերակացու է նոցա ՚ի ժամանա

կյս նեղութեան ։

բձ Աքանչելի է ած 'ի վերայ սրբոց իւ-
րոց, աստուած խրայէլի ։
Տէր աստուած օրհնեալ. օրհնեալ
է տէր զօրհանապազ ։

բկ Օգնութի՛ւ ինձ 'ի տեառնէ եկեսցէ,
որ արար զերկինս և զերկիր ։
Համբարձի զաչս իմ 'ի լերինս, ուս-
տի եկեսցէ ինձ օգնութիւն ։

գձ Աստուած փառաւորեալ է 'ի խոր-
հուրդս սրբոց իւրոց. մեծ և ահա-
ւոր 'ի վերայ այնոցիկ որք շուրջ
են զնովաւ ։
Խոստովան եղիցին երկինք սքանչե-
լեաց քոց տէր, և ճշմարտութիւն
քո յեկեղեցիս սրբոց ։

գկ Սիրեցից զքեզ՝ տէր զօրութի՛ իմ.
տէր հաստատիչ իմ, ապաւէն իմ
և փրկիչ իմ ։
Աստուած օգնական իմ, և ես յու-
սամ 'ի նա. ապաւէն իմ, եղջիւր
փրկութե՛ իմոյ՝ ընդունելի իմ է ։

դձ Մերձ է տէր առ ամենեսեան, ուք
կարդան առ նա. առ ամենեսեան՝

ոյք կարդան առ նա ճշմարտութբ ։
Զկամս երկիւղածաց իւրոց առնէ տէր․ աղօթից նոցա լսէ՝ և կեցուցանէ զնոսա ։

Արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեսցին․ որպէս զմայրսն լիբանանու բազումք եղիցին ։ դկ

Տնկեալք եղիցին ՚ի տան տեառն, և ՚ի գաւիթս աստուծոյ մերոյ ծաղկեսցին ։

Մեսեդիկ ապաշխարութեան ։

Տէր լուիցէ ինձ ՚ի կարդալ իմում առ նա ։ աճ

Ի կարդալ իմում լուար ինձ աստուած ըստ արդարութեան իմոյ ։ պահ

Մի ասասցէ թշնամին իմ թէ յաղթեցի նմա․ կամ նեղիչք իմ ցնծասցեն, թէ ես սասանեցայց ։ ակ

Մինչեւ յե՞րբ դարձուցանես զերեսս քո յինէն․ մինչեւ յե՞րբ բարձրանայ թշնամին ՚ի վերայ իմ․ նայեա և լուր ինձ տէր աստուած իմ ։

Բերան արդարոյ պատմէ զիմաստութիւն․ և լեզու նորա խօսեսցի զի- բճ

բաւունս ։

Մի՛ նախանձիր ընդ չարս . և մի՛ ընդ
այնոսիկ՝ որք գործեն զանօրէնութի՟։

բկ Քաղցրութի՟ արարեր ընդ ծառայի
քում տէր, ըստ բանի քում։

Քաղցր ես դու տէր, և քաղցրու-
թեամբ քով խրատեա զիս ։

գձ Նայեա և լուր ինձ տէր ա՟ծ իմ։

Մինչև յե՞րբ տէր՝ մոռանաս զիս
իսպառ . մինչև յե՞րբ դարձուցա-
նես զերեսս քո յինէն ։

գկ Գթութիւնք քո բազում են տ՟ր,
ըստ իրաւանց քոց կեցո զիս ։

Տես զխոնարհութի՟ իմ, և փրկեա
զիս . զի զօրէնս քո ես ոչ մոռացայ ։

գձ Աստուած յօգնել ինձ նայեաց . և
տէր յօգնել ինձ փութա ։

Ամաչեսցեն և յամօթ լիցին, որք
խնդրէին զանձն իմ։

գկ Լուր ա՟ծ աղօթից իմոց յաղաչել
ինձ առ քեզ . յերկիւղէ թշնամ-
ւոյն փրկեա զանձն իմ։

Ծածկեսցես զիս 'ի ժողովոց չարաց .
'ի բազմութե՟՝ որք գործեն զանօրէնութի՟։

Ի մեծի հինգշաբաթի ։

Լուացից սրբութ՟ք զձեռս իմ. և շուրջ եղէց զսեղանով քո տէր ։ Տէր սիրեցի զվայելչութ՟ի տան քո, և զտեղի յարկի փառաց քոց ։

Ի մեծի ուրբաթու ։

Ետուն 'ի կերակուր ինձ լեղի. և 'ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ ։ Եղիցին սեղանք նոցա առաջի նոցա յորոգայթ, 'ի հատուցումն և 'ի գայթակղութիւն ։

Ի տօնի սրբոյ խաչին ։

Ետուր երկիւղածաց քոց նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղան ։ Որպէս փրկեսցին սիրելիք քո. կեցո աջով քո և լուր մեզ ։

---

Կարգ ուղիղեղիցեաց ։

Ուղիղ եղիցին աղօթք իմ ։
Որպէս խունկ առաջի քո տէր ։
Համբարձումն ձեռաց իմոց ։
Պատարագ երեկոյի ։

Յատուկ առաջակողմանն ։

Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս

խունկ առաջի քո տէր. համբար-
ձումն ձեռաց իմոց՝ պատարագ ե-
րեկոյի։

Տէր աղաղակեցի առ քեզ և լուր
ինձ։

Նայեաց 'ի ձայն խնդրուածաց իմոց,
յաղաղակել իմում առ քեզ։

Ի մեծի հինգշաբաթու.

Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս
խունկ առաջի քո տէր։

Զերեկոյի աղօթս մեր ընկալ տէր.
և զտարածումն ձեռաց մերոց։

Ի մեծի ուրբաթու.

Ուղիղ եղիցին աղաչանք մեր որ-
պէս խունկ առաջի քո տէր. համ-
բարձումն ձեռաց մերոց՝ պատա-
րագ երեկոյի։

Քարոզ կիւրակամտից, և ամենայն աւուրց տէրունեաց.

Ասասցուք ամենեքեան միաբանու-
թեամբ. տէր ողորմեա։

Վասն խաղաղութեան ամ աշխար-
հի՝ և հաստատութեան սրբոյ ե-
կեղեցւոյ. զտէր աղաչեսցուք։

Վասն ամենայն սուրբ և ուղղա-
փառ եպիսկոպոսաց. զտէր աղա:
Վասն հայրապետին մերոյ տեառն
(այս անուն) կենաց՝ և փրկութեան
հոգւոյ նորին. զտէր աղա:
Վասն վարդապետաց՝ քահանայից՝
սարկաւագաց՝ դպրաց, և ամենայն
ուխտի մանկանց եկեղեցւոյ. զտ͞ր:
Վասն բարեպաշտ թագաւորաց և
ա͞ծասէր իշխանաց՝ զօրավարաց և
զօրաց նոցին. զտէր աղա:
Վասն զի տէրն ամենակալ հնազան-
դեցուսցէ առաջի ն͞ց զա͞մ պատե-
րազմունս թշնամեաց. զտէր աղա:
Յաղագս հարց և եղբարցն մերոց՝
որք 'ի գերութեան են և 'ի չար
ծառայութեան. զտէր աղա:
Յաղագս ճանապարհորդաց և նա-
ւորդաց՝ խաղաղութեամբ հասա-
նել 'ի նաւահանգիստն բարութե͞.
զտէր աղաչես:
Յաղագս հիւանդաց և ամենայն
վշտացելոց՝ փութապէս առողջու-
թեան. զտէր աղա:

Յաղագս բարեխառնութեան օդոց՝
անձրևաց քաղցրութե՜, և պտղոց
առատութեան. զտէր ա:
Յաղագս ուխտաւորաց և պտղաբե-
րից 'ի ս՜բ եկեղեցի ա՜յ. զտէր աղա:
Եւ յաղագս այնոցիկ, որք մատնեալք
են 'ի ձեռս անօրինաց վասն ան-
ուանն քրիստոսի. զտէր աղա:
Յաղագս հոգւոցն հանգուցելոց,
որք ճշմարիտ և ուղիղ հաւատով
'ի քրիստոս ննջեցին. զտէր աղա:
Յաղագս փրկելոյ զմեզ տեառն ա՜յ՝
յերևելի և յաներևոյթ թշնամ-
ւոյն. զտէր աղաչեսցուք:

մաղ Բարեխօս ունիմք սուրբ զմարի-
ամ զաստուածածինն զփառաւոր-
եալ և օրհնեալ միշտ սուրբ կոյսն.
սուրբ զյովհաննէս մկրտիչն. ս՜բ
զստեփաննոս նախավկայն. ս՜բ զա-
ռաքեալսն և զմարգարէսն. զարի
և զյաղթող սուրբ զվկայսն: Եւ
զմեծ խոստովանողն քրիստոսի ըզ
հայրապետն մեր զսուրբն գրիգո-
րիոս լուսաւորիչն հայաստանեայց

աշխարհի ։

Յիշեսջի՛ք և զա՟մ սուրբս և նոքօք
զտէր աղաչեսցուք ։

Զերեկս մերձեալ և զառաջիկայ գի-
շերս խաղաղութբ անցուցանել՝ հա-
ւատով ՚ի տ՟նէ խնդրեսցուք ։

Զհրեշտակ ։ Զքաւութի՟ ։ Զսրբոյ ։
Եւ եւս ։ Զանձինս ։ Ողորմեաց ։

Քարոզ ՚ի տօնի սրբոց , և պահոց ։

Եւ եւս խաղաղութեան զտէր ա ։
Աղաչեսցուք զամենակալն ա՟ծ՝ ըզ-
հայր տեառն մերոյ յիսուսի քրիս-
տոսի զթագաւորն խաղաղութեան
յաղագս խաղաղութեան․ և վասն
միայնոյ սուրբ կաթուղիկէ և առա-
քելական եկեղեցւոյ․ զի զբազում
ամս խաղաղութեամբ տայցէ մեզ
տէր աստուած մեր․ և զթագաւո-
րըս խաղաղարարս առաքեսցէ առ
մեզ, վասն մեծի սուրբ և ահաւոր
անուան իւրոյ․ զպետս գաւառաց,
զզօրավարս, զզօրագլուխս, զժողո-
վուրդս, զմուտս, և զելս մեր խա-
ղաղութեամբ պահեսցէ․ և զա՟մ

պատերազմունս թշնամւոյն խոր-
տակեսցէ 'ի մէնջ. տէրն ամենա-
կալ կեցուսցէ և ողորմեսցի: Զե-
րեկս մերձեալ՝ և զառաջիկայ գի-
շերս խաղաղութեամբ անցուցա-
նել հաւատով 'ի տեառնէ խնդ-
րեսցուք: Զհրեշտակ: Զքաւութի:
Զսրբոյ խա: Նւ ես: Զանձինս:

Ողորմեաց:

Աղօթք:

Լուր ձայնից մերոց տէր ա̃ծ մեր.
ընկալ զաղաչանս մեր, զհամբար-
ձումն ձեռաց մերոց՝ և զբանս ա-
ղօթից, սրբելով զերեկոյի պատա-
րագս մեր 'ի հոտ անուշից՝ 'ի հա-
ճոյս քեզ պատրաստել: Յաւել 'ի
մեզ տէր ամենակալ՝ զհաւատ,
զյոյս, զսէր, և զամենայն գործս
առաքինութեան. որպէս զի ըստ
կամաց քոց բարեսիրաց՝ միշտ կրօ-
նաւորեալք բարեպաշտութեամբ
'ի տուէ և 'ի գիշերի. և արժանա-
ւորք եղիցուք յաղագս անձանց մե-
րոց փրկութեան, և վասն հոգևոր

Օգնութիւն իմ 'ի տեառնէ եկեսցէ,
որ արար զերկինս և զերկիր։
Մի՛ տար 'ի սասանութիւն զոտս քո.
և մի՛ ննջեսցէ պահապան քո։
Որպէս ոչ ննջէ՝ և ոչ 'ի քուն եր-
թայ պահապանն Իսրայէլի։
Տէր պահեսցէ զքեզ, և տէր ըն-
կալցի աջոյ ձեռամբն իւրով։
Արեգակն 'ի տուէ քեզ մի՛ մեղիցէ,
և մի՛ լուսին 'ի գիշերի։
Տէր պահեսցէ զքեզ յամ չարէ.
պահեսցէ տէր զանձն քո։
Տէր պահեսցէ զմուտ և զել քո՝
յայսմ հետէ մինչև յաւիտեան.
փառք հօր և որդւոյ և։

Աստ ասի համբարձի շարական ըստ պատշաճի.
Կիրակամուտ զայս ասա։

Սուրբ ես տէ՛ր զօրութեա՛նց որ բնակեալդ ես 'ի յերկինս. և բարեբանես 'ի սրբո՛ց քոց։ Երկնայի՛ն զօրութի՛նք սերովբէք և քերովբէք. անդադար օրհնե՛ն սուրբ զանուանդ քո։ Քահանայք ընդ նո-

սի՛ն պաշտօնեայք և ժողովուրդք․
երկրպագեսցո՛ւք տէրութեանդ քո։
Լոյսդ որ յառաջ քան զյաւիտեա՛նս
՚ի Հօրէ առաքեցա՛ր, և լուսով ի
մանալեա՛ն լցե՛ր զարարածս․ Օրհ-
նեա՛լ ե՛ս Թագաւոր յաւիտենի՛ց։
Որ զլոյսն ՚ի սկզբանէ հաստատե-
ցե՛ր վերբստի՛ն․ և զխաւարն ան-
գիտութեա՛ն յարութեամբդ քո
հալածեցեր․ Օրհ։ Լուսոյ և մեք
լուսաւորեալքս ընդ լուսեղէ՛ն զը-
ւարթնոցն․ երգեսցո՛ւք ցնծութե՛
՚ի յարութեան երեկոյիս․ Օրհ։
Երկնաքաղաքացի՛ն յովհաննէ՛ս մեծ
՚ի ծնունդս կանա՛նց, քարոզէր յա-
նապատի ազդ արարո՛ղ բարբառո՛յն
զծագումն լուսոյ արեգականն ար-
դարութեա՛ն։ Աշխարհի՛ս մարգարէ
և ձեռնադրող որդւո՛յն աստուծոյ․
յառաջընթա՛ց կարապե՛տ և պատ-
մող աստուածայի՛ն օրինացն․ Հո՛ր-
դե՛ր ճանապարհս Թագաւորին յա-

ւիտենից։ Յանօրէ՞ն գինարբուսն մոլեգնեալ Հերովդիադայ. 'ի պարգեւի մասին խնդրէր զգլուխ մարգարէին. չիջուցանել զարուսեակն եւ զանաղօտ լապտերն։ Փառք հօր։

Սրբուհւոյ աստուածածնին բարեխօսու՞թեամբ պարգեւեա երկրպագուացս ամենասուրբ երրորդութեանդ. զյարութիւն յուսոյ կենացն յաւիտենից։ Այժմ եւ։

Զհաւատացեալ ժողովուրդըս սբ երրորդութեանդ, եւ զապաւինեալս 'ի խորան փառաց քոց պահեա անխռով 'ի խաղաղութեան։

Ըզքո՛ յարութիւնդ օրհնեմք մարգասէր. աղաղակելով տէր փառք քեզ։ Զոր օրհնե՛ն սերովբէքն եւ գովե՛ն քերովբէքն. աղա։ Անդադար բերանով անհանգիստ բարբառով. աղա։ • գկ

Առեալ եւ մեր զօրհնութիւնըս հրեշտակացն երգե՛մք, եւ ասեմք • դկ

փառք յարութեանն քո տէր։ Որ
խաչեցար վասըն մեր թաղեցար,
և յարեար, ազատեցեր ՚ի մեղաց։
Սբ՛ ած․ սուրբ և հզօր․ սբ
անմահ թագաւոր։

գկ Այսօր մարտիրոսաց դասքըն ցըն-
ծացեալ բերկրին ընդ առաջ տն,
քրիստոսի որդւոյն աստուծոյ։ Զայն
՚ի յերկնից վըկայեալ ասէ․ եկայք
օրհնեալք հօր իմոյ, ժառան-
գորդք երկնից խորանացն։ Լըցէք
ըզտեղի անկելոցն ապստամբողա-
կան թըշնամւոյն, որ ՚ի յերկնից
վայր անկեալ։

դկ Արտցեն աղօթք իմ տէր ՚ի տա-
ճար սուրբ քո․ և առաքեա ՚ի մեզ
տէր զօգնութիւն ՚ի լեռնէ սըր-
բոյ քումմէ։ Հովանասցի աջ քո
տէր ՚ի վերայ ստեղծուածոց քոց․
և առաքեա ՚ի մեզ տէր։ Զերեկո-
յի աղօթս մեր ընկալ տէր բարե-
խօսութեամբ ծընողին քո․ և առա։

Վասն խաղաղութեան ամ՛ աշխարհի՛, և հաստատութեան սրբոց եկեղեցւոյ զոհէր աղաչեսցուք։ Ասասցուք ամքն միաբանութեամբ։ քրդ

Տէր ողորմեա. տէր ողոր. տէր ո։

Հայր գթած՝ բարեխնամող՝ արարիչ ամենայն արարածոց. ընկալ ըզպաղատանս ծառայից քոց 'ի ժամ երեկոյիս. որ առատդ ես առ ամենեսեան՝ պարգևօք բարերարութեան քո։ Ողորմեա տէր ամենայն աշխարհի, և եկեղեցւոյ քում սըրբոյ. հիւանդաց՝ վշտացելոց՝ ճանապարհորդաց՝ նաւորդաց՝ խոստովանողաց՝ ապաշխարողաց՝ և հոգւոցն հանգուցելոց։ Զի դու տէր ամենակալ՝ գիտես զպէտս մեր՝ և զկարիս առաւել քան զոր խնդրեմք և իմանամք. և քեզ ընդ որդւոյ և ամենասուրբ հոգւոյդ վայելէ փառք իշխանութի՛ և պատիւ. այժմ և։ աղ

Յաւուրս աղուհացից ասա այն՝ Տէր ամենակալն. և իւր Քարոզն և Աղօթքն. տես 'ի Եր-ն 284. յառաւօտու ժամուն, և յետ նորա՝ Որ բնակեալն։ Իսկ յաւու-

տաղըս պահոց, և ի փոխ մարտիրոսաց՝ առ միայն Որ բնակեալն. Եւ ի կիրակամուտս՝ Աստօրհնեցէքն.

Արձակման փոխ.

Որ բնակեալն է յօգնութի բարձրելոյն, ընդ հովանեաւ աստուծոյ յերկինս հանգիցէ։
Ասասցէ տն ընդունող իմ ես, ապաւէն իմ ած, և ես յուսամ 'ի նա։
Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսողին, և 'ի բանիցն 'ի խռովութենէ։
Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ, 'ի հովանի թեւոց նորա յուսասցիս։
Որպէս զէն՝ շուրջ եղիցի զքև ճշմարտութիւն նորա։
Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշերի, և ոչ 'ի նետէ որ թռչի 'ի տուէ։
Յիրէ որ շրջի 'ի խաւարի, 'ի գայթակղութենէ դիւին 'ի հասարակ աւուր։
Անկցին 'ի կողմանէ քումմէ հազարք և բիւրք ընդ աջմէ քումմէ, և առ քեզ ինչ ոչ մերձեսցին։
Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու, և զհատուցումն մեղաւորաց

տեսցես. զի դու տէր յոյս իմ ես։

Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն. զի ոչ հասցեն առ քեզ չարք, և տանջանք մի մերձեսցին 'ի յարկըս քո։

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, 'ի պահել զքեզ յամենայն ճանապարհս քո։

Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ, զի մի երբէք հարցես զքարի զոտն քո։

Ի վերայ իժից և քարբից գնասցես դու. և առ ոտն կոխեսցես զառիւծն և զվիշապն։

Քանզի յիս յուսացաւ և փրկեցից զնա, հովանի եղէց նմա՝ զի ծանեաւ զանուն իմ։

Կարդասցէ առ իս՝ և ես լուայց նմա, և առ նմա եղէց 'ի նեղուե։

Փրկեցից և փառաւոր արարից զնա, երկայն աւուրբք լցուցից և ցուցից նմա զփրկութիւն իմ։

Առ քեզ տէր համբարձի զաչս իմ. որ բնակեալդ ես 'ի յերկինս։

Որպէս աչք ծառայի 'ի ձեռն տն

իւրոյ. և որպէս աչք աղախնոյ 'ի
ձեռն տիկնոջ իւրոյ։

Այնպէս են աչք մեր առ քեզ տէր
աստուած մեր. մինչև ողորմեսցիս
'ի վերայ մեր։

Ողորմեա մեզ տէր ողորմեա մեզ.
զի բազում լցաք արհամարհանօք։
Առաւել լցան անձինք մեր նախատանօք, որք նախատէին զմեզ. և
արհամարհանօք ամբարտաւանից։

Ա̃ծ յանուան քում կեցո զիս, և 'ի
զօրութեան քում իրաւ արա ինձ։
Աստուած լուր աղօթից իմոց, ունկն
դիր բանից բերանոյ իմոյ։

Օտարք յարեան 'ի վ̃ր իմ, և հզօրք
խնդրեցին զանձն իմ, և ոչ համարեցան զքեզ ա̃ծ առաջի իւրեանց։
Ահա աստուած օգնական իմ, և
տէր ընդունող հոգւոյ իմոյ։

Ի դարձուցանել զչարն 'ի թշնամիս
իմ, ճշմարտութ̃ քով սատակեա զն̃ս։
Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ. և խոստովան եղէց
անուան քում տէր, զի բարի է։

Յամ նեղուէ իմմէ փրկեցեր զիս,
և 'ի թշնամիս իմ ետես ակն իմ։
Փառք հօր և որդւոյ և ։

Մաղթանք ։

Օ բարձրեալդ քրիստոս արասցուք մեզ ապաւէն, զի ոչ հասցեն առ մեզ չարք. և տանջանք մի մերձեսցին 'ի յարկս մեր ։

Քարոզ ։

Եւ մեք միաբան զողորմութիւն 'ի տեառնէ խնդրելով, ասասցուք ամենեքեան միաբանութեամբ ։
Տէր ողորմեա. տէր ողոր. տէր ո ։

Աղօթք ։

Յոյս կենաց՝ ընդունող աղօթից՝ քաւիչ մեղաց և կատարիչ խնդրուածոց քրիստոս աստուած մեր. ընկալ զպաղատանս մեր 'ի ժամ երեկոյիս՝ բարեխօսութեամբ սուրբ աստուածածնին և աղաչանօք ամ սրբոց քոց ։ Լուր մեզ տէր և ողորմեա. ներեա քաւեա և թող զմեղս մեր. արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ

Հօր և ընդ. սրբոյ Հոգւոյդ. այժմ։
Յիշեա տէր զպաշտօնեայս քո։
Բարերար և բազումողորմ ած՝ քո։
Հայր մեր որ յերկինս ես։

Փոխ Կիրակամտից։

Ահա օրհնեցէք ամենայն ծառայք տեառն զտէր. որ կայք 'ի տուն տն, և 'ի գաւիթս աստուծոյ մերոյ։
Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր 'ի սրբութիւն. և օրհնեցէք զտէր։
Օրհնեսցէ զքեզ տէր 'ի սիոնէ. որ արար զերկինս և զերկիր։
Խոստովան եղէց քեզ տէր՝ բոլորով սրտիւ իմով. առաջի հրեշտակաց սաղմոս ասացից քեզ։
Զի լուար զբանս բերանոյ իմոյ. երկիրպագից 'ի տաճար սուրբ քո. և խոստովան եղէց անուան քում, վասն ողորմութեան և ճշմարտութեան քո։
Մեծ արարեր յամենայնի զանուն սուրբ քո. յորում աւուր կարդամ առ քեզ, վաղվաղակի լուր

ինձ. և բազում արասցես զօրու-
թիւնս յանձն իմ։

Խոստովան եղիցին առ քեզ ամե-
նայն թագաւորք երկրի, զի լուան
զբանս բերանոյ քո, և օրհնեսցեն
զճանապարհս քո։

Մեծ են փառք Տն. բարձր է Տէր.
զխոնարհս տեսանէ, և զբարձունս
'ի հեռաստանէ ճանաչէ։

Թէ գնացից ես 'ի մէջ նեղութեց,
կեցուսցես զիս 'ի բարկութենէ
թշնամւոյն։

Ձգեցեր զձեռն քո՝ և փրկեաց զիս
աջ քո. և Տէր հատուսցէ ընդ իմ։
Տէր ողորմութի քո յաւիտեան. զգոր-
ծըս ձեռաց քոց մի՛ անտես առներ։
Աստուած յանուան քում կեցո զիս։

Ե այլն որպէս 'ի Եր–ն 488 ։

փառք հօր և որդւոյ և։

Քարոզ ։

Խնդրեսցուք հաւատով միաբանու-
թեամբ 'ի տեառնէ՝ զի զողորմու-
թեան զշնորհս իւր արասցէ 'ի վե-
րայ մեր։ Տէրն ամենակալ կեցուս

ցէ և ողորմեսցի ։      Կեցո՛ տէ՛ր ։
Տէր ողորմեա՛ . տէ՛ր ողո՛ր . տէ՛ր ո ։

Աղօթք .

Թագաւոր խաղաղութեան օգնական և փրկիչ անձանց մերոց Քրիստոս աստուած մեր . պարսպեալ պահեա զժողովուրդս քո ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչիւդ քո 'ի խաղաղութեան ։ փրկեա յերևելի և յաներևոյթ թշնամւոյն . արժանաւորեա գոհութե փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ . այժմ և միշտ և ։

Քարոզ խաչի .

Սուրբ խաչիւս աղաչեսցուք զտէր . զի սովաւ փրկեսցէ զմեզ 'ի մեղաց՝ և կեցուսցէ շնորհիւ ողորմութե իւրոյ ։ Ամենակալ տէր աստուած մեր , կեցո և ողորմեա ։

Աղօթք .

Պահպանեա զմեզ Քրիստոս ած մեր՝ ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչիւդ քով 'ի խաղաղութեան . փրկեա յերևելի և յանե-

րեւոյթ Թշնամւոյն ։ Արժանաւոր-
եա գոհութեամբ փառաւորել ըզ
քեզ ընդ հօր և ընդ սրբոյ հոգ-
ւոյդ · այժմ և ։

---

Խրատք վասն երկրպագութեան եկեղեցւոյ ։

Ուրախ եղէ ես՝ ոյք ասէին ցիս,
'ի տուն տեառն երթիցուք մեք ։
Հաստեալ կային ոտք մեր առ դրու-
նըս քո Երուսաղէմ ։
Զերուսաղէմ շինեալ որպէս քա-
ղաք · և բնակութիւն իւր շուրջ
զնովաւ ։
Անդ ելանէին ազգք՝ ազգք տեառն ·
'ի վկայութիւն Իսրայէլի, խոստո-
վան լինել անուան տեառն ։
Անդ արկեալ են աթոռք դատաս-
տանի · աթոռս արկեալ են 'ի տան
դաւթի ։
Հարցէք զողջունէ Երուսաղէմի, և
զշինութենէ՝ ոյք սիրէք զտէր ։
Եղիցի խաղաղութիւն 'ի զօրութե՟
քում, և շինութիւն յաշտարակս
յամուրս քո ։

Վասն եղբարց և ընկերաց իմոց խօ-
սեցայ զխաղաղութիւն. վասն քոյ
և վասն տան տն̄ այ̄ մերոյ խնդ-
րեցաք զբարութիւն 'ի քէն:

Տուր զօրութի̄ ծառայի քո. կեցո
զորդի աղախնոյ քո. և արա առ իս
նշան բարութեան:

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն.
զի դու տէր օգնեցեր ինձ, և մխի-
թարեցեր զիս:

Փառք հօր և որդւոյ և.:

Քարոզ եկեղեցւոյ.

Սբ̄ եկեղեցեաւս աղաչեսցուք զտր̄՝
զի սովաւ փրկեսցէ զմեզ 'ի մեղաց.
և կեցուսցէ շնորհիւ ողորմութե̄
իւրոյ: Ամենակալ տէր ած̄ մեր՝ կե-
ցո և ողորմեա:

Աղօթք.

Առ դրան սրբոյ եկեղեցւոյս, և ա-
ռաջի աստուածընկալ և պայծա-
ռացեալ սուրբ նշանացս՝ խոնար-
հեալ երկիւղիւ երկրպագանեմք.
զսուրբ և զհրաշալի և զյաղթող
տէրութիւնդ քո օրհնեմք և փա-

ռաւորեմք. և քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս Հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ. այժմ և:

Փոխ.

Աղաղակեցէք առ տէր ամենայն երկիր. ծառայեցէք տն ուրախութբ: (սղ ղթ): Օ, փոխն ըստն տաս. և հատած փառք.

Քարոզ.

Օրհնեսցուք զամենակալն տծ ըղ հայր տեառն մերոյ յիսուսի քրիստոսի. որ արժանի արար զմեզ կալ ՚ի տեղւոջ փառաբանութեան և երգել զերգս հոգեւորս: Ամենակալ տր տծ մեր՝ կեցո և ողորմեա:

Աղօթք.

Ի մէջ տաճարիս, և առաջի տծընկալ և պայծառացեալ սբ նշանացըս, և սբ սեղանոյս՝ խոնարհեալ երկիւղիւ երկրպագանեմք. զսբ և զհրաշալի և զյաղթող զյարութիւնդ քո փառաւորեմք. և քեզ մատուցանեմք զօրհնութի և զփառս ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ. այժմ:

Աղօթք ·

Ի յարկի սրբութե̃ և 'ի տեղւոջ փառաբանութե̃ · հրեշտակաց բնակարանիս և մարդկան բաւարանիս, և առաջի ա̃ծընկալ և պայծառացեալ ս̃բ նշանացս և ս̃բ խորանացս խոնարհեալ երկիւղիւ երկրպագանեմք · զս̃բ և զհրաշալի և զյաղթող զյարութիւնդ քո օրհնեմք և փառաւորեմք · և ընդ երկնային զօրսն քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս ։

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից խաղաղական ժամուն ։
Որ կատարի 'ի դէմս Հոգւոյն աստուծոյ, այլև 'ի դէմս Բանին աստուծոյ՝ որ եդաւ 'ի գերեզմանի, և էջ 'ի դժոխս, և խաղաղութիւն արար հոգւոցն ։

Օրհնեցից զտէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն նորա 'ի բերան իմ ։
Ի տէր պարծեսցի անձն իմ, լուիցեն հեզք, և ուրախ եղիցին ։
Մեծ արարէք զտէր ինեւ, և բարձր արասցուք զանուն նորա 'ի միասին ։
Խնդրեցի 'ի տեառնէ և լուաւ ինձ, յամենայն նեղութենէ իմմէ փրկեաց զիս ։
Մատիք առ տէր՝ և առէք զլոյս, և երեսք ձեր մի ամաչեսցեն ։
Այս աղքատ կարդաց առ տէր, և տէր լուաւ սմա. յամենայն նեղութենէ սորա փրկեաց զսա ։
Բանակք հրեշտակաց տեառն շուրջ

են զերկիւղածովք իւրովք, և պա-
հեն զնոսա։

Փառք Հօր և Որդւոյ և։
Եւ եւս խաղաղութեան զտէր։
Օրհնութիւն և փառք։

Երգ աստիճանաց.

Ի նեղութեան իմում ես առ տէր
կարդացի, և լուաւ ինձ տէր, փըր-
կեաց զանձն իմ 'ի շրթանց նենգա-
ւորաց և 'ի լեզուէ չարէ։
Զի՞ տացի քեզ կամ զի՞նչ յաւելցի
լեզու նենգաւոր։

Զկանոնն բովանդակ ասա։ Բայց ոմանք ալէլու չա-
սեն. զի Երգ աստիճանաց է։

Սաղմոս ձէ.

Տէր աստուած փրկութեան ի-
մոյ, 'ի տուէ կարդացի և գիշե-
րի առաջի քո։
Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր,
խոնարհեսցի ունկն քո 'ի խնդրը-
ւածս իմ։

Փառք Հօր և Որդւոյ և։
Եւ եւս խաղաղութեան զտէր։
Օրհնութիւն և փառք։

Խաղաղութիւն ամենեցուն,

Ի կարդալ իմում լուար ինձ Ած ըստ արդարութեան, 'ի նեղութէ ինձ անդորր արարեր . ողորմեա ինձ և լուր աղօթից իմոց ։

Որդիք մարդկան՝ մինչեւ յե՞րբ էք խստասիրտք . ընդէ՞ր սիրէք զնանրութիւն, և խնդրէք զստութի ։

Ծաներուք զի սքանչելիս արար Տր սրբոյ իւրում . և Տէր լուիցէ ինձ 'ի կարդալ իմում առ նա ։

Բարկանայք՝ և մի՛ մեղանչէք . զոր ինչ ասէք 'ի սիրտս ձեր՝ յանկողինըս ձեր զղջացարուք ։

Մատուցէք պատարագս արդարութեան, և յուսացարուք 'ի Տէր ։

Բազումք ասէին թէ ո՛ ցուցցէ մեզ զբարութիւն Տեառն . Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, և ետուր ուրախութի սրտից մերոց ։

Ի պտղոյ ցորենոյ գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա ։

Խաղաղութեամբ յայս և 'ի նոյն ննջեսցուք և զարթիցուք . զի դու

տէր միայն առանձին յուսով քո
բնակեցուցեր զմեզ:

Տէր մի՛ սրտմտութեամբ քով յան֊
դիմաներ զիս, և մի՛ բարկութեամբ
քով խրատեր զիս:

Ողորմեա ինձ տէր զի հիւանդ եմ
ես. բժշկեա զանձն իմ, զի խռովե֊
ցան ոսկերք իմ:

Անձն իմ յոյժ խռովեցաւ, և դու
տէր մինչև յե՞րբ:

Դարձ տէր և փրկեա զա՛նձն իմ. կե֊
ցո զիս տէր ըստ ողորմուե՛ քում:

Զի ոչ ոք է որ 'ի մահու յիշէ ըզ
քեզ, կամ 'ի դժոխս խոստովան
առնիցի առ քեզ:

Վաստակեցայ ես 'ի հեծութեան
իմում, լուացի զամենայն գիշեր
զմահիճս իմ. և արտասուօք իմովք
զանկողինս իմ թացի:

Խռովեցաւ 'ի սրտմտութենէ ակն
իմ. և մաշեցայ ես 'ի վերայ ամե֊
նայն թշնամեաց իմոց:

Ի բաց կացէք յինէն ամենեքեան,
որք գործէք զանօրէնութիւն:

Լուաւ տ՛ր ձայնի լալոյ իմոյ, լուաւ տէր աղօթից իմոց. և տէր ըզխնդրուածս իմ ընկալաւ։

Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ա՛մ թշնամիք իմ. դարձցին յետս և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի և խռովեսցին։

Մինչև յե՞րբ տէր մոռանաս զիս իսպառ, մինչև յե՞րբ դարձուցանես զերեսս քո յինէն։

Մինչև յե՞րբ դնեմ զխորհուրդս յանձն իմ, և ցաւք սրտի իմոյ զաւուրս։

Մինչև ցե՞րբ բարձրանայ թշնամին 'ի վերայ իմ. Հայեա և լուր ինձ տ՛ր աստուած իմ։

Լոյս տուր տէր աչաց իմոց, զի մի՛ երբէք ննջեցից 'ի մահ։

Մի՛ ասասցէ թշնամին թէ յաղթեցի նմա, կամ նեղիչք իմ ցնծասցեն թէ ես սասանեցայց։

Ես յողորմութիւնս քո տէր յուսացայ, ցնծացաւ սիրտ իմ 'ի փըրկութեան քում, օրհնեցից զտէր

զբարերարդ իմ։
Պահեա զիս աստուած իմ զի ես ’ի
քեզ յուսացայ. ասացի տեառն,
տէր իմ ես դու, և բարիք իմ ինձ
’ի քէն են։
Սրբոց քոց որք են յերկրի քում,
սքանչելի արարեր զամենայն կամս
իմ ’ի նոսա։
Յաճախեցին հիւանդութիւնք նոցա.
յետ այսորիկ ապա վաղվաղեցին։
Ոչ ժողովեցայց ’ի ժողովս նոցա
յարեանց, և ո՛չ յիշեցից զանուա-
նըս նոցա ’ի շըրթունս իմ։
Տէր բաժին ժառանգութե̃ իմոյ և
բաժակի իմոյ, դու ես որ այսրէն
դարձուցանես զժառանգութիւն
իմ յիս։
Վիճակք ելին ինձ ընդ ընտիրս, և
ժառանգութի̃ իմ հաճոյ եղև ինձ։
Օրհնեցից զտէր որ իմաստուն ա-
րար զիս, մինչ ’ի գիշերի ևս խրա-
տեցին զիս երիկամունք իմ։
Յառաջագոյն տեսանէի զտէր ա-
ռաջի իմ յա̃մ ժամ, զի է ընդ աջ

մէ իմմէ զի մի՛ սասանեցայց։

Վասն այսորիկ ուրախ եղեւ սիրտ իմ, և ցնծացաւ լեզու իմ, եւս և մարմին իմ բնակեսցի յուսով։

Զի ո՛չ թողցես զանձն իմ 'ի դժոխս, և ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն։

Ցուցեր ինձ զճանապարհս քո կենաց, լցուցեր զիս ուրախութբ երեսաց քոց 'ի քաղցրութենէ վայելչութեան աջոյ քո մինչ իսպառ։

Լուր տէր արդարութեան, և նայեա 'ի խնդրուածս իմ. ունկն դիր աղօթից իմոց՝ զի ոչ շրթամբք նենգաւորօք։

Յերեսաց քոց իրաւունք ինձ ելցեն, և աչք իմ տեսցեն զուղղութիւն։

Փորձեցեր զսիրտ իմ և քննեցեր 'ի գիշերի, փորձեցեր զիս՝ և ոչ գտաւ յիս անիրաւութիւն։

Մի՛ խօսեսցի բերան իմ զգործս որդւոց մարդկան. վասն բանից շրթանց քոց ես պահեցից զճանապարհս խիստս։

Հաստատեա զշաւիղս իմ 'ի ճանա-
պարհի քում, զի մի՛ գայթակղեա-
ցին գնացք իմ։

Ես առ քեզ տ՟ր կարդացի՝ զի լուար
ինձ աստուած, խոնարհեցո առ իս
զունկն քո և լուր բանից իմոց։

Սքանչելի արարեր զողորմութիւն քո.
ո՛ փրկես զայնոսիկ ոյք յուսացեալ
են 'ի քեզ, յայնցանէ ոյք հակա-
ռակ կան աջոյ քո։

Պահեա զիս որպէս բիբական. ընդ
հովանեաւ թեւոց քոց ծածկես-
ցես զիս յերեսաց ամբարշտաց՝
ոյք տառապեցուցին զիս։

Թշնամիք զանձն իմ պաշարեցին, և
'ի ճարպս իւրեանց արգելին, և բե-
րանք նոցա խօսեցան զամբարտա-
ւանութիւն։

Մերժեցին զիս և այժմ դարձեալ
պատեցան զինեւ. ուշ եդին խո-
նարհեցուցանել զիս յերկիր։

Համարեցան ինձ որպէս առիւծ զի
պատրաստի յորս, և որպէս կորիւն
առիւծու զի նստի դարանեալ։

Արի տէր ժամանեա նոցա և խա-
փանեա զնոսա. փրկեա զանձն իմ
յամբարշտաց 'ի սրոյ և 'ի ձեռաց
թշնամւոյն:

Տէր կորո զնոսա յերկրէ, բաժան-
եա և խափանեա զնոսա 'ի կեանս
իւրեանց:

Գաղտնեօք քովք լցան որովայնք
նոցա, յագեցան կերակրովք և
թողին զմնացուածս տղայոց իւ-
րեանց:

Ես արդարութեամբ երեւեցայց ե-
րեսաց քոց. և յագեցայց յերե-
ւիլ փառաց քոց:

Դատ արա ինձ ած, և իրաւ արա
ինձ 'ի դատաստանի իմում:

Յազգէ որ ոչ է սբ, 'ի մարդոյ մե-
ղաւորէ նենգաւորէ փրկեա զիս:

Դու ած հզօրիչ իմ ես՝ ընդէ՞ր մո-
ռացար զիս, ընդէ՞ր տրտում գնամ
ես 'ի նեղել թշնամւոյ իմոյ:

Առաքեա տէր զլոյս քո և զճշմար-
տութիւն քո, զի առաջնորդեսցեն
ինձ և հանցեն զիս 'ի լեառն սբ

և 'ի յարկս քո ։
Մտից առաջի սեղանոյ այ առ ած,
որ ուրախ առնէ զմանկութի իմ ։
խոստովան եղէց քեզ օրհնութբ
ած ած իմ ։
Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ,
կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա
առ ած, խոստովանեա նմա՝ փրր-
կիչ երեսաց իմոց ած է ։
Ած յօգնել ինձ նայեաց. և տէր
յընկերել ինձ փութա ։
Ամաչեսցեն և յամօթ լիցին, ոյք
խնդրէին զանձն իմ. դարձցին յետս
և ամաչեսցեն, ոյք խորհէին ինձ
չար ։
Դարձցին առ ժամայն ամաչեցեալք,
ոյք ասէին ինձ վաշ վաշ ։
Ցնծասցեն և ուրախ լիցին 'ի քեզ
ամքն, ոյք խնդրեն զքեզ տէր ։
Ասասցեն յամենայն ժամ, մեծ է
աստուած. և ոյք սիրեն զփրկու-
թիւնս քո ։
Ես աղքատ և տնանկ եմ, ած օգ-
նեա ինձ. օգնական և փրկիչ իմ

ես. և դու տէր իմ՝ մի՛ յամենար։
Տուր զօրութի̅ ծառայի քո. կեցո
զորդի աղախնոյ քո. և արա առ իս
նշան բարութեան։
Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն.
զի դու տէր օգնեցեր ինձ, և մխի-
թարեցեր զիս։
Փառք հօր և որդւոյ և։

Երգ.

Շնորհեա՛ մե՛զ տէր, ՚ի գիշերի՛ զերկնային զխաղաղութի̅ քո՛.
և պահեա զմեզ ՚ի պատրանա՛ց թըշ-
նամւոյն՝ ամենայա՛ղթ զօրութբ՛
սուրբ խաչի՛ քոյ։ Տէր աստուա՛ծ
փրկութեան իմոյ ՚ի տուէ կարդա-
ցի՝ և գիշերի առաջի քո՛յ։ Մտցեն
աղօթք իմ առաջի քոյ տէր. խոնար-
հեսցի ունկն քո ՚ի խնդրուածս իմ։
Եկեսցէ առ մեզ տէ՛ր պահապան
՚ի քէն, և պահեսցէ զմե՛զ յամե-
նա՛յն ժա՛մ։ Նուաճեա ՚ի մեզ տէ՛ր

զզօրութիւն սրբոյ խաչին որ պա-
հեսցէ զմեզ յամենայն ժամ։ Ար-
ժանի արա տէր զերեկս զայս խա-
ղաղութեամբ, և առանց փորձու-
թեան անցո զմեզ։ Արժանաւո-
րեա տէր զգիշերս զայս խաղա-
ղութեամբ և առանց մեղաց պա-
հելով զմեզ։ Ընդ մեզ տէր աստ-
ուած՝ գիտասջիք հեթանոսք և
պարտեցարուք. զի ած ընդ մեզ
է։ Եւ լուարուք զայս 'ի ծագաց
մինչև 'ի ծագս երկրի. զի։ Եւ հզօ-
րացեալքդ պարտեցարուք զի։ Եւ
զի թէպէտ և դարձեալ զօրանայք՝
դարձեալ 'ի պարտութի մատնեսջիք.
զի։ Եւ զխորհուրդն զոր խորհիք՝
խափանէ տէր. զի։ Եւ զբանն զոր
խօսիք՝ մի մնասցէ առ ձեզ. զի։ Եւ
քանզի յերկիւղէ ձերմէ մեք ոչ եր-
կիցուք, և ոչ խռովեսցուք. զի։ Եւ
զտէր աստուած մեր փառաւոր ա-
րասցուք, և նա եղիցի մեզ յեր-

կե՛նդ. ղի: Ով յուսացեալ եղիցուք
մեք 'ի նա, և նա եղիցի մեզ 'ի սըր-
բութիւն. ղի: Ով յուսացեալ եղի-
ցուք մեք 'ի նա, և նա եղիցի մեզ
'ի փրկութիւն. ղի: Ով ահաւասիկ
ես և մանկունք իմ, զոր ետ ինձ
աստուա՛ծ. ղի: Ով ժողովուրդ որ
նստէր 'ի խաւարի՝ ետես զլոյս
մե՛ծ. ղի: Ով որ բնակեալդ էք 'ի
խաւարի և 'ի ստուերս մահու,
լոյս ծագեսցի առ ձե՛զ. ղի: Ով
քանզի մանուկ ծը՛նաւ, որդի և տը-
ւաւ մե՛զ. ղի: Ով որոյ իշխանուի
իւր 'ի վերայ ուսոց իւրո՛ց. ղի: Ով
որ կոչի անուն նորա մեծի խորհըր-
դոյ հրեշտա՛կ. ղի: Ով սքանչելի
խորհրդակի՛ց. ղի: Ով ա՛ծ հզօր իշ-
խա՛ն. ղի: Ով իշխան խաղաղուե
հայր հանդերձելոյ յաւիտենի՛ն. ա՛ր
աստուած ընդ մեզ է՛:
Ով փա՛ռք հօր և որդւոյ և հոգ-
ւոյն սրբո՛յ. այժմ և միշտ և յաւի-

տեանս յաւիտենից. ամէ՛ն:

Մաղթանք:

Ի մերձենալ երեկոյիս՝ համբառնամք զձեռս մեր 'ի սրբութիւն. զոր ինչ մեղաք այսօր խորհրդով՝ բանիւ, կամ գործով՝ 'ի յանկողինս մեր զղջանալով. խոստովան լինելով զգաղտնիս սրտից մերոց ծածկագիտիդ աստուծոյ, յուսալով յողորմութիւն քո: Եւ մեք միաբան գոչեսցուք. յիշեա զմեզ տէր, յորժամ գաս արքայութեամբ քով, և ողորմեա մեզ:

Քարոզ:

Եւ եւս խաղաղութեան զտէր ա: Գոհացարուք զտեառնէ, որ իւրով ողորմուբ̃ն առաջնորդեաց մեզ 'ի գործս տունջեան. և շնորհեաց մեզ միաբան գալ հասանիլ 'ի հանգիստ գիշերիս: Եւ մեք յամենայն ժամ աղաչեսցուք զմարդասէրն ա̃ծ, լինիլ պահապան անձանց մերոց. և նա իւրով ողորմութեամբն պահեսցէ զմեզ. և առաջնորդեալ հա-

սուսցէ յիւր բարութեան հանգիստն. զոր խոստացաւ սիրելեաց իւրոց ճշմարիտն աստուած յիսուս քս. տէրն ամենակալ կեցուսցէ և: Զհանգիստ գիշերիս: Զհրեշտակ: Զքաւութիւն: Զսրբոյ: Եւ եւս: Զանձինս: Ողորմեաց:

Աղօթք:

Տէր բարերար, որ մեծաւ գթութեամբ քով պատրաստեցեր զյաւիտենական հանգիստ առ արքայութեամբ աշխատելոյն. և կոչեցեր առ քեզ քաղցր ձայնիւ զծանրաբեռնեալսն և զտաժանեալսն մեղօք, հանգիստ նոցա խոստանալով: Շնորհեա և մեզ տր՝ անխռով խաղաղութեամբ զգիշերս անցուցանել. և 'ի ծանրութենէ մեղաց զախտեալքս՝ ապահովեա ողորմութեամբ քով. և արժանաւորեա մըտընջենաւոր հանգստեանն ընդ ամ սբս քո: Եւ գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ հօր և ամենասուրբ հոգւոյդ, այժմ և միշտ և:

Խաղաղութիւն ամենեցուն ։

Պարգևատու բարեաց, և աղբիւր խաղաղութեան տէր աստուած մեր. յամենայն սատանայական խռովութեանց խաղաղացո զմիտս մեր, և զխորհուրդս՝ 'ի գիշերիս յայսմիկ, և յամենայն ժամանակի ։ Որպէս զի առաջնորդեալք յանցաւոր կենցաղոյս՝ ժամանեսցուք յաւիտենական երկնից արքայութեան քո. զոր պատրաստեցեր 'ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց ։ Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորեսցուք զհայր և զորդի և զսուրբ հոգիդ, այժմ և ։

Սաղմոս իզ։

Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց. տէր ապաւէն կենաց իմոց՝ ես յումմէ՞ դողացայց ։

Ի մերձենալ առ իս չարաց ուտել զմարմին իմ, նեղիչք իմ և թշնամիք իմ՝ նոքա տկարացան և անկան ։

Թէ պատրաստիցի 'ի վերայ իմ պատերազմ, ոչ երկիցէ սիրտ իմ, և թէ յարիցէ 'ի վերայ իմ ճակա-

տամարտ, սակայն և այսուիկ 'ի
քեզ տէր յուսացայ։

Զմի խնդրեցի 'ի տ̃նէ, և զնոյն ա-
ղաչեմ. բնակիլ ինձ 'ի տան տեա-
ռըն զա̃մ աւուրս կենաց իմոց։

Տեսանել ինձ զվայելչութիւն տ̃ն,
և հրաման տալ 'ի տաճարի նորա։

Ծածկեաց զիս 'ի խորանի իւրում
յաւուր չարի. ընդ յարկաւ արար
զիս 'ի ծածկոյթ խորանի իւրում։

Ի վիմէ բարձր արարեր զիս. և այ-
ժըմ բարձր արա զգլուխ իմ 'ի վե-
րայ թշնամեաց իմոց։

Շուրջ եղէց՝ և մատուցից 'ի խո-
րանի նորա պատարագ օրհնութե̃.
օրհնեցից և սաղմոս ասացից տ̃ն։

Լուր տէր ձայնի իմում, զի կար-
դացի առ քեզ. ողորմեա ինձ և
լուր ինձ, զի քեզ ասաց սիրտ իմ.
և խնդրեցին երեսք իմ, զերեսս
քո տէր խնդրեցին։

Մի դարձուցաներ զերեսս քո յի-
նէն. և մի խոտորիր բարկութ̃բ 'ի
ծառայէ քումմէ։

Օգնական իմ լեր տէր՝ մի՛ անար-
գեր զիս, և մի՛ թողուր զիս աստ-
ուած փրկիչ իմ։
Հայր իմ և մայր իմ թողին զիս.
և տէր իմ ընկալաւ զիս։
Օրէնսդէտ արա զիս տէր 'ի ճանա-
պարհի քում. և առաջնորդեա ինձ
'ի շաւիղս քո ուղիղս։
Վասն թշնամեաց իմոց, մի մատներ
զիս 'ի ձեռս նեղչաց իմոց։
Յարեան 'ի վերայ իմ վկայք մե-
ղաց. և ստեցին ինձ յանօրէնութե̄
իւրեանց։
Հաւատացի տեսանել զբարութի̄
տն̄՝ յերկրին կենդանեաց, համբեր
տեառն՝ և քաջալերեաց. զօրասցի
սիրտ քո և համբեր տեառն։
Փառք հօր և որդւոյ և.

---

Երգ տեառն Ներսէսի.

Նայեաց սիրով հայրդ գթա՛ծ
'ի քո ստեղծեալ գործըս ձե-
ռա՛ց. և ըզնմանակըս հրեշտակա՛ց

տուր պահապան մեզ ոըկարուցս.
փրկեա զանձինս ՚ի փորձանաց ՚ի խա-
ւարի շրջող դիւաց. զի՛ ՚ի տըւըն-
ջեան և գիշերի տացուք քեզ փա-
ռըս անլռելի:

Այն անեղ անըսկըզբեա՛ն ծընունդ
անճառ որդի և բա՛ն. որ արարեր
ըզտիւ գործոյ և ըզգիշեր ՚ի հան-
գիստ քնո՛յ. տուր ՚ի ննջել աչաց
մարմնոյ արթուն լինել մե՛զ ըստ
հոգւո՛յ. զի՛ ՚ի տը:

Ռաբուն հոգւոց բանաւորա՛ց ա-
ղբիւր լուսոյ բաշխող շնորհաց. ՚ի
փակել զրանց բնութեց մարմնոց
լոյս տուր աչաց սրտից մերո՛ց. ՚ի
գիշերաց առ քեզ կանխե՛լ ընդ հը-
րեղինա՛ցն օրհնաբանե՛լ. զի՛ ՚ի:

Սուրբըդ սրց երրորդութի՛ ըզմեզ
մաքրեա քեզ բնակութի՛. շնորհեա
ընդ մանկանցն առագաստի՛ հանգ-
չել ընդ քեզ ՚ի յանկողնի՛. տուր ըզ
հայցուած բարեկամի՛ն ըզփոխ և-

րից նըկանակին. զի՛։

Արեւելի՛ լոյս ըստեղծեր զտիւ և զգիշեր բաժանեցեր. ծագեա մեզ տէր 'ի գիշերի ըղձառագայթս իմանալի՛. տուր յամ ժամանակի զպահպանող աջ քո հովանի՛. զի՛ 'ի տր։

Սիրոյ քո հուր արկեր յերկիր բորբոքեցի 'ի հոգիս մե՛ր. զխորհուրդ սրտից մեր մաքրեցէ՛ զլոյս գիտութեան քո փայլեցէ. 'ի քնոյ մահու զմեզ զարթուցէ՛ զմիտս բոցով քո վառեցէ. զի՛ 'ի տր։

Ի քեզ նայիմք լուսոդ անմատոյց 'ի զգայական ծածկեալ լուսոյ. որ վասըն մեր եդար 'ի գբի և նընջեցեր 'ի տապանի՛. առ մեզ նընջեա արթուն ընութի՛ հերքեա զչարին ներգործութիւն. զի՛ 'ի տր։

Ածդ լուսոյ անըստուերի պաղատանօք կամք առաջի՛. որ փակեալ դըրամբք յերեկոյին երևեցար մետասանի՛ն. ընդ Թովմայի առ քեզ գո-

չե՟մք տէր և ա՟ծ զքեզ դաւանե՟մք.
է՟ջ և առ մեզ յերեկոյս և տուր
զողջոյն քո ՚ի հոգի՟ս։

Րամեալքս ըզ քեզ տէր աղաչե՟մք
մեզ յօգնութիւն նայեա հայցեմք.
պահապանդ իսրայէ՟լի անձանց մե-
րոց լէր հովանի՟. օթեա առ մեզ
խաղաղարա՟ր և նընջեսցուք անխը-
ռովաբա՟ր. զի՟ ընդ առաւօտըս կան-
խեսցու՟ք օրհնել ըզ քեզ ընդ հօր
հոգւո՟վ։

Գոչման փողոյն զարթիցէ՟լ որ ՚ի
վերջնումըն գիշերի. լըսել արա
զմեզ արժանի և աջակողմ՟ն օթեաց
դասի՟. անշէջ վառեալ լոյս լապտե-
րաց ըստ իմաստուն հինգ կուսա-
նա՟ց. զի՟ ընդ փեսայիդ ՚ի յառա-
գաստ հարսունք հոգւով մըտցուք
՚ի փա՟ռս։

Հալածեա ՚ի մէնջ տէ՟ր նըշանա՟ւ
խաչի քո, զընդդիմամարտ և զա՟-
ներևոյթ գազանն. և՟ մի՟ տար յա-

պականութի՛ն գ.քո ժառանգութի՛ս. Բարեխօսեա՛լ վասըն մեր ա՛ծածի՛ն մարիամ. որ ծընար զտէր աստուած որ հովուէրըն զի՛էլ. ա՛մենազօր և ըս.քանչելի վա՛ուօքն իւրովք.

Մաղթանք.

Տէր մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն. տէր բարերար՝ աղաչեմ զ.քեզ, օգնական իմ լեր: Տէր՝ մի՛ անարգեր զիս. և մի՛ թողուր զիս աստուած փրկիչ իմ:

Քարոզ.

Աղաչեսցուք զամենակալն ա՛ծ, և խնդրեսցուք 'ի նմանէ. զի առաքեսցէ զհրեշտակ խաղաղութե՛ն, որ եկեալ պահեսցէ զմեզ յերկիղական գիշերիս, 'ի դիւական խռովութենէ՝ ամբողջ պահելով զհոգի և զմարմին մեր մինչև 'ի կատարումն ժամանակի ամաց մերոց: Ամենակալ տէր ա՛ծ մեր. կե:

Աղօթք.

Շնորհատու բարեաց՝ ամենայնի

առ ատ անմահ տէր, աղաչեմք ըզքեզ՝ փարատեա յանձանց մերոց զաղջամղջին, և զխաւարային խորհուրդս: Ի պատրանաց բանսարկուին պահեա զմեզ. և շնորհեա մեզ հաւատով ապաւինիլ յամենասուրբ երրորդութիւնդ՝ ՚ի հայր և յորդի և ՚ի սբ հոգին. այժմ և:

Յաւուր աղուհացից առ ասի Ամբիծքն՝ իսկ յայլ աւուրս՝ Հայր մեր որ յերկինս:

Սաղմոս. ճժը:

Երանեալ են անբիծք ՚ի ճանապարհի, և ոյք գնան յօրէնս տն:

Երանի, որք քննեն զվկայութիւնս նորա. բոլորով սրտիւ իւրեանց խնդրեսցեն զնա:

Ոչ թէ որք գործեն զանօրէնութի, ՚ի ճանապարհս նորա գնասցեն:

Դու պատուիրեցեր զպատուիրանս քո՝ ՚ի պահել ինձ յոյժ:

Երանի թէ յաջողեալ էին ինձ ճանապարհք իմ, ՚ի պահել ինձ զարդարութիւնս քո:

Յայնժամ ես ոչ ամաչէի, 'ի զգու-
շանալ ինձ 'ի պատուիրանս քո։
Խոստովան եղէց քեզ տէր յուղ-
ղութիւն սրտի իմոյ. որպէս ուսայց
զիրաւունս արդարութեան քո։
Զիրաւունս քո պահեցի. մի թո-
ղուր զիս մինչ իսպառ։
Ի՞ւ ուղղեսցէ երիտասարդ զճանա-
պարհս իւր, այլ 'ի պահել զբա-
նըս քո։
Բոլորով սրտիւ իմով խնդրեցի ըզ
քեզ. մի մերժեր զիս 'ի պատուի-
րանաց քոց։
Ի սրտի իմում թագուցի զբանս
քո, որպէս զի մի մեղայց քեզ։
Օրհնեալ ես դու տէր. ուսո ինձ
զարդարութիւնս քո։
Շրթամբք իմովք պատմեցից զամ՟
իրաւունս բերանոյ քո։
Ի ճանապարհս վկայութեանց քոց
զուարճացայ, ոպ՟ յամ՟ 'ի մեծուե՟։
Ի պատուիրանս քո հոգացայ. և ըզ-
գուշացայ 'ի ճանապարհս քո։
Զիրաւունս քո խօսեցայ, և ոչ մո-

ռացայ զբանս քո։

Հատո ծառայի քում, զի կեցից և պահեցից զբանս քո։

Զարթո՛ զաչս իմ, և նայեցայց 'ի սքանչելիս օրինաց քոց։

Պանդուխտ եմ ես յերկրի. մի՛ թագուցաներ յինէն զպատուիրանս քո։

Փափաքեաց անձն իմ, 'ի ցանկալ ինձ յիրաւունս քո յամ ժամ։

Սաստեցեր ամբարտաւանից. անիծեալ՝ որք խոտորեցան 'ի պատուիրանաց քոց։

Ի բաց արա յինէն զնախատինս և զարհամարհանս. զի զվկայութիւնս քո խնդրեցի։

Քանզի նստան իշխանք՝ և չարախօսէին զինէն. այլ ծառայ քո խորհէր յիրաւունս քո։

Զի վկայութիւնք քո խօսք իմ էին. և խորհուրդք իմ արդարութիւն քո։

Սերձեցաւ անձն իմ 'ի հող. տէր կեցո զիս ըստ բանի քում։

Զճնպրհս իմ պատմեցի քեզ, և լուար ինձ. ուսո ինձ զարդարութիս քո։

Ի ճանապարհս արդարութե՟ց քոց
իմաստուն արա զիս. և քննեցի՛ց
զսքանչելիս քո։
Տքնեցաւ անձն իմ առ ՚ի ձանձրա֊
նալ. հաստատեա զիս ՚ի բանս քո։
Զճանապարհս մեղաց ՚ի բաց արա
յինէն. և յօրէնս քո ողորմեա ինձ։
Զճանապարհս ճշմարտութեան քո
ընտրեցի. և զիրաւունս քո ես ոչ
մոռացայ։
Մերձեցայ ես ՚ի վկայութիւնս քո,
տէր մի՛ յամօթ առներ զիս։
Ի ճանապարհս պատուիրանաց քոց
ընթացայ. զի անդորր արարեր սըր֊
տի իմոյ։
Օրէնսդէտ արա զիս տէր, ՚ի ճա֊
նապարհս իրաւանց քոց. և խնդրե֊
ցից զնա յամենայն ժամ։
Իմաստուն արա զիս. և քննեցից զօ֊
րէնս քո, և պահեցից զնա բոլո֊
րով սրտիւ իմով։
Առաջնորդեա ինձ ՚ի շաւիղս պատ֊
ուիրանաց քոց. զի ընդ նա՟ հաճեցայ։
Խոնարհեցո զսիրտ իմ ՚ի վկայու֊

թիւնս քո, և մի՛ յագահութիւն։

Դարձո զաչս իմ, զի մի՛ տեսից ըզ-նանրութիւն. 'ի ճանապարհս քո կեցո զիս։

Հաստատեա ծառայի քում՝ զբան քո յերկիւղ քո։

Հան յինէն զնախատինս, զոր և կարծեցի. զի դատաստանք քո քաղ-ցըր են։

Ահա ցանկացայ պատուիրանաց քոց, յարդարութեան քում կեցո զիս։

Եկեսցէ 'ի վե՛ր իմ ողորմութի՟ քո տ՟ր. և փրկութի՟ քո ըստ բանի քում։

Տաց պատասխանի ոյք նախատեն զիս բանիւք. զի ես 'ի բանս քո յուսացայ։

Մի՛ 'ի բացեայ առնէր 'ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութեան մինչև յոյժ. զի յիրաւունս քո յուսացայ։

Պահեցի զօրէնս քո յամ ժամ, յաւի-տեան՝ և յաւիտեանս յաւիտենից։

Գնայի ես յանդորրու. զի զպատ-ուիրանս քո խնդրեցի։

Խօսէի զվկայութիւնս քո առաջի

Թագաւորաց, և ոչ ամաչէի։

Խորհէի 'ի պատուիրանս քո զոր սի-
րեցի։

Համբարձի զձեռս իմ 'ի պատուի-
րանս քո՝ զոր սիրեցի. և խորհէի
յարդարութեան քում։

Յիշեա զբան ծառայի քո, յոր և
յուսացուցեր զիս։

Սա մխիթարեացէ զիս 'ի խոնարհուե̃
իմում. զի բան քո կեցոյց զիս։

Ամբարտաւանք անիրաւեցան յիս
յոյժ, այլ յօրինաց քոց ես ոչ խո-
տորեցայ։

Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից
Տէր, և մխիթարեցայ։

Տրտմութիւն կալաւ զիս 'ի մեղա-
ւորաց, և ոյք թողին զօրէնս քո։

Գովելի են ինձ իրաւունք քո, 'ի
տեղւոջ պանդխտութեան իմոյ։

Յիշեցի 'ի գիշերի զանուն քո Տէր.
և պահեցի զօրէնս քո։

Սա եղև ինձ ճանապարհ 'ի կեանս.
զի զարդարութիւնս քո խնդրեցի։

Բաժին իմ ես դու տէր, ասացի պահել ինձ զօրէնս քո։
Աղաչեցի զերեսս քո բոլորով սրտիւ իմով. ողորմեա ինձ ըստ բանի քում։
Խորհեցայ 'ի ճանապարհս իմ. և դարձուցի զոտս իմ 'ի վկայութիւնս քո։
Պատրաստեցայ և ոչ խռովեցայ. զի պահեցի զպատուիրանս քո։
Տուունք մեղաց պատեցան զինև. այլ զօրէնս քո ես ոչ մոռացայ։
Ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինիլ առ քեզ, վասն իրաւանց և արդարութեան քո։
Հաղորդ էի ես ամենայն երկիւղածաց քոց. որոց պահեալ էին ըզ պատուիրանս քո։
Ողորմութ̄բ տ̄ն լի եղև երկիր. զար-դարութիւնս քո ուսո ինձ։
Քաղցրութ̄ի արարեր ընդ ծառայի քում տէր, ըստ բանի քում։
Զքաղցրութ̄ի, զխրատ, և զգիտու-թիւն ուսո ինձ. զի 'ի պատուիրա-

Նըս քո ես հաւատացի։
Մինչև խոնարհեալ էի ես՝ մեղայ. վասն այսորիկ զբանս քո պահեցի յոյժ։
Քաղցր ես դու տէր, և քաղցրութեամբ քով ուսո ինձ զարդարութիւնս քո։
Բազմացան յիս անիրաւութիւնք ամբարտաւանից. այլ ես բոլորով սրտիւ իմով քննեցի զպատուիրանս քո։
Մածան որպէս կաթն սիրտք նոցա. այլ ես զօրէնս քո խոկեցայ։
Բարի է ինձ, զի խոնարհ արարեր զիս. որպ՟ ուսայց զարդարութիւնս քո։
Բարի են ինձ օրէնք բերանոյ քո, քան զհազարս ոսկւոյ և արծաթոյ։
Ձեռք իմ արարին՝ և ստեղծին զիս. իմաստուն արա զիս՝ և ուսայց զպատուիրանս քո։
Երկիւղածք քո տեսցեն զիս՝ և ուրախ եղիցին. զի ես ՚ի բանս քո յուսացայ։
Ծանեայ տէր զի արդարութ՟ք են

դատաստանք քո. յիրաւի խոնար-
հեցուցեր զիս։
Եղիցի ողորմութիւն քո 'ի մխիթա-
րել զիս, ըստ բանի քում, զծա-
ռայս քո։
Եկեսցեն յիս գթութիւնք քո՝ և
կեցից. զի օրէնք քո խօսք իմ էին։
Ամաչեսցեն ամբարտաւանք՝ որք 'ի
տարապարտուց անիրաւեցան յիս.
այլ ես հոգացայ 'ի պատուիրանս քո։
Խրատեսցեն զիս երկիւղածք քո, և
ոյք ճանաչեն զվկայութիւնս քո։
Եղիցի սիրտ իմ անբիծ յարդարութե՟
քում. զի մի՛ ամաչեցից։
Կարօտացաւ անձն իմ 'ի փրկու՟իս
քո. զի ես 'ի բանս քո յուսացայ։
Սպասեցին աչք իմ բանի քում. ա-
սացի՝ Ե՞րբ մխիթարեսցէ զիս։
Եղէ ես որպէս տիկ 'ի պարզի. զի
զարդարու՟իս քո ես ոչ մոռացայ։
Քանի՞ ինչ են աւուրք ծառայի քո.
Ե՞րբ արասցես ինձ իրաւունս 'ի
հալածչաց իմոց։
Պատմեցին ինձ անօրէնք զխորհուր-

դըս. այլ ոչ որպէս զօրէնս քո։

Ամենայն պատուիրանք քո ճշմարիտ են. 'ի նանիր հալածեցին զիս, օգնեա ինձ։

Փոքր մի եւս՝ և կորուսանէին զիս յերկրի. այլ ես ոչ թողի զպատուիրանս քո։

Ըստ ողորմութեան քում կեցո զիս. և պահեցից զվկայութիւնս բերանոյ քո։

Յաւիտեան տէր՝ բան քո կայ յերկինս. ազգէ մինչև յազգ է ճշմարտութիւն քո։

Հաստատեցեր զերկիր՝ և կայ։

Հրամանի քում մնայ տիւ. զի ամենեքեան ծառայք քո են։

Եթէ ոչ օրէնք քո խօսք իմ էին, կանխաւ ևս արդեօք կորուսեալ էի 'ի խոնարհութեան իմում։

Յաւիտեան ոչ մոռացայց զարդարութիւնս քո. զի նոքօք կեցուցեր զիս։

Քո եմ ես, և կեցո զիս. զի զարդարութիւնս քո խնդրեցի։

Ինձ սպասեցին մեղաւորք 'ի կորուսանել. զի զվկայութիւնս քո ես 'ի միտ առի։

Յամենայն կատարածի տեսի զվախճան, յոյժ անդորր էին ինձ պատուիրանք քո։

Որպէս սիրեցի զօրէնս քո. զօրհանապազ խօսք իմ էին։

Քան զթշնամիս իմ իմաստուն արարեր զիս 'ի պատուիրանս քո. զի յաւիտեան իմ էին։

Քան զամենայն ուսուցիչս իմ իմաստուն եղէ. զի վկայութիւնք քո խօսք իմ էին։

Քան զծերսն իմաստուն եղէ. զի զպատուիրանս քո քննեցի։

Յամենայն ճանապարհաց չարաց արգելի զոտս իմ. ո՟պ զի պահեցից զբանս քո։

Յիրաւանց քոց ես ոչ խոտորեցայ. զի դու օրէնսդէտ արարեր զիս։

Ո՟պ զի քաղցր են 'ի քիմս իմ բանք քո քան զմեղր՝ բերանոյ իմոյ։

Ի պատուիրանաց քոց իմացեալ՝ ա-

տեցի զա̃մ ճանապարհս չարաց. զի
դու օրէնսդէտ արարեր զիս:

Ճրագ են բանք քո ոտից իմոց, և
լոյս տան շաւղաց իմոց:

Երդուայ և հաստատեցի. զի պա-
հեցից զամենայն իրաւունս արդա-
րութեան քո:

Խոնարհ եղէ մինչև յոյժ. տէր՝
կեցո զիս ըստ բանի քում:

Ընդ կամս բերանոյ իմոյ հաճեաց
տ̃ր. և զիրաւունս քո ուսո ինձ:

Անձն իմ ՚ի ձեռս քո է յա̃մ ժամ.
և զօրէնս քո ես ոչ մոռացայ:

Եդին ինձ մեղաւորք որոգայթ. ՚ի
պատուիրանաց քոց ես ոչ մոլո-
րեցայ:

Ժառանգեցի զվկայութիւնս քո յա-
ւիտեան. զի ցնծութիւն է սրտի
իմոյ:

Խոնարհեցուցի զսիրտ իմ, առնել
զարդարութիւնս քո յաւիտեան,
վասն հատուցման:

Զանօրէնս ատեցի, և զօրէնս քո
սիրեցի:

Օգնական և փրկիչ իմ ես դու.
և ես 'ի բանս քո յուսացայ։
Ի բաց եղերուք յինէն չարք. և
քննեցից զպատուիրանս Այ իմոյ։
Օգնեա ինձ ըստ բանի քում, և
կեցո զիս. և մի՛ յամօթ առներ զիս
'ի յուսոյ իմմէ։
Օգնեա ինձ, և ապրեցո զիս. և
խորհեցայց յիրաւունս քո յամե-
նայն ժամ։
Անարգեցեր զամենեսեան՝ որք ա-
պստամբք եղեն յարդարութեց
քոց. զի անիրաւութեամբ էին
խորհուրդք նոցա։
Յանցաւորս համարեցայ զամ մե-
ղաւորս երկրի. վասն այսորիկ սի-
րեցի զպատուիրանս քո։
Բևեռեա ընդ երկիւղ քո զմար-
մին իմ. զի 'ի դատաստանաց քոց
երկեայց յոյժ։

Արարի իրաւունս և արդարութի՟.
մի՛ մատներ զիս 'ի ձեռս նեղչաց
իմոց.

Ընկալ զծառայս քո 'ի բարի. զի մի
ամբարտաւանք զրկեսցեն զիս։
Սպասեցին աչք իմ փրկութե՟ քում
տէր, և բանից արդարութեան քո։
Արա ընդ ծառայի քում տէր ըստ
ողորմութեան քում. զարդարու֊
թիւնս քո ուսո ինձ։
Ծառայ քո եմ ես, իմաստուն ա֊
րա զիս, և ծանեայց զվկայութիւ֊
նս քո։
Ժամ է պաշտել զտէր. խափանե֊
ցին զօրէնս քո։
Վ՟ այսորիկ սիրեցի զպատուիրանս
քո, քան զա՟մ ոսկի և զտպազիոն։
Ամենայն պատուիրանք քո յաջողե֊
ցան ինձ. զի ատեցի ես զճանա֊
պարհս չարաց։
Սքանչելի են վկայութիւնք քո, վ՟
այսորիկ սիրեաց զնոսա անձն իմ։
Յայտնութիւն բանից քոց լուսա֊
ւորէ, և իմաստուն առնէ զտղայս։
Զբերան իմ բացի, և առի զհոգի.
'ի պատուիրանս քո փափագեաց
անձն իմ։

Նայեա առ իս և ողորմեա ինձ, ըստ
իրաւունս սիրողաց անուան քո։
Զճանապարհս իմ ուղիղ արա ինձ
ըստ բանի քում և մի՛ տիրեսցեն ինձ
ամենայն մեղք։
Փրկեա զիս ՚ի զրպարտութենէ մարդ-
կան. և պահեցից զպատուիրանս քո։
Երեւեցո զերեսս քո ՚ի ծառայս քո,
և ուսո ինձ զարդարութիւնս քո։
Վտակք ջուրց իջին յաչաց իմոց.
զի ոչ պահեցին զօրէնս քո։
Արդար ես դու տէր, և ուղիղ
են դատաստանք քո։
Պատուիրեցեր զարդարութիւն վկա-
յութեանց քոց. և ճշմարիտ են յոյժ։
Մաշեաց զիս նախանձ քո, զի մո-
ռացան զբանս քո թշնամիք իմ։
Ընտրեալ է բան քո յոյժ, և ծա-
ռայ քո սիրեաց զսա։
Մանուկ եմ ես և արհամարհեալ.
և զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ։
Արդարութիւն քո՝ արդարութիւն յաւի-
տենից. և օրէնք քո ճշմարիտ են։
Նեղութիւնք և վիշտք գտին զիս. և

պատուիրանք քո խօսք իմ էին ։
Արդարութ͞ են վկայութիք քո յաւիտ-
եան. իմաստուն արա և կեցո զիս ։
Կարդացի առ քեզ բոլորով սրտիւ
իմով. լուր ինձ տէր, զի զարդա-
րութիւնս քո խնդրեցի ։
Աղաղակեցի առ քեզ՝ և փրկեա զիս.
և պահեցից զվկայութիւնս քո ։
կանխեցի տարաժամու՝ աղաղակե-
ցի. և ես ՚ի բանս քո յուսացայ ։
կանխեցին աչք իմ առաւօտու. ՚ի
խօսիլ ինձ զբանս քո ։
Ձայնի իմում լուր տ͞ր՝ ըստ ողորմութ͞ե
քում. և յիրաւունս քո կեցո զիս ։
Մերձեցուցին յիս հալածիչք իմ
զանօրէնութիւն. զի յօրինաց քոց
հեռի եղեն ։
Մերձ ես դու տէր. և ամենայն
պատուիրանք քո ճշմարիտ են ։
Ի սկզբանէ ծանեայ ՚ի վկայութեանց
քոց. զի յաւիտեան հաստատեցեր
զնոսա ։
Տես զխոնարհութ͞ի իմ, և փրկեա
զիս. զի զօրէնս քո ես ոչ մոռացայ ։

Դատեա զդատաստանս իմ, և փըր-
կեա զիս. և ըստ բանի քում կեցո զիս:
Հեռի է 'ի մեղաւորաց փրկութիւն,
զի զիրաւունս քո ոչ պահեցին:
Գթութիւնք քո բազում են տէր,
և ըստ իրաւանց քոց կեցո զիս:
Բազում են որք հալածեն և նեղեն
զիս. 'ի վկայութեանց քոց ես ոչ
խոտորեցայ:
Հայէի յանզգամսն՝ և մաշէի, զի
զպատուիրանս քո ոչ պահեցին:
Տես՝ զի զպատուիրանս քո սիրեցի.
տէր՝ ողորմութեամբ քո կեցո զիս:
Սկիզբն բանից քոց ճշմարտութիւն
է. յաւիտեան են ամենայն իրա-
ւունք արդարութեան քո:
Իշխանք հալածեցին զիս 'ի նանիր.
և 'ի բանից քոց երկեաւ սիրտ իմ:
Ցնծացայ ես 'ի բանս քո որպէս այն,
որ գտանէ աւար բազում:
Զմեղս ատեցի և անարգեցի, և
զօրէնս քո սիրեցի:
Եօթն անգամ յաւուր օրհնեցից
զքեզ, վասն իրաւանց և արդա-

րութեան քո։
Խաղաղութիւն բազում է այնոցիկ,
որք սիրեն զօրէնս քո. և ոչ գոյ 'ի
նոսա գայթակղութիւն։
Սպասեցի փրկութեան քում տէր,
և զպատուիրանս քո սիրեցի։
Պահեաց անձն իմ զվկայութիւնս
քո, և սիրեաց զնոսա յոյժ։
Պահեցից զպատուիրանս՝ և զվկա-
յութիւնս քո. զի ամենայն ճանա-
պարհք իմ առաջի քո են։
Մերձեսցին խնդրուածք իմ առա-
ջի քո տէր. ըստ բանի քում իմաս-
տուն արա զիս։
Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր.
և բանիւ քո փրկեա զիս։
Բղխեսցեն շրթունք իմ զօրհնու-
թիւնս քո. յորժամ ուսուսցես ինձ
զարդարութիւնս քո։
Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ամ̃
պատուիրանք քո արդարութ̃ք են։
Եղիցի ձեռն քո 'ի կեցուցանել զիս.
զի զպատուիրանս քո ընտրեցի։
Ցանկացայ փրկութեան քում տէր,

և օրէնք քո խօսք իմ էին ։
կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ.
և իրաւունք քո օգնեսցեն ինձ ։
Մոլորեցայ ես որպէս ոչխար կո-
րուսեալ. խնդրեա զծառայս քո,
զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ ։
փառք հօր և որդւոյ և ։

Ն— չնչի աւէ շարականս ։

Ո քէն հայցեմք հայր գթութեց
և ած մըխիթարութեանց. 'ի
տըխրական գիշերայի՛ն մերձեալ
ժամուս. մըխիթարեա ըզ մեզ 'ի
տըրտմութեց մեղաց, և շնորհեա
զուրախութի՛ գործովք արդարու-
թեան. աղաչանօք սբ ածածնին
և ամենայն արդարոց ։

Ըստ քաղցրագոյն ածային քո հրա-
մանի կոչման որդի մարդոյ. ե-
կեալ եմք առաջի քո յերեկոյիս աշ-
խատեալք և ծանրաբեռնեալք. թե-
թեւացո 'ի ծանրութեանց մեղաց
զանձինս, և զօրացո բառնալ կա-

մաւ ընդ քաղցըր լուծ քոյ պատ-
ուիրանաց. աղաչա:

Պաղատիմք առ քեզ հոգւով'ի հան-
գըստեան հասեալ ժամուս մար-
դասէր հոգի աստուծոյ. յորժամ
նորոգես զերեսս երկրի, և վերըս-
տին ստանամս զոգիս մարդկան. նո-
րափետուր զարդարեա ընդ ննջե-
ցեալըն մեր զծնեալսն 'ի քէն ըստ
աւազանաւն. աղաչա:

Զկենդանագիր անարատ ծընողին
քո. արկանեմք առաջի անոխակալ
տէրութեանդ քո. յորժամ գաս
փառօք հօր դատել ըզթըշնամին
խաչի քո, ներեա յանցանաց մե-
րոց բարեխօսութեամբ մօր քո է
կուսի. աղաչեմք զքեզ տէր պահ-
պանեա զմեզ ընդ հովանեաւ խա-
չի քո սուրբ:

Հաղորդս արա և ըզմեզ տէր, ընդ-
սըրբոց քոյ առաքելոցն. որք ար-
ժանի եղեն տեսանել ըզքեզ'ի յա-

րութեամբ քո. արժանաւորեա տէր
տեսանել ըզքեզ ՚ի միւսանգամ քո
գալըստեանն. օրհնութիւն առա-
քողին ՚ի բարձունս:

Ի նըստիլ քո յաթենի դատաւոր ամ-
հեղ. աղաչանօք սուրբ ածածնին,
յիշեա զնընջեցեալսն մեր, յոր-
ժամ դայցես ամենայն փառօք. քան-
զի քո են փառք յաւիտեանս ամէն:

Սրբուհի մարիամ. սափոր ոսկի դշ
և տապանակ կտակարանաց. որ
ըզ ՚ի վերուստ զհացըն կենաց պար-
գեւեցեր քաղցեալ բնութեանս.
առ նա միշտ բարեխօսեա վասըն
քաւութեան մեղաց մերոց:

Դու որ անմարմնոց հրեշտակաց քեզ
երանեն ամենօրհնեալ կոյս մարի-
ամ. որ զէակից բանն որ ընդ հօր
կրեցեր ՚ի քեզ անմարմնապէս. առ
նա միշտ բարեխօսեա մեզ քաւութե:
Վասն որոյ և մեք հաւատացեալքս

քեզ երկրպագեմք քն և արտաս
ուօք հնչեմք 'ի քէն. բարեխօսու
թեամբ ածածնին զածային լոյս քո
ծագեա յանձինս մեր. օրհնեմք ըզ
քեզ 'ի յարութեան երեկոյիս ա
հաւոր թագաւոր:

եչ Նուաճեալք աստուծոյ. ընդու
րեալք 'ի սկզբանէ նախ քան զաշ
խարհս. որք արժանի եղէք տե
սանել զանտեսն հրեղինաց. բա
րեխօսեցէք առ տէր փառացն մա
կանց եկեղեցւոյ:

Բարեկամք քրիստոսի. հազարա
պետք ածայինքն խորհրդոցն.
որք 'ի հոսանուտ մեղաց ծովէս
վերածիք զմարդիկ 'ի կեանս ան
մահ. բարեխօ:

Գերագոյն քան ըզբընաւս. ան
ճառելւոյն հասիք երանութեան.
որք 'ի գալըստեան տռըն նրալիք
յերկոտասան աթոռըն քրիստոսի.
բարեխօսե:

Պարունակեալ պահէին յանեղա- ուր
չէն գրաւական ըղձանամարհըս
ծառոյն կենաց, քրովբէական
հրյքըն բոցեղէն սրովբէիւք. մի-
սոյն արտաքսեալ ցուցար յերկրի
ածաղանդ փայտ կենաց և փրկու-
թեան. զքեզ օրհնեն մանկունք
սուրբ եկեղեցւոյ:

Սաբեկայ ծառոյն վերաբերեալ
խոյ յողջակէզս փոխանակ իսա-
հակայ. այլ 'ի վերայ քո զենա-
գառն անարատ, 'ի հաշտութի հօր
և 'ի բառնալ ըզմեղըս մեր. զքեզ:

Պարծանք պօղոսեան. դաւանեալ
ըզքեզ ածային բանին տեղի և զե-
նարան. քանզի քեւ առեցաք 'ի
խածանող և յանմահին զաղա-
նէն. և 'ի վերայ քո հեղեալ չիթք
անապական արեանն ըղ կողածնին
ջնջեանց ըզմեղըս. զքեզ օրհ:

Երկնաւոր հօտ ընտրեալ. զոր բշ
հովիւն քաջ թողեալ յերկինս, և

եկեալ 'ի խնդիր մեր մոլորելոցս. որով լցեալ զթիւ հարիւրորդ, արար ուրախութիւն 'ի յերկինս երկնաւորացդ. աղաչեմք ըզ ձեզ բարեխօս լերուք առ տէր վասն քաւութեան մեղաց մերոց. Տեսանօղք ամենեսին. խորհրդածուք խորոցն աստուծոյ. որք իջել ընդ միածնին սպասաւորել տնօրէնութեանն. 'ի ծննդեանն աւետաւորք հովուացն. և կանանցն իւղաբերից կենաց քարոզք ըզկենդանւոյն. ապա. Պահապանք աշխարհի, բանակք տեառն շուրջ զերկիւղածովք. բարեկամք ազգի մարդկան, միջնորդք մահու և յարութեան. Միքայէլ և Գաբրիէլ մեծք, որ կայք միշտ առաջի ամենասուրբ երրորդութեանն. ապա.

դէ Երկնաւոր փեսայ անսպառելի լոյս իմանալի. որ 'ի յերկնից իջեր, 'ի սէր հարսին քո եկեղեցւոյ. զոր

խօսեցաւ քեզ, բարեկամն և փե-
սաւէրըն քո յանձնանէս. սուրբն մայր
թանօք ողորմեա։

Քառակերպեանցն անհաս և անտես
'ի սերովբէից. սրբութեց սուրբ
և տէր բոլորից. խոնարհեցար 'ի
յերդմունս. հայցելով 'ի ծառա
յէն, մաքրութիւն ջրոյ 'ի լուա
նալ ըզմեզ ամենայն. սուրբն։

Որ յամբոխսն միակեցար դասն
ոյ բարձեալ մեղաց. որ գերադասին
ազգաց, ծանուցեր մեծ 'ի ծննդ
դըս կուսանաց, և ճրագ օրինացն.
որ և 'ի դըժոխս գիրկեալն դալու
ան քո բարեխօսու. սուրբն։

Մաղթանք.

Զօրացոյն հանգուցելոց քրիստո
սադաւանաց՝ արա հանգիստ և ողոր
մութիւն. և մեզ մեղաւորացս շը
նորհեա զթողութիւն յանցանաց։

Քարոզ.

Եւ ևս խաղաղութեան զտէր աղա.

Վս հանգուցեալ հոգւոյն աղա-
չեսցուք զփրկիչն մեր Քս՝ զի զնա ընդ
արդարսն դասեսցէ. եւ զմեզ կե-
ցուսցէ շնորհիւ ողորմութե իւ-
րոյ։ Ամենակալ տէր ած։

Տէր ողորմեա. տէր ողոր. տէր ո։

Աղօթք.

Քս որդի այ անոխակալ եւ բարե-
գութ՝ գթա քո արարչական սիրովդ
'ի հոգիս հանգուցել ծառայից քոց։
Յիշեա յաւուր մեծի գալստեան ար-
քայութե քո։ Արա արժանի ողոր-
մութե՝ քաւութե եւ թողութե մեղաց։
Պատուորեալ պայծառացո ընդ սրբս
քո յաջակողմեան դասուն։ Զի դու
ես ած եւ արարիչ ամենեցուն. դատա-
ւոր կենդանեաց եւ մեռելոց։ Եւ
քեզ վայելէ փառք իշխանութիւն
եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ.
Օրհնեալ տէր մեր յս քս, ամէն.
Հայր մեր որ յերկինս ես։

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից հանգստեան ժամուն։
Որ կատարի 'ի դէմս Հօր առաւօտոյ՞. զի պահպանողական ա-
Ջով միածնին պահեսցէ զմեզ 'ի խաւարային գիշերի։

Առաքեա տէր զլոյս քո՝ և զճըշ-մարտութիւն քո. զի առաջնոր-դեսցեն ինձ, և հանցեն զիս 'ի լեա-ռն սուրբ և 'ի յարկս քո։

Մտից առաջի սեղանոյ այ առ ած, որ ուրախ առնէ զմանկութի իմ. խոստովան եղէց քեզ օրհնութբ աստուած աստուած իմ։

Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա առ ած, խոստովանեա նմա. փրը-կիչ երեսաց իմոց ած է։

Փառք Հօր և որդւոյ և։

Եւ ես խաղաղութեն զտէր աղա։

Օրհնութիւն և փառք Հօր և։

Եկեսցէ ՚ի վերայ իմ ողորմութիւն քո Տէր, և փրկութիւն քո ըստ բանի քում։

Տաց պատասխանի որք նախատեն զիս բանիւք. զի ես ՚ի բանս քո յուսացայ։

Մի՛ ՚ի բաց առներ ՚ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութեան մինչեւ յոյժ. զի յիրաւունս քո յուսացայ։

Պահեցի զօրէնս քո յամենայն ժամ, յաւիտեան՝ և յաւիտեանս յաւիտենից։

Գնայի ես յանդորրու. զի զպատուիրանս քո խնդրեցի։

Խօսէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց, և ոչ ամաչէի։

Խորհէի ՚ի պատուիրանս քո զոր սիրեցի։

Համբարձի զձեռս իմ ՚ի պատուիրանս քո՝ զոր սիրեցի. և խորհէի յարդարութեան քում։

Յիշեա զբան ծառայի քո, յոր և յուսացուցեր զիս.

Սա մխիթարեաց զիս 'ի խոնարհութեան իմում. զի բան քո կեցոյց զիս։

Ամբարտաւանք անիրաւեցան յոյժ, այլ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ։

Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից Տէր, և մխիթարեցայ։

Տրտմութիւն կալաւ զիս 'ի մեղաւորաց, և որք թողին զօրէնս քո։

Գովելի են ինձ իրաւունք քո, 'ի տեղւոջ պանդխտութեան իմոյ։

Յիշեցի 'ի գիշերի զանուն քո Տէր. և պահեցի զօրէնս քո։

Սա եղև ինձ ճանապարհ 'ի կեանս զի զարդարութիւնս քո խնդրեցի։

Զանօրէնս ատեցի և զօրէնս քո սիրեցի։

Օգնական և փրկիչ իմ ես դու. և ես 'ի բանս քո յուսացայ։

Ի բաց եղերուք յինէն չարք. և քննեցից զպատուիրանս այ̃ իմոյ։

Օգնեա ինձ ըստ բանի քում, և կեցո զիս. և մի՛ յամօթ առներ զիս 'ի յուսոյ իմմէ։

Օգնեա ինձ, և ապրեցո զիս. և խորհեցայց յիրաւունս քո յամենայն ժամ։

Անարգեցեր զամենեսեան՝ որք ապստամբք եղեն յարդարութեանց քոց. զի անիրաւութեամբ էին խորհուրդք նոցա։

Յանցաւորս համարեցայ զա՛մ մեղաւորս երկրի. վասն այսորիկ՝ սիրեցի զպատուիրանս քո։

Բեւեռեա ընդ երկիւղ քո զմարմին իմ. զի 'ի դատաստանաց քոց երկեայց յոյժ։

Մերձեցին խնդրուածք իմ առաջի քո տէր, ըստ բանի քում իմաստուն արա զիս։

Մտցեն աղօթք իմ առաջի քո տ՜ր, և բանիւ քո փրկեա զիս։

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո, յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո։

Խօսեսցի լեզու իմ զբանս քո, զի ամենայն պատուիրանք քո արդարութեամբ են։

Եղիցի ձեռն քո ՚ի կեցուցանել զիս,
զի զպատուիրանս քո ընտրեցի:
Ցանկացայ փրկութե̃ քում տէր,
և օրէնք քո խօսք իմ էին:
Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ,
և իրաւունք քո օգնեսցեն ինձ:
Մոլորեցայ ես որպէս ոչխար կո-
րուսեալ, խնդրեա զծառայս քո՝
զի զպատուիրանս քո ես ոչ մո-
ռացայ:
Մի՛ եկեսցեն ՚ի վերայ մեր ոտք ամ-
բարտաւանից, և ձեռք մեղաւորաց
մի՛ դողացուսցեն զմեզ:
Անդ անկցին ամենեքեան ովք գոր-
ծեն զանօրէնութիւն, մերժեսցին
և այլ մի՛ կարասցեն հաստատիլ:
Ես ՚ի տէր յուսացայ, ցնծացայց և
ուրախ եղէց յաստուած փրկիչ իմ:
Տէր տէր ետ ինձ զօրութիւն և
կացոյց զոտս իմ ՚ի հաստատութե̃,
՚ի վր̃ պարանոցի թշնամւոյն կացոյց
զիս, և հանդոյց զիս երագ երագ:
Որ բնակեալն է յօգնութիւն բարձ-
րելոյն, ընդ հովանեաւ աստուծոյ

յերկինս հանգիցէ։

Ասասցէ տն՝ ընդունող իմ ես, ապա-
ւէն իմ ած, և ես յուսամ 'ի նա։
Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսո-
ղին, և 'ի բանից 'ի խռովութենէ։
Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ. 'ի
հովանի թեւոց նորա յուսասցիս։
Որպէս զէն շուրջ եղիցի զքեւ՝ ճշ-
մարտութիւն նորա։
Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշերի,
և ոչ 'ի նետէ՝ որ թռչի 'ի տուէ։
Յիրէ որ շրջի 'ի խաւարի, 'ի դայ-
թակղութենէ դիւին 'ի հասարակ
աւուր։
Անկցին 'ի կողմանէ քումմէ հազարք,
և բիւրք ընդ աջմէ քումմէ. և առ
քեզ ինչ ոչ մերձեսցին։
Բայց միայն աչօք քովք հայեսցիս
դու, և զհատուցումն մեղաւորաց
տեսցես. զի դու տէր յոյս իմ ես։
Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն.
զի ոչ հասցեն առ քեզ չարք, և տան-
ջանք մի մերձեսցին 'ի յարկս քո։
Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է

վասն քո, 'ի պահել զքեզ յամե-
նայն ճանապարհս քո։
Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ․
զի մի՛ երբեք հարցես զքարի զոտն քո։
Ի վերայ իժից և քարբից գնասցես
դու․ և առ ոտն կոխեսցես զա-
ռիւծըն և զվիշապն։
Զանզի յիս յուսացաւ, և փրկեցից
զնա․ հովանի եղէց նմա զի ծա-
նեաւ զանուն իմ։
Կարդասցէ առ իս՝ և ես լուայց
նմա․ և առ նմա եղէց 'ի նեղութե՟․
փրկեցից և փառաւոր արարից ըզ-
նա․ երկայն աւուրբք լցուցից, և
ցուցից նմա զփրկութիւն իմ։
Ով քեզ տէր համբարձի զաչս իմ,
որ բնակեալդ ես 'ի յերկինս։
Որպէս աչք ծառայի 'ի ձեռն տեա-
ռըն իւրոյ․ և որպէս աչք աղա-
խնոյ 'ի ձեռն տիկնոջ իւրոյ։
Այնպէս են աչք մեր առ քեզ տ՟ր ա՟ծ
մեր․ մինչև ողորմեսցիս 'ի վ՟ր մեր․
Ողորմեա մեզ տ՟ր ողորմեա մեզ․ զի
բազում լցաք արհամարհանօք։

Եւս առաւել լցան անձինք մեր նա-
խատանօք, որք նախատէին զմեզ. և
արհամարհանօք ամբարտաւանից.
Ըստ յանուան քում կեցո զիս, և 'ի
զօրութեան քում խրատ արա ինձ.
Աստուած լուր աղօթից իմոց, ուն-
կնդիր բանից բերանոյ իմոյ.
Օտարք յարեան 'ի վր̃ իմ, և հզօրք
խնդրեցին զանձն իմ, և ոչ համա-
րեցան զքեզ ա̃ծ առաջի իւրեանց.
Ահա Աստուած օգնական իմ, և տր̃
ընդունող հոգւոյ իմոյ.
Ի դարձուցանել զչարն 'ի թշնամիս
իմ, ճշմարտութ̃ քով սատակեա զն̃ս.
Ես կամօք իմովք պատարագս մա-
տուցից քեզ. և խոստովան եղէց
անուան քում տէր, զի բարի է.
Յա̃մ նեղութ̃ է իմմէ փրկեցեր զիս,
և 'ի թշնամիս իմ ետես աչն իմ.
Օրհնեալ ես դու տէր ա̃ծ հարցն
մերոց, գովեալ և առաւել բարձ-
րացեալ յաւիտեան.
Եւ օրհնեալ է անուն սուրբ փա-
ռաց քոց, գովեալ և առաւ.

Օրհնեալ ես 'ի տաճարի փառաց
սրբութեան քո, գովեալ և առա։
Օրհնեալ ես 'ի վերայ աթոռոյ ար-
քայութեան քո, գովեալ և առա։
Օրհնեալ ես որ նայիս 'ի քրովբէս
և հայիս յանդունդս, գովեալ և։
Օրհնեալ ես 'ի վերայ հաստատու-
թեան երկնից, գովեալ և առա։
Օրհնեցէք զա̃ծ 'ի սրբութեան նո-
րա, օրհնեցէք զնա 'ի հաստատու-
թեան 'ի զօրութեան նորա։
Օրհնեցէք զնա 'ի զօրութեան նո-
րա, օրհնեցէք զնա 'ի բազում մե-
ծութեան նորա։
Օրհնեցէք զնա 'ի ձայն օրհնու-
թեան, օրհնեցէք զնա սաղմոսիւք
և օրհնութեամբ։
Օրհնեցէք զնա ցնծութեամբ, գո-
վեցէք զնա ուրախութեամբ։
Օրհնեցէք զնա 'ի բանս քաղցր, գո-
վեցէք զնա 'ի բարբառ լեզի։
Օրհնեցէք զնա 'ի ձայն գոհութե̃,
ամ̃ հոգիք օրհնեցէք զնա։
Արդ արձակեա զծառայս քո տէր

ըստ բանի քում 'ի խաղաղութիւն,
զի տեսին աչք իմ զփրկութիւն քո՝
զոր պատրաստեցեր առաջի ամե-
նայն ժողովրդոց։

Լոյս յայտնեցուր հեթանոսաց, և
փառք ժողովրդեան քում իէլի։

Ձգեցեր զձեռն քո՝ և փրկեաց զիս
աջ քո, և Տէր հատուսցէ ընդ իմ։

Տէր ողորմութիւն քո յաւիտեան, զգոր-
ծս ձեռաց քոց մի անտես առներ։

Տէր հան 'ի բանտէ զանձն իմ, գո-
հանամ զանուանէ քումմէ։

Ին քեզ սպասեն արդարք՝ մինչև
հատուսցես։

Մեծացուսցէ անձն իմ զՏր, և ցըն-
ծասցէ հոգի իմ յԱծ փրկչում իմում։

Նայց 'ի վերայ խոնարհութե
աղախնոյ իւրոյ. այսուհետև ե-
րանեսցեն ինձ ամենայն ազգք։

Արար ընդ իս մեծամեծս հզօրն, և
սուրբ է անուն նորա։

Ողորմութիւն նորա ազգաց յազգս
երկիւղածաց իւրոց. արար զօրու-
թիւն բազկաւ իւրով։

Ցրուեաց զամբարտաւանս 'ի մտաց սրտից, և քակեաց զհզօրս յաթոռոց:

Զխոնարհս բարձրացոյց՝ զկարօտս ելից բարութեամբ, և զմեծատունս արձակեաց ունայնս:

Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրոյ, յիշելով զողորմութիւն իւր:

Որպէս խօսեցաւ առ հարսն մեր՝ ընդ Աբրահամու և զաւակի նորա յաւիտեան:

Տո՛ւր զօրութիւն ծառայի քո, կեցո զորդի աղախնոյ քո, և արա առ իս նշան բարութեան:

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն, զի դու տէր օգներ ինձ և մխիթարեցեր զիս:

Փառք հօր և որդւոյ և:

Մաղթանք:

Անձն իմ 'ի ձեռս քո է յամենայն ժամ, և 'ի սուրբ խաչ քո յուսացեալ եմ թագաւոր երկնաւոր. ընդ բազմութիւն սրբոց քոց բարեխօս ունիմ առ քեզ: Ա՛ռ երկայնամիտդ

ես առ ամենեսեան, մի՛ անտես առներ զապաւինեալս ՚ի քեզ. այլ պահեա պատուական և սուրբ խաչիւ քով ՚ի խաղաղութեան ։

Քարոզ ։

Աղաչեսցուք զամենակալն ած՟, և խնդրեսցուք ՚ի նմանէ . զի առաքեսցէ զհրեշտակ խաղաղութեան . որ եկեալ պահեսցէ զմեզ յերկիւղական գիշերիս, ՚ի գիւական խռովութենէ ամբողջ պահելով զհոգի և զմարմին մեր, մինչեւ ՚ի կատարումն ժամանակի ամաց մերոց ։

Ամենակալ տէր աստ ։

Զհանգիստ գիշերիս խաղաղութե՟ ։ Զհրեշտակ ։ Զքաւութի՟ ։ Զսրբոյ ։ Եւ եւս ։ Զանձինս ։ Ողորմեա ։

Աղօթք ։

Տէր աստուած մեր՝ դու պահեա զմեզ խաղաղութեամբ ՚ի գիշերիս յայսմիկ և յամենայն ժամանակի ։ Ընդ ո՟ր երկիւղ քո բերեալ պահեա ըզ միտս և զխորհուրդս մեր ։ Որ՟պ զի յամենայն ժամ քեւ պահ-

պանեալ լիցուք յորոգայթից թըշ-
նամւոյն ։ Եւ քեզ հանցուք զօրհ-
նութիւն և զփառս հօր և որդւոյ
և հոգւոյդ սրբոյ, այժմ և ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Հրեշտակի խաղաղութեան յանձն
արա զանձինս մեր տէր զօրութե՟ց
որ եկեալ պահեսցէ զմեզ անխռով
'ի տուէ և 'ի գիշերի, յարթ-
նութե՟ և 'ի հանգստեան մերում.
զի դու ես արարիչ լուսոյ, և հաս-
տիչ գիշերի ։ Եւ այժմ աղաչեմք
զքեզ տէր աստուած մեր, զհան-
գիստ գիշերիս շնորհեա խաղաղու-
թեամբ անցուցանել, և հասանիլ
'ի պաշտօն առաւօտու յերկրպա-
գութիւն և 'ի փառաբանութիւն
ամենասուրբ երրորդութե՟դ, այժմ ։

Սաղմոս . դ .

Խաղաղութ՟բ յայս և 'ի սոյն ննջես-
ցուք և զարթիցուք . զի դու տէր
միայն առանձին յուսով քո բնակե-
ցուցեր զմեզ ։

Ի կարդալ իմում լուար ինձ ա՟ծ

ըստ արդարութեան, 'ի նեղութե
ինձ անդորր արարեր. ողորմեա ինձ
և լուր աղօթից իմոց:

Որդիք մարդկան՝ մինչև յե՞րբ էք
խստասիրտք. ընդէ՞ր սիրէք զնան-
րութիւն, և խնդրէք զստութի:

Ծանիրուք զի սքանչելիս արար Տէր
սրբոյ իւրում. և Տէր լուիցէ ինձ
'ի կարդալ իմում առ նա:

Բարկանայք՝ և մի մեղանչէք. զոր
ինչ ասէք 'ի սիրտս ձեր՝ յանկողի-
նս ձեր զղջացարուք:

Մատուցէք պատարագս արդարու-
թեան և յուսացարուք 'ի Տէր:

Բազումք ասէին թէ ո՞ ցուցցէ մեզ
զբարութիւն Տեառն. Նշանեցաւ
առ մեզ լոյս երեսաց քոց, և ե-
տուր ուրախութի սրտից մերոց:

Ի պտղոյ ցորենոյ գինւոյ և ձիթոյ
իւրեանց լցուցեր զնոսա:

Խաղաղութեամբ յայս և 'ի սոյն
ննջեսցուք և զարթիցուք. զի դու
Տէր միայն առանձին յուսով քո
բնակեցուցեր զմեզ:

Ալէլուիա Օրհնի ։
Խաղաղութիւն ամենեցուն ։
Եւ ընդ հոգւոյդ քում ։
Երկիւղածութեամբ լուարուք ։
Սբյ աւետարանին՝ որ ըստ Յովհ ։
Փառք քեզ տէր աստուած մեր ։
Պռօսխումէ ։
Ասէ աստուած ։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ ։

Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի՝ բազում պտուղս առնէ ։ Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա. և որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ, ՚ի կեանսն յաւիտենականս պահեսցէ զնա ։ Եթէ որ զիս պաշտիցէ, զկնի իմ եկեսցէ. և ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի. եթէ որ զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա հայրն իմ ։

Փառք քեզ տէր աստուած մեր ։

Քարոզ.

Սուրբ խաչիւս աղաչեսցուք զտէր զի սովաւ փրկեսցէ զմեզ 'ի մեղաց՝ և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ։ Ամենակալ տէր՝ աստուած մեր. կեցո և ողորմեա։

Աղօթք.

Պահպանեա զմեզ քրիստոս աստուած մեր՝ ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչիւդ քով 'ի խաղաղութեան. փրկեա յերևելի և յաներևոյթ թշնամւոյն։ Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ. այժմ։

Օրհնեալ տէր մեր յս̃ քս̃, ամէն։

Հայր մեր որ յերկինս ես։

Անկանիմք առաջի քո սուրբ աստուածածին և աղաչեմք զանարատ զկոյսդ, բարեխօսեա վասն անձանց մերոց, և աղաչեա զմիածին որդիդ փրկել զմեզ 'ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց։

# ՄԱՂԹԱՆՔ ՋՕՐԱՒՈՐՔ ԱՐՔԱՒՐԱՑ ԳԻՇԵՐԱՑՆՈՑ

Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ.

Բան ժը.

Ընկալ քաղցրութեամբ տէր ամենազօր՝ զդառնացողիս զաղաչանս. մատիր գթութեամբ առ պատկառեալս դիմօք. փարատեա ամենապարգեւ՝ զամօթական տխրութիս. բարձ յինէն ողորմած՝ զանբերելի ծանրութիւնս. անջրպետեա հնարաւոր՝ զմահացու կրթութիւնս. աւարեա միշտ յաղթող՝ զխաբողին հաճութիւնս. բացադրեա վերնային՝ զմոլեկոյն մառախուղ. կրնքեա կեցուցիչ՝ զկորուսչին ընթացմունս. ցրուեա ծածկատես՝ զըմբռնողին չար գտմունս. խորտակեա անքննելին՝ զմարտողին դիմեցմունս: Տեառնագրեա քո անուամբդ զլուսանցոյց երդ յարկիս. պարփակեա քո ձեռամբդ զառաստաղ տաճարիս. գծագրեա քո արեամբդ զմուտ սեմոց սենեկիս. կերպացո

զքո նշանդ 'ի հետս ելից մաղթուղիս. ամրացո քո աջովդ զհանգըստեանս խշտի. մաքրեսցես 'ի հաղբից զծածկարան անկողնոյս. պահեսցես քո կամօքդ զտառապեալ անձն ոգւոյս. անխարդախ արասցես զքո շնորհեալ շունչ մարմնոյս. կացուսցես շրջափակ զպար զօրուդ երկնայնոյ. կարգեսցես 'ի դիմի ընդդէմ դիւացն դասու: Տուր հանգիստ բերկրութեան մահահանգոյնս նիրհման 'ի խորութեան գիշերիս, բարեխօսութեամբ հայցուածոց սրբոյ աստուածածնիդ՝ և ամենայն ընտրելոց: Ամփոփեալ պարուրեա զպատուհան տեսութեց զգայարանացս իմաստից անզարհուրելի զետեղմամբ՝ 'ի ծփական խռովութեանց, կենցաղական զբաղմանց, անրջական երազոց, խօլականաց ցնորից, յիշատակաւ քո յուսոյդ անվնասելի պաշտպանեալ: Ուսթափեալ վերստին 'ի ննջմանէ ծանրութեան, ամենազգաստ արթնու-

Թեամբ՝ հոգենորոգ զուարթութե՟ 'ի քեզ արձանացեալ, զայս ձայն մաղթանաց՝ բուրմամբ հաւատոց քեզ ամենօրհնեալ թագաւոր փառաց անձառից, փառաբանողաց երկնագումար խմբից երգակցեալ յերկինս առաքել։ Զի դու փառաւորեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից, ամեն։

## ԱՂՕԹՔ ՋՕՐԱՒՈՐ

Նորին տե՟ն Գրիգորի ·

Բա՟ն խա ·

Որդի աստուծոյ կենդանւոյ օրհնեալ յամենայնի՝ հօրդ ահաւորի անքննին ծնունդ, որ տկարանայ առ 'ի քէն և ոչինչ։ Որ 'ի ծագել անստուեր նշուլից ողորմութեան քոյ փառաց, հալին մեղք · հալածին դեւք · ջնջին յանցանք · խզին կապանք · խորտակին շղթայք · կենդանածնին մահացեալք · բժշկին հարուածք · ողջանան վէրք · բառնին ապականութիւնք · տեղի տան տխրութիւնք · նահանջին հեծու-

Թիւնք. փախուստ խաւարն. մեկնի մէգն. մերժի մառախուղն. փարատի մուայլն. սպառի աղջամուղջն. վերանայ մութն. դնայ գիշերն. տարագրի տագնապն. չքանան չարիքն. հալածին յուսահատութիքն. և թագաւորէ ձեռն քո ամենակալ՝ քաւիչդ ամենայնի։ Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս՝ այլ կեցուցանել, թող ինձ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութեամբդ։ Զի դու միայն ես յերկնի անճառ, և յերկրի անլռելին. 'ի տարր դոյի, և յեզրս ծագաց աշխարհի. սկիզբն ամենայնի, և յամենայնի. ամենայն լրմամբ օրհնեալ 'ի բարձունս. և քեզ ընդ հօր և հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս. ամէն։

## ԱՂՕԹՔ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՆՁԻՆ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ Ի ՔՐԻՍՏՈՍ

*Զոր արարեալ է սրբոյ տեառն Ներսէսի հայոց կաթուղիկոսի։*

Հաւատով խոստովանիմ և երկրպագանեմ քեզ՝ Հայր և

որդի և սուրբ հոգի, անեղ և անմահ բնութիւն, արարիչ հրեշտակաց և մարդկան և ամենայն եղելոց. ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս:

Հաւատով խոստովանիմ, և երկրպագանեմ քեզ՝ անբաժանելի լոյս, միասնական սուրբ երրորդութիւն և՝ մի աստուածութիւն, արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի. հալածեա 'ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և անգիտութեան. և լուսաւորեա զմիտս իմ 'ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ 'ի հաճոյս, և ընդունել 'ի քէն զխնդրուածս իմ. և ողորմեա քո արարածոց և ինձ բազ:

Հայր երկնաւոր աստուած ճշմարիտ՝ որ առաքեցեր զորդիդ քո սիրելի 'ի խնդիր մոլորեալ ոչխարին, մեղայ յերկինս և առաջի քո. ընկալ զիս որպէս զանառակ որդին, և զգեցո ինձ զպատմուճանն զառաջին զոր մերկացայ մեղօք. և ողոր:

Որդի աստուծոյ աստուած ճշմա-

րիտ՝ որ խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ՝ և առեր մարմին 'ի սրբոյ կուսէն մարիամայ վասն մերոյ փրկութեան. խաչեցար թաղեցար և յարեար 'ի մեռելոց՝ և համբարձար փառօք առ հայր, մեղայ յերկինս և առաջի քո. յիշեա զիս որպէս զաւազակն՝ յորժամ գաս արքայութ

քով. և ողոր։

Հոգի աստուծոյ աստուած ճշմարիտ՝ որ իջեր 'ի յորդանան և 'ի վերնատունն, և լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին, մեղայ յերկինս և առաջի քո. մաքրեա զիս վերստին աստուածային հրովքո՝ որպէս հրեղէն լեզուօք

սուրբ զառաքեալսն. և ողոր։

Անեղ բնութիւն՝ մեղայ քեզ մտօք խմովք, հոգւով և մարմնով իմով. մի յիշեր զմեղս իմ զառաջինս վասն

անուանդ քում սրբոյ. և ողոր։

Տեսող ամի՝ մեղայ քեզ խորհրդով բանիւ և գործով. ջնջեա զձեռագիր յանցանաց իմոց, և գրեա

զանուն իմ 'ի դպրուե՟ կենաց. և ո:

Քննող գաղտնեաց՝ մեղայ քեզ կամաւ և ակամայ գիտութեամբ և անգիտութ՟ք. թողութ՟ի շնորհեա մեղաւորիս, զի 'ի ծննդենէ սուրբ աւազանին մինչև ցայսօր մեղուցեալ եմ առաջի ա՟ծութեանդ քո զգայարանօք իմովք, և ա՟մ անդամօք մարմնոյս. և ողոր:

Ամենախնամ տէր՝ դիր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ ո՛չ եւս հայիլ յարատ, և ականջաց իմոց՝ ո՛չ ախորժել լսել զբանս չարութեան, և բերանոյ իմոյ՝ ո՛չ խօսիլ զստութիւն, և սրտի իմոյ՝ ո՛չ խորհիլ զչարութիւն, և ձեռաց իմոց՝ ո՛չ գործել զանիրաւութիւն, և ոտից իմոց՝ ո՛չ գնալ 'ի ճանապարհս անօրէնութեան. այլ ուղղեա զշարժումն սոցա լինիլ միշտ ըստ պատուիրանաց քոց յա՟մի. և ողոր:

Հուր կենդանի քրիստոս՝ զհուր սիրոյ քո զոր արկեր յերկիր, բորբոքեա յանձն իմ. զի այրեսցէ զաղտ

հոգւոյ իմոյ, և սրբեսցէ զխիղճ մը-
տաց իմոց, և մաքրեսցէ զմեղս մարմ-
նոյ իմոյ, և վառեսցէ զլոյս գիտու-
թեան քո 'ի սրտի իմում. և ողոր։
Իմաստութի՛ւն Հօր Յիսուս՝ տուր ինձ
իմաստութիւն, զբարիս խորհիլ և
խօսիլ և գործել առաջի քո յամե-
նայն ժամ. 'ի չար խորհրդոյ՝ 'ի բա-
նից և 'ի գործոց փրկեա զիս. և ո։
Կամեցող բարեաց տէր կամարար՝
մի՛ թողուր զիս 'ի կամս անձին իմոյ
գնալ. այլ առաջնորդեա ինձ լինիլ
միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց.
և ողոր։
Արքայ երկնաւոր՝ տուր ինձ զար-
քայութիւն քո զոր խոստացար սի-
րելեաց քոց. և զօրացո զսիրտ իմ
ատել զմեղս, և սիրել զքեզ միայն,
և առնել զկամս քո. և ողոր։
Խնամող արարածոց՝ պահեա նշա-
նաւ խաչի քո զհոգի և զմարմին
իմ 'ի պատրանաց մեղաց, 'ի փոր-
ձութեանց դիւաց, և 'ի մարդոց
անիրաւաց, և յամենայն վտանգից

հոգւոյ և մարմնոյ. և ողոր:

Պահապան ամենայնի քրիստոս՝ աջ քո հովանի լիցի 'ի վերայ իմ 'ի տը-ւէ և 'ի գիշերի. 'ի նստիլ 'ի տան, 'ի գնալ 'ի ճանապարհ, 'ի ննջել և 'ի յառնել՝ զի մի՛ երբէք սասանե-ցայց. և ողոր:

Աստուած իմ՝ որ բանաս զձեռն քո, և լնուս զամենայն արարածս ողոր-մութեամբ քով, քեզ յանձն առ-նեմ զանձն իմ. դու հոգա և պատ-րաստեա զպէտս հոգւոյ և մարմ-նոյ իմոյ յայսմհետէ մինչև յա-ւիտեան. և ողոր:

Դարձուցիչ մոլորելոց՝ դարձո զիս 'ի չար սովորութեանց իմոց 'ի բա-րի սովորութիւն. և բևեռեա 'ի հոգի իմ զսոսկալի օր մահուն, և զերկիւղ գեհենոյն, և զսէր արքա-յութեանն, զի զղջացայց 'ի մեղաց, և գործեցից զարդարութիւն. և ո:

Աղբիւր անմահութեան՝ աղբերացո 'ի սրտէ իմմէ զարտասուս ապաշ-խարութեան որպէս պոռնկին. զի

լուացից զմեղս անձին իմոյ յառաջ
քան զելանելն իմ յաշխարհէս. և։
Պարգևիչ ողորմութե՛ պարգևեա
ինձ ուղղափառ հաւատով, և բարի
գործով, և սուրբ մարմնոյ և ար-
եան քո հաղորդութեամբ գալ առ
քեզ. և ողոր։

Բարերար տէր՝ հրեշտակի բարւոյ
յանձն արասցես զիս քաղցրութե՟
աւանդել զհոգի իմ, և անխռով
անցուցանել ընդ չարութիւն այ-
սոցն՝ որ են 'ի ներքոյ երկնից. և ո։
Լոյս ճշմարիտ քրիստոս՝ արժանա-
ւորեա զհոգի իմ ուրախութեամբ
տեսանել զլոյս փառաց քոց 'ի կոչ-
ման աւուրն, և հանգչել յուսով
բարեաց յօթևանս արդարոց մին-
չև յօր մեծի գալստեան քո. և։
Դատաւոր արդար՝ յորժամ գաս
փառօք հօր դատել զկենդանիս և
զմեռեալս, մի մտաներ 'ի դատաս-
տան ընդ ծառայի քում. այլ փր-
կեա զիս 'ի յաւիտենական հրոյն,
և լսելի արա ինձ զերանաւէտ կո-

չումն արդարոց յերկնից արքայու-
թիւնդ. և ողոր:

Ամենողորմ տէր՝ ողորմեա ամենայն հաւատացելոց 'ի քեզ, իմոց և օտարաց, ծանօթից և անծանօթից, կենդանեաց և մեռելոց. շնորհեա և թշնամեաց իմոց և ատելեաց ըզ թողութիւն որ առ իս յանցանաց, և դարձո զնոսա 'ի չարեացն զոր ունին վասն իմ, զի ողորմութեան քում արժանի եղիցին. և ողոր:

Փառաւորեալ տէր՝ ընկալ զաղաչանս ծառայիս քո, և կատարեա 'ի բարի զխնդրուածս իմ՝ բարեխօսութեամբ սրբուհւոյ ա̃ծածնին, և յովհաննու Մկրտչին, և սրբոյն ստեփաննոսի նախավկային, և ս̃բյն գրիգորի մերոյ լուսաւորչին, և սըրբոց առաքելոց՝ մարգարէից՝ վարդապետաց՝ մարտիրոսաց՝ հայրապետաց՝ ճգնաւորաց՝ կուսանաց, և ամենայն սրբոց քոց երկնաւորաց և երկրաւորաց: Եւ քեզ փառք և երկրպագութիւն անբաժանելի ո̃ր

երրորդութեանդ յաւիտեանս յաւ-
ւիտենից, ամէն:

մաղ Վասն սրբուհւոյ ա՟ծածնին բարե-
խօսութեանն՝ տէր ընկալ զաղա-
չանս մեր, և կեցո զմեզ:

քրզ Սուրբ զա՟ծածինն՝ և զա՟մ սուրբս
բարեխօս արասցուք առ հայր 'ի
յերկինս. զի կամեցեալ ողորմեսցի՝
և գթացեալ կեցուսցէ զարարածս
իւր: Ամենակալ տէր ա՟ծ մեր կե:

աղ Ընկալ տէր զաղաչանս մեր՝ բարե-
խօսութեամբ սուրբ աստուածած-
նին՝ անարատ ծնողի միածնի որդւոյ
քոյ, և աղաչանօք ամենայն սրբոց
քոց. և որոց այսօր է յիշատակ:
Տուր մեզ տէր, և ողորմեա. ներ-
եա քաւեա և թող զմեղս մեր:
Արժանաւորեա գոհութեամբ փա-
ռաւորել զքեզ ընդ որդւոյ և ընդ
սրբոյ հոգւոյդ. այժմ և միշտ և:
Օրհնեալ տէր մեր յ՟ս ք՟ս, ամէն:

Հայր մեր որ յերկինս ես:

մաղ Օ հանգստեան զաղօթս և զաղա-
չանս ընկալ մարդասէր ա՟ծ 'ի հա-

ճոյս բարերար կամաց քոց. եւ մեր մեղաց եւ բազում յանցանացն թողութիւն շնորհեա. եւ քեզ փառք յաւիտեանս. ամէն։

Փառք քեզ տէր ա̃ծ մեր, որ պարգեւեցեր զօրս զայս բարեաւ եւ խաղաղութեամբ անցուցանել։

Մարդասէր ա̃ծ՝ զառաջակայ գիշերս որ 'ի վերայ մեր գալոց է, 'ի մեղաց փրկեա, 'ի չարեաց ազատեա, եւ 'ի գործս բարիս առաջնորդեա։

Առաւօտու օրհնութեանցն եւ փառաբանութեանցն արժանի արա զա̃մ հաւատացեալս անուանդ քում սրբոյ, եւ պահեա 'ի խաղաղութեան։

Տէր ա̃ծ մեր՝ տուր զքո խաղաղութիւնդ ա̃մ աշխարհի, բարձ զցասումն եւ զպատուհասն 'ի յարարածոյս։

Ողորմեա հարց եւ եղբարց մերոց՝ կենդանեաց եւ հանգուցելոց։

Ողորմեա զեկեղեցի շինողաց, երախտաւորաց, պտղատուից, սպասա-

ւորաց, և այնոցիկ՝ որք ընդ հովանեաւ սրբոյ եկեղեցւոյ են հանգուցեալ:

Տէր ած՝ օգնեա թագաւորացն քրիստոնէից, և իշխանացն բարեպաշտից, զօրաց և զաւակաց նոցին՝ պահելով 'ի խաղաղութեան:

Տէր ած մեր՝ պահեա զառաջնորդս և զեղբայրութիւնս մեր ամբողջ և անխռով 'ի կամս ողորմութե քո: Նշանաւ սուրբ և պատուական խաչիւ քո՝ հալածեա զերեւելի և զաներեւոյթ թշնամին 'ի սահմանաց մերոց և 'ի բնակութենէս մերմէ: Փրկեա զմեզ 'ի հրոյն յաւիտենից, և քեզ փառք յաւիտեանս, ամէն:

Օրհնեալք եղերուք 'ի շնորհաց սուրբ հոգւոյն. հանգերուք խաղաղութեամբ. և տէր եղիցի ընդ ամենեսեանդ, ամէն:

Խրատք սարկաւագութեան և դպրութեան՝ զարարողութէ պատարագին ։

Ասնու ժամանայն զէրկու սարկաւագունս՝ և մտանէ ՚ի սրբարանն, և ասէն սաղմոս ։

Քահանայք քո զգեցցին զարդա-րութիւն. և սուրբք քո ցնծալով ցնծասցեն ։

Յիշեա տէր զդաւիթ, և զամենայն հեզութիւն նորա ։

Խնդրեսցուք հաւատով միաբա-նութեամբ ՚ի տեառնէ՝ զի զողո-մութեան զշնորհսն իւր արասցէ ՚ի վերայ մեր. տէրն ամենակալ կե-ցուսցէ և ողորմեսցի ։

Ողորմեաց մեզ տէր ա͞ծ մեր՝ ըստ ։

Եւ ասէ ժամանայն երկրպագեալ տէր ողորմեա. և ապա զաղօթսն ։ Եւ սարկաւագն առնու զսա-զատարքն և ասէ ։

Եւ ես խաղաղութեան զտէր աղա ։

Օրհնութի͞ և փառք հօր և ։

Այնպէս և շապկէն ասէ և ուրարարն և գօտայն և բազ-պանէն և շուրջառէն ։

Շարական հանդերձի, յորժամ զգենու.

Խորհուրդ խորին անհաս անսկիզբն. որ զարդարեցեր զվերին պետութիւնդ, ՚ի յառագաստ անմատոյց լուսոյն. գերապանծ փառօք զդասս հրեղինաց։ Անճառահրաշ զօրութեամբ, ստեղծեր զԱդամ պատկեր տիրական, և նազելի փառօք զգեստաւորեցեր, ՚ի դրախտն Եդենի տեղի բերկրանաց։ Չարչարանօք քո սուրբ միածնին, նորոգեցան արարածք ամենայն. և զմարդն անմահացեալ, զարդարեցեր ՚ի զգեստ անկողոպտելի։ Անձրեւածին բաժակ հրահոսան. որ հեղար յառաքեալսն ՚ի սուրբ վերնատանն. հեղ և ՚ի մեզ

հոգւոյդ սբ աստուածոյ, ընդ պատ-
մուճանին զքո զիմաստուին : Տան
քում վայելէ սրբութիւն, որ ըզ-
գեցար զվայելչութիւն . սրբութի
փառաց ընդ մէջ քո ածեալ, պա-
տեաւ ըզմեզս մեր ճշմարտութբ :
Որ զարարչագործ բազուկըս քո
տարածեցեր ընդդէմ ատեղծոց .
հաստատեա զբազուկս մեր կարո-
ղութեամբ, համբարձմամբ ձեռաց
առ քեզ միջնորդիւ : Խուսմամբ թագ
՚ի գլուխ պատեցես ըզմիտս և ըզ-
գայարանս . խաչանիշ ուրարմամբ
ըստ ահարոնին, ծաղկեալ յոսկե-
թել ՚ի զարդ խորանին : Բամից բո-
րից տիրապէս ածպետականն . Նա-
փորտապատ սիրով զմեզ զգեստա-
ւորեցեր, քում սուրբ խորհրդոյդ
լինել սպասաւոր : Թագաւոր երկ-
նաւոր . զեկեղեցի քո անշարժ պա-
հեա . և զերկրպագուս անուանոյդ
քում պահեա ՚ի խաղաղութե :

քհ Լուացից սրբութեամբ զձեռս իմ,
և շուրջ եղէց զսեղանով քով տ̃ր։

սրկ Դատ արա ինձ տէր՝ զի ես յամ-
բծութեան իմում գնացի, ՚ի տ̃ր
յուսացայ՝ զի մի եղէց հիւանդ։
փորձեա զիս տէր և քններ զիս,
փորձեա զերիկամունս իմ և զսիրտ
իմ։

Ողորմութիւն քո տէր առաջի ա-
չաց իմոց, և հաճոյ եղէց ճշմար-
տութեան քում։

Ոչ նստայց ես յաթոռս նանրաց,
և ընդ անօրէնս ես ոչ մտից։
Ատեցի ես զժողովս չարաց, և ընդ
ամբարիշտս ես ոչ նստայց։
Լուացից սրբութ̃բ զձեռս իմ, և
շուրջ եղէց զսեղանով քով տ̃ր։
Լսել ինձ զձայն օրհնութ̃ե քո, և
պատմել զա̃մ սքանչելիս քո։
Տէր սիրեցի զվայելչութ̃ի տան քո,
և զտեղի յարկի փառաց քոց։
Մի կորուսաներ ընդ ամբարիշտս
զանձն իմ, և մի ընդ արս արիւնա-
հեղս զկեանս իմ։

Որոց ձեռք իւրեանց յանօրէնու-
թեան են, և աջ նոցա լի է կաշառօք։
Ես յամբծութեան իմում գնացի,
փրկեա զիս տէր և ողորմեա ինձ։
Ոտն իմ կացցէ յուղղութեան. յե-
կեղեցիս մեծս օրհնեցից զքեզ։
փառք. հօր և որդւոյ և։
Եւ վասն սրբուհւոյ ածածնին։ քհ
Սուրբ զածածինն և զամ սուրբս քրդ
բարեխօս արասցուք առ հայր 'ի
յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի
և գթացեալ կեցուսցէ զարարածս
իւր. ամենակալ։
Ընկալ տէր զաղաչանս մեր բարե։ քհ
Եւ ապա ասէ. Խոստովանիմ առաջի այ։
Եւ մերձակայ քահանայն ասէ. Ողորմեսցի քեզ։
Եւ ընդն ասէ. Ազատեսցէ և զձեզ մար։
Յիշեսջիր և զմեզ առաջի անմահ դպ
գառինն աստուծոյ։
Յիշեալ լիջիք առաջի անմահ գա- քհ
ռինն աստուծոյ։
Աղաղակեցէք առ տէր ամենայն երկ. փխ
Նոյն որպէս 'ի Նէ—ն, 312։
Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք քրդ

զտէր՝ զի սուրբ փրկեսցէ զմեզ 'ի մեղաց. և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ տէր:

քհ Ի մէջ տաճարիս և առաջի ա̃ծընկալ Սուրբ առաջի սեղանոյ աստուծոյ առ աստուած. որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

սրկ Դատ արա ինձ: Եւ այլն որպէս 'ի Բ-ն, 505:

սրկ Օրհնեսցուք զամենակալն աստուած զհայր տեառն մերոյ յիսուսի քրիստոսի. որ արժանի արար ըզմեզ կալ 'ի տեղւոջս փառաբանութեան և երգել զերգս հոգեւորս. ամենակալ տէր:

քհ Ի յարկի սրբուե̃ և 'ի տեղւոջս փա:

Եւ ապա յետն զխորհրդոյն. և դպիրքն եղանակեն Մեղեդի՝ ըստ պատշաճի աւուրն, կամ զայս խորհրդաւոր:

աւե Բարբառ աւետեաց ձայնիւ. կրկնէ.
Գաբրիէլ գոչէր սրբուհւոյն:
Առ քեզ առաքիմ մաքուր. կրկնէ.
պատրաստեալ տեղի տէրունեան:

ծնն Որ ծաղիկ այսօր բղխեր, յար-

մատոյն յեսսեայ։ Սէ որդի դաւ-
թի ծնանի զորդին աստուծոյ։
Քո փառաց թագաւորին, այսօր տն ը
եկեալ յընծայումն։ Կատարելով առք
նա զօրէնս, քառասնօրեայ գա-
լստեամբն։

Սա երբայեցւոց մանկունքն, ծաղ
զերգ ընդ քրովբէիցն առեալ. հե-
թանոսական դասուց, տօնակից
վեհիցն եղեալ։

Սա ձայն զուարթնոցն ասեմ. յար
որ գոչէր 'ի քառաթեւեանն։
Ի քառաթեւեանն գոչէր. ալէլ. ձայն
առնէր 'ի սանդարամետս. ալէլ։

Այսօր նոր արեւ հարեալ 'ի նորա- նոր
հրաշ արեգակնէն. ալէլ. Այսօր կեր
նոր շուշան ծաղկեալ. 'ի նորա-
տունկ բուրաստանէն։

Այսօր անդրանիկ հօր միածին որ- համ
դին, յերկինս սլանայ ադամային
կերպիւ։ Նուագ ներբողից եղա-
նակեն այսօր, հոյլք հոգեղինաց

երկնաւորացն խմբից ։

հգւ Նուագեմք հոգւոյն, նուագս վա-
յելուչս ։ Վայելուչս բանիւ , զա-
րարչութիւնն նախ ասեմք ։

վար Գոհար վարդըն վառ առեալ ․ կրկնէ ․
'ի վեհից վարսիցն արփենից ․ կրկնէ ․
Ի վեր 'ի վերայ վարսիցն , պըղպը-
ածա ջեր ծաղիկ ծովային ․ պըղպըջեր ։

ծնի Այսօր գաբրիէլ հրեշտակապետն
եկեալ, բերեալ զբարբառն պըսակ
յաղթող կուսին ։ Այսօր կոչելով
առ բոլորիցըն տէրն , զտաճար բարձ-
րելոյն և զընակարանն հոգւոյն ։

խաչ Խաչն 'ի նախնումն երեւեցաւ ․
ծաղկեալ 'ի դրախտն ածատունկ ․
մխիթարիչ եղեւ սէթայ նա-
խագուշակ հօրն ադամայ ․ մեք 'ի
յայն փայտն եմք յուսացեալ ,
յոր տէր յս բեւեռեցաւ ․ և խո-
նարհեալ երկրպագեմք ածընկալ
սուրբ նշանիս ։

հրշ Գովեստ բերկրանաց ; քաղց-

ռանձնեալ երգեմք. Ձեզ
հրեշտակապետք, և հրեշտակաց
գումարք:

Արեգակն արդար որ 'ի հօրէ ծա- առք
գեալ, զառաքեալսն քո անձառ
շնորհօք լցեալ: Սահ լուսոյ ցու-
ցեալ հայաստանեայց ազգաց, մե-
ծըն Թադէոս բարդուղիմեաւ փա-
ռեալ:

Ածային խորոցն անձառ, խորհըր- մրգ
դածուք սուրբ մարգարէք. բա-
նիւ պատմողք զապագայիցն, յա-
ռաջագոյն զեղելութիւն:

Ի հանդէս տօնի քո բախացեալ հայր
ցընծամք, հայր Մվարդապետ, մեք
հայրապետդ (այս անուն):

Եկեղեցի կաթուղիկէ 'ի հայաս- եկղ
տան, այսօր զմանկունս ժողո-
վեալ իւր համաձայն:

Զընտրեալն որ ասէ՝ Մեծացի մ' ասէր.

Ընտրեալըդ յաստուծոյ, ով երջա-
նիկ սուրբ քահանայ:

՚Նըմանեալ ահարօնի, և մովսէսի
մարգարէին։

Այնմ որ զգեստուցն էր յօրինող,
զոր ահարօն միշտ զգենոյր։

Յօրինէր զպատմուճանն, զոր ՚ի չո-
րից կազմեալ նիւթոց։

Ի կարմրոյ ՚ի կապուտոյ ՚ի բեհեզոյ
՚ի ծիրանւոյ։

Թել զթելըն յօրինէր. կարգն առա-
ջին էր կարկեհան։

Եւ օծումըն գրապանին, շուրջա-
նակի բոլորաչէն։

Եւ յընթացս գարշապարին, հըն-
չէր երկիր ցընծայր խորանն։

Արդ ՚ի նոյն նըմանութեան, քրիս-
տոս ընդ մեր սէրս յօրինէ։

Յորժամ մըտցես ՚ի սուրբ խորանն,
անդ յիշեսցես զմեր ննջեցեալսն։

Յորժամ առնես ըզպատարագս, յի-
շեա և զիս ընդ բազմամեղս։

Զի և մեզ ողորմեսցի, ՚ի միւսան-
գամ իւր գալըստեանն։

Հօրն փառք, որդւոյն պատիւ, և
Սբ հոգւոյն այժմ յաւիտեանն ։
Յաւիտեանս յաւիտենից․ քրիստոս
օրհնեալ 'ի համայնից ։

Շարական խնկարկութեան սրբոյ պատարագին ։

Յայս յարկ նուիրանաց ուխտի տեառն տաճարիս․ ժողովեալքս աստանօր 'ի խորհուրդ պաշտման պաղատանաց առաջիկայ սուրբ պատարագիս․ խնկօք անուշիւք խունկ առեալ պարեմք 'ի վերնայարկ սրահիս խորանիս․ ուղղութեամբ ընկալ զաղօթս մեր որպէս բուրումն անուշահոտ խնկոց տաշխից և կինամոնից․ և ըզմատուցողս պահեա սրբութեամբ միշտ և հանապազ քեզ սպասաւորել ։ Բարեխօսութեամբ մօր քո և կուսի, ընկալ զաղաչանս քոց պաշտօնէիցս ։ Որ գերագոյն քան զերկինս պայծառացուցեր սուրբ զեկեղեցի արեամբ քո քրիստոս․ և ըստ երկ-

Նոյնոյըն կարգեցեր 'ի սմա զդասս առաքելոց և մարգարէից ոք վարդապետաց. այսօր ժողովեալ դասք քահանայից սարկաւագաց դպրաց և գլերիկոսաց. խունկ մատուցանեմք առաջի քո տէր յօրինակ ըստ հնումըն զաքարիայ. ընկալ առ 'ի մէնջ ըզ խընկանուէր մաղթանս, որպէս զպատարագն աբելի զնոյի և զաբրահամու. բարեխօսութբ վերին քո զօրացդ, միշտ անշարժ պահեա զաթոռ հայկազնեայս:

Խնդա յոյժ դուստր լուսոյ մայր սուրբ կաթուղիկէ մանկամբք քո սիոն. զարդարեալ պըճնեա հարսըն պանծալի երկնանըման լուսաձեւ խորան. զի օծեալըն աձ էնն 'ի յէէն անծախապէս 'ի քեզ միշտ պատարագի. հօր 'ի հաշտութիւն մեզ 'ի քաւութիւն բաշխէ զմարմին և զարիւն իւր սուրբ. վասն իւր կատարման սուրբ տնօրէնու-

թեան, շնորհէ զթողութի՛ կանգ-
նողի տաճարիս:

Զանմապականն կոյսըն մարիամ աստ-
ուածածին խոստովանի՛ սուրբ ե-
կեղեցի. ուստի տուաւ հացն ան-
մահութեան և բաժա՛կ մեզ ու-
րախարար. տո՛ւք օրհնութիւնք
նըմա՛ հոգեւո՛ր երգո՛վ:

Օրհնեա՛ տէ՛ր: սրկ

Օրհնեալ թագաւորութիւն հօր և: քհ

Եւ ասէ ժամամուտն՝ ընդ պատշաճի աւուրն:

Եւ ես խաղաղու: Օրհնեա՛ տէ՛ր: սրկ

Օրհնութիւն և: Խաղաղութիւն: քհ

Եւ ընդ հոգւո՛յդ քու՛մ: դպ

Աստուծո՛յ երկրպագեսցու՛ք: սրկ

Առաջի՛ քո՛ տէ՛ր: դպ

Տէր ա՛ծ մեր. որոյ կարողութի: քհ

Եւ ասէ փոխն և շարականն ընդ պատշաճի:

Օրհնեա՛ տէ՛ր: սրկ

Զի քո է կարողութիւն և զօ: քհ

Պռօսխո՛ւմէ՛: սրկ

Նոյնպէս և զսուրբ աստուածն՝ ըստ պատշաճի
աւուրն՝ գիտ և ասա։

սրկ Եւ ևս խաղաղութեան զտէ՛ր ա։

դպ Տէ՛ր ողորմեա՛։

սրկ Վ՟ս խաղաղութե՟ ա՟մ աշխարհի․ և
հաստատութե՟ ս՟բյ եկեղեցւոյ․ զտ՟ր։

դպ Տէ՛ր ողորմեա՛։

Վ՟ս ա՟մ սուրբ և ուղղափառ եպիս-
կոպոսաց․ զտէ՛ր ա։ Տէ՛ր ողորմեա՛։
Վ՟ս հայրապետի՛ն մերոյ տ՟ըն (այս-
մանուն) կենաց, և փրկութե՟ հոգւոյ
նորին․ զտէ՛ր աղա։ Տէ՛ր ողորմեա՛։
Վ՟ս վարդապետա՟ց քահանայի՟ց սար-
կաւագաց դպրա՛ց և ա՟մ ուխտի
մանկանց եկեղեցւոյ․ ըղ։ Տէ՛ր ո։
Վ՟ս բարեպաշտ թագաւորա՟ց և ա՟ծ-
սէր իշխանաց․ զօրավարաց, և զօ-
րաց նոցին․ զտէ՛ր։ Տէ՛ր ողորմեա՛։
Վ՟ս հոգւո՟ցն հանգուցելոց ո՛րք։
Յիշեա՛ տէր և ողորմեա՛։
Եւ ևս միաբա՛ն վասն Ճշմարիտ։
Տէ՛ր ողորմեա՛։

Զանձինս մեր և զմիմեանս ։
Քե՛զ տեա՛ռնդ յանձն եղիցո՛ւք ։
Ողորմեաց մեզ տէր ա̃ծ մեր ըստ ։
Տէր ողորմեա՛ . տէր ողոր . տէ՛ր ո ։
Օրհնեա՛ տէ՛ր ։ սրկ
Զի ողորմած և մարդասէր ես ։ քհ

Պնէրճն աչէրուն առէպաքրաննն և հաւատպամճն՝
'ի ճաշուն գէփ և չարէտա ։

Օրհնեա՛ տէ՛ր ։ սրկ
Իսկ մեք փառաւորեսցուք որ յա ։ քհ
Եւ եւս խաղաղութեան զտէ՛ր ա ։ սրկ
Տէր ողորմեա՛ ։ դպ
Եւ և՛ս հաւատո՛վ աղաչեսցուք և սրկ
խնդրեսցուք 'ի տեառնէ աստուծոյ
և 'ի փրկչէ՛ն մերմէ յիսուսէ քրիս-
տոսէ 'ի ժամուս պաշտաման և ա-
ղօթից ։ Զի արժանի ընդունելու-
թեան արասցէ՛ լուիցէ տէր ձայնի
աղաչանաց մերո՛ց ։ Ընկալցի զխն-
դրուածս սրտից մերո՛ց . Թողցէ
զյանցանս մեր ողորմեսցի 'ի վե-
րայ մեր ։ Աղօ՛թք մեր և խնդրու-

ուածք յամենայն ժամ մրտցեն առաջի մեծի տէրութեան նորա։ Եւ նա տացէ մեզ միաբան միով հաւատով արդարութեան վաստակիլ ՚ի գործս բարիս։ Զի ողորմութեան զշնորհսն իւր արասցէ ՚ի վերայ մեր. տէրն ամենակալ։

դպ Կեցո տէր։

սրկ Զժամս որ պատարագիս և զառաջակայ օրս խաղաղութեամբ ան։

դպ Շնորհեա տէր։

սրկ Զհրեշտակ խաղաղութեան պա։

Շնորհեա տէր։

Զքաւութիւն և զթողութիւն։

Շնորհեա տէր։

Զսուրբ խաչին մեծ և կարող զօ։

Շնորհեա տէր։

Եւ եւս միաբան վասն ճշմա։

Տէր ողորմեա։

Զանձինս մեր և զմիմեանս։

Քեզ տեառնդ յանձն եղիցուք։

Ողորմեաց մեզ տէր աստուած։

Տէր ողորմեա՛. տէր ո՛ղոր. տէ՛ր ո։

Օրհնեա՜ տէ՛ր։ սրկ

Ո̃պ զի արժանա։ Խաղաղութիւն։ քհ

Եւ ընդ հոգւոյդ քո՛ւմ։ դպ

Աստուծոյ երկրպագեսցո՛ւք։ սրկ

Առաջի քո տէ՛ր։ դպ

Խաղաղութեամբ քով ք̃ս փրր։ քհ

Օրհնեա՜ տէ՛ր։ սրկ

Տէր ա̃ծ օրհնեսցէ զամենեսեանդ։ քհ

Մի՛ ոք յերախայից, մի՛ ոք ՚ի թե֊ սրկ
րահաւատից. և մի՛ ոք յապաշխա֊
րողաց, և յանմաքրից մերձեսցի
յաստուածային խորհո՛ւրդս։

Մարմի՛ն տէրունակա՛ն, և արի՛ւն դպ
փրկչական, կա՛յ առաջիս. երկնա֊
յի՛ն զօրութիւնք աներեւո՛յթս, եր֊
գեն և ասեն անհանգիստ բարբա֊
ռով. ս̃բ. ս̃բ. ս̃բ. տ̃ր զօրութե՛ց։

Սաղմո՛ս ասացէք տեառն մե֊ սրկ
րո՛յ, դպիրք ձայնիւ քաղցրութբ̃՛
զերգըս հոգեւո՛րս։

## Ա․ Տաղք եղանակին [illegible] ըստ խորհրդոյ աւուրն:

Ծննդեան, Աւետեաց, Վարդավառի, և Աստուածածնի.

Բազմութիւնք հրեշտակաց. և զօրաց երկնաւորաց, իջեալ 'ի յերկնից ընդ միածին Թագաւորին: Որք երգէին և ասէին. սա է որդին աստուծոյ. ամենեքեան ասացուք, ուրախ լերուք երկինք և ցնծասցեն հիմունք աշխարհի: Զի աստուած յաւիտենականն 'ի յերկրի երեւեցաւ, և ընդ մարդկան շրջեցաւ. զի կեցուսցէ զանձինս մեր:

Մեծի հինգշաբաթի.

Որ վերայ նստիս 'ի կառս հրանիւթս քառակերպեանս, անճառելի բանդ աստուած: Այսօր իջեալ 'ի յերկնայնոցըն վասըն քոյ արարածոցս. յանձն առեր բազմիլ ընդ աշակերտսն: Դու սե-

րովբէքն և քերովբէքն հիացեալ զարմանային․ և պետութիւնք վերին զօրացն ըսքանչացեալ աղաղակէին ասելով․ սուրբ․ սուրբ․ սուրբ․ տէր զօրութեանց։

Յինանց և խաչի։

Ով է որպէս տէր աստուած մեր, խաչեցաւ վասն մեր․ թաղեցաւ, և յարեաւ հաւատարիմ եղեւ յաշխարհի և համբարձաւ փառօք։ Եկայք ժողովուրդք, զօրհնութիւն ընդ հրեշտակս երգեսցուք նմա ասելով․ սուրբ․ սուրբ․ սուրբ ես տէր աստուած մեր։

Կիւրակէի․ Եկեղեցւոյ․ Ծաղկազարդի․ և Հրեշտակաց։

Հրեշտակային կարգաւորութբ լցեր աստուած, զքո սուրբ զեկեղեցի։ Զագարք հազարաց հրեշտակապետօք կան առաջի քո։ Եւ բիւրք բիւրոց հրեշտակք պաշտեն զքեզ տէր․ և 'ի մարդկանէ հաճեցար ընդունիլ զօրհնութիւն։

Զայնիւ խորհրդականաւ, սուրբ·
սուրբ· սուրբ· տէր զօրութեանց։

Պահոց· Ննջեցելոց·

Վասն յիշատակի հանգուցելոցն
ընկալ հայր սուրբ մատուցանէր ըզ
պատարագս։ Եւ համարեա՛ զհո-
գիս նոցա, ՚ի թիւս սրբոց քոց յար-
քայութեանդ երկնից։ Մանա-
ւանդ՝ զի հաւատով մատուցաք
զպատարագս, հաշտեցիր աստուա-
ծութիւնդ· և հանգուցանէ զհո-
գիս նոցա։

Մարտիրոսաց·

Սրբութիւն սրբոց մեծ ես և
ահաւոր։ Եւ զինուորութիւնք
հրեշտակաց ծնրհնեն զքեզ և ա-
սեն։ Փառք ՚ի բարձունս աստու-
ծոյ· և յերկիր խաղաղութիւն։

Մարգարէից· Առաքելոց· և Հայրապետաց·

Միանակալ ես տէր զօրութեանց·
որ թագաւորդ ես յաւիտենից։ Որ
նստիս յերկնից ՚ի յերկիրս և լոյս

ծագե՛ս յարմարածո՛ս քո ։ Որ խոնար-հութեամբ իջեր ՚ի յե՛րկիր, քեզ պատարագըս մատուցանե՛մք ։ Եւ սուրբ զանուանդ քո փառաւո՛րեմք. Տէր որ պահիչդ ես քոց սրբոց՝ (այս անուն) ։ Վասն զի սոքա են մեզ բարե՛խօս. որ ամենակալ ՚ի քում յարքայութեա՛ն ։

Եւ թէ հանդիսաւոր օր լինի, և զուարթ խորհրդոյն վերաբերել կամիցի, այս է արարողութիւնն.
Յորժամ քահանայն ասէ.

Տէր աստուած օրհնեսցէ զամէն.

Եւ սարկաւագն ասէ.

Ամէնս ասացէք տեա՛ռն աստու ։

Եւ դպիրքն երգեն զօրհնաբանութիւնն ըստ խորհրդոյ ա-ւուրն, կանգնեալ.

Մի՛ ոք յերախայի՛ց. մի՛ ոք ՚ի Թե ։ որկ
Մարմին տէրունակա՛ն. և արի՛ւն ։ դպ
Եւ գան խնկարկելով՝ սուրբ խորհրդոյն ։

Յարեւու էհար ըզ խորան իւր. և որկ
ինքն որպէ՛ս փեսայ, զի ելանէ յա-ռագաստէ՛ իւրմէ՛ ։

դպ Ա՛ւ ցընծայն նա որպէս հսկայ, յըն-
թանալ ընճանապարհս իւր:

որկ Ամէք էղ քրով վեհ ից ցն
դպ խորհրդաբանձի կենդանութեանմբ:

Ա— գան յարէւելից կողմն:

որկ Ճանապարհ արարէք այնմիկ՝ որ
նստի յերկնից երկինս ընդ արեւելս:
դպ Ան կենդանարարի երրորդութեան,
զերկրպագութեան օրհնութիւնս
մատուցանեմք:

Ա— գան ՚ի հարաւակողմն:

որկ Աստուած ՚ի հարաւոյ եկեսցէ. եւ
սուրբն ՚ի փառանն լեռնէ:
դպ Զամենայն ընկենցաղականս ՚ի բաց
դընելով ընդ որձս:

Ա— գան յարեւմտեան կողմն. եւ բարձող ահաւոր խոր-
հըրդոյն ասասցէ հանդարտութեամբ:

որկ Համբարձէք իշխանք դրունս ձեր
՚ի վեր. համբարձցին դրունք յաւի-
տենից. եւ մտցէ թագաւոր փառաց:

Ա— պատարագողն խնկարկէ եւ հարցանէ.

բհ Ո՛վ է սա թագաւոր փառաց. տէր

հզօր զօրութ՟բ իւրով. տէր կարող
՚ի պատերազմի ։

Որպէ՞ս զի զԹագաւորն ամենե֊ դպ
ցուն ընդու՟նիցիմք ։

Համբարձէք իշխանք զդրունս ձեր սրկ
՚ի վեր. համբարձցին դրունք յաւի֊
տենից. և մտցէ Թագաւոր փ՟ց ։

Ո՞վ է սա Թագաւոր փառաց և տ՟ր քհ
զօրութեանց ։

Եւ ըզ հրեշտակացն հանդիսապէս դպ
ընծայեալ բերեմք ըզ կարգ ։

Սա ինքն է Թագաւոր փառաց ։ սրկ

Եւ պատարագողն երկրպագէ ահիւ և դողութեամբ՝ և
առնու ՚ի ձեռաց սարկաւագին. և խաչակնքէ ՚ի վերայ
ժողովրդեանն ասելով ։

Օրհնեալ եկեալ անուամբ տն ։

Ալէլուիա ։ դպ

Եւ եւս խաղաղութ՟ե զտէր աղա ։ սրկ

Տէր ողորմեա ։ դպ

Եւ եւս հաւատով և սրբութ՟բ սրկ
կացցուք յաղօթս առաջի սրբոյ սե֊
ղանոյս աստուծոյ ահիւ ։ Ա՛ի խորհ֊

ճիւ և գայթակղութե̃. մի՛ նենգութեամբ խորամանկութեամբ. մի՛ պատրանօք և խաբէութեամբ։ Մի՛ երկմտութեամբ և մի՛ թերահաւատութեամբ. այլ ուղիղ մարուք, պարզ մտօք, միամիտ սըրտիւ, կատարեալ հաւատով։ Լըցեալ սիրով լի և առաւելեալ ամենայն գործովք բարութե̃ կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս աստուծոյ. և գտցուք զողորմութեան զշնորհս։ Յաւուր յայտնութեան և 'ի միւսանգամ գալըստեան՝ տեառն մերոյ և փրկչին յիսուսի քրիստոսի կեցուսցէ և ողորմեսցի։

դպ Կեցո տէ՛ր և ողորմեա՛։

սրկ Օրհնեա տէ՛ր։

քհ Շնորհօք և մար։ Խաղաղութիւն։

դպ Եւ ընդ հոգւոյդ քում։

սրկ Աստուծոյ երկիրպագեսցուք։

դպ Առաջի քո տէ՛ր։

Ողջոյն տուք միմեանց 'ի համբոյր որկ
սրբութե. և որք ոչ էք կարօղք հա-
ղորդիլ ա̃ծային խորհրդ̃ոյս՝ առ-
դրունս ելէ՛ք և աղօթեցէ՛ք:

Քրիստոս 'ի մէջ մեր յայտնեցաւ. գպ
որ Էնն աստուած աստ բազմեցաւ:
Խաղաղութեան ձայն հնչեցաւ. սբ
ողջունի հրաման տուաւ: Եկեղե-
ցիս մի անձն եղեւ. համբոյրս յօդ-
լըման տուաւ: Թշնամութիւնըն
հեռացաւ. սէրն յընդհանուրըս
սփռեցաւ: Արդ պաշտօնեայք բար-
ձեալ զձայն. տուք զօրհնութիւն
'ի մի բերան. միաբանական ա̃ծութե̃ն.
որում սրովբէքն են սրբաբանեն:

Սմանէ և ղպայս առէն 'ի հանդիսի փոխն:

Որք հաւատով կայք յանդիման որկ
սուրբ սեղանոյս արքայական, տե-
սէք բազմեալ զք̃ս արքայն, և շուրջ
պատեալ զօրք վերնական:

Վեր համբառնամք զաչս ունելով, գպ
և պաղատիմք զայս ասելով: Դգ

մեղըս մեր մի՛ յիշեսցես, այլ գը-
թութեամբ քո քաւեսցես ։ Ընդ
հրեշտակացն օրհնեմք ըզքեզ, և
ընդ սրբոց քոց, տէր փառք քեզ.

սրկ Ահիւ կացցուք. երկիւղիւ կաց-
ցուք. բարւոք կացցուք. և նայե-
ցարուք ըզգուշութեամբ.

դպ Առ քեզ աստուած ։

սրկ Պատարագ քս մատչի գառն ածյ.

դպ Ողորմութիւն և խաղաղութիւն և
պատարագ օրհնութեան.

սրկ Օրհնեա տէր ։

քհ Շնորհք՝ սէր՝ և ածային սրբա.

դպ Ամէն. և ընդ հոգւոյդ քում ։

սրկ Ըզ դրունս, ըզ դրունս, ամենայն
իմաստութեամբ և ըզգուշութեամբ ։
Ի վեր ընծայեցուցէք ըզմիտըս ձեր
աստուածային երկիւղիւ ։

դպ Ունիմք առ քեզ տէր ամենակալ ։

սրկ Եւ գոհացարուք զտեառնէ բոլո-
րով սրտիւ ։

դպ Արժան և իրաւ.

Օրհնեա տէր ։ սրկ

Եւ ընդ սերովբէսն և ընդ քերովբ ։ քհ

Իսկ 'ի հանդիսի աւուրս՝ ոմանք ջնջեն Արժան և իրաւին ասեն զայս ։

Եւ զըստոյգ փրկութեան որ միշտ ընդ ամենայն տեղիս գոհութիւն մատուցանեմք քեզ Քրիստոս ։ Որով և ըզհրաշալի զյարութիւնըդ քո գովեն զօրութիւնք ։ սրկ

Սարսափին սերովբէքն . դողան քերովբէքն . և իշխանութիւնք վերին պետութեանցըն պարառեալ քաղցըր ձայնիւ եղանակեն և ասեն ։

Սուրբ . սուրբ . սուրբ . տէր զօրութեանց ։ Լի են երկինք և երկիր փառօք քո . օրհնութիւն 'ի բարձունս . օրհնեալ որ եկիր և գալոց ես անուամբ տեառն . ովսաննա 'ի բարձունս ։ դպ

Օրհնեա տէր ։ սրկ

Առէք կերէք այս է մարմին իմ որ ։ քհ

Ամէն ։ դպ

սրկ Օրհնեա՛ տէ՛ր։

քհ Արբէք ՚ի սմանէ ամենեքեան այս։

դպ Ամէ՛ն։ Հա՛յր երկնաւո՛ր. որ զոր-
դիդ քո ետո՛ւր ՚ի մահ վասն մե՛ր
պա՛րտապան պարտեաց մերոց. հեղ-
մամբ արեան նորա՛ աղաչեմք զքեզ
ողորմեա քո բանաւոր հօտի՛։

սրկ Օրհնեա՛ տէ՛ր։

քհ Եւ զքոյս ՚ի քոյոց՝ քեզ մատու։

դպ Յամենայնի օրհնեալ ես տէր. օրհ-
նե՛մք զքեզ. գովեմք զքեզ. գո-
հանա՛մք զքէ՛ն. աղաչե՛մք զքեզ
տէր աստուա՛ծ մե՛ր։

սրկ Օրհնեա՛ տէ՛ր։

քհ Խաղաղութիւն ամենեցուն։

դպ Եւ ընդ հոգւոյդ քում։

սրկ Աստուծոյ երկրպագեսցո՛ւք։

դպ Առաջի քո տէ՛ր։ Որդի աստուծոյ.
որ պատարագեա՛լ հօր ՚ի հաշտու-
թիւն հա՛ց կենա՛ց բաշխես ՚ի մեզ.
հեղմամբ արեան քո սրբոյ, աղա-
չե՛մք զքեզ ողորմեա արեամբ

քով փրկեալ հօտի՛:

Օրհնեա տէ՛ր: սրկ

Որպէս զի եղիցի սա ամենեցուն: քհ

Հոգի՛ աստուածոյ. որ զփառաւկցի դպ
քո զխորհուրդ, իջեալ ՚ի յերկնից
կատարես ՚ի ձեռս մեր. հեղմամբ
արեան սորա՛ աղաչեմք ըղքեզ հան–
գո զհոգիս մեր ննջեցելոցն:

Օրհնեա տէ՛ր: սրկ

Ընդ որս և մեզ այց արասցես բա: քհ

Յիշեա տէր և ողորմեա՛: դպ

Ըստուածածնին սրբոյ կուսին մա: քհ

Յիշեա տէր և ողորմեա՛: դպ

Սարկաւագն յաջակողմն սեղանոյն ձեռնամած ասասցէ:

Առաքելոց սբց. մարգարէից. վար– սրկ
դապետաց. մարտիրոսաց. և ամե–
նայն հայրապետաց սբց: Առաքե–
լադործ եպիսկոպոսաց. երիցանց.
ուղղափառ սարկաւագաց. և ամե–
նայն սրբոց: Եղիցի յիշատակ ՚ի սբ
պատարագս՝ աղաչեմք:

Յիշեա տէր և ողորմեա՛: դպ

Յարութեան կիւրակէից շարս ասա:

օրհ Օրհնեալ գովեալ և փառաւորեալ, հրաշալի և ա͠ծազարդ յարութե͠բն քրիստոսի երկրպագանեմք:

դպ Փառք յարութեան քո տէր:

Ի տօնի սրբոյն շարս ասա:

օրհ Սուրբ և աստուածահաճոյ մարգարէին. հայրապետին. առաքելոյն. մարտիրոսին. (այս անուն). որոյ այսօր զյիշատակն կատարեցաք, եղիցի յիշատակ 'ի սուրբ պա:

դպ Յիշեա տէր և ողորմեա:

օրհ Առաջնորդացն մերոց և առաջին լուսաւորչացն՝ սրբոց Թադէոսի և բարդուղիմէոսի առաքելոցն, և գրիգորի լուսաւորչին: Արիստակիսի. վրթանիսի. յուսկանըն. գրիգորիսի. Ներսէսի. սահակայ. դանիէլի. և խադայ. մեսրոպայ վարդապետին. և գրիգորի Նարեկացւոյն. և Ներսէսի կլայեցւոյն. յօհաննու որոտնեցւոյն. և գրիգորի և մով-

սէսի տաթևացեացն. և սրբոց գը-
րիգորիսեանց և ներսիսեանց. հով-
ուաց և հովուապետացն հայաս-
տանեայց. եղիցի յիշատակ 'ի։

Յիշեա տէր և ողորմեա։ դպ

Միանձնացելոց սրբոց, առաքինա- որկ
սէր և ա̃ծուսոյց կրօնաւորացն,
պօղոսի. անտօնի. պօղայ. մակարայ.
օնոփրիոսի. աբբայ մարկոսի. սրա-
պիօնի. նեղոսի. արսէնի. եւագրի.
պարսամայ։ Յօհաննիսեանց և սի-
մէօնեանց. սրբոց ոսկեանց և սու-
քիասանց. և ամենայն ս̃բց, հարց
և աշակերտելոց նոցին ընդ տիե-
զերս. եղիցի յիշատակ 'ի։

Յիշեա տէր և ողորմեա։ դպ

Թագաւորաց հաւատացելոց սըր- որկ
բոց, աբգարու. կոստանդիանոսի.
տրդատայ. և Թէոդոսից. և ամե-
նայն սուրբ և բարեպաշտ Թագա-
ւորաց և աստուածասէր իշխանաց.
եղիցի յիշատակ 'ի։

դպ Յիշեա տէր և ողորմեա։

սրկ Ընդհանուր ամենայն հաւատացե-լոց. արանց և կանանց. ծերոց և տղայոց. և ամ՛ չափու հասակի հա-ւատով և սրբութեամբ ՚ի քս՛ ննջե-ցելոցն. եղիցի յիշատակ ՚ի։

դպ Յիշեա տէր և ողորմեա։

սրկ Օրհնեա տէր։

քհ Նաև առաւել զեպիսկոպոսապե.

սրկ Գոհութիւն և փառաբանութի մատուցանեմք քեզ տէր աստուած մեր, վասն սուրբ և անմահ պա-տարագիս որ ՚ի վերայ սրբոյ սեղա-նոյս. զի սա մեզ ՚ի սրբութի կե-նդանութեան պարգևեսցէ։ Սովաւ շնորհեա զսէր զհաստատութիւն. և զղձալի զխաղաղութիւն ամե-նայն աշխարհի. սրբոյ եկեղեցւոյ և ամենայն ուղղափառ եպիսկո-պոսաց. եպիսկոպոսապետին մերոյ և պատուական հայրապետին ամ՛ հայոց տն՛ (այս անուն). և մերոյ արհի

եպիսկոպոսին և երջանիկ րաբունա-
պետին տն (այս անուն). և քահանայից
որ զպատարագս մատուցանեն: Եւ վս
զօրութեց և յաղթութեց թագաւորաց
քրիստոնէից և իշխանացն բարե-
պաշտից: Աղաչեսցուք և խնդրես-
ցուք և վասն հոգւոցն հանգու-
ցելոց: Նաև առաւել վասն հան-
գուցեալ րաբունապետայն մե-
րոց. և շինողաց սուրբ եկեղեց-
ւոյս. և որք ընդ հովանեաւ սորին
են հանգուցեալք: Զմիութիւն եղ-
բարց մերոց գերելոց և շնորհ ա-
ռաջիկայ ժողովրդեանս: Հանգիստ
հաւատով և սրբութեամբ 'ի քը-
րիստոս կատարելոցն. եղիցի յիշա:

Ըստ ամի. և յաղագս ամենեցուն: դպ

Օրհնեա տէր: սրկ

Եւ եղիցի ողորմութիւն մեծին աս: քհ

Ամէն. և ընդ հոգւոյդ քում: դպ

Եւ սարկաւագն ձայնէ 'ի Նէ:

Եւ ևս խաղաղութեան. զտէր ա: սրկ

դպ Տէ՛ր ողորմեա՛։
սրկ Ամենայն սրբովք, զորս յիշատակե-
ցաք. եւ առաւելապէս զտէր ա։
դպ Տէր ողորմեա՛։
սրկ Վասն մատուցեալ սուրբ և աստ-
ուածային պատարագիս որ 'ի վե-
րայ սրբոյ սեղանոյս. զտէր աղա։
Տէր ողորմեա՛։
Որպէս զի տէր աստուած մեր, որ
ընկալաւ զսա 'ի սուրբ երկնային և
յիմանալի իւր մատուցարանն. ըն-
փոխանակն առաքեսցէ առ մեզ ըզ
շնորհս և զպարգևս հոգւոյն սըր-
բոյ. զտէր աղաչես։
Տէր ողորմեա՛։
Ընկալ կեցո և ողորմեա. և պա-
հեա զմեզ տէր քոյին շնորհիւդ։
Կեցո տէր և ողորմեա՛։
Զամենասրբուհի զա՟ծածինն զմիշտ
կոյսն մարիամ, հանդերձ ամենայն
սրբովք յիշելով. զտէր աղա։
Յիշեա տէր և ողորմեա՛։

Եւ եւս միաբան վասն ճշմարիտ և ։ սրկ

Տէ՛ր ողորմեա՛ ։ դպ

Զանձինս մեր և զմիմեանս, ա՛ն ։ սրկ

Քե՛զ տեառնդ յանձն եղիցո՛ւք ։ դպ

Ողորմեայ մեզ տէր ա՛ծ մեր . ըստ ։ սրկ

Տէր ողորմեա՛ . տէր ողոր . տէր ո՛ ։ դպ

Օրհնեա տէ՛ր ։ սրկ

Եւ տուր մեզ համարձակաձայն ։ քհ

Հա՛յր մեր ո՛ր յերկի՛նս ես . սո՛ւրբ դպ
եղիցի անուն քո՛ ։ Եկեսցէ արքա՛
յութիւն քո՛ . եղիցի՛ն կամք քո՛ որ
պէս յերկի՛նս և յերկրի՛ ։ Զհաց մեր
հանապազորդ տո՛ւր մեզ այսօ՛ր ։ Եւ
թող մեզ զպարտիս մեր, որպէս և
մեք թողումք մերո՛ց պարտապա
նա՛ց ։ Եւ մի՛ տանի՛ր զմեզ ՚ի փոր
ձութիւն . այլ փրկեա ՚ի չարէ՛ ։

Օրհնեա տէ՛ր ։ սրկ

Զի քո է արքայու ։ Խաղաղու՛ի ։ քհ

Եւ ընդ հոգւոյդ քո՛ւմ ։ դպ

Աստուծոյ երկիրպագեսցո՛ւք ։ սրկ

Առաջի՛ քո տէ՛ր ։ դպ

Քահանայն խոնարհի. և ամենայն ժողովուրդքն խոնարհին ՚ի վայր։ Եւ առաջնորդն ձայնէ։

սրկ Օրհնեա՛ տէր։

քհ Քրիստոսիւ Յիսուսիւ Տերամբ։

Եւ առաջնորդն ձայնէ բարձր.

սրկ Պռօսխումէն։

քհ Սրբութիւն սրբոց։

դպ Միայն սուրբ. միայն տէր. Յիսուս Քրիստոս ՚ի փառս Աստուծոյ հօր. Ամէն։

սրկ Օրհնեա տէր։

քհ Օրհնեալ Հայր սուրբ Աստուած ճշմարիտ։

դպ Ամէն։

սրկ Օրհնեա տէր։

քհ Օրհնեալ Որդին սուրբ Աստուած ճշմարիտ։

դպ Ամէն։

սրկ Օրհնեա տէր։

քհ Օրհնեալ Հոգին սուրբ Աստուած ճշմարիտ։

դպ Ամէն։

սրկ Օրհնեա տէր։

քհ Օրհնութիւն և փառք Հօր և։

դպ Ամէն։ Հայր սուրբ. Որդին սուրբ. Հոգին սուրբ. Օրհնութիւն Հօր

և որդւոյ և սրբոյ հոգւոյն. այ-
ժմ և միշտ և յաւիտեանս յաւի-
տենից. Ամէն։

Օրհնեա՜ տէր։ սրկ

Ի ս՜բ ՚ի ս՜բ պատուական մարմնոյ։ քհ

Եւ խաչակնքէ քահանայն սկիհովն ՚ի վերայ ժողովրդեանն և դառնայ ՚ի սուրբ սեղանն. և քարոզէն դպրապետքն։

Եւ քարոզէ սարկաւագն։

Սաղմոս ասասցէք տ՜ն ա՜յ մերոյ՝ դ-
պիրք, ձայնիւ քաղցրութեամբ զեր-
գս հոգեւորս։ Զի սմա վայելեն
սաղմոսք և օրհնութիւնք. ալէլուք
և երգք հոգեւորք։ Պաշտօնեայք
հանդերձ երգովք սաղմոս ասասցէք,
և զտէր յերկինս օրհնեցէք։

Եւ դպիրքն եղանակեն։

Որ պատարագեա՜լ բաշխի ՚ի մէջ
մերում. ալէլուիա։

Զմարմին իւր տայ մեզ կերակուր
և զսուրբ զարիւն իւր ցօղէ ՚ի մեզ.
ալէլուիա։

Մատիք առ տէր և առէք ըզլոյս.
ալէլուիա։

Ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է
տէ՛ր. ալէ՛լուիա՛։
Օ՛րհնեցէ՛ք զտէ՛ր յե՛րկինս. ալէ՛։
Օ՛րհնեցէ՛ք զնա ՚ի բա՛րձունս. ա-
լէ՛լուիա՛։
Օ՛րհնեցէ՛ք զնա ամենայն հրեշ-
տա՛կք նորա. ալէ՛լուիա՛։
Օ՛րհնեցէ՛ք զնա ամենայն զօ՛րու-
թիւնք նորա. ալէ՛լուիա՛։

Եւ դպիրքն եղանակեն զսաղս խորհրդատուրս
ընդ պատարագի առաւօտն։

Եւ քարզէն զնշխարագոյն յետս։ Եւ սարկաւագն
քարոզէ բարձր ձայնիւ.

Երկիւղիւ և հաւատով յառաջ մա-
տիք և սրբութ՟ հաղորդեցարուք։

Եւ ժողովուրդքն ասեն ձայնիւ։

դպ Ա՛ծ մեր և տէր մեր երեւեցաւ մեզ.
օրհնեալ եկեալ անուամբ տեառն։
բհ Կեցո տէր զժողովուրդս քո. և։

Դարձեալ քարզէն զնշխարագոյն։

Եւ դպիրքն երգեն։

Լցա՛ք ՚ի բարութեա՛նց քո՛ց տէր.

ճա՛շակելով զմարմի՛ն քո՛ և զա՛րիւն.
փա՛ռք 'ի բարձունըս կերակրողիդ
ըզ մե՛զ։ Որ հանապազ կերակրես
ըզ մե՛զ. առաքեա 'ի մեզ ըզ հոգե-
ւո՛ր քո զօրհնութիւն. փա՛ռք 'ի
բարձունըս կերակրողիդ ըզ մե՛զ։

Եւ սարկաւագն քարոզէ։

Եւ եւս խաղաղութեան զտէր ա։
Եւ ևս հաւատով ընկալեալք յածա-
յին, սուրբ երկնային անմահ ա-
նարատ և անապական խորհրդոյս,
զտեառնէ գոհացարուք։

Գոհա՛նամք ըզքէ՛ն տէ՛ր. որ կե- [դպ]
րակրեցեր ըզ մեզ յանմահական
սեղա՛նոյ քո՛։ Բաշխեա՛լ զմարմինդ
և զարիւնդ 'ի փրկութիւն աշխար-
հի. և կեա՛նք ա՛նձա՛նց մե՛րոց։

Իսկ սպասաւոր դպիրքն եղանակեն զայս խորհրդաւորս,
մինչև ժամանայն կատարեսցէ զնորին աղօթիցն։

Նոյն յորժամ հաղորդին ուխտաւորքն, դարձեալ երգեն շարական զայս ։

Մա՛յր հաւատոյ մ՛ք հարսնարա՛ն.
և առագա՛ստ գերագրակա՛ն.
դու փեսայի՛դ անմահակա՛ն.
որ զարդարեա՛ց զքեզ անլախճա՛ն ։
Երկրորդ երկի՛նք դու հրաշակա՛ն.
փառաց 'ի փա՛ռըս բարձրակա՛ն.
որ զմեզ ծնանի՛ս լուսոյ նըմա՛ն.
աւազանա՛ւն որդիակա՛ն ։
Բաշխես ըզհա՛ցըն մաքրակա՛ն.
զարիւնդ ըմպե՛լ տաս սոսկակա՛ն.
հանես 'ի վե՛ր գերաստիճա՛ն.
յիմանալեա՛ցն անջօլակա՛ն ։
Եկայք որդի՛ք նոր սիոնի՛.
մատի՛ք առ ատե՛ր մեր սրբութե՛.
ճաշակեցէ՛ք և տեսէ՛ք.
զի՛ քաղցր է տէ՛ր մեր զօրութե՛ ։
Նա բաժանեա՛ց ըզ յորդանա՛ն.
դու զծով մեղա՛ց աշխարհակա՛ն.
նըման յեսուա՛յ մեծ զօրակա՛ն.
զքեզ տէ՛ր յիսու՛ս հօր էակա՛ն ։

Հինն օրինակ քեզ և նըման.
դու խորանին գերադրական.
նա խորտակեց զդրունս անդամանդ.
դու դըժոխոց զդրունս ՚ի հիմանց.
Հացս այս մարմին է քրիստոսի.
բաժակս արիւն նորոյ ուխտի.
ծածկել խորհուրդըն մեծ յայտնի.
աստուած ՚ի սմա մեզ տեսանի.
Սա է քո բանն աստըւած.
որ ընդ աջմէ հօրըն բազմի.
և աստ ՚ի մեզ պատարագի.
բառնայ ըզ մեղըս աշխարհի.
Այն որ օրհնեալ է յաւիտեան.
հայր և հոգւովըն միական.
այժմ և յաւէտ և յապագայն.
և անըսպառ միշտ յաւիտեան.

Ապա ՚ի վերջ փաշին՝ ասէ սարկաւագն.

Օրհնեա տէր.

Որ օրհնես զայնոսիկ որք օրհնեն. քհ
Եղիցի անուն տն օրհնեալ յայսմ գզ
հետէ մինչև յաւիտեան. Երիցս կրկնել.
Կատարումն օրինաց և մարգարէ. քհ

սրկ Եւ ասեն՝ Ալէլուիա օրթի:

քհ Յետ յարութե՟ տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի:
Եւ իբրև ճաշեցին. կամ ի սկզբա:

դպ Փառք քեզ տէր աստուած մեր:

սրկ Սուրբ աւետարանաւս աղաչես:

քհ Պահպանեա զծառայս քո ք՟ս ա՟ծ:

դպ Օրհնեցից զտ՟ր յա՟մ ժամ. յա՟մ ժամ
օրհնութի՟ւն նորա ՚ի բերան իմ:

քհ Օրհնեալք եղերուք ՚ի շնորհաց ս՟բ
հոգւոյն. երթայք խաղաղութ՟բ.
և տէր եղիցի ընդ ձեզ և ընդ ա-
մենեսեանց, ամէն:

Եւ ՚ի բաշխելն զնշխարս առ ժողովուրդն՝ դպիրքն
երգեն զսաղմոսս զայս:

Ի տէր պարծեսցի՟ ա՟նձն իմ. լուի-
ցեն հեզք, և ուրախ եղիցի՟ն:
Մե՟ծ արարէք զտ՟ր ինև. և բարձր
արասցո՟ւք զա՟նուն ն՟ր ՚ի միասի՟ն:
Խնդրեցի ՚ի տ՟նէ և լուաւ ինձ. յա-
մենայն նեղութե՟ իմէ փրկեաց զիս:
Մատիք առ տէր և առէք զլոյս. և
երեսք ձեր մի՟ ամաչեսցեն:
Այս աղքատ կարդաց առ տէր, և
տէր լուաւ սմա. յամենայն նեղու-

թենէ սորա փրկեաց զսա։
Բանակք հրեշտակաց տեառն շուրջ են զերկիւղածովք իւրովք, և պահեն զնոսա։
Ճաշակեցէք և տեսէք, զի քաղցր է Տր. երանի է այր որ յուսայ 'ի նա։
Երկերուք 'ի տեառնէ ամենայն սբք նորա, զի ոչինչ է պակասութիւն երկիւղածաց նորա։
Մեծամեծք աղքատացան և քաղցեան. բայց որք խնդրեն զտէր, մի՛ պակասեսցին 'ի նոցանէ ամ բարուի։
Եկայք որդեակք իմ լուարուք ինձ, և զերկիւղ տն ուսուցից ձեզ։
Ով է մարդ՝ որ կամի զկեանս, սիրէ զաւուրս իւր տեսանել 'ի բարուե։
Լռեցո զլեզու քո 'ի չարութէ. և շրթունք քո մի՛ խօսեսցին զնենգուի։
Խոտորեա 'ի չարէ և արա զբարի. խնդրեա զխաղաղութիւն, և երթ զհետ նորա։
Աչք տն 'ի վր արդարոց, և ականջք նորա 'ի վերայ աղօթից նոցա։
Երեսք տն 'ի վր չարագործաց, սա-

տակել յերկրէ զյիշատակս նոցա։
Կարդացին արդարքն առ տէր, և
տէր լուաւ նոցա. յամենայն նե-
ղութենէ նոցա փրկեաց զնոսա։
Մերձ է տէր առ այնոսիկ՝ որք մաշ-
եալ են սրտիւք. և զխոնարհս հոգ-
ւով կեցուցանէ։
Բազում նեղութիւնք են արդարոց.
յամէ փրկէ զնոսա տէր. և պահէ
զամենայն ոսկերս նոցա. և մի 'ի
նոցանէ մի՛ փշրեսցի։
Մահ մեղաւորին չար է. բայց որ
ատէ զարդարն, զղջասցի։
Փրկէ տէր զանձինս ծառայից իւ-
րոց. մի՛ զղջասցին ամենեքեան՝ ոյք
յուսացեալ են 'ի նա։
Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սբյ։
Այժմ և միշտ և յաւիտեանս յա-
ւիտենից, ամէն.

# ՑԱՆԿ ԳՐՈՑՍ


Ալէլուք աւուրց աւագ շաբաթուն 173 .
Ալէլուք եկեղեցւոյ 166 .
Ալէլուք խաչի 162 .
Ալէլուք ծննդեան 144 .
Ալէլուք համբարձման 153 .
Ալէլուք հոգւոյ գալստեան 158 .
Ալէլուք հրեշտակապետաց 171 .
Ալէլուք ծաղկազարդի 173 .
Ալէլուք ղազարու յարութեան 172 .
Ալէլուք յարութեան 149 .
Ալէլուք վարդավառի 177 .
Ալէլուք տեառնընդառաջի 149 .
Աղաչեսցուք զամենա . 477 .
Այնպէս պաշտեմ զհայրե . 406 .
Այսօր անճառ լուսոյն ծա . 53 .
Աշխարհ ամենայն . առխս նայե . 24 .
Առաւօտ լուսոյ . արե . 27 .
Առաւօտու երգք , զկնի փառք 'ի բար-
ձունսին 237 .
Ասասցուք ամենեքեան միաբա . 246 .
Աստուած անեղ անժամանակ 93 .
Աստուած մեծ հզօր և փառա . 249 .

Արարչական բանին հրա . 295 :
Արեւագալի ժամն 309 :
Աւետարանք հանգստեան 85 :
Աւետարանք մարտիրոսաց . Նախ քան զհաւատամքն 440 :
Բժշկութեան աւետարանքն 261 :
Գոհանամք զքէն տէր աստ . 257 :
Գոհացարուք զտեառնէ 510 :
Երգ ննջեցելոց 93 :
Եւ եւս հաւատով աղա . 446 :
Զարթուցեալքս ամենեքեան 21 :
Զուարճացեալքս մեծաւ ու . 217 :
Զսաղմոսերգութիւնս և զաղա . 366 :
Զքէն գոհանամք տէր աստ . 30 :
Թագաւորք աշխարութեան 123 :
Թագաւորք մարտիրոսաց 134 :
Թափօրի երգն 269 :
Ժամամուտքն 367 :
Ի կարդալ իմում լուար ինձ աստ . 499 :
Իսկ այս ով է որ դիմեալ 416 :
Իւղաբերից երգն և աւե . 202 :
Լցաք առաւօտու ողոր . 179 :
Խաչ քո եղիցի մեզ ապա . 307 :
Խնդրեսցուք հաւատով միա . 268 :
Խոնարհեցո տէր զունկն քո 457 :
Խրատք երկրպագութեան տաճա . 493 :

Կանոնագլուխք 32 ։
Համբարձի զաչս իմ 'ի լերինս 480 ։
Հարցի փոխն 180 ։
Հաւատամք 'ի մի աստ . 444 ։
Հրաժարիմք 'ի սատանայէ 1 ։
Ճաշու ալէլուք յետ գրքին 425 ։
Ճաշու շարականք 391 ։
Ճաշու սաղմոսք նախ քան զգիրքն 406 ։
Ճաշու փոխք 389 ։
Մաղթանք տօնից 111 ։
Մայր սուրբ սքանչելի լու . 253 ։
Մեծացուցէ անձն իմ 195 ։
Մեսեդիք աղցից կիւրակէից 421 ։
Մեսեդիք Ճաշու աղցից 418 ։
Մեսեդիք երեկոյից 466 ։
Մեսեդիք Ճաշու յարութեան 419 ։
Մեսեդիք յետ գրքին 415 ։
Յիշեա տէր զպաշտօնեայս 282 ։
Յիշեսցուք 'ի գիշերի 18 ։
Նորաստեղծեալ 266 ։
Նորոգող տիեզերաց 68 ։
Ողորմեա ինձ աստուած ըստ մե . 218 ։
Որ բնակեալն է յօգնու . 486 ։
Պսակիչ սրբոց քրիստոս որ պսա . 283 ։
Պօղոս առաքեալ յիսուսի քրիստո . 423 ։
Սաղմոսք հանգստեան աւետարանի 74 ։

Սեղան օրհնէքն 450 .
Սիրելիք՝ սիրեսցուք զմիմեանս 412 .
Սիրեցի՝ զի լուիցէ տէր 35 .
Սուրբ աստուած, սուրբ և հզօր 258 .
Սուրբ ես տէր աստուած մեր հը. 276 .
Սուրբ խաչիւս աղաչեսցուք 271 .
Տէր ամենակալ աստուած աբրա. 284 .
Տէր բարերար, որ մեծաւ 511 .
Տէր երկնից փոխն 2[illegible]
Տէր եթէ զշրթունս իմ բա. 10 .
Տէրդի բազում եղեն նեղիչք 10 .
Փառաւորեսցուք զամենակա. 255 .
Փառք ՚ի բարձունս աստու. 235 .
Քում ամենազօր և հրաշալի 263 .
Քրիստոս աստուած մեր վասն խա. 280 .
Օրհնեցէք զտէր ամենայն ազինք 391 .
Օրհնեցէք մանկունք զտէր 272 .

# ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԻՒՆՔ
# ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱՑՆ ՀԱՅՈՑ

ՍԿՍԵԱԼ ՅԱՌԱՋԻՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԷՆ ՀԱՅՈՑ Ի ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԷ ԼՈՒՍԱՒՈՐՉԷՆ ՄԻՆՉԵՒ ՅԱՒՈՒՐՍ ՄԵՐ Ի ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՆ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ

---

1 Տէր սուրբ Գրիգոր լուսաւորիչ, Ա։ Աթոռն կաթուղիկոսութեան դնի 'ի վաղարշապատ ուր է Էջմիածին՝ յամի 302։ Յաւուրս սորա, յամի 325 եղեւ սուրբ ժողովն Նիկիոյ, և 'ի հայս ժողովն վաղարշապատու, Ա։ Եւ գիւտ խաչափայտին քրիստոսի 'ի հեղինեայ թագուհւոյ յերուսաղէմ, յամի 327։ Եւ 'ի 24 ամի թագաւորութեանն մեծին կոստանդիանոսի՝ յամի 329 կոստանդնուպօլիս շինի, յորում ժամանակի թագաւորէր 'ի հայս տրդատ։

2 Տէր Արիստակէս, Ա։ Յաւուրս սորա արիոս հերետիկոսապետ սատակի։

3 Տէր Վրթանէս։ Յաւուրս սորա սուրբըն տրդատ վախճանի։ Եւ սուրբըն գրիգորիս աղուանից կաթուղիկոս նահատակի։ Եւ սուրբ խաչն երեւի յերու-

սաղէմ առ կիւրղիւ ։

4 Տէր Յուսիկ ։ Յաւուրս սորա մեծն վրթանէս վախճանի ։

5 Տէր Փառներսէհ յաշտիշատայ՝ ՚ի վանաց գլակայ ։ Յաւուրս սր̃ յուսիկ և դանիէլ. և սարգիս զօրավար նահատակին ։

6 Տէր Ներսէս մեծ, Ա ։ Յաւուրս սորա, յամի 381 եղեւ սուրբ ժողովն կոստանդնուպօլսի ընդդէմ մակեդոնի ։ Եւ ՚ի հայս ժողովն աշտիշատու, Ա. և ժողովըն վաղարշապատու, Բ ։

7 Տէր Շահակ ՚ի մանազկերտոյ ։

8 Տէր Զաւէն ։

9 Տէր Ասպուրակէս ։ Յաւուրս սորա աշխարհն հայոց բաժանի ՚ի յունաց և ՚ի պարսից ։

10 Տէր Սահակ մեծ՝ պարթեւ, Ա ։ Յաւուրս սորա՝ յամի 398 սուրբն յօհան ոսկեբերան նստի պատրիարգ ՚ի կոստանդնուպօլիս ։ Եւ յամի 406 սուրբն մեսրոպ գտանէ զգիրս հայոց, և լինի ըսկիզըն թարգմանութեան, և թարգմանի աստուածաշունչ մատեանն ։ Յայսմ ժամանակի յամի 411 սկըսանի թագաւորութիւնն սկովտից ։ Եւ յամի 414 թագաւորութիւնն սպանիացւոց ։ Եւ յամի 419 թագաւորութիւնն ֆռանսայու ։ Եւ լինի ժողով յեփեսոս ընդդէմ նեստորի, յամի 431 ։ Եւ ՚ի հայս կրկին ժողով ՚ի վաղարշապատ, Գ. և Դ. և կըր-

կին ժողով յաշտիշատ , Բ . և Գ .

11 Տէր Յովսէփ , Ա . ՚ի Հողոցիմ աւանէ . Յաւուրս սորա , յամի 448 եւտիքէս հե-րետիկոս դատապարտի : Եւ ՚ի հայս կրկին ժողով շահապիվանու , Ա . և Բ . և ժողով արտաշատու . և ժողով դըւ-նայ , Ա :

12 Տէր Մելիտէ ՚ի մանազկերտոյ : Յաւուրս սորա ղեւոնդեանք նահատակին : Եւ ա-թոռն կաթուղիկոսութե փոխի ՚ի դը-վին քաղաք՝ յամի 452 , յետ կալոյ յէջմի-ածին ամս 150 :

13 Տէր Մովսէս , Ա . ՚ի մանազկերտոյ : Յա-ւուրս սորա նախարարք հայոց արձա-կեալ ՚ի կապանաց դառնան յաշխարհէն պարսից ՚ի հայաստան :

14 Տէր Գիւտ յարահեզայ ՚ի տայոց : Յա-ւուրս սորա դաւիթ անյաղթ և մամբ-րէ և ընկերք նոցա ծաղկին :

15 Տէր Քրիստափոր , Ա . արծրունի :

16 Տէր Յովհան , Ա . մանդակունի : Յա-ւուրս սորա վահան մամիկոնեան նորո-գէ զաշխարհն հայոց :

17 Տէր Բաբկէն յոթմսոյ՝ որ ՚ի վանանդ : Յաւուրս սորա եղեւ ժողով վաղարշա-պատու , Ե : Եւ գիւտ նշխարաց գրի-գորիսի աղուանից կաթուղիկոսի :

18 Տէր Սամուէլ յարծկէ ոյ : Յաւուրս սորա եղև սկիզբն տէրութեան չուէտու :

19 Տէր Մուշէ յաղբերց աւանէ : Յաւուրս

սորա Թագաւորն պարսից կաւատ՝ առնու զքաղաքն տիգրանակերտ 'ի ձեռաց հայոց ։

20 Տէր Սահակ, Բ. յուղկայ որ 'ի հարք ։ Յաւուրս սորա վահան մամիկոնեան վախճանի ։

21 Տէր Քրիստափոր, Բ. 'ի տիրառիճ աւանէ բագրեւանդայ ։

22 Տէր Ղեւոնդ յեռաստոյ ։ Յաւուրս սորա լինի սով սաստիկ յաշխարհին հայոց ։

23 Տէր Ներսէս, Բ. յաշտարակաց 'ի բագրեւանդայ ։ Յաւուրս սորա եղեւ ժողովն դւինայ, Բ ։

24 Տէր Յովհաննէս, Բ. 'ի սիւնձեղնոյ գաբեղեանց ։ Յաւուրս սորա յայտնեցաւ դաստառակն քրիստոսի ։

25 Տէր Մովսէս, Բ. յեղիվարդայ ։ Յաւուրս սորա նորոգեցաւ տումարն 'ի հայս, որ և յամի տեառն 552 սկսաւ Թուականն հայոց ։ Եղեւ ժողովն դւինայ, Գ ։ Եւ յուստինոս մեծ կայսրն յունաց շինեց զսուրբն սոփիա յամի 557 ։

26 Տէր աբրահամ, Ա. յաղբաթանից ։ Յաւուրս սորա եղեւ ժողովն դւինայ, Դ ։ Եւ դարձ անգղիացւոց 'ի հաւատս քրիստոսի յամի 597 ։

27 Տէր Յովհան, Գ. 'ի բագարանէ բագրեւանդայ ։ Սա նստաւ 'ի բաժնին յունաց յաւուրս աբրահամու կաթուղիկոսի ։ Յայսմ ժամանակի պարսիկք առին զե-

րուսաղէմ 'ի յունաց յաւուրս Հերակլի կայսեր, և գերեցին զսբ. խաչն յամի 614:

28 Տէր Կոմիտաս յաղցից յարագածոտան: Սա շինէ զվկայարանն Սբց Հռիփսիմեանց, և նորոգէ զէջմիածին: Յաւուրս սորա մըժեժ Հայ՝ կարգի զօրավար 'ի Հերակլ կայսերէն յունաց, և առնէ մեծամեծ քաջութիւնս 'ի պարսիկս: Եւսկսանի Թուականն Հագարացւոց, յամի Տն 622, յորում էր Թուականն Հայոց՝ Հա:

29 Տէր Քրիստափոր, Գ. յապահունեաց:

30 Տէր Եզր 'ի փառաժնակերտէ: Սա շինէ զվկայարանն սրբոց գայիանեանց: Յաւուրս սորա եղեւ ժողովն կարնոյ: Եւ դարձ սրբոյ խաչին յերուսաղէմ, և անտի 'ի կոստանդնուպօլիս 'ի ժամանակս Հերակլի կայսեր յունաց: Եւ յամի 637 Հագարացիք առնուն զերուսաղէմ:

31 Տէր Ներսէս, Գ. շինող, յիշխանաց աւանէ 'ի տայոց: Յաւուրս սորա յամի 653 յայտնեցաւ սուրբ խաչն վարագայ: Եւ եղեւ կրկին ժողով 'ի դվին, Ե. Զ. և ժողով ինչ 'ի մանազկերտ 'ի տեղապահութեան յովհաննու:

32 Տէր Անաստաս յարկուռւոյ: Յաւուրս սորա ծաղկեցաւ անանիա շիրակացի՝ համարող և աստեղաբաշխ:

33 Տէր Իսրայէլ յոթմսոյ 'ի վանանդայ: Յաւուրս սորա մովսէս սիւնեցի՝ երկրորդ քերթող ծաղկի: Եւ մժեժ Հայ՝ նախ

կայսր յունաց 'ի կոստանդնուպօլիս յամի
տեառն 667 ։

34 Տէր Սահակ, Գ. յարքունաշինէ ։ Սա կա-
լեալ առաքի 'ի դամասկոս առ ամիրա-
պետն հագարացւոց ։

35 Տէր Եղիա յարճիշոյ ։ Յաւուրս սորա նա-
խարարք հայոց այրին 'ի նախջուան քա-
ղաքի 'ի հագարացւոց ։ Եւ ժողով յաղ-
ուանս ։

36 Տէր Յովհան, Դ. իմաստասէր, օձնեցի
'ի տաշրաց ։ Յաւուրս սորա, յամի 722
հրէայ ոմն յասորիս՝ համբաւէ զանձնէ
լինել մեսիա ։ Եղեւ ժողովն դվնայ, Է.
և ժողով դվնայ կամ վաղարշապատու
ընդդէմ պօղիկեանց և յուլիանիտաց ։
Լեւոն կայսր յունաց զինի ընդդէմ սըր-
բոց պատկերաց ։

37 Տէր Դաւիթ, Ա. յարամոնից ։ Յաւուրս
սորա, յամի 733 յարեան պատկերամարտք
յաշխարհին յունաց ։

38 Տէր Տրդատ, Ա. յօթմսոյ 'ի փանանդայ ։
Յաւուրս սորա եղեւ սկիզբն տէրութե̆
մաձաւաց ըստ կուսակալութեան 'ի դի-
մաց կայսերն յունաց ։ Եւ աթոռ ամի-
րապետին հագարացւոց փոխի 'ի դա-
մասկոսէ 'ի բաղտատ, զոր 'ի հիմանց նո-
րոգէ ճաֆար ամիրապետ ։

39 Տէր Տրդատ, Բ. 'ի դասնաւորից ։ Ի վեր-
ջին աւուրս սորա եղեւ կարկուտ և
մարախ և երաշտութի̃ յաշխարհին հայոց ։

40 Տէր Սիոն ՚ի բաւոնից արագածոտան ·
Յաւուրս ո՛ր եղեւ ժողովն պարտաւայ ·
41 Տէր Եսայի յեղիպատրուշ աւանէ ։ Յա-
ւուրս սորա մուշեղ մամիկոնեան հար-
կանէ զպարսիկս ։ Եւ աշոտ մսակեր առ-
նէ բաղում քաջութիւնս ։ Եւ սաքառ-
նացիք դառնան ՚ի հաւատս քրիստոսի ·
42 Տէր Ստեփաննոս, Ա. ՚ի դւինայ ։ Յաւու-
րբս սորա մարիամ հայկազն պսակի ընդ
կայսեր յունաց ։
43 Տէր Յովաբ յոստանէն դւինայ ·
44 Տէր Սողոմոն ՚ի գառնոյ ։
45 Տէր Գէորգ, Ա. յարագածոտնէ ·
46 Տէր Յովսէփ, Բ. յարագածոտնէ · Յա-
ւուրս սորա, յամի 803 հանգանակն հա-
ւատոյ սկսաւ երգիլ յեկեղեցիս լատի-
նացւոց ։ Եւ փորդան հայ՝ ընտրի կայսր
յունաց, և հրաժարեալ կրօնաւորի ։
47 Տէր Դաւիթ, Բ. ՚ի մաղաղոյ ։ Յաւուրս
սորա յամի 813 տօն վերափոխման հաս-
տատի ՚ի լատինս ։ Եւ արշաւիր հայ՝
ընտրի կայսր յունաց, և նուաճի ՚ի նի-
կեփորայ ։ Եւ ապա նստի կայսր լեւոն
արծրունի հայ ։
48 Տէր Յովհաննէս, Ե. յովայից ։ Սա հեր-
քեաց զաղանդն թոնդրակեցւոց որ նո-
րոգ սկսեալ էր ։ Յաւուրս սորա եղեւ
ժողովն երնջակու ։ Եւ դարձ բուլղա-
րաց ՚ի հաւատս քրիստոսի ։
40 Տէր Զաքարիա, Ա. ՚ի ձագ աւանէ ։ Յա-

ւուրս սորա եղեւ ժողովն շիրակվանու ։ Եւ եկն ձիւն արիւնագոյն յաշխարհն արեւմտից ։ Եւ յամի 861 սկիզբն եղեւ տէրութեան մոսկովաց ։ Եւ դարձ շըքլաւանաց ՚ի հաւատս քրիստոսի ։

50 Տէր Գէորգ, Բ. ՚ի գառնոյ ։ Յաւուրս սորա սկզբնաւորի թագաւորութիւնն բագրատունեաց ՚ի մեծէն աշոտոյ, յամի տեառն 885, պսակեալ թագիւ յամիրապետէն հագարացւոց, և ՚ի վասիլ հայկազն արշակունի կայսերէն յունաց, որ թագաւորեաց ՚ի կոստանդնուպօլիս յամի տեառն 867 ։

51 Տէր Մաշտոց յեղիվարդայ.

52 Տէր Յովհաննէս, Զ. պատմաբան՝ ՚ի դըրասխանակերտէ ։ Յաւուրս սորա նահատակի սմբատ արքայ հայոց, և թագաւորէ աշոտ երկաթ ։ Առնուն հագարացիք զկաթուղիկոսարանն դւնայ. և աթոռ կաթուղիկոսութեանն փոխի ՚ի վասպուրական, յամի տեառն 924, յետ կալոյ ՚ի դվին քաղաք ամս 472 ։ Յայսմ ժամանակի նստէր կայսր յունաց լեւոն իմաստասէր հայկազն ՚ի կոստանդնուպօլիս ։ Եւ ապա նստի կոստանդին պերփերուժէն հայկազն ։

53 Տէր Ստեփաննոս, Բ ։

54 Տէր Թէոդորոս, Ա ։ Յաւուրս սորա շինի վանքն Նարեկայ ։ Եւ յամի 930 հերոլդոս լինի առաջին քրիստոնեայ թա-

դաւոր ՚տանիմառքայի ։ Յայսմ ժամա-
նակի նստէր կայսր յունաց ՚ի կոստան-
դնուպօլիս ռոմանոս հայ ։

55 Տէր Եղիշէ, Ա. Յաւուրս սորա անանիա
նարեկացի ծաղկի ։

56 Տէր Անանիա ՚ի մոկաց ։ Յաւուրս սորա
փոխադրի դաստառակն քրիստոսի յեդե-
սիոյ ՚ի կոստանդնուպօլիս ։ Ծնանի սբն
գրիգոր նարեկացի ։ Եւ յամի 948 մու-
կովք դառնան ՚ի հաւատս քրիստոսի ։

57 Տէր Վահան ՚ի բաղաց ։ Յաւուրս սորա
յօհաննէս չմշկիկ հայ ազգաւ՝ թագաւո-
րէ ՚ի վերայ յունաց ՚ի կոստանդնուպօ-
լիս, յամի տեառն 969 ։

58 Տէր Ստեփաննոս, Գ. վանահայր սեւանայ ։
Յաւուրս սորա լինի ժողովն անւոյ, Ա ։

59 Տէր Խաչիկ, Ա. արշարունեաց եպիսկո-
պոս ։ Յաւուրս սորա յամի 980 սմբատ
թագաւոր շինէ զպարիսպ անի քաղաքին ։
Եւ սամուէլ հայ դերջանեցի քաջ՝ թա-
գաւորէ ՚ի վերայ բուլղարաց ։ Եւ լինի
ժողովն անւոյ, Բ ։

60 Տէր Սարգիս, Ա. վանահայր սեւանայ ։
Յաւուրս սորա աթոռ կաթուղիկոսու-
թեան հաստատի յանի քաղաք՝ յամի տն
993, յետ կալոյ ՚ի վասպուրական աշ-
խարհ՝ այսինքն ՚ի ձորոյ վանք, և ՚ի վա-
րագ, և յարգինա, ամս 69 ։ Եւ ժողով
հաքբայ, Ա. և Բ. ընդդէմ թոնդրակե-
ցւոց ։ Եւ յամի 996 մաճառք դառնան

'ի հաւատս ։

61 Տէր Պետրոս, Ա. գետադարձ ։ Յաւուրբս սորա գրիգոր մագիստրոս ծաղկի ։ Եւ յամի 1022 սենեքերիմ թագաւոր արծրունի թողեալ զքաղաքն վան՝ չու է 'ի սեբաստիա քաղաք ։ Եղեւ ժողովն անւոյ, Գ. և ժողով հաշքայ, Գ ։

62 Տէր Խաչիկ, Բ. քեռորդի գետադարձին ։

63 Տէր Գրիգոր, Բ. վկայասէր՝ որդի գրիգորի մագիստրոսի 'ի զարմէ լուսաւորչին ։ Յաւուրս սորա գագիկ թագաւոր տայ զկարս քաղաք 'ի յոյնս, և ինքն մեկնի 'ի հայաստանէ ։ Եւ աթոռն կաթուղիկոսութեան փոխի յանւոյ 'ի թաւբըլուր՝ յամի 1063, յետ լինելոյ յանի ամս 71. և դնի 'ի ծամնդաւ՝ յամի 1066 ։ Ժողով սեաւ լերին, Ա ։ Եւ յամի 1079 բառնի թագաւորութիւնն բագրատունեաց՝ մահուամբ գագկայ վերջնոյ, և սկսանի տէրութիւնն ռուբինեանց ։ Սա ինքն երանելին գրիգոր վկայասէր գնայ 'ի կոստանդնուպօլիս առ կայսրն յունաց ալէքս կոմնինոս վասն միաբանութեան, և ոչ յաջողի ։

64 Տէր Բարսեղ, Ա. անեցի ։ Յաւուրս սորա աթոռն կաթուղիկոսութեան դնի յանի ։ Եւ յամի 1089 լինի սկիզբն տէրութեան փորթուգեղից ։ Սուրբն ներսէս շնորհալի ծնանի ։ Լատինացի խաչակիր զօրք առնուն զերուսաղէմ, յամի

1099 . և կոնդակրէ Նաստի առաջին Թագաւոր յերուսաղէմ ։

65 Տէր Գրիգոր, Գ. կամ Գրիգորիս պահլաւունի ։ Յաւուրս սորա՝ որ էր ամ տեառն 1113, դաւիթ Թոռնիկեան Նրստի առաջին կաթուղիկոս յաղթամար ։ Լինի ժողով 'ի սեաւ լերին. Բ. և աթոռ կաթուղիկոսութեան փոխադրի անդր յամի 1115. յետ լինելոյ 'ի Թաւբլուր և 'ի ծամնդաւ և յանի ամս 49 ։ Նա յամի 1125 'ի ծովք գղեակ. և յետ կալոյ 'ի սեաւ լեառն և 'ի ծովք գղեակ ամս 34, փոխի 'ի հռոմկլայ յամի տեառն 1147 ։ Սուրբն Ներսէս շնորհալի, սարգիս շնորհալի, և իգնատիոս վարդապետ ծաղկին. և սուրբն Ներսէս լամբրոնացի ծնանի ։

66 Տէր Ներսէս, Դ. կլայեցի, որ և շնորհալի ։ Գրէ Թուղթ առ կիւռ մանուէլ կոմնենոս կայսր յունաց. և նա առ շնորհալին՝ վասն միաբանութեան ։

67 Տէր Գրիգոր. Դ. կամ Գրիգորիս, տղայ կոչեցեալ ։ Սա զսուրբն Ներսէս լամբրոնացի ձեռնադրէ եպիսկոպոս ։ Յաւուրս սորա եղեւ ժողովն հռոմկլայու փոքր, և ժողովն հռոմկլայու մեծ՝ վ̄ս միաբանութեան ընդ եկեղեցւոյն յունաց ։ Նա յամի 1187 սուլթան սալահաթին առնու զերուսաղէմ 'ի ձեռաց լատինացւոց ։

68 Տէր Գրիգոր, Ե. գահավէժ։

69 Տէր Գրիգոր, Զ. որ և ապիրատ։ Յա-
ւուրս սորա յամի 1197 եղև սկիզբն Թա-
գաւորութեան ռուբինեանց՝ յերկրորդ-
լեւոնէ։

70 Տէր Յովհաննէս, Է. մեծաբարոյ՝ 'ի սսոյ։
Յաւուրս սորա յամի 1202 ճինկիզ խան
տիրապետէ։

71 Տէր Դաւիթ, Գ. 'ի վանաց արքակաղնոյ։
Յաւուրս սորա լինի ժողով սսոյ, Ա. և
ժողով 'ի լոռի, և ժողով անւոյ, Դ։
Լատինացիք առին զկոստանդնուպօլիս 'ի
ձեռաց յունաց, և բաղդուինոս լատին
Թագաւորէ անդ յամի 1204։

72 Տէր Կոստանդին, Ա. 'ի բարձրբերդոյ
Յաւուրս սորա վանական վարդապետ
ծաղկի։ Ժողով սսոյ, Բ. և Գ։ Յարձա-
կին Թաթարք ընդ արեւելս։ Հեթում
Թագաւոր գնայ առ մանգոյ խան կայսր
Թաթարաց։ Եւ յամի 1261 յոյնք դար-
ձեալ առին զկոստանդնուպօլիս 'ի ձե-
ռաց լատինացւոց, և միքայէլ բալէոլոգ
Թագաւորեաց 'ի կոստանդնուպօլիս։

73 Տէր Յակոբ, Ա. կլայեցի՝ գիտնական։
Յաւուրս սորա հեթում Թագաւոր լի-
նի կրօնաւոր։

74 Տէր Կոստանդին, Բ. պրօնագործ, եպիս-
կոպոս կեսարիոյ։

75 Տէր Ստեփաննոս, Դ. 'ի խախ աւանէ յե-
կեղեաց գաւառէ։ Յաւուրս սորա ե-

ղեւ ժողով սայ, Դ։

76 Տէր Գրիգոր, Է. անաւարզեցի։ Յա-
ւուրս սորա եգիպտացիք աւին զՀռոմ-
կլայ, և աթոռ կաթուղիկոսութեան
փոխադրեցաւ 'ի սիս՝ յամի տեառն 1294,
յետ կալոյ 'ի Հռոմկլայ ամս 147։ Ժո-
ղով սայ, Ե։ Յայսմ ժամանակի, յամի
տեառն 1300 սկիզբն եղեւ Հզօր Թա-
գաւորութեանն օսմանցւոց, և Թագա-
ւորեաց 'ի սէօյիւտճիւք, որ է մերձ պը-
րուսայու՝ օսման, Ա. 'ի կայսերութե-
յունաց անդրոնիկոսի, Բ. և միքայէլի,
Թ. և 'ի Թագաւորութեան Հայոց Հեթ-
մոյ, Բ։ Նա գիւտ բեւեռացուցի, որ
է բուսուլայ։

77 Տէր Կոստանդին, Բ. կեսարացի վերլա-
ռին։ Յաւուրս սորա լինի ժողով ինչ 'ի
սիս. և ժողովն ատանոյ։ Նա յամի 1319
կործանումն անի քաղաքին։

78 Տէր Կոստանդին, Գ. 'ի լամբրոնէ։

79 Տէր Յակոբ, Բ. 'ի սսոյ։ Յաւուրս սո-
րա գտանի փառօղն որ է պարութ, 'ի
կողոնիա 'ի բարթուղիմեայ գերմանաց-
ւոյ՝ յամի տեառն 1329։

80 Տէր Մխիթար 'ի քռնայ՝ որ յերնջակ։ Յա-
ւուրս սորա եղեւ ժողով սայ, Զ։

81 Տէր Յակոբ, Բ. վերստին։

82 Տէր Մեսրոպ, առաջնորդ վանացն Թադէի
յարտազ։ Յաւուրս սորա եղև ժողով
սայ, Է։

83 Տէր Կոստանդին, Դ.

84 Տէր Պօղոս, Ա. Յաւուրս սորա, յորում էր ամ տեառն 1375, լեւոն վերջին Թագաւոր ըմբռնի յեգիպտացւոց. և դնի 'ի բանդ. բառնի Թագաւորութիւն Հայոց. և աւերի աշխարհն կիլիկիոյ. յորում ժամանակի էր կայսր յունաց յովհաննէս բալէոլոգ, և Թագաւոր օսմանցւոց սուլթան մուրատ, Ա.

85 Տէր Թէոդորոս, Բ. Յաւուրս սորա յամի 1382, լեւոն Թագաւոր ազատի 'ի բանդէ, գնայ 'ի Հռոմ և 'ի սպանիա, շրջի յանգղիա և 'ի գաղղիա. և յամի 1393 մեռանի 'ի փարէզ քաղաքի գաղղիացւոց ուր և կայ գերեզման նորա մինչև ցայսօր. և իսպառ բառնի Թագաւորութիւնն Հայոց.

86 Տէր Կարապետ, Ա. կեղեցի.

87 Տէր Դաւիթ, Գ.

88 Տէր Կարապետ, Բ. Յաւուրս սորա մեռանի մարիամ Թագուհին Հայոց.

89 Տէր Յակոբ, Գ.

90 Տէր Գրիգոր, Ը. խանձողատ.

91 Տէր Պօղոս, Բ. առ աջնորդ երուսաղէմի.

92 Տէր Կոստանդին, Ե. 'ի վահկայ ամրոցէ կիլիկիոյ.

93 Տէր Յովսէփ, Գ.

94 Տէր Գրիգոր, Թ. մուսաբեկեանց. Յաւուրս սորա լինի ժողովն էջմիածնի, և յամի 1441 փոխադրի աթոռ կաթուղի-

կոսութեան յէջմիածին, յետ կալոյ 'ի սիս ամս 147.

95 Տէր Կիրակոս Խորվիրապցի՝ նախ առաջին կաթուղիկոս յէջմիածին։

96 Տէր Գրիգոր, Ժ. 'ի մակուայ։ Յաւուրս սորա, յամի 1453 սուլթան մէհէմմէտ թագաւոր օսմանցւոց առնու զկոստանդնուպոլիս, և բառնայ զկայսերութիւնն յունաց. որ սկսաւ 'ի շինութենէն կոստանդնուպոլսի՝ յամի 329 'ի մեծէն կոստանդիանոսէ կայսերէն հռոմայ, և տևեաց ամս 1124 մինչև 'ի վերջին կոստանդին բալէոլոգ կայսր յունաց։

97 Տէր Զաքարիա, Բ. Սա էր յառաջագոյն կաթուղիկոս աղթամարայ, և նստաւ յէջմիածին։ Յաւուրս սորա, յամի 1461 'ի 11 ամի թագաւորութեան փաթիհ սուլթան մէհէմմէտի, յովակիմ եպիսկոպոս պրուսայու նստաւ առաջին պատրիարք հայոց 'ի կոստանդնուպոլիս։

98 Տէր Արիստակէս, Բ. մականուանեալ աթոռակալ։ Յաւուրս սորա աջ սուրբ լուսաւորչին ածի յաղթամար։

99 Տէր Սարգիս, Բ. Յաւուրս սորա աջ սուրբ լուսաւորչին ածի յաղթամարայ յէջմիածին։

100 Տէր Արիստակէս, Գ. Յաւուրս սորա, յամի 1492 քրիստափոր կօլումբոս ձէնովացի մտանէ 'ի նոր աշխարհն. և յամի 1497

ամերիկոս վեսպուկիոս փլորենտացի
յայտնէ զնա, յորոյ անուանէ կոչեցաւ
աշխարհն ամերիկա. յորում ժամանակի
Թագաւորէր 'ի կոստանդնուպօլիս սուլ-
Թան պայազիտ, Բ:

101 Տէր Թադէոս, Ա: Յաւուրս սորա շահ
իսմայէլ արքայ պարսից նորոգէ զաս-
պահան քաղաք:

102 Տէր Եղիշէ, Բ: Յաւուրս սորա յամի
1503 եղեւ գիւտ փոքրիկ ժամացուցի,
այսինքն զէմպէրէկլի սահաթի, 'ի պետ-
րոսէ հենլայ գերմանացւոյ:

103 Տէր Զաքարիա, Գ: Յաւուրս սորա յա-
մի 1516 սուլթան սէլիմ, Ա. առնու զե-
գիպտոս: Իսմին ժմնակի, յամի 1517 յար-
եաւ լուտեր մարտինոս սաքսոնիացի ա-
ղանդապետ, յորմէ լուտերականք:

104 Տէր Սարգիս, Գ. Յաւուրս սորա, յամի
1521 սուլթան սիւլէյման՝ Բ. էառ ըզ
պէլղրատ:

105 Տէր Գրիգոր, ԺԱ: Յաւուրս սորա էր
կալվին գաղղիացի աղանդապետ, յորմէ
կալվինեանք:

106 Տէր Ստեփաննոս, Ե. 'ի սալամաստայ:

107 Տէր Միքայէլ 'ի սեբաստիոյ: Յաւուրս
սորա շահ Թահմազ արքայ պարսից էած
աւեր աշխարհին հայոց:

108 Տէր Բարսեղ, Բ: Յաւուրս սորա յամի
1567 եղեւ սկիզբն տպագրութեան հա-
յերէն գրոց:

109 Տէր Գրիգոր, ԺԲ: Յաւուրս սորա, յամի 1571 օսմանցիք առին զկիպրոս 'ի ձեռաց վենետիկցւոց, 'ի թագաւորութե̄ սուլթան սէլիմի, Բ:

110 Տէր Ստեփաննոս, Ջ. յառնչոյ: Յաւուրս սորա՝ յամի 1574 ուլահ անկաւ ընդ տէրութեամբ օսմանցւոց:

111 Տէր Թադէոս, Բ: Յաւուրս սորա շահ Թահմազ հեղձանի 'ի բաղանիս:

112 Տէր Առաքել յէջմիածնէ:

113 Տէր Դաւիթ, Ե. յէջմիածնէ:

114 Տէր Մելքիսէդ 'ի գառնոյ: Սա յամի 1599 յեօթներորդ ամի կաթուղիկոսութեան իւրոյ եկեալ նստի պատրիարգ 'ի կոստանդնուպօլիս:

115 Տէր Սրապիոն, որ և գրիգոր՝ յեդեսիոյ: Յաւուրս սորա՝ յամի 1605 շահաբաս գայ և վարէ զընակիչս հայաստանու յաշխարհն պարսից, և ածէ աւեր և ամայութիւն աշխարհին հայոց և էջմիածնի:

116 Տէր Սահակ, Դ:

117 Տէր Մովսէս, Գ. սիւնեցի՝ որ և տաթեւացի, յամի 1629 նորոգէ զէջմիածին:

118 Տէր Փիլիպպոս յերկանէ փոքր աղբակոյ: Սա կանգնէ բազում շինուածս յէջմիածին. և գրիգոր պարոնտէր՝ յեէմ:

119 Տէր Յակոբ, Դ. 'ի Նոր ջուղայէ: Յաւուրս սորա՝ յամի 1664 եղիազար անթապցի ձեռնադրի առանձին կաթու-

ղիկոս , և դնէ զաթոռն յԵրուսաղէմ : Յակոբ կաթուղիկոս գնայ 'ի կոստան-դնուպօլիս : Յայսմ ժամանակի՝ յամի 1669 սաբեթայ սէվի համբաւէ զանձնէ լինել մեսիա :

120 Տէր Եղիազար անթապցի : Սա յամի 1680 յետ վախճանի յակոբ կաթուղիկոսի , հաստատի յաթոռ իւր յԵրուսաղէմ . և յամի 1632 գնայ և նստի յէջմիածին : Յաւուրս սորա , յամի 1688 մեծն պետ-րոս թագաւորէ 'ի վերայ մոսկովաց :

121 Տէր Նահապետ յեդեսիոյ : Յաւուրս սո-րա , յամի 1701 փրետերիկոս նստի առա-ջին թագաւոր պրուշից :

122 Տէր Աղէքսանդր , Ա . 'ի Նոր Ջուղայէ :

123 Տէր Աստուածատուր 'ի համատանայ : Յա-ւուրս սորա , յամի 1722 մահմուտ միր-վէյիզեան առնու զսպահան և թագա-ւորէ սպարսից : Եւ յամի 1724 դաւիթ իշխան հայ զօրանայ 'ի սիւնիս :

124 Տէր Կարապետ , Դ . յուռնեայ : Յաւուրս սորա թահմազղուլի զօրավար զօրանայ : Եւ յամի 1728 դաւիթ իշխանն սիւն-եաց մեռանի :

125 Տէր Աբրահամ , Բ . 'ի խոշաբայ՝ առաջ-նորդ ոք կարապետի որ 'ի մուշ : Յա-ւուրս սորա մեռանի մխիթար քաջ ըս-պարապետ հայոց 'ի սիւնիս :

126 Տէր Աբրահամ , Գ . 'ի գանուկոյ կրետեայ՝ առաջնորդ թէքիրտաղու : Յաւուրս սո-

րա , յամի 1736 Թահմազղուլի խան Թա-
գաւորէ 'ի վերայ պարսից , և կոչի Նա-
տըրշահ ։

127 Տէր Ղազար Ջահկեցի ։ Յաւուրս սորա
տառապին բնակիչք հայոց աշխարհին
'ի ծառայիցն Թահմազայ ։

128 Տէր Պետրոս , Բ . քիւթիւր կոչեցեալ՝
անթապցի ։ Յաւուրս սորա , յամի 1748
եաղուպ հայկազն իշխան ակնեցի՝ եղեւ
երեւելի յոյժ 'ի կոստանդնուպօլիս ։

129 Տէր Մինաս յակնայ՝ պատրիարգ կոստան-
դընուպօլսի ։

130 Տէր Աղէքսանդր , Բ . ղարաղաշ կոչեցեալ
կոստանդնուպօլսեցի ։

131 Տէր Սահակ , Ե . ահագին՝ կեղեցի , ա-
ռաջնորդ կարնոյ ։ Յաւուրս սորա քե-
րիմ խան պարսից զօրանայ ։

132 Տէր Յակոբ , Ե . շամախեցի ։

133 Տէր Սիմոն երեւանցի ։ Յաւուրս սորա
յամի 1766 եղեւ շարժ մեծ 'ի կոստան-
դնուպօլիս ։ Եւ 'ի 12 ամի Թագաւորու-
թեան սուլթան մուստաֆայի , Գ . յամի
1769 պատերազմ օսմանցւոց ընդ մոս-
կովս . և 'ի 1 ամի Թագաւորութ . սուլ-
դան համիտի , յամի 1774 հաշտեցան ընդ
միմեանս ։ Եւ յամի 1779 ղրիմեցի հայք
վարին 'ի ղրիմու յաշխարհն ռուսաց 'ի
ռոստով . ուր ապա շինեցաւ Նոր Նախի-
ջեւան քաղաքն հայոց ։

134 Տէր Ղուկաս 'ի կարնոյ ։ Յաւուրս սորա

յամի 1780 եղեւ գիւտ օդապարիկ գըն-
տոյ 'ի մոնկոլֆեայ գաղղիացւոյ։

135 Տէր Դաւիթ, Զ. 'ի տփխիսոյ։

136 Տէր Դանիէլ 'ի պայազիտոյ՝ պատրիար
կոստանդնուպօլսի։

137 Տէր Եփրեմ երեւանցի։ Յաւուրս սոր
'ի 21 ամի թագաւորութեան մեծի ինք-
նակալին սուլթան մահմուտի, Բ. յամ
1829 եղեւ պատերազմ օսմանցւոց ըն
մոսկովս. և 'ի նոյն ամի հաշտեցան ըն
միմեանս։

138 Տէր Յովհաննէս, Ը. կարբեցի։ Յաւու-
րըս սորա, յամի 1834 քրիստոսազօր և մ-
ծահռչակ իշխանն հայոց յարութիւ
պէզճեան մեռանի. և մեծահանդէս շ-
քով թաղի յաթոռանիստ եկեղեցւոյ
սուրբ աստուածածնի 'ի կոստանդնու-
պօլիս ըստ հրամանին արքունի։

139 Տէր Ներսէս, Ե. աշտարակեցի. որ ու-
նի այժմ զհոգեւոր բարձրագոյն աստի-
ճան կաթուղիկոսութեան. զորոյ գե-
րագահ վսեմափառութիւնն բազմա-
մեայ կենօք պահեսցէ տէր 'ի պարծանս
ազգիս։

# ԽՐԱՏ

## ՏՕՄԱՐԱԿԱՆ ԱՂԻՒՍԱԿԻՍ

Կալ զԹուականն Հայոց յորում ամի և իցես՝ յառաջիկայ աղիւսակէ աստի, և գիտ 'ի կարգի այնր Թուականի զտարեգիրն նոյն տարւոյն, յորոյ առաջի եղեալ կան եօթներեակն, վերադիրն, և տանուտէրն։ Ապա աստի յառաջ գնացեալ յայն մշտնջենաւոր աղիւսակըն՝ որ յերկուս զոյգ երեսս թղթոց պարունակեալ է, գտցես անդ զնոյն տարեգիրն. որ ըստ կարգի այբուբենից եղեալ կայ գլխագրով. և 'ի շարս նորին գտցես յառաջին տուփըն զօրն յայտնութեան, յերկրորդումն՝ զսրբոց ուտիքն. և այսու կարգաւ յառաջ գնասցես մինչև ցօր բարեկենդանի յայտնուէ. Օրինակ իմն. Թուականն առաջիկայ տարւոյս է (ռյզ), և տարեգիրն (Չ), զոր գտցես յառաջին աղիւսակի անդ. և 'ի նմին կարգի տուփն առ ձեռն պատրաստ գտանես զօրն յայտնութեան՝ որ է (Յէր), և զմիջոց ուտիքըն՝ որ է (իբ) օր, և զառաջաւորաց բարեկենդանըն որ է յունվարի (իէ), և զայլըն ամենայն ըստ վերոյգրեալ խրատուն, մինչև ցօր բարեկենդանի յայտնութեան.

| Ամք Տեառն, և Թուական Հայոց ։ | | Գիր տարւոյ ։ | Յօթներեակ ։ | Վերադիր ։ | Տանուտէր ։ |
|---|---|---|---|---|---|
| 1857 | ռյզ | ձ | բ | ժգ | Առիւծն ։ |
| 1858 | ռյէ | բ | գ | իե | Կոյսն ։ |
| 1859 | ռյը | ն | դ | զ | Կշիռն ։ |
| 1860 | ռյթ | ծխ | եզ | ժէ | Կարիճն ։ |
| 1861 | ռյժ | ց | է | իը | Աղեղնաւորն ։ |
| 1862 | ռյժա | ղ | ա | թ | Այծեղջիւրն ։ |
| 1863 | ռյժբ | ժ | բ | իա | Ջրհոսն ։ |
| 1864 | ռյժգ | վս | գդ | բ | Ձուկն ։ |
| 1865 | ռյժդ | ծ | ե | ժդ | Խոյն ։ |
| 1866 | ռյժե | ղ | զ | իդ | Ցուլն ։ |
| 1867 | ռյժզ | պ | է | ե | Երկաւորն ։ |
| 1868 | ռյժէ | իժ | աբ | ժզ | Խեցգետինն ։ |
| 1869 | ռյժը | վ | գ | իէ | Առիւծն ։ |
| 1870 | ռյժթ | ն | դ | ը | Կոյսն ։ |
| 1871 | ռյի | է | ե | ժթ | Կշիռն ։ |
| 1872 | ռյիա | ջպ | զէ | լ | Կարիճն ։ |
| 1873 | ռյիբ | ղ | ա | ժա | Աղեղնաւորն ։ |
| 1874 | ռյիգ | ժ | բ | իբ | Այծեղջիւրն ։ |
| 1875 | ռյիդ | շ | գ | գ | Ջրհոսն ։ |
| 1876 | ռյիե | կծ | դե | ժդ | Ձուկն ։ |
| 1877 | ռյիզ | ղ | զ | իե | Խոյն ։ |
| 1878 | ռյիէ | պ | է | զ | Ցուլն ։ |
| 1879 | ռյիը | ի | ա | ժէ | Երկաւորն ։ |
| 1880 | ռյիթ | ավ | բգ | իը | Խեցգետինն ։ |
| 1881 | ռյլ | ն | դ | թ | Առիւծն ։ |
| 1882 | ռյլա | է | ե | իա | Կոյսն ։ |
| 1883 | ռյլբ | ջ | զ | բ | Կշիռն ։ |

| Ամք Տեառն, և Թուական Հայոց : | | Ն. միր առաջ: | Ս. Ծննդեան: | Ս. Զատկին: | Տանուտէր : |
|---|---|---|---|---|---|
| 1884 | ռյլգ | ճղ | էա | ժգ | Կարիճն : |
| 1885 | ռյլդ | դ | բ | իդ | Աղեղնաւորն : |
| 1886 | ռյլե | շ | գ | ե | Այծեղջիւրն : |
| 1887 | ռյլզ | կ | դ | ժզ | Ջրհոսն : |
| 1888 | ռյլէ | փւ | եզ | իէ | Ձուկն : |
| 1889 | ռյլը | ճ | է | ը | Խոյն : |
| 1890 | ռյլթ | ի | ա | ժթ | Ցուլն : |
| 1891 | ռյխ | ա | բ | ւ | Երկաւորն : |
| 1892 | ռյխա | հկ | գդ | ժա | Խեցգետինն : |
| 1893 | ռյխբ | է | ե | իբ | Առիւծն : |
| 1894 | ռյխգ | ջ | զ | գ | Կոյսն : |
| 1895 | ռյխդ | ւ | է | ժդ | Կշիռն : |
| 1896 | ռյխե | դգ | աբ | իե | Կարիճն : |
| 1897 | ռյխզ | շ | գ | զ | Աղեղնաւորն : |
| 1898 | ռյխէ | կ | դ | ժէ | Այծեղջիւրն : |
| 1899 | ռյխը | ռ | ե | իը | Ջրհոսն : |
| 1900 | ռյխթ | մճ | զէ | թ | Ձուկն : |
| 1901 | ռյծ | ի | ա | իա | Խոյն : |
| 1002 | ռյծա | ո | բ | բ | Ցուլն : |
| 1903 | ռյծբ | հ | գ | ժգ | Երկաւորն : |
| 1904 | ռյծգ | ըէ | դե | իդ | Խեցգետինն : |
| 1905 | ռյծդ | ջ | զ | ե | Առիւծն : |
| 1906 | ռյծե | ւ | ն | ւ | Կոյսն : |
| 1907 | ռյծզ | բ | ա | իէ | Կշիռն : |
| 1908 | ռյծէ | ոչ | բգ | ը | Կարիճն : |
| 1909 | ռյծը | ը | դ | ժթ | Աղեղնաւորն |
| 1910 | ռյծթ | ռ | ե | ւ | Այծեղջիւրն : |

| Գիր տարւոյ : | Օր յայտնութեան : | Սկիզբ ցուցակ տարբ : | Առաջաւորաց բա : | Բուն բարեկենդան : | ԶԱՏԻԿ : | Երեւման խաչ : | Համբարձումն : | Հոգեգալուստ : | Սբ Գրիգորի բարե : | Վարդավառ : |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | յուն | փետ | մարտ | ապր | ապր | մայս | մայս | յուն |
| Ա | Գշ. | գ | ժա | ա | իբ | ժթ | լ | ժ | լա | իը |
| Բ | Բշ. | ե | ժբ | բ | իգ | ի | մայս.ա | ժա | յուն.ա | իթ |
| Գ | Դշ. | բ | ժգ | գ | իդ | իա | բ | ժբ | բ | լ |
| Դ | Հշ. | թ | ժդ | դ | իե | իբ | գ | ժգ | գ | յ.ա |
| Ե | Ուր. | ժ | ժե | ե | իզ | իգ | դ | ժդ | դ | բ |
| Զ | Եշ. | ժա | ժզ | զ | իէ | իդ | ե | ժե | ե | գ |
| Է | Դշ. | ժբ | ժէ | է | իը | իե | զ | ժզ | զ | դ |
| Ը | Գշ. | ժգ | ժը | ը | իթ | իզ | է | ժէ | է | ե |
| Թ | Բշ. | ժդ | ժթ | թ | լ | իէ | ը | ժը | ը | զ |
| Ժ | Կիր. | ժե | ի | ժ | լա | իը | թ | ժթ | թ | է |
| Ի | Հշ. | ժզ | իա | ժա | ապր.ա | իթ | ժ | ի | ժ | ը |
| Լ | Ուր. | ժէ | իբ | ժբ | բ | լ | ժա | իա | ժա | թ |
| Խ | Եշ. | ժը | իգ | ժգ | գ | մայս.ա | ժբ | իբ | ժբ | ժ |
| | Դշ. | ժթ | իդ | ժդ | դ | բ | ժգ | իգ | ժգ | ժա |
| | Գշ. | ի | իե | [illegible] | ե | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | ժբ |
| [illegible] | [illegible] | ի | իզ | ժզ | գ | դ | ժե | իդ | ժե | ժգ |
| [illegible] | [illegible] | ի | ի | ժէ | է | ե | ժդ | իդ | ժդ | ժդ |
| [illegible] | [illegible] | ի | իը | ժր | ը | գ | ժէ | իէ | ժէ | ժե |

1893 [illegible]



| Միջոց շբթք պհօք: | Աստուածածին: | Միջոց շբթք պհօք: | Սուրբ խաչ: | Սբ Գէորգայ բա: | Միջոց ուտիք շաբ: | Գիւտ խաչ: | Յիսնակաց բարե: | Սբ Յակոբայ բա: | Միջոց ուտիք ծաբք: | Օր բրկնդնի յայտ: |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | օգոս | | սեպ | սեպ | | հոկտ | նոյե | դեկ | | |
| է | ժզ | դ | ժգ | ի | է | իե | ժե | զ | ժը | Գշ. |
| է | ժէ | դ | ժդ | իա | է | իզ | ժզ | է | ժէ | Բշ. |
| է | ժը | դ | ժե | իբ | է | իէ | ժէ | ը | ժզ | Կիր. |
| զ | ժբ | ե | ժզ | իգ | է | իը | ժը | թ | ժե | Շբ. |
| զ | ժգ | ե | ժէ | իդ | է | իթ | ժթ | ժ | ժդ | Ուր. |
| զ | ժդ | դ | ժա | ժը | ը | իգ | ի | ժա | ժգ | Եշ. |
| զ | ժե | դ | ժբ | ժթ | ը | իդ | իա | ժբ | ժբ | Դշ. |
| զ | ժզ | դ | ժգ | ի | է | իե | ժե | զ | ժը | Գշ. |
| զ | ժէ | դ | ժդ | իա | է | իզ | ժզ | է | ժէ | Բշ. |
| զ | ժը | դ | ժե | իբ | է | իէ | ժէ | ը | ժզ | Կիր. |
| ե | ժբ | ե | ժզ | իգ | է | իը | ժը | թ | ժե | Շբ. |
| ե | ժգ | ե | ժէ | իդ | է | իթ | ժթ | ժ | ժդ | Ուր. |
| ե | ժդ | դ | ժա | ժը | ը | իգ | ի | ժա | ժգ | Եշ. |
| ե | ժե | դ | ժբ | ժթ | ը | իդ | իա | ժբ | ժբ | Դշ. |
| ե | ժզ | դ | ժգ | ի | է | իե | ժե | զ | ժը | Գշ. |
| ե | ժէ | դ | ժդ | իա | է | իզ | ժզ | է | ժէ | Բշ. |
| ե | ժը | դ | ժե | իբ | է | իէ | ժէ | ը | ժզ | Կիր. |
| դ | ժբ | ե | ժզ | իգ | է | իը | ժը | թ | ժե | Շբ. |

| Գիր տարւոյ : | Օր յայտնութեան : | Մինչց ու ուտիք ձու թբ : | Առաջաւորաց բա : | Բուն բարեկենդան : | ԶԱՏԻԿ : | Երեւման խաչ : | Համբարձումն : | Հոգեգալուստ : | Սբ Գրիգորի բա : | Վարդավառ : |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | յուն | փետ | ապր | մայս | մայս | մայս | յուն | յուլ |
| Ճ | ուր. | իդ | իթ | ժթ | թ | է | ժը | իը | ժը | ժզ |
| Մ | Եշ. | իե | լ | ի | ժ | ը | ժթ | իթ | ժթ | ժէ |
| Յ | Դշ. | իզ | լա | իա | ժա | թ | ի | լ | ի | ժը |
| Ն | Գշ. | իէ | փե.ա | իբ | ժբ | ժ | իա | լա | իա | ժթ |
| Շ | Բշ. | իը | բ | իգ | ժգ | ժա | իբ | յուն.ա | իբ | ի |
| Ո | Կիր. | իթ | գ | իդ | ժդ | ժբ | իգ | բ | իգ | իա |
| Չ | Շբ. | լ | դ | իե | ժե | ժգ | իդ | գ | իդ | իբ |
| Պ | ուր. | լա | ե | իզ | ժզ | ժդ | իե | դ | իե | իգ |
| Ջ | Եշ. | լբ | զ | իէ | ժէ | ժե | իզ | ե | իզ | իդ |
| Ռ | Դշ. | լգ | է | իը | ժը | ժզ | իէ | զ | իէ | իե |
| Ս | Գշ. | լդ | ը | մրտ.ա | ժթ | ժէ | իը | է | իը | իզ |
| Վ | Բշ. | լե | թ | բ | ի | ժը | իթ | ը | իթ | իէ |
| Տ | Կիր. | լզ | ժ | գ | իա | ժթ | լ | թ | լ | իը |
| Ր | Շբ. | լէ | ժա | դ | իբ | ի | լա | ժ | յուլ.ա | իթ |
| Ց | ուր. | լը | ժբ | ե | իգ | իա | յուն.ա | ժա | բ | լ |
| Ւ | Եշ. | լթ | ժգ | զ | իդ | իբ | բ | ժբ | գ | լա |
| Փ | Դշ. | խ | ժդ | է | իե | իգ | գ | ժգ | դ | օգ.ա |
| Ք | Գշ. | խա | ժե | Զատկացուցակն ՚ի Փիլոնն տես : | | | | | | |

| Մինչոց չէթք պհօք : | Աստուածածին : | Մինչոց չէթք պհօք : | Սուրբ խաչ : | Սբ Գէորգայ բա : | Մինչոց ուտիք շաբ : | Գիւտ խաչ : | Յիսնակաց բարե : | Սբ Յակոբայ բա : | Մինչոց ուտիք տւրք : | Օր բրհնդնի յայտ : |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | օգոս | | սեպտ | սեպտ | | հոկտ | նոյե | դեկտ | | |
| դ | ժգ | ե | ժէ | իդ | է | իթ | ժթ | ժ | ժդ | Ուր. |
| դ | ժդ | դ | ժա | ժը | ը | իդ | ի | ժա | ժգ | Եշ. |
| դ | ժե | դ | ժբ | ժթ | ը | իդ | իա | ժբ | ժբ | Դշ. |
| դ | ժզ | դ | ժգ | ի | է | իե | ժե | զ | ժը | Գշ. |
| դ | ժէ | դ | ժդ | իա | է | իզ | ժզ | է | ժէ | Բ |
| դ | ժը | դ | ժե | իբ | է | իէ | ժէ | ը | ժզ | Կիր. |
| դ | ժբ | ե | ժզ | իգ | է | իը | ժը | թ | ժե | Շբ. |
| դ | ժգ | ե | ժէ | իդ | է | իթ | ժթ | ժ | ժդ | Ուր. |
| դ | ժդ | դ | ժա | ժը | ը | իդ | ի | ժա | ժգ | Եշ. |
| դ | ժե | դ | ժբ | ժթ | ը | իդ | իա | ժբ | ժբ | Դշ. |
| դ | ժզ | դ | ժգ | ի | է | իե | ժե | զ | ժը | Գշ. |
| դ | ժէ | դ | ժդ | իա | է | իզ | ժզ | է | ժէ | Բշ. |
| դ | ժը | դ | ժե | իբ | է | իէ | ժէ | ը | ժզ | Կիր. |
| բ | ժբ | ե | ժզ | իգ | է | իը | ժը | թ | ժե | Շբ. |
| բ | ժգ | ե | ժէ | իդ | է | իթ | ժթ | ժ | ժդ | Ուր. |
| բ | ժդ | դ | ժա | ժը | ը | իդ | ի | ժա | ժգ | Եշ. |
| բ | ժե | դ | ժբ | ժթ | ը | իդ | իա | ժբ | ժբ | Դշ. |

[illegible] 21 [illegible]

յարբանմ

Գիր Գրքում

30 Դեկտեմբ[illegible]

1922 թ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0159421